Փոքր Հայքի թագավորությունն իր՝ շուրջ 400-ամյա պատմության ընթացքում ունեցել է քաղաքական տարբեր կարգավիճակներ: Ըստ այդմ, թագավորության պատմությունը կարելի է բաժանել երկու մեծ ժամանակաշրջանի.

ա) անկախ թագավորության ժամանակաշրջան, որն ընդգրկում է հիմնադրումից մինչև Միհրդատ Եվպատորի իշխանության տակ անցնելու շրջանը (Ք. ա. 331–112 թթ.),

բ) պոնտական և հռոմեական գերիշխանության շրջան (Ք. ա. 112 – Ք. ծ. 72 թթ.):

---

* *Ներկայացվել է 01. VI. 2020 թ., գրախոսվել է 04. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2020 թ.:*

Երկրորդ ժամանակաշրջանում Փոքր Հայքը, թեպետ դառնվել է նախ պոնտական, ապա հռոմեական գերիշխանության ներքո, այնուամենայնիվ, պահպանել է թագավորության կարգավիճակը: Ուստի ամբողջական գահացանկը վերականգնելու նպատակով հավասարապես կանդրադառնանք բոլոր գահակալներին:

Փոքր Հայքի թագավորությունը Ք. ա. 331–112 թթ.

Հայտնի է, որ Փոքր Հայքն առաջին անգամ հիշատակվում է Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ: Այդ մասին առավել հանգամանալի տեղեկություններ հաղորդող Քվինտուս Կուրտիուս Ռուֆուսի երկում կարդում ենք, որ Փոքր Հայքի զորքը տեղակայված էր աքեմենյան բանակի կենտրոնում, իսկ Մեծ Հայքինը՝ բանակի աջ թևի առաջին շարքում. «Նրանց հետևում էին հայերը, այսպես կոչված, Փոքր Հայքից, հայերին հետևում էին բաբելացիները, նրանց և ուրիշներին՝ բելիտները՝ Քոսեյան լեռների բնակիչները... Աջ թևում կանգնած էին Մեծ Հայքի հայերը, կադուսիներն ու կապադովկիացիները, ասորիներն ու մարաստանցիները. նրանք նույնպես ունեին մանգաղակիր մարտակառքեր»[1]:

Գավգամելայի ճակատամարտի մասին վկայող մեկ այլ պատմիչ՝ Արիանոս Փլավիոսը, նշում է նաև հայոց բանակի առաջնորդների անունները. «Հայերին ղեկավարում էին Օրոնտոսը և Միթրաուստեսը, կապադովկիացիներին՝ Արիակոսը... Աջ թևի առջևում շարված էին հայկական և կապադովկիական հեծելազորները և հիսուն մանգաղավոր մարտակառք»[2]: Ճակատամարտում հերոսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերն այդ ճակատամարտից հետո վերականգնում են Հայաստանի անկախությունը՝ Օրոնտաս-Երվանդ Գ-ն[3] Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում:

Գավգամելայի ճակատամարտից որոշ ժամանակ անց մտնելով Բաբելոն՝ Ալեքսանդր Մակեդոնացին համարեց, որ արդեն հասել է հաջողության և կատարեց նշանակումներ, այդ թվում՝ Հայաստանի կառավարիչ կարգեց Սարդեսի բերդը դավաճանաբար իրեն հանձնած պարսիկ

---

[1] *Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը. – Ալեքսանդր Մակեդոնացի (թարգմ. ռուսերենից՝ Ա. Ե. Սարգսյան, Ռ. Բ. Մավիսակալյան), Երևան, 1987, էջ 350–351:*

[2] *Արիանոս Փլավիոս. Ալեքսանդրի արշավանքը.– տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի, էջ 97, 101:*

[3] *Երվանդ Գ-ն «Արոանդես» անվանաձևով հիշատակվում է նաև Կոմմագենի Նեմրութ լեռան սրբավայրում և, ի տարբերություն Երվանդ Բ-ի, կրում է «արքա» տիտղոսը* (K. Hümann, O. Puschtein. Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband. Berlin, 1890, S. 286, 307; Г. Тирацян. Страна Коммагена и Армения.– «Известия общественных наук» АН АрмССР, 1956, № 3, с. 70–73*; Գ. Տիրացյան. Երվանդունիները Հայաստանում.– ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, № 6, էջ 65–67,* C. Toumanoff. Studies in Christian Caucasian History. Washington, 1963, pp. 279–280):

Միթրենեին (Միհրանին)[4]: Սակայն դատելով փաստերից՝ հայերը նրան անգամ թույլ չեն տվել ոտք դնել Հայաստան[5]:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի ունեցավ 2–3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը՝ Մենոն զորավարի գլխավորությամբ, ուղարկվեց գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, որը սահմանակցում էր Փոքր Հայքին: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացրին նրա բանակը, իսկ զորավարին մահապատժի ենթարկեցին[6]: Դրանից հետո Ալեքսանդրը փորձ անգամ չարեց Հայաստան զորք ուղարկելու, ինչը նշանակում էր, որ նա հաշվի էր նստում Գավգամելայում հերոսությամբ աչքի ընկած և Մենոնի զորաբանակը ոչնչացրած հայկական զինուժի հետ[7]:

Ք. ա. 331 թ. Փոքր Հայքի անկախացումից հետո Միթրաուստեսի մասին սկզբնաղբյուրներում այլ տեղեկություններ չեն պահպանվել: Թե քանի տարի է իշխել Միթրաուստեսը, հայտնի չէ: Անհայտ է մնում նաև, թե ով է անմիջապես հաջորդել նրան:

Ալ. Մակեդոնացու մահից հետո նրա զորավարների միջև սկսեցին ավելի քան երկու տասնամյակ տևած պատերազմներ [դրանք հայտնի են որպես դիադոքոսների (հուն.՝ «ժառանգորդների») պատերազմներ], որոնք ավարտվեցին Ք. ա. 301 թ.՝ Մակեդոնացու աշխարհակալության մասնատումով: Նրա տերության առաջին բաժանումը տեղի ունեցավ մահվան տարում՝ Ք. ա. 323 թ.՝ Բաբելոնի խորհրդակցության ժամանակ: Թեպետ որոշվեց պահպանել տերության ամբողջականությունը և ընդհանուր խնամակալ դարձավ Պերդիկասը, սակայն երկրների իրական կառավարումն անցավ Մակեդոնացու զորավարներին, որոնք երբեմն հակադրվում էին նաև Պերդիկասին: Զորավարների միջև բաժանված երկրների ցանկում Ք. ա. 323 թ. Հայաստանը չի հիշատակվում, ինչը նշանակում է, որ այն լիովին անկախ էր:

Մակեդոնական աշխարհակալության ընդհանուր խնամակալը դարձած Պերդիկասը որոշեց տերությանը միացնել Փոքր Ասիայի այն տա-

---

[4] *Արիանոս Փլավիոս. Նշվ. աշխ., էջ 107, Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս. Նշվ. աշխ., էջ 375, Դիոդորոս Սիկիլիացի. – Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14. Հին հունական աղբյուրներ, Բ, Երևան, 1985, էջ 98:*

[5] *Տե՛ս Ն. Ադոնց. Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 435–436, Հ. Մանանդյան. Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 96–100:*

[6] *«Ոսկու հանքեր կան Սիսպիրիտիսի մեջ, Կաբալայում, որտեղ Ալեքսանդրն ուղարկեց Մենոնին՝ զորքով. սա խեղդամահ արվեց տեղաբնիկների կողմից» [Ստրաբոն. Աշխարհագրություն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան).– Ոտար աղբյուրներ հայերի մասին, № 1. Հունական աղբյուրներ, Յերեվան, 1941, էջ 61, համմտ. Հ. Մանանդյան. Նշվ. աշխ., էջ 95–97, Մ. Օհանյան. Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003, էջ 74–75]:*

[7] *Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների և դրանց հաջորդած ժամանակաշրջանում Հայաստանի պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 431–445, Հ. Մանանդյան. Նշվ. աշխ., էջ 90–103, Մ. Օհանյան. Նշվ. աշխ, էջ 14–80:*

րածքները, որոնք չէր հասցրել գրավել Ալեքսանդրը: Առաջինը թիրախավորվեց Կապադովկիան: Պերդիկասն անձամբ առաջնորդեց արշավանքը Ք. ա. 322 թ. և, պարտության մատնելով երկրի թագավոր Արիարաթեսին, մահապատժի ենթարկեց նրան: Կապադովկիայի արքայազնն ապաստան գտավ Հայաստանում, իսկ որոշ ժամանակ անց հայկական զորքերի օգնությամբ վերականգնվեց հայրական գահին: Այդ դեպքերի վերաբերյալ հանգամանորեն տեղեկացնում է Դիոդորոս Սիկիլիացին. «Արիարաթեսը պարտվելով ճակատամարտում՝ ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների տիրապետության տակ: Իսկ Արիարաթեսը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում: Ոչ շատ ժամանակ անց, երբ Եվմենեսը, Պերդիկասն ու նրանց համախոհներն արդեն մահացել էին, իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսը զբաղված էին այլ գործերով, (Արիարաթեսը) հայերի թագավոր Արդոատեսից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը»[8]:

Կապադովկիայում Ք. ա. 322 թ. սատրապ նշանակվեց Եվմենեսը: Կապադովկիայի գրավումից հետո վտանգվեցին սահմանակից երկրները, այդ թվում՝ Փոքր Հայքը, որը, դառնալով անտիկ հեղինակների հաղորդումներից, Ք. ա. 322 թ. նվաճվում է մակեդոնական ուժերի կողմից: Եվմենեսը դառնում է նաև Փոքր Հայքի կառավարիչ, իսկ Նեոպտոլեմոսը՝ Կապադովկիայի և Փոքր Հայքի զորքերի հրամանատար, որի դեմ կարճ ժամանակ անց ապստամբում է Փոքր Հայքը[9]: Այդ մասին կա Պլուտարքոսի ուշագրավ վկայությունը. «[Պերդիկասը] Կիլիկիայից ուղարկեց Եվմենեսին, երևութապես նրա սատրապությունը, բայց իրապես, որպեսզի նա իր ձեռքում պահի սահմանակից Արմենիան, որը Նեոպտոլեմոսը հասցրել էր ապստամբական դրության: Արդ՝ Եվմենեսը փորձում էր սրան [Նեոպտոլեմոսին], որը մեծամոլությամբ ու սնոտի հպարտությամբ էր տառապում, զսպել բարեկամական հորդորներով»[10]:

Ք. ա. 321 թ. գարնանը բռնկվեց դիադոքոսների առաջին պատերազմը, որի ժամանակ Պերդիկասի դեմ դաշինք ստեղծեցին Եգիպտոսում հաստատված Պտղոմայոսը և Մակեդոնական տերության եվրոպական մասերին տիրող Կրատերն ու Անտիպատրոսը: Այդ ժամանակ Պերդիկասը Եվմենեսին նշանակում է Փոքր Հայքում և Կապադովկիայում գտնվող զորքե-

---

[8] *Դ ի ո դ ո ր ո ս Ս ի կ ի լ ի ա ց ի. նշվ. աշխ., էջ 153, համմ. Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 441, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 100–103:*

[9] *Անտիկ հեղինակներն «Արմենիա» են կոչում և՛ Մեծ Հայքը, և՛ Փոքր Հայքը: Այստեղ խոսքը վերաբերում է Փոքր Հայքին, քանի որ Մեծ Հայքը ոչ միայն չի նվաճվել մակեդոնական ուժերի կողմից, այլև ապաստան է տվել Կապադովկիայի արքայազնին և որոշ ժամանակ անց զորքով օգնել նրան հայրական գահը հետ գրավելու:*

[10] П л у т а р х. Сравнительные жизнеописания (пер. В. А. Алексеева). М., 2017, с. 678–679.

րի բարձրագույն հրամանատար[11]: Նեոպտոլեմոսը (որի դեմ ընդվզել էր Փոքր Հայքը) դավաճանաբար անցավ Կրատերի կողմը, սակայն ճակատամարտի ժամանակ սպանվեց Եվմենեսի կողմից: Որոշ ժամանակ անց, սակայն, սպանվում է Պերդիկասը. մահապատժի են դատապարտվում նրա համախոհների մեծ մասը, այդ թվում՝ Եվմենեսը (վերջինս դիմեց փախուստի և սպանվեց հետագայում՝ Ք. ա. 315 թ.):

Ք. ա. 321 թ. Տրիպարադիսում տեղի ունեցավ Մակեդոնացու տերության երկրորդ բաժանումը: Այստեղ ևս հայկական որևէ պետություն չի հիշատակվում: Կապադովկիայի սատրապ է դառնում Նիկանորը[12]:

Թեպետ Փոքր Հայքի մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն այն փաստը՝ հայկական երկրամասն ընդվզել էր մակեդոնական զորավարների դեմ Ք. ա. 321 թ., որոնք պարտվեցին ու ոչնչացան, իսկ նույն թվականի մակեդոնական տերությանը ենթակա երկրների ցանկում այն չի հիշատակվում, թույլ է տալիս եզրակացնելու, որ Փոքր Հայքը վերականգնել էր անկախությունը: Այսինքն՝ Ք. ա. 331 թ. անկախացումից հետո Փոքր Հայքը կարճատև՝ Ք. ա. 322–321 թթ., ենթարկվել է մակեդոնական նվաճման, ապա՝ կրկին անկախացել:

Չի բացառվում, որ Փոքր Հայքի անկախության վերականգնումը եղած լինի Մեծ Հայքի աջակցությամբ, որն ապաստան տվեց Կապադովկիայի դահազրկված արքայազնին, իսկ տարիներ անց զորքով օգնեց նրան վերականգնվելու հայրական գահին: Դիոդորոս Սիկիլիացու վերը բերված տեղեկությունը մատնացույց է անում նաև այդ իրադարձության ժամանակը՝ «երբ Եվմենեսը, Պերդիկասն ու նրանց համախոհներն արդեն մահացել էին, իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսը զբաղված էին այլ գործերով»: Այսինքն՝ Հայոց արքայի աջակցությամբ Կապադովկիայի արքայազն Արիարաթեսի գահ բարձրանալը պետք է տեղի ունեցած լինի Ք. ա. 315 թ. հետո: Ուսումնասիրողները, իրավամբ, այդ իրադարձությունը թվագրում են Ք. ա. 301 թ.[13], ընդ որում, կարելի է ճշգրտել՝ մինչև Ք. ա. 301 թ. ամառը, երբ Իփսոսի ճակատամարտում զոհվեց Անտիգոնոս Միակնանին:

Դիադոքոսների պատերազմները, ինչպես ասվեց, ավարտվեցին Ք. ա. 301 թ. Մակեդոնացու աշխարհակալության մասնատումով: Տերությունը վերջնականապես բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակցող Սելևկյան տերությունն էր: Ըստ Ապ-

[11] *«Երբ Կրատերը և Անտիպատրոսը հույներին հաղթելուց հետո անցել էին Ասիա, որպեսզի զրկեն Պերդիկասին իշխանությունից, և երբ արդեն լուր էր ստացել, որ նրանք մտադիր են ներխուժել Կապադովկիա, Պերդիկասը, որը ինքը ռազմերթի էր ելել Պտղոմայոսի դեմ, նշանակել էր Եվմենեսին բարձրագույն հրամանատար Արմենիայում և Կապադովկիայում գտնվող զորքերի և այդ մասին նամակներ էր գրել Ալկետասին և Նեոպտոլեմոսին ու հրամայել, որ նրանք հնազանդվեն Եվմենեսին, որին իրավունք էր տրված գործերը վարել ըստ իր հայեցողության» (նույն տեղում, էջ 679):*

[12] *Այս բաժանման մասին սկզբնաղբյուրներից տե՛ս, օրինակ, Դիոդորոս Սիկիլիացի. նշվ. աշխ., էջ 112–113:*

[13] *Իրադարձության թվականի հարցի քննարկումը տե՛ս Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 435–441, Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 97–103:*

պիանոս Ալեքսանդրացու «Հռոմեական պատմության»՝ այդ տերության հիմնադիր Սելևկոս Նիկատորը «տիրել էր Միջագետքին, Հայաստանին և Կապադովկիային, որն անվանում են Սելևկյան, Պարսկաստանին, Պարթևստանին և Բակտրիային, արաբական երկրներին, Տաբրիստանին, Սոգդիանային, Արախոսիային, Հիրկանիային և բոլոր այն հարակից երկրներին մինչև Հնդոս գետը, որ զենքի ուժով նվաճել էր Ալեքսանդրը ...»[14]: Այնուհետև, ներկայացնելով Սելևկոս Նիկատորի հիմնած մեծաթիվ քաղաքները՝ Ապպիանոսը գրում է. «Իսկ ի պատիվ իր՝ Սելևկոսի հաղթանակների հիմնվեց Նիկեփորիոնը Միջագետքում և Նիկոպոլիսը Հայաստանում, այնտեղ, որն ամենամոտն է Կապադովկիային»[15]: Այստեղից պարզ է դառնում՝ Կապադովկիայի հետ հիշատակվող «Արմենիան» ոչ թե Մեծ Հայքն է, այլ Փոքր Հայքը, քանի որ Ապպիանոս Ալեքսանդրացին միևնույն աշխատության հաջորդ բաժնում (գիրք XII, «Միհրդատյան պատերազմներ») նշում է Նիկոպոլիս քաղաքի կառուցման վայրը՝ Փոքր Հայքը, սակայն քաղաքի հիմնադրումը վերագրում է Պոմպեոսին, որն այն կառուցել է ի նշանավորումն Միհրդատ Եվպատորի դեմ տարած հաղթանակի. «Պոմպեոսը, կարծելով, որ դրանով ավարտվեց ողջ պատերազմը, քաղաք հիմնեց այն տեղում, որտեղ հաղթել էր Միհրդատին, որն ի նշանավորումն սխրանքի՝ անվանակոչվեց Նիկոպոլիս. (հաղթության քաղաք.– Ա. Մ.) քաղաքը գտնվում է այսպես կոչված Փոքր Հայքում»[16]:

Հարկ է նշել, որ Հայաստանի պատմության ողջ ընթացքում հիշատակվում է Նիկոպոլիս անվամբ միայն մեկ քաղաք, և այն գտնվել է Փոքր Հայքում: Թե ինչու է Ապպիանոս Ալեքսանդրացին քաղաքի հիմնադրման խնդրում հակասում ինքն իրեն կամ որքան է իրական այդ քաղաքի կապը Սելևկոս Նիկատորի հետ, դժվար է ասել: Սակայն այն հանգամանքը, որ Ստրաբոնը ևս վկայում է ինչ-որ ժամանակ մակեդոնացիների և սելևկյանների կողմից Հայաստանի նվաճման մասին, մղում է մտածելու, որ խոսքը վերաբերում է Փոքր Հայքի կարճատև նվաճումներին (Ք. ա. 322–321 թթ. և 301-ից):

Որ Փոքր Հայքի թագավորության նվաճումը եղել է կարճատև ու մեծ հետք չի թողել, կարող է վկայել Միհրդատ Զ Եվպատորի մի ճառ, որը մեզ է հասել Պոմպեոս Տրոգոսի և Հուստինոսի միջոցով. « ...նրանք միշտ հնազանդվել են միայն իրենց տեղական թագավորներին: Եթե ուզում են՝ թող քննության առնեն Կապադովկիան կամ Պափլագոնիան, Գոնտոսը կամ Բյութանիան, նմանապես Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը. այդ ժողո-

---

[14] Аппиан Александрийский. Римская история.– «Вестник древней истории», 1946, № 4, с. 311–312.

[15] *Նույն տեղում, էջ 313:*

[16] *Նույն տեղում, էջ 281: Նիկոպոլիսի հիմնադրումը Պոմպեոսին է վերագրում նաև Դիոն Կասիոսը (տե՛ս Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9. Հին հունական աղբյուրներ, Ա, Երևան, 1976, էջ 185):*

վուրդներից և ոչ մեկին ճեռք չէին տվել ո՛չ ինքը Ալեքսանդրը, որ նվաճել էր ամբողջ Ասիան, ո՛չ էլ որևէ մեկը նրա հաջորդներից»[17]:

Ք. ա. 301 թ. մինչև Ք. ա. 183 թ. Փոքր Հայքի մասին պահպանվել է միայն մեկ արձանագրություն: Դա Փոքր Հայքի Աղջա-կալե (Աղաչա-կալե) հնավայրից գտնված երկլեզու (հունարեն և արամեերեն) արձանագրությունն է, որը պարունակում է չափազանց կարևոր տեղեկություններ: Արձանագրության արամեերեն բաժնում ասվում է. «Այս պարիսպների մեջ հիմնվեց դամբարանը Օրոմանայի՝ Արիաուկայի որդու: Որպես [մնայուն հիշատակ] կառուցեց այն Արի[աուկան]՝ որդին Օրոմանայի, սատ[րապը Ար]մենիայի»: Իսկ արձանագրության հունարեն բաժինն ունի տարբերվող բովանդակություն. «Օրինավոր սատրապների մեջ անմահ հիշատակ կլինի Օրոմանեսին՝ [որդուն] Արիակեսի, և Արիակեսին՝ [նրա] սիրելի որդուն, Արանդայի [Անդոմոնի] համար, որ [նա] կառուցեց գեղեցիկ բնակավայրի չքեղ պարիսպներն ամայի տեղում»[18]:

Արձանագրությունը վկայում է, որ Փոքր Հայքում իշխել է Արիակեսը (Արիաուկան), որին առաջարկվել է նույնացնել Գավգամելայի ճակատամարտում Մեծ Հայքի բանակի կողքին մարտնչող կապադովկիացիների հեծելազորի հրամանատար Արիակեսի հետ[19]: Զբացառելով նման նույնականության հնարավորությունը, որն ունի հավելյալ հիմնավորման կարիք՝ կարծում ենք՝ այստեղ կարող է լինել անունների պատահական համընկնում:

Արիակեսին (Արիակես Ա-ին) հաջորդում է նրա որդի Օրոմանեսը (Օրոմանա, Թերևս՝ Արամանյակ): Իսկ Օրոմանես-Արամանյակին հաջորդում է վերջինիս որդի Արիակես Բ-ն, ով էլ մեզ հասած վերոնշյալ երկլեզու արձանագրության հեղինակն է: Արձանագրության հունարեն բաժնում ասվում է, որ նա կառուցել է Արանդա գեղեցիկ բնակավայրի չքեղ պարիսպները («ամայի տեղում» կառուցումը նոր բնակավայրերի հիմնադրման հնուց հայտնի բանաձև է, հմմտ. Էրեբունու հիմնադրման մասին Արգիշտի Ա-ի արձանագրությունը), իսկ արամեերեն բաժնում՝ հոր՝ Օրոմանես-Արամանյակի դամբարանի կառուցման մասին:

Արձանագրությունն ուսումնասիրած հեղինակները համակարծիք են, որ դա պետք է թվագրել Ք. ա. III դարի կեսերով, որն էլ Արիակես Բ-ի կառավարման ժամանակն է:

Ք. ա. III դ. երկրորդ կեսի Փոքր Հայքի պատմությունն ու գահացանկը շարունակում է մնալ մեզ լիովին անհայտ:

---

[17] Юстин. Эпитома сочинения Помпея Трога «История Филиппа» (пер. А. А. Деконского, М. И. Рижского). СПб., 2005, кн. XXXVIII, 7.

[18] Th. Reinach. Villes méconnues. III. Aranda.– "Revue des Études Grecques", tome 18, fascicule 80. Paris, 1905, pp. 159–164; E. Lipinski. Studies in Aramaic Inscriptions and Onomastics. Leuven, 1975, pp. 197–208; *Ժ. Էլէիբեկյան. Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 43–44, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1 (կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան), Երևան, 2007, էջ 266:*

[19] *Տե՛ս, օրինակ,* E. Lipinski. *Նշվ. աշխ, էջ 197–208, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 266:*

Փոքր Հայքին վերաբերող սկզբնաղբյուրներում պահպանված հաջորդ տեղեկությունը վերաբերում է Ք. ա. 183 թ.: Պոնտոսի թագավոր Փառնակը և Փոքր Հայքի «սատրապ» Միհրդատը դաշնակցած՝ ներխուժում են Գալաթիա ու Կապադովկիա, սակայն պարտվում են և ստիպված լինում հաշտություն կնքել աննպաստ պայմաններով: Ահա այդ մասին պատմող Պոլիբիոսի վկայությունը. «Հանկարծակի և դաժան հարձակման ենթարկված լինելով, Փառնակեսը պատրաստ էր ընդունելու ամեն մի առաջարկ, ուստի նա դեսպաններ ուղարկեց Եվմենեսի ու Արիարաթեսի մոտ: Եվմենեսն ու Արիարաթեսը լսելով նրանց, իրենք ևս իսկույն իրենց դեսպաններին ուղարկեցին Փառնակեսի մոտ, և այս բանը երկուստեք բազմիցս կրկնվելով, հաշտություն կնքվեց հետևյալ պայմաններով. թող մշտական խաղաղություն լինի մի կողմից՝ Եվմենեսի, Պրուսիասի և Արիարաթեսի, մյուս կողմից՝ Փառնակեսի և Միհրդատի միջև: Փառնակեսը և ոչ մի ձևով չպետք է արշավի Գալաթիայի վրա և գալաթների հետ նախկինում նրա կնքած բոլոր պայմանագրերը պետք է համարվեն անվավեր: ... Որոշվեց նաև, որ Փառնակեսը պետք է առանց փրկագնի վերադարձնի ռազմագերիներին և փախստականներին: ... Որոշվեց նաև, որ Արմենիայի սատրապ Միհրդատը պետք է վճարի 300 տաղանդ, որովհետև սա դրժելով Եվմենեսի հետ կնքած դաշինքը, պատերազմեց Արիարաթեսի դեմ: Այդ դաշինքին մասնակից դարձվեցին Ասիայի իշխաններից Արտաշեսը՝ Արմենիայի մեծագույն մասի տիրակալը, և Ակուսիլոքոսը»[20]:

Ք. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանների՝ Հռոմից կրած պարտությունից հետո՝ 189 թ., Մեծ Հայքը և Ծոփքը հռչակվեցին անկախ թագավորություններ: Ենթադրվել է, որ նույն ժամանակ Փոքր Հայքը ևս վերականգնել է անկախությունը, սակայն չկա որևէ սկզբնաղբյուր, որում նշվի, թե Ք. ա. III–II դդ. սահմանագծին Փոքր Հայքը նվաճվել է որևէ պետության կողմից, ուստի չկա նաև անկախության վերականգնման մասին վկայող սկզբնաղբյուր: Նման ենթադրության առիթ է դարձել այն հանգամանքը, որ Փոքր Հայքի առաջնորդները կրել են ոչ թե «արքա», այլ՝ «սատրապ» տիտղոսը, որը կրում էր նաև Միհրդատը: Քննարկման առարկա է եղել նաև այն հարցը, թե ոչ անկախ լինելու պարագայում ում գերիշխանության տակ էր գտնվում Փոքր Հայքը: Ենթադրվել է, որ Ք. ա. II դ. սկզբին Փոքր Հայքը ենթարկվել է Պոնտական թագավորությանը: Այս մասին Հ. Մանանդյանը գրում է. «Պոլիբիոսի մոտ Փոքր Հայքի այս Միհրդատը, ինչպես տեսնում ենք, անվանված է սատրապ, այսինքն՝ կուսակալ: Այս վկայությունից կարելի է թերևս հետևեցնել, որ Միհրդատը 180 թվի պատերազմի ժամանակ չէ եղել անկախ թագավոր, այլ հպատակված է եղել, հավանորեն, Պոնտոսի կամ գուցե մի այլ հարևան թագավորի գերագույն իշխանությանը»[21]: Բ. Հարությունյանը, համաձայնվելով Հ. Մանանդյանի հետ, կարծում է, որ Փառնակի օրոք Փոքր Հայքը Պոնտոսի քաղաքական ազդեցության ոլոր-

---

[20] *Պ ո լ ի բ ի ո ս. Պատմություն. – Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (բաժնի թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի), հ. 1, էջ 277–278:*

[21] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 127:*

տում էր գտնվում[22]: Սակայն, ինչպես իրավամբ նշում է Գագիկ Սարգսյանը, Ք. ա. 180-ական թվականներին իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Փոքր Հայքը լիովին անկախ թագավորություն էր այդ ժամանակաշրջանում: Միհրդատի անկախ գահակալ լինելու մասին հեղինակի գլխավոր փաստարկներն են՝

«ա) Հանդես է գալիս Փառնակի կողքին՝ որպես պայմանագրի կնքող իրավահավասար կողմ,

բ) նրա հետ մեկտեղ ռազմատուգանք է վճարում,

գ) նախօրոք Պերգամոնի թագավոր Եվմենեսի հետ կնքված է եղել երկկողմանի պայմանագիր, որի կետերից մեկն էլ այն էր, թե ինքը չի ապատակի Կապադովկիան: Այս բոլորը առանձին-առանձին և ամբողջությամբ վերցրած՝ միայն ինքնուրույն իշխողին պատշաճող գործողություններ են»[23]:

Լիովին համաձայնելով Գ. Սարգսյանի հետ՝ նշենք, որ պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ տվյալ երկիրը լիովին անկախ է եղել՝ առանց թագավորության կարգավիճակ ունենալու: Թե ինչու են Փոքր Հայքի տիրակալները «սատրապ» (այլ ոչ՝ «արքա») տիտղոսը կրել, առանձին ուսումնասիրության և քննարկման նյութ է: Իսկ Պոլիբիոսի այս վկայությունը ցույց է տալիս, որ Ք. ա. 180–170-ական թվականներին Փոքր Հայքը հանդես է եկել որպես փոքրասիական տարածաշրջանի ինքնուրույն, ազդեցիկ պետություններից մեկը:

Հայագիտական գրականության մեջ տարակարծություն կա Միհրդատի ծագման և ինքնության հարցի շուրջ: Կարծիք կա, որ այս Միհրդատը կարող էր լինել Անտիոքոս Դ-ի (երբեմն սխալմամբ համարում են Անտիոքոս Գ-ի) քրոջ որդի Միհրդատը, որին, ըստ Պոլիբիոսի[24], Արշամաշատի պաշարման ժամանակ Անտիոքոսի մերձավորներն առաջարկում էին դարձնել Ծոփքի թագավոր, սակայն նա նախընտրեց գահին թողնել Քսերքսեսին[25]: Նման նույնացումը, սակայն, հիմնավոր չէ: Ենթադրությունն անհավանական է, քանի որ հայտնի է՝ Անտիոքոս Դ-ի դուստր և Անտիոքոս Դ-ի քույր Անտիոքիսի որդի Միհրդատը նախ ստացել էր երկու քաղաք Կիլիկիայում, որոնք ապստամբեցին նրա դեմ ու վտարեցին նրան: Որոշ ժամանակ անց Սելևկյան արքա Անտիոքոսի մերձավորները Ծոփքի դեմ արշավելիս առաջարկում են այս Միհրդատին թագավորեցնել Ծոփքում, սակայն, արքան նախընտրում է գահին թողնել Քսերք-

---

[22] Բ. Հարությունյան. Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր թագավորը նաև հայոց արքա.– ՊԲՀ, 2003, № 3, էջ 136:

[23] Գ. Սարգսյան. Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 52–53:

[24] Պոլիբիոս. նշվ. աշխ., էջ 277:

[25] Տե՛ս, օրինակ, T. Reinach. Mithridate Eupator, roi de Pont. Paris, 1890. p. 35; Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 450, Գ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 53–55, Հայ ժողովրդի պատմություն, հ. I (այսուհետ՝ ՀԺՊ, հ. I), Երևան, 1971, էջ 522 (բաժնի հեղինակ՝ Գ. Սարգսյան) և այլն: Սակայն այդ կարծիքը ժամանակին քննադատվել և համարվել է անհիմն (M. Holleaux. Etudes d'epigraphie et d'histoire grecques, III, Lagides et Seleucides. Paris, 1942, p. 192).

սեսին: Իսկ Միհրդատին նա դարձնում է Կապադովկիայի արքա՝ Արիարաթես Ե գահանունով (Ք. ա. 163–130 թթ.). ընդ որում, նա հաջորդում է հորը՝ Արիարաթես Դ-ին (Ք. ա. 220–163 թթ.)[26]: Հետևաբար, պետք է լիովին հրաժարվել միայն անվան նույնությամբ կատարված ենթադրությունից:

Ցավոք, աղբյուրների բացակայությունը թույլ չի տալիս պարզելու Միհրդատի իշխանության ավարտը: Պահպանված սկզբնաղբյուրներում Փոքր Հայքի հաջորդ գահակալը Սիսիսն է, որի մասին հայտնի է միայն նրա անունը և այն՝ նրան հաջորդել է որդին՝ Անտիպատրոսը:

Ստրաբոնի տեղեկությունից պարզ է դառնում, որ Ք. ա. 112 թ. նախորդած տարիներին՝ Միհրդատ VI Եվպատորին անցնելուց առաջ, Փոքր Հայքի թագավորներն էին Սիսիսը և նրա որդի Անտիպատրոսը. «Փառնակիայի ու Տրապիզոնի գավառներից վերև մինչև Փոքր Հայք գտնվում են տիբարենացիները ու խաղտեացիները: Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծովքի նման, սա էլ ունեցել է միշտ իր ընիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայքի բարեկամ էին և մերթ ինքնագլուխ: Իրենց հնազանդ էին տիբարենացիները և խաղտեացիները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա: Երբ Միհրդատ Եվպատորը զորացավ, տիրեց Կողքիսին և այս բոլոր երկրներին, որոնց իշխանությունը Սիսիսի որդի Անտիպատրոսը հանձնեց նրան: Միհրդատը հոգ տարավ այս երկրների մասին և չինեց նրանց մեջ 75 ամրոց, պահելու համար իր գանձերի մեծագույն մասը: Սրանցից ամենից ավելի արժանի են հիշատակության՝ Հյուդարան, Բասգոյդարիզան և Սինորիան, որ գտնվում է Մեծ Հայաստանի սահմանին»[27]: Թե երբ են իշխել նշված արքաները, հնարավոր չէ պարզել սկզբնաղբյուրներից: Փաստորեն, Փոքր Հայքի արքայացանկում Ք. ա. 180–170-ական թվականներին իշխած Միհրդատից հետո ունենք Սիսիսի և Անտիպատրոսի գահակալությունները: Առաջարկվել է այս ժամանակամիջոցում՝ մասնավորապես, Ք. ա. 133–129 թթ., Փոքր Հայքի արքա համարել Միհրդատ Էվերգետեսին, ով Պոնտոսի արքա Միհրդատ Ե-ն է (Ք. ա. 150–120 թթ.)՝ Միհրդատ Զ Եվպատորի հայրը[28]: Միհրդատ Ե-ին նաև Փոքր Հայքի արքա

---

[26] *Ուստի անհիմն է նաև այս Միհրդատին երվանդունյաց տոհմի մի հայ ազնվականի որդի համարելու մասին Գ. Սարգսյանի ենթադրությունը (տե՛ս Գ. Ս ա ր գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 53–55, նաև՝ ՀԺՊ, հ. I, էջ 522):*

[27] *Ս տ ր ա բ ո ն. նշվ. աշխ., էջ 74–75: Փոքր Հայքի՝ Միհրդատի իշխանության տակ անցման մասին Ստրաբոնի մոտ մեկ այլ տեղում կարդում ենք. «Պոնտոսի վրա թագավորեց Միհրդատ Եվպատորը: Երկրի սահմաններն էին Ալիսից այն կողմ մինչև տիբարանացիները և Հայաստան, Ալիսից այս կողմ մինչև Ամաստրիս և նույնիսկ Պափլագոնիա: Միհրդատը գրավեց մինչև Հերակլեա՝ արևմտյան ծովափը, Հերակլիտոս Պատոնականի հայրենիքը, իսկ արևելքից՝ մինչև Կողքիս և Փոքր Հայք, որ միացրեց Պոնտոսին» (նույն տեղում, էջ 70–71):*

[28] M. S c h o t t k y. Klein-Armenien. – "Herrscherchronologien der antiken Welt: Namen, Daten, Dynastien", DND Suppl. I. Stuttgart-Weimar, 2004, S. 95; Ch. M a r e k. Geschichte Klaeinasien in der Antike. München, 2010, S. 815.

համարելու տեսակետը կառուցված է Պաուլոս Օրոսիոսի (V դ.) «Պատմություն հեթանոսների դեմ» աշխատության մեջ տեղ գտած մի տեղեկության հիման վրա, որն ակնհայտ վրիպակ է: Հեղինակը հիշատակում է Միհրդատ Զ Եվպատորի՝ «թագավոր Պոնտոսի և Հայոց» տիտղոսը (որին դեռ կանդրադառնանք), ինչը մեկ այլ տեղում, չփոթելով Միհրդատ Ե-ին և Միհրդատ Զ-ին, կիրառում է առաջինի նկատմամբ: Խոսքը վերաբերում է Պերգամոնի թագավորությունում Ք. ա. 133–130 թթ. բարձրացած Արիստոնիկի հակահռոմեական ապստամբությանը, որը ճնշելու գործին մասնակցում են Հռոմի մի քանի փոքրասիական դաշնակիցներ, այդ թվում՝ Միհրդատ Ե Էվերգետեսը: Այս դրվագը ներկայացնելիս և՛ Պաուլոս Օրոսիոսը, և՛ Եվտրոպիոսը (IV դ.) չփոթում են նույնանուն հորն ու որդուն, ինչը բացատրվում է նրանց ընդհանուր սկզբնաղբյուրում եղած վրիպակով[29]: Հետևաբար, որևէ իրական հիմք չկա Փոքր Հայքի գահին Ք. ա. 180–170-ական թվականներին իշխած Միհրդատի և Սիսիսի միջև Պոնտոսի արքա Միհրդատ Ե Էվերգետեսին տեսնելու համար:

Փոքր Հայքի թագավորությունը պոնտական գերիշխանության ժամանակաշրջանում

Անտիպատրոսի գահակալությունն ավարտվում է Փոքր Հայքի Միհրդատ Եվպատորի իշխանության տակ անցնելով: Ե՞րբ և ինչպե՞ս տեղի ունեցավ Փոքր Հայքի համար ճակատագրական այդ իրադարձությունը:

Միհրդատ Ե-ի դավադրական սպանությունից հետո Միհրդատ Եվպատորը, ով դեռևս 11 տարեկան էր, մոր՝ Լաոդիկե Զ թագուհու և կրտսեր եղբոր՝ Քրեստոսի հետ ժառանգեց թագավորությունը: Քանի որ երեխաները մանկահասակ էին, թագուհին ստանձնեց երկրի խնամակալությունը: Սակայն դա հղի էր Միհրդատի համար մեծ վտանգով, քանի որ մայրը ցանկանում էր գահին տեսնել կրտսեր որդուն: Միհրդատը հեռացավ երկրից և տարիներ անց միայն վերադառնալով՝ հաստատվեց հայրական գահին:

Մի շարք ուսումնասիրողներ քննարկելով, թե ո՞ր երկրում կարող էր ապաստանել այդ տարիներին Միհրդատը և ո՞ր երկրի զինուժի օգնությամբ կկարողանար վերահաստատվել Պոնտոսում, միանգամայն տրամաբանորեն, եզրակացրել են հօգուտ Փոքր Հայքի: Դատելով փաստերից՝ Փոքր Հայքի արքա Անտիպատրոսը նախ ապաստան է տվել պոնտական արքայազնին, իսկ հետագայում, հավանաբար, անժառանգ լինելով և գնահատելով Միհրդատին, որդեգրել է նրան՝ այդպիսով

[29] Павел Орозий. История против язычников (пер. В. М. Тюленева). Книги IV–V. СПб., 2002, кн. V, 10, 2; Евтропий. Краткая история от основания Города (пер. А. И. Донченко). М., 1997, кн. IV, 20. *Եթե Օրոսիոսը չփոթում է միայն տիտղոսը, Եվտրոպիոսը սխալմամբ նրան է վերագրում հռոմեացիների դեմ Միհրդատ Եվպատորի մղած մեծ պատերազմը, այն դեպքում, երբ Միհրդատ Ե-ն եղել է Հռոմի հավատարիմ դաշնակիցը, պատերազմել հանուն Հռոմի, ինչի դիմաց, իբրև վարձատրություն, Ք. ա. 129 թ. վերջինից ստացել է Մեծ Փռյուգիան:*

ժառանգելով իր թագավորությունը[30]: Այդ մասին կարող է վկայել այն փաստը, որ Միհրդատ Զ Եվպատորը հիշատակվում է իբրև «թագավոր Պոնտոսի և Հայոց»[31], որի տակ պետք է հասկանալ՝ «թագավոր Պոնտոսի և Փոքր Հայքի»:

Որ Փոքր Հայքն առանց բռնազավթման, օրինական ժառանգման ճանապարհով է անցել Միհրդատ Եվպատորին, անուղղակիորեն վկայում է Տիգրան Մեծի քաղաքականությունը: Վերջինս, ով հայկական հողերի վերամիավորումն առաջնահերթություն էր համարում և, որպես առաջին մեծ քայլ, Ք. ա. 94 թ. վերամիավորեց Ծոփքի թագավորությունը Մեծ Հայքին, որևէ հավակնություն չցուցաբերեց Փոքր Հայքի նկատմամբ, անգամ Ք. ա. 68–67 թթ., երբ այն Պոնտոսի հետ ազատագրվեց միայն չնորհիվ իր ուժերի:

Ժամանակին դեռևս Հ. Մանանդյանն ուշադրություն էր դարձրել այն փաստին, որ Միհրդատ Եվպատորի շատ գործեր Մովսես Խորենացու մատյանում վերագրվում են Արտաշես Աչխարհակալին[32]: Բ. Հարությունյանն ավելի հանգամանորեն կանգ առնելով խնդրի վրա՝ եզրակացրել է. «Միհրդատը որդեգրվել է, թերևս, արդեն Անտիպատրոսի կենդանության օրոք թագադրվել որպես հայոց թագավոր և հայերը նրան գահ բարձրանալիս տվել են «Արտաշես» անունը: Այս դեպքում նաև լրիվ հասկանալի է դառնում, թե ինչու Եվտրոպիոս պատմիչը Միհրդատին համարում է Պոնտոսի և Հայաստանի թագավոր, իսկ թե ինչու նա էլ արտակարգ հոգատար է Փոքր Հայքի նկատմամբ»[33]:

---

[30] *Մեզ հասած սկզբնաղբյուրներում չկա որևէ հաղորդում Անտիպատրոսի ժառանգ(ներ)ի մասին, ինչը մեծ հավանականությամբ թույլ է տալիս ենթադրելու, որ նա եղել է անժառանգ (հակառակ դեպքում կպահպանվեր որևէ հիշատակություն): Որդեգրման ինստիտուտը մեծ տարածում ուներ Առաջավոր Ասիայի երկրներում, ինչից ելնելով էլ՝ կարելի է կարծել, որ Անտիպատրոսը, ժառանգ չունենալով, որդեգրել է Միհրդատին և որպես ժառանգություն Փոքր Հայքը հանձնել նրան* [Е. А. Молев. Малая Армения и Митридат Евпатор.– «Проблемы античной истории и культуры» (доклады XIV Международной конференции антиковедов социалистических стран «Эйрене»). Ереван, 1979, с. 187–188; С. Сапрыкин. Понтийское царство. Государство греков и варваров в Причерноморье. М., 1996, с. 144; *Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 148–149,* В. Н. Талах. Рожденный под знаком кометы: Митридат Эвпатор Дионис. Киев, 2012, с. 44]*:*

[31] Павел Орозий. *Նշվ. աշխ., գիրք VI, 10, 2:*

[32] *Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 148–151: Մովսես Խորենացու երկում Միհրդատ Եվպատորի գործերն Արտաշեսի անվան տակ ներկայանալու փաստին ավելի վաղ ուշադրություն էր դարձրել Թ. Մոմզենը, սակայն երևույթին տվել էր զարմանալիորեն սխալ մեկնաբանություն՝ այն համարելով «հայրենասիրական նպատակներով խեղաթյուրված և Հայաստան տեղափոխված զրույց»* (Т. Моммзен. История Рима, т. 2. М., 1997, с. 219, прим. 12)*:*

[33] *Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 146–150: Այստեղ վրիպում կա. Միհրդատին «Պոնտոսի և Հայաստանի թագավոր» է կոչում ոչ թե Եվտրոպիոսը, այլ՝ Օրոսիոսը (տե՛ս նույն տեղում, էջ 149):*

Այսպիսով, դատելով առկա փաստերից՝ կարող ենք եզրակացնել, որ Փոքր Հայքը, որպես ժառանգություն, կտակել է Միհրդատ Եվպատորին Անտիպատրոս արքան, և դա տեղի է ունեցել Ք. ա. մոտ 112 թ.[34]: Իսկ փաստը, որ նա սկզբնաղբյուրներում հիշվում է իբրև «թագավոր Պոնտոսի և Հայոց», թույլ է տալիս Միհրդատ Եվպատորին դիտարկել որպես նաև Փոքր Հայքի արքա՝ հավանաբար, «Արտաչես» պատվանուն-գահանունով:

Պոնտական թագավորությունում հայտնի են դեպքեր, երբ գրավյալ երկրներում թագավորն արքայորդիներին նշանակել է գերագույն ղեկավարներ: Ենթադրվել է՝ նույնպիսի իրավիճակ նաև Փոքր Հայքում, որտեղ Ք. ա. 80-ական թվականներին կարող էր թագավոր հռչակվել Արկաթիոսը՝ Միհրդատ Եվպատորի ավագ որդիներից մեկը[35]:

Ուշագրավ լինելով հանդերձ՝ նման ենթադրությունը չի դիմանում սկզբնաղբյուրների քննությանը: Բանն այն է, որ Արկաթիոսը հիշատակվում է իբրև Փոքր Հայքի 10 հազարանոց հեծելազորի հրամանատար, որը, հիրավի, խաղացել է մեծ դեր[36], սակայն որևէ աղբյուրում ակնարկ անգամ չկա նրա թագավոր հռչակվելու կամ արքայական որևէ տիտղոս կրելու մասին: Հետևաբար, որևէ հիմք չկա Փոքր Հայքի գահին Միհրդատ Եվպատորի թագավորության Ք. ա. 112–66 թթ. գահաժամկետում (որն ընդհատվել է միայն Լուկուլլոսի նվաճմամբ Ք. ա. 71–68 թթ.) որևէ այլ գահակալ տեսնելու:

Պոնտոսի արքան իր գահակալման ողջ ընթացքում օգտագործեց Փոքր Հայքի ռազմական ուժերը: Ինչպես նշվեց, Միհրդատ Եվպատորի բանակում վճռորոշ դերակատարում է ունեցել Փոքր Հայքի 10 հազարանոց հեծելազորը, որը մասնակցել է նրա արշավանքներին: Ավելին, Միհրդատը Փոքր Հայքի հայ զինվորներին վստահում էր իր պետության ծայրամասում գտնվող քաղաքների պաշտպանությունը: Այդ մասին են վկայում Օլիվիայից և Խերսոնեսից գտնված արձանագրությունները[37]:

---

[34] Ed. Meyer. Geschichte des Konigreichs Pontos. Leipzig, 1879, S. 87–88; Е. А. Молев. Малая Армения и Митридат Евпатор, с. 188. *Միացման հարցի քննարկումների և հայտնված տեսակետների մասին տե՛ս* В. Н. Талах. *Նշվ. աշխ., էջ 44, ծնթ. 205:*

[35] Е. А. Молев. Малая Армения и Митридат Евпатор, с. 186, С. Сапрыкин. *Նշվ. աշխ., էջ 164: Արկաթիոսին փորձել են նաև դիտարկել իբրև Ծոփքի արքա* (F. L. Kovacs. Armenian Coinage in the Classical Period. London, 2016, pp. 5–6, *Ռ. Վարդանյան. Դրամաթողարկումը Հայաստանում հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններում.– Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը, Երևան, 2018, էջ 35), ինչը հիմնավորված չէ գրավոր աղբյուրներով:*

[36] Аппиан Александрийский. *Նշվ. աշխ., էջ 245, 252, 254, համմտ. Հ. Մանանդյան. Նշվ. աշխ., էջ 147–148,* Е. А. Молев. Малая Армения и Митридат Евпатор, с. 188–189.

[37] М. Максимова. Античные города юго-восточного Причерноморья. М.–Л., 1956, с. 226; Е. А. Молев. Митридат Евпатор. Создание Черноморской державы. Саратов, 1977, с. 51–53; Н. Ломоури. К истории

Միհրդատ Զ Եվպատորը, Ք. ա. 71 թ. Լուկուլլոսի հռոմեական բանակից պարտվելով, դուրս մղվեց իր տիրույթներից (այդ թվում՝ կորցնելով նաև Փոքր Հայքը) և ապաստան գտավ Տիգրան Մեծի մոտ: Ք. ա. 68 թ. սեպտեմբերին Արածանիի ճակատամարտում Լուկուլլոսին չախչախելուց հետո Տիգրան Մեծը Միհրդատ Եվպատորին տրամադրեց 4 հազարանոց զորք: Դրան գումարելով նույն քանակի իր բանակը՝ Միհրդատն ազատագրեց Պոնտոսն ու Փոքր Հայքը հռոմեացիներից: Ավելին, զարգացնելով հաջողությունը՝ ներխուժեց Բյութանիա, իսկ Տիգրան Մեծը դրավեց Կապադովկիան[38]:

Հռոմեական շահերն Արևելքում խիստ վտանգված էին, և դրությունը փրկելու համար արտակարգ լիազորություններով այստեղ ուղարկվեց Պոմպեոսը: Վերջինս Ք. ա. 66 թ. պարտության մատնեց Միհրդատ Եվպատորին, ով այս անգամ չստանալով Տիգրան Մեծի աջակցությունը՝ հեռացավ Բոսփորի թագավորություն, իսկ Ք. ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ դրեց իր կյանքին:

Փոքր Հայքի թագավորությունը հռոմեական դերիշխանության ժամանակաշրջանում

Ք. ա. 66 թ. Փոքր Հայքի պատմության մեջ սկսվեց նոր՝ հռոմեական դերիշխանության ժամանակաշրջան, որը տևեց մինչև Ք. ծ. 72 թ.: Այդ ընթացքում Փոքր Հայքը թեպետ պահպանեց թագավորության կարգավիճակը (բացառությամբ՝ 17–38 թթ.), սակայն երկում գահակալեցին հռոմեական դրածոներ: Դրանով էլ պայմանավորված՝ հռոմեական տերության քաղաքական անցուդարձերն իրենց խորը հետքն էին թողնում Փոքր Հայքի վրա՝ պայմանավորելով երկրի գահին այս կամ այն գահակալի հայտնվելն ու գահազրկվելը:

Պոմպեոսը Ք. ա. 64 թ. կատարեց մի շարք փոփոխություններ որպես արդյունք, նաև՝ ի ամրապնդումն իր հաղթանակների: Միհրդատ Եվպատորի տերության հետ Պոմպեոսը վարվեց այս կերպ. «Պոմպեոսը վերջ տվեց Միհրդատի պետությանը և երկիրն իր այն սահմանների մեջ գրավեց: Հայաստանի և Կողքիսի մոտ եղած մասը բաժանեց այն իշխաններին, որոնք օգնել էին իրեն պատերազմում, իսկ մնացյալը բաժանեց 11 պոլիտեայի, և միացրեց Բյութանիային՝ այնպես, որ բոլորից ձևացրեց մեկ եպարխիա»[39]:

Понтийского царства, ч. 1. Тбилиси, 1979, с. 91, 160; Ю. Г. Виноградов, В. И. Кадеев. Армянские лучники на службе Митридата Евпатора.– Второй всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов. Ереван, 1984, с. 12–13; Ю. Виноградов. Политическая история Ольвийского полиса VII–I вв. до н. э. (историко-эпиграфическое исследование). М., 1989, с. 250–256; С. Сапрыкин. *Նշվ. աշխ., էջ 138 և այլն:*

[38] *Այդ իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս Ռ. Մանասերյան. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 189–198, Հ. Հակոբյան. Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 155–168:*

[39] *Ստրաբոն. Նշվ. աշխ., էջ 70–73:*

Պոմպեոսի հաղթանակի արդյունքներից չահեկանորեն օգտվեցին նաև պատերազմում հռոմեացիներին զգալի աջակցություն ցուցաբերած փոքրասիական իշխանավորները, այդ թվում՝ Գալաթիայի իշխաններ Դեյոտարոս և նրա փեսա Բրոգիտարոսը (Ստրաբոնի մոտ՝ Բոգոդիատարոս): Դեյոտարոսը ստացավ արքայի տիտղոս, Պոնտոսի արևելյան ծովափնյա մասը՝ Փառնակիա և Տրապիզոն քաղաքներով: Ստրաբոնն այդ մասին տեղեկացնում է. «երկրի այս մասը պատկանում է Ամիսոսին. մյուս մասը Պոմպեոսը տվեց Դեյոտարոսին, ինչպես և Փառնակիան ու Տրապիզոնը՝ մինչև Կողքիս և Փոքր Հայք. այս բոլորը կազմեց մի թագավորություն, իբր հայրենի ժառանգություն ունենալով նաև Գալաթիայի չորրորդապետությունը»[40]: Պոնտոսի թագավորության հարավային շրջանները, ըստ Ստրաբոնի հաղորդման (գիրք XII, 5, 2), անցան Բրոգիտարոսին (Բոգոդիատարոսին): Վերջինիս տրվեց նաև Փոքր Հայքը, որը նրա մահվանից հետո, հավանաբար, Ք. ա. 52 թ. անցավ Դեյոտարոսի իշխանության տակ: Ցիցերոնի նամակներից տեղեկանում ենք, որ Փոքր Հայքի թագավորությունը Դեյոտարոսը ստացել է Սենատի որոշմամբ[41]:

Հայագիտական գրականության մեջ տարածում է գտել մի կարծիք, ըստ որի՝ Փոքր Հայքի գահին Դեյոտարոսի իշխանության սկիզբը պետք է համարել Ք. ա. 64/3 թվականը[42]: Դրա համար հիմք է ծառայել Եվտրոպիոսի հաղորդումը, ըստ որի՝ Պոմպեոսն այդ չնորհումը կատարել է Աղվանքի և Իբերիայի դեմ արշավանքից հետո ու Սելևկյան պետության տարածք մտնելուց առաջ[43]: Սակայն, ինչպես ցույց է տալիս մյուս մատենագիրների և դրամագիտական տվյալների համադրական ուսումնա-

---

[40] *Նույն տեղում, էջ 72–73:*

[41] Письма Марка Туллия Цицерона к Аттику, близким, брату Квинту, М. Бруту, т. II, годы 51–46 (пер. и коммент. В. О. Горенштейна). М.–Л., 1950, с. 12–13 *(նամակը գրված է Ք. ա. 51 թ. օգոստոսին):*

[42] *Տե՛ս, օրինակ,* Th. Reinach. *Նշվ. աշխ., էջ 400, Հ. Մանանդյան. Նշվ. աշխ., էջ 238–239,* M. Schottky. *Նշվ. աշխ., էջ 95,* M.-L. Chaumont, G. Traina. Les Arméniens entre l'Iran et le monde Gréco-romain (V^e^ siècle av. J.-C. – vers 300 ap. J.-C.).– "Histoire du peuple arménien", dir. G. Dédéyan. Toulouse, 2007, p. 133; Ch. Marek. *Նշվ. աշխ., էջ 815,* В. Талах. *Նշվ. աշխ., էջ 166, Կ. Ա. Մուրթաֆյան, Է. Վ. Լովի. Հայաստանի պատմական տոպոս. Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը մ. թ. ա. VII դարից մինչև XXI դար, Երևան, 2017, էջ 30 և այլն: Կարծիք կա նաև, որ Փոքր Հայքի հյուսիսային հատվածը, սկսած Ք. ա. 64 թ., գտնվել է Դեյոտարոսի իշխանության տակ* (D. Magie. Roman rule in Asia Minor: To the end of the third century after Christ, vol. I. Princeton, New Jersey, 1950, pp. 374, 389)*:*

[43] *«Շուտով Պոմպեոսը պատերազմ հայտարարեց աղվաններին և երեք հաղթանակ տարավ նրանց արքա Օրոդեսի նկատմամբ ... Նա կռվում հաղթեց նաև Արտակին՝ Իբերիայի արքային: Փոքր Հայքը պարգևեց Դեյոտարոսին՝ գալաթների արքային, քանզի նա եղել էր իր դաշնակիցը Միհրդատի դեմ պատերազմում... Դրանից հետո Պոմպեոսը հաղթեց խուրացիներին և արաբներին: Եվ երբ գնաց Սիրիա, Սելևկիա քաղաքին, որ գտնվում էր Անտիոքի հարևանությամբ, ազատություն չնորհեց ...»* (Евтропий. *Նշվ. աշխ., գիրք VI, 14, 1):*

սիրությունը, V դ. պատմիչ Եվտրոպիոսի ներկայացրած համառոտ պատմության մեջ մանրամասները բաց են թողնվել. հռոմեական գերիշխանության շրջանում Փոքր Հայքի առաջին գահակալը դարձել է Բրոգիտարոսը, իսկ նրանից հետո՝ Ք. ա. 52 թ., Դեյոտարոսը[44]:

Ք. ա. 49 թ. Հուլիոս Կեսարի և Գնեոս Պոմպեոսի միջև ծագեց քաղաքացիական պատերազմ, որի ընթացքում Արևելքի երկրների արքաները, մեծ մասամբ, կողմնակից էին Պոմպեոսին, ինչը նրա շրջահայաց դիվանագիտական գործունեության կարևոր պտուղներից մեկն էր: Ապպիանոսի վկայության համաձայն (գիրք XIV, II, 71)՝ Պոմպեոսի կողմնակիցների մեջ էին և նրան օժանդակող բանակներ էին ուղարկել Մեծ Հայքի արքա Արտավազդ Բն ու Փոքր Հայքի թագավոր Դեյոտարոսը: Հայկական երկու պետությունների արքաները ոչ միայն դաշնակիցներ էին, այլև ամրապնդել էին իրենց կապը խնամիական ամուսնությամբ. Արտավազդ Բի դուստրն ամուսնացել էր Դեյոտարոս արքայի որդու հետ[45]:

Ք. ա. 48 թ. Պոմպեոսը պարտություն կրեց Փարսալուսի մոտ (Թեսսալիա) և փախավ Եգիպտոս, որտեղ էլ սպանվեց: Կեսարը, հետապնդելով Պոմպեոսին, նույնպես գտնվում էր Եգիպտոսում: Այս իրավիճակից որոշեց օգտվել Միհրդատ Եվպատորի որդի Փառնակեսը, ով իշխում էր Բոսփորի թագավորությունում և ցանկացավ վերականգնել հոր տիրույթները: Ք. ա. 47 թ. նա գրավեց Պոնտոսը և Փոքր Հայքը՝ հաղթելով Դեյոտարոսին, որից հետո հաջողության հասավ նաև Կապադովկիայի նկատմամբ: Հուլիոս Կեսարը չտապեց կանխել դեպքերի ոչ ցանկալի զարգացումները և Ք. ա. 47 թ. Զելա քաղաքի մոտ տոնեց մեծ հաղթանակ, որի մասին Հռոմին տեղեկացրեց իր հայտնի արտահայտությամբ «եկա՛, տեսա՛, հաղթեցի՛»[46]: Պարտությունից հետո Փառնակը վերադարձավ Բոսփոր: Փոքր Հայքի արքա Դեյոտարոսը, որը Փարսալուսի մոտ Պոմպեոսի կողմում մարտնչել էր Կեսարի դեմ՝ կորցրեց իր իշխանության տակ գտնվող երկրների մի մասը: Նրան պատկանող Փոքր Հայքը Ք. ա. 47 թ. Կեսարը տվեց Կապադովկիայի Արիոբարզանես Գ թագավորին (Ք. ա. 51–42)[47]:

---

[44] *Հանգամանորեն տե՛ս* F. E. Adcock. Lesser Armenia and Galatia after Pompey's Settlement of the East.– "The Journal of Roman Studies", vol. 27, part 1 (Papers Presented to Sir Henry Stuart Jones). London, 1937, pp. 12–17; R. D. Sullivan. Near Eastern Royalty and Rome, 100–30 BC. Toronto, Buffalo, London, 1990, pp. 164–169; С. Сапрыкин. *Նշվ. աշխ., էջ 290 և այլն:*

[45] *Այդ մասին իմանում ենք Ք. ա. 50 թ. փետրվարի 13-ին Ցիցերոնի գրած մի նամակից: Ցավոք, հայոց արքայադստեր անունը չի նշվում նամակում* (Письма Марка Туллия Цицерона…, т. II, годы 51–46, с. 82)*:*

[46] Плутарх. *Նշվ. աշխ., էջ 850: Նշենք նաև, որ Փառնակեսի կարճատև հաջողությունը և, ի թիվս այլոց, Փոքր Հայքի տարածքի ռազմակալումը բավարար հիմք չէ նրա անունը Փոքր Հայքի գահացանկ ներմուծելու համար:*

[47] *Ըստ Դիոն Կասսիոսի հաղորդման՝ «Քանդի Հայաստանի մի մասը, որը պատկանել էր Դեյոտարոսին, (Կեսարը) տվեց Արիոբարզանեսին …» (Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս. Նշվ. աշխ., էջ 167):*

Ք. ա. 44 թ. Սենատի նիստի ժամանակ դավադրության զոհ դարձավ Հուլիոս Կեսարը, որից հետո Մարկոս Անտոնիոսը, բավականին մեծ դրամական պարգևի դիմաց հայտարարեց՝ ըստ Կեսարի թողած հրահանգների՝ Դեյոտարոսի բոլոր նախկին տիրույթները պետք է վերականգնվեն[48]: Այդպիսով, նա կրկին վերականգնեց Փոքր Հայքի արքայի իր տիտղոսը, որը կորցրեց Ք. ա. 42 թ., քանի որ հարել էր Բրուտոսի գլխավորած քաղաքական հոսանքին: Դեյոտարոսը մահացավ Ք. ա. 40 թ.՝ խոր ծերության հասակում: Նա Փոքր Հայքի արքա ճանաչվեց երկու անգամ. առաջինը՝ Ք. ա. 52–47 թթ., երկրորդը՝ 44–42 թթ.[49]:

Միանգամայն անհիմն է Դեյոտարոսի որդուն և թոռանն իբրև Փոքր Հայքի արքաներ հիշատակելը: Ենթադրել են, որ նրանից հետո Գալաթիայի կառավարիչներ դարձած որդին՝ Կաստորը (Ք. ա. 41–36 թթ.) և թոռ Դեյոտարոս Բ-ն (Ք. ա. 36–33 թթ.) պետք է ժառանգաբար իշխեին նաև Փոքր Հայքում[50], ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ նման կարգ գոյություն չուներ: Որևէ աղբյուրում չկա տեղեկություն կամ գոնե ակնարկ նրանց՝ Փոքր Հայքի գահին տիրելու մասին:

Ք. ա. 43 թ. Հռոմում ստեղծվեց երկրորդ եռապետությունը՝ Անտոնիոս, Լեպիդոս և Օկտավիանոս կազմով: Արևելքը բաժին ընկավ Անտոնիոսին, և նրա դերակատարումը վճռորոշ էր Հռոմից կախյալ երկրների գահակալական խնդիրներում: Դա վերաբերում էր նաև Փոքր Հայքին, որի գահն Անտոնիոսը հանձնեց Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ին (Ք. ա. 37–8 թթ.) այն բանի դիմաց, որ նրա միջնորդությամբ կնքվեց իր և Ատրպատականի արքա Արտավազդ Ա-ի (որպես Ատրպատականի արքա՝ Ք. ա. 56–30 թթ.) դաշինքը[51]: Պոլեմոն Ա-ի՝ նաև Փոքր Հայքի ար-

[48] *Մարկոս Անտոնիոսն այդ մեծ կաշառքը ստացել է իր կնոջ միջոցով: Այս մասին տեղեկանում ենք Ցիցերոնի՝ ընդդեմ Մարկոս Անտոնիոսի գրած 2-րդ ճառից* [Марк Туллий Цицерон. Речи в двух томах, т. II: 62–43 гг. до н. э. (пер. В. О. Горенштейна). М., 1962, с. 285–319], *ինչպես նաև նրա այլ նամակներից* [Письма Марка Туллия Цицерона…, т. III, годы 46–43 (пер. и коммент. В. О. Горенштейна). М.–Л., 1951, с. 239, 255, 312, 592, 614–615]*:*

[49] *Դեյոտարոսի կյանքի ու գործունեության մասին, համապատասխան հղումներով տե՛ս* R. D. Sullivan. *Նշվ. աշխ., էջ 165–169:*

[50] *Դեյոտարոսի որդի Կաստորը և թոռ Դեյոտարոս Բ-ն, համապատասխանաբար, Ք. ա. 41–36 և 36–33 թթ. Փոքր Հայքի արքաներ են հիշատակվում էլեկտրոնային Վիքիպեդիա հանրագիտարանի «Փոքր Հայք» հայերեն և ֆրանսերեն հոդվածներում* [https://hy.wikipedia.org/wiki/ Փոքր_Հայք և https://fr. wikipedia. org/wiki/Arménie_Mineure *(վերջին այցելությունը՝ 01. VI. 2020)]:*

[51] *Ըստ Դիոն Կասսիոսի հաղորդման. «Այդ ժամանակ նա այդպես վարվեց, իսկ հաջորդ տարի, երբ կոնսուլներ էին Պոմպեոսը և Կոռնուփիկիոսը, (Անտոնիոսը) արշավանք ձեռնարկեց (Արտավազդ) Արմենի դեմ, մեծապես հույս դնելով Մեդացու վրա, որը զայրացած էր Փրաատեսի դեմ, որովհետև սա ավարից իրեն շատ բաժին չէր տվել և ոչ իսկ որևէ այլ ձևով պատվել, և միաժամանակ նա կամենում էր (Արտավազդ) Արմենին պատժել՝ հռոմեացիներին (իր երկրի դեմ) բերած լինելու համար, ուստի նա Պոլեմոնին ուղարկեց Անտոնիոսի մոտ, բարեկամություն և դինակցություն հայցելու: (Անտոնիոսը), իհարկե, այնպես ուրախացավ այս առիթից, որ ոչ միայն նրա հետ դաշինք կնքեց, այլև*

քա դառնալը տեղի ունեցավ Ք. ա. 34 թ.[52], սակայն այն երկարատև չեղավ:

Ք. ա. 31 թ. Ակցիումի ծովային ճակատամարտում ջախջախելով Անտոնիոսի ուժերին և հասցնելով նրան ինքնասպանության՝ Օկտավիանոսը սկսեց տնօրինել նաև հռոմեական Արևելքի գործերը: Նա ապաստան տվեց Ատրպատականի գահազրկված արքա Արտավազդ Ա-ին և, գնահատելով անցյալում հռոմեացիներին կատարած նրա ծառայությունները ընդդեմ պարթևների, հռչակեց Փոքր Հայքի արքա[53], որտեղ նա իշխեց մեկ տասնամյակ (Ք. ա. 30–20 թթ.) և մահացավ գահին բնական մահով:

Հռոմեական գերիշխանության դարաշրջանի Փոքր Հայքի ամենաերկարակյաց արքան եղավ Արքեղայոսը, ով Ք. ա. 36 թ. թագավորում էր Կապադովկիայում: Արտավազդ Մեդացու մահից հետո՝ Ք. ա. 20 թ., Օգոստոս Օկտավիանոսը նրան ճանաչեց նաև Փոքր Հայքի թագավոր[54]: Այս կարգավիճակում նա մնաց 37 տարի՝ մինչև Ք. ծ. 17 թ.:

Փոքր Հայքի այս արքայի և թագուհի Պյութոդորիսի մասին պահպանվել է Ստրաբոնի՝ շատ կարևոր հետևյալ վկայությունը. «Փոքր Հայքում տարբեր ժամանակ հռոմեացիների կամքով իշխել են տարբեր իշխողներ. վերջին ժամանակներս այն գտնվում էր Արքեղայոսի իշխանության ներքո: Իսկ տիբարենների և խաղտեացիների վրա մինչև Կող-

---

փոքր-ինչ ուշ Պոլեմոնին, որպես վարձատրություն նրա միջնորդության, տվեց Փոքր Հայքը» (Հ ո վ ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս, Դ ի ո ն Կ ա ս ս ի ո ս. նշվ. աշխ., էջ 184–185): Հեղինակը նույն տեղեկությունը կրկնում է մեկ այլ տեղում (նույն տեղում, էջ 188):

[52] Մեզ անհայտ է Ք. ա. 42–34 թթ. Փոքր Հայքի գահի ճակատագիրը: Ըստ Հ. Մանանդյանի, միանգամայն հնարավոր է, որ Ք. ա. 40–38 թթ. պարթևական-հայկական արշավանքների ժամանակ Փոքր Հայքը միացված լինի Մեծ Հայքին (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 274):

[53] Դիոն Կասսիոսի հաղորդումների համաձայն՝ Անտոնիոսն իր հետ եգիպտոս էր տարել Արտավազդ Ա-ի դուստր Յոթապեին՝ իր և Կլեոպատրայի որդի Ալեքսանդրի հետ ամուսնացնելու նպատակով: Օկտավիանոսը Արտավազդին վերադարձրեց դստերը և նրան դարձրեց Փոքր Հայքի արքա (Հ ո վ ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս, Դ ի ո ն Կ ա ս ս ի ո ս. նշվ. աշխ., էջ 188, 191–192):

[54] Ըստ Դիոն Կասսիոսի «(Հռոմ) քաղաքում այսպիսի գործեր էին կատարվում. և Օգոստոսը հպատակ երկրները կառավարում էր հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից (երկրներին) թույլ էր տալիս կառավարվել իրենց հայրենի ավանդույթների համաձայն: Եվ նա նպատակահարմար չէր գտնում ոչ այս մեկին որևէ բան ավելացնել, ոչ իսկ թույլ տալ որևէ նոր բանի ներմուծում, այլ ճշտորեն բավարարվել եղածով. իր այս կարծիքն էլ նա հաղորդեց սենատին: Այսպիսով, նա այդ ժամանակ ոչ մի պատերազմ չձեռնարկեց, բայց իրականում նա Յամբլիքոսի որդի Յամբլիքոսին տվեց նրա հայրենական իշխանությունը արաբների վրա և Տարկոնդիմոտոսի որդի Տարկոնդիմոտոսին հանձնեց Կիլիկիայի թագավորությունը, որը պատկանել էր նրա հորը, բացի ծովափնյա որոշ մասերից: Քանզի սրանք նա, Փոքր Հայքի հետ միասին պարգևել էր Արքեղայոսին, քանի որ Մեդացին, որը նախապես տիրում էր այնտեղ, մահացել էր» (նույն տեղում, էջ 191–192):

քիս, Փառնակիա և Տրապիզոն այժմ իշխում է Պյութոդորիսը, որն իմաստուն և վարչական կարողությամբ գերազանց մի կին է: Նա Պյութոդորոս Տրալլիացու դուստրն է, եղել է Պոլեմոնի կինը և մի ժամանակ թագավորել է նրա հետ, հետո ժառանգեց իշխանությունը, երբ Պոլեմոնը մեռավ Սինդիկե երկրի ասպուրգյան կոչված բարբարոսների մոտ: Պոլեմոնից նա ուներ երկու որդի և մի աղջիկ, որոնցից անդրանիկն իշխում է այժմ, Պյութոդորոսի երկու որդիներից մեկը սոսկական անհատ է, օգնում է մորը՝ իշխանության մեջ, իսկ մյուսը վերջերս եղավ Մեծ Հայաստանի թագավոր: Ինքը [Պյութոդորիսը երկրորդ անգամ] ամուսնացավ Արքեղայոսի հետ, ապրեց նրա հետ մինչև նրա կյանքի վերջը, այժմ դարձյալ այրիացած, և իշխում է ոչ միայն հիշյալ երկրների, այլև ուրիշ լավագույն երկրների վրա ...»[55]:

Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ն Ք. ա. մոտ 14 թ. կնության է առնում Պյութոդորիսին, ով ամուսնու մահվանից (Ք. ա. 8 թ.) հետո դառնում է Պոնտոսի միանձնյա թագուհի: Դրանից 5 տարի անց քաղաքական իրադարձությունները Հռոմեական կայսրության արևելքում ունեցան նոր զարգացումները: Հռոմին ցանկալի էր Արևելքում ստեղծել հնարավորինս մեծ հռոմեամետ քաղաքական միավորներ: Ք. ա. 3 թ. Օգոստոս Օկտավիանոսը համաձայնվում է թագ ուղարկել Պյութոդորիսին, եթե վերջինս ամուսնանա Կապադովկիայի արքա Արքեղայոսի հետ, որը Ք. ա. 20 թվականից նաև Փոքր Հայքի արքան էր, և հայտնի էր իբրև Հռոմի ամենահավատարիմ գործիչներից մեկն Արևելքում: Արքեղայոսի և Պյութոդորիսի ամուսնությամբ վերջինս դարձավ մի մեծ քաղաքական միավորման թագուհի, այդ թվում՝ Փոքր Հայքի՝ նոր կարգավիճակում մնալով 20 տարի: Ստրաբոնի հիշատակած Պյութոդորիսի և Պոլեմոնի որդին, ով դարձավ Մեծ Հայքի արքա, հայտնի Զենոն-Արտաշեսն է (18–34 թթ.):

17 թ. Հռոմը, վերացնելով Փոքր Հայքի, Կապադովկիայի, Կիլիկիայի և Կոմմագենեի թագավորությունները, դրանք վերածեց հռոմեական նահանգների: Արևելքում այս փոփոխությունը կատարվեց Օգոստոս կայսեր հաջորդ Տիբերիոս Կլավդիոս Ներոնի կամքով: Սակայն Տիբերիոսի մահից հետո Հռոմում որոշեցին վերադառնալ Օգոստոսի քաղաքականությանը: 38 թ. Կալիգուլայի հրամանով վերականգնվեցին 17 թ. լուծարված մի քանի թագավորություններ, այդ թվում՝ Փոքր Հայքը:

Փոքր Հայքի գահը ստացավ Կալիգուլայի մտերիմ անձնավորություններից մեկը՝ Կոտիսը[56], ով դրա համար ուներ որոշակի ժառանգական իրավունքներ: Նա մայրական գծով Պոլեմոն Ա-ի և Պյութոդորիսի թոռն

---

[55] *Ս տ ր ա բ ո ն. նշվ. աշխ., էջ 76–77: Ստրաբոնը Պյութոդորիսին հիշատակում է ևս մի քանի անգամ (գիրք XI, 2, 18, գիրք XII, 3, 31 և 37, գիրք XIV, 1, 42), որոնք խնդրո առարկա նյութին նորություն չեն ավելացնում:*

[56] *Կոտիսի՝ Փոքր Հայքի թագավոր լինելու մասին վկայում են Դիոն Կասիոսը (Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս, Դ ի ո ն Կ ա ս ս ի ո ս. նշվ. աշխ., էջ 197), Հովսեպոս Փլավիոսը (նույն տեղում, էջ 80), Տակիտոսը [Կ. Տ ա կ ի տ ո ւ ս (քաղեց և լատիներենից թարգմ. Պ. Սոտնիկյան).– Օտար աղբյուրները Հայերի մասին, № 3. Լատինական աղբյուրներ, Երևան, 1941, էջ 42–43]:*

էր, նրանց դուստր Անտոնիա Տրիփոնայի որդին, Մեծ Հայքի արքա Զենոն-Արտաշեսի քրոջ որդին: Հայրական գծով նա Թրակիայի Կոտիս թագավորի որդին էր: Դատելով փաստերից՝ Կոտիսը 38–43 թթ. իշխել է նաև Մեծ Հայքի գահին, երբ հայոց ավագանին Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ ընդվզել էր և դուրս մղել օտար ուժերին: Սակայն 43 թ. Կոտիսը ստիպված էր տեղի տալ Կալիգուլային հաջորդած Կլավդիոս կայսեր պահանջին և թողնել Մեծ Հայքի գահը Միհրդատ Իբերացուն[57]*:*

Թե մինչև երբ է իշխել Կոտիսը, սկզբնաղբյուրներում ստույգ հաղորդում չկա: Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ նա կարող էր Փոքր Հայքի գահին գտնվել մինչև 54 թ., երբ Ներոն կայսրը կատարեց նոր նշանակում[58]*: Հովսեպոս Փլավիոսի հաղորդման համաձայն՝ «Ներոնի իշխանության առաջին տարում, երբ Եմեսայի դինաստ Ագիպոսը մահացավ, իշխանությունը ժառանգեց նրա եղբայր Սոհեմոսին, իսկ Փոքր Հայքի իշխանությունը Ներոնը հանձնեց Քաղկիսի Հերովդես թագավորի որդի Արիստոբուլոսին»*[59]*:*

Տակիտոսն ավելի հանգամանորեն է ներկայացնում այդ նշանակումը, ինչից պարզ է դառնում, որ դա արվել է Հռոմի կայսեր՝ Պարթևստանի դեմ Արևելքում առկա ուժերի համախմբման և պատերազմի նախապատրաստման նպատակով. «Ներոնը հրամայում է Արևելքի լեգեոնները լրացնելու համար մերձակա պրովինցիաներում ժողովված երիտասարդությունը մոտեցնել և տեղավորել Հայաստանի սահմանների մոտ, իսկ երկու հին թագավորների՝ Ագրիպպային ու Անտիոքոսին ռազմի համար զորքեր նախապատրաստել, որոնցով պիտի ներխուժեին պարթևական սահմանները: Միաժամանակ կարգադրում է եփրատ գետի վրա կամուրջներ գցել: Եվ Փոքր Հայքը հանձնում է Արիստոբուլոսին, իսկ Սոֆենեի մարզը (Ծոփաց երկիրը)՝ Սոհեմոսին, երկուսին էլ տալով թագավորական նշաններ»[60]*:*

Տակիտոսն Արիստոբուլոսին Փոքր Հայքի գահին հիշատակում է նաև տարիներ անց, երբ Ներոնը Մեծ Հայքի արքա է նշանակում Տիգրան Զ-ին (60–62 թթ.), ով Կապադովկիայի և Փոքր Հայքի արքա Արքեղայոսի ծոռն էր: Նույն հաղորդման մեջ նշվում է, որ այդ ժամանակ Մեծ Հայքի սահմանային շրջաններն անջատվել են ու կցվել սահմա-

---

[57] *Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 311–315, ՀԺՊ, հ. I, էջ 721–726 (բաժնի հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան):*

[58] *Տե՛ս, օրինակ,* D. Magie. *Նշվ. աշխ., էջ 554, ՀԺՊ, հ. I, էջ 735,* M. Schottky. *Նշվ. աշխ., էջ 95,* Ch. Marek. *Նշվ. աշխ., էջ 815 և այլն:*

[59] *Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս. նշվ. աշխ., էջ 89: Արիստոբուլոսի մասին պատմագիրքը հիշատակում է մեկ այլ աշխատանքում ևս. «Այսպիսով, Փոքր Հայքի թագավորությունը (Ներոնը) տալիս է Հերովդեսի որդի Արիստոբուլոսին, իսկ Ագրիպպասի թագավորությանը ավելացնում է ևս չորս քաղաք՝ Արքելան, Յուլիասը Պերեայում, Տարիքեյան և Գալիլեայի Տիբերիասը իրենց շրջաններով, իսկ Փելիքսին նշանակում է մնացյալ Հրեաստանի պրոկուրատոր» (նույն տեղում, էջ 43):*

[60] *Կ. Տակիտուս. նշվ. աշխ., էջ 66–67:*

նակից երկրներին (Վիրքին, Պոնտոսին, Փոքր Հայքին և Կոմմագենեին), այդ թվում՝ Արիստոբուլոսի կառավարած Փոքր Հայքին[61]:

Արիստոբուլոսը դարձավ հռոմեական գերիշխանության ներքո Փոքր Հայքում իշխած վերջին արքան: Այս դեպքում ևս սկզբնաղբյուրներից ստույգ հայտնի չէ, թե մինչև որ թվականն է իշխել նա, սակայն ուսումնասիրողները մեծ հավանականությամբ ենթադրում են, որ դա կարող էր լինել 72 թվականը[62]: Այդ թվականին էր, որ Հռոմի Վեսպասիանոս կայսեր որոշմամբ վերացան Կոմմագենեի, Փոքր Հայքի ու Պոլեմոնական Պոնտոսի թագավորությունները, իսկ դրանց տարածքները միացվեցին հռոմեական Կապադովկիա պրովինցիային, ավարտվեց հելլենիստական դարաշրջանի հայկական կրտսեր թագավորություններից երկուսի՝ Փոքր Հայքի և Կոմմագենեի պատմությունը:

Եզրակացություն

Ամփոփելով Փոքր Հայքի թագավորությանը վերաբերող սկզբնաղբյուրների համառոտ այս տեսությունը՝ կարող ենք արձանագրել, որ նոր ժամանակների պատմագիտական ուսումնասիրություններում առկա են հակադիր երկու ծայրահեղություններ: Մի կողմից թագավորության գահացանկում չեն ներառվել իրականում իշխած արքաները [Արիակես Ա, Օրոմանես (Արամանյակ), Արիակես Բ], մյուս կողմից՝ արհեստականորեն գահացանկ են մտցվել անձինք, որոնք իրականում չեն եղել Փոքր Հայքի գահակալներ [Արկաթիոս Պոտնացի (Միհրդատ Եվպատորի որդի), Արիոբարզանես Ա Կապադովկիացի, Փառնակես Բ Պոնտացի, Կաստոր Գալաթացի, Դեյոտարոս Բ Գալաթացի]:

Ի մի բերելով սկզբնաղբյուրների քննության արդյունքները՝ կարելի է վերականգնել Փոքր Հայքի թագավորության հետևյալ գահացանկը.

Միթրաուստես (Միհրվահիշտ) – Ք. ա. 331–322 (?) թթ.,

Արիակես (Արիաուկա) Ա – Ք. ա. IV վերջին տասնամյակներ (հնարավոր է՝ Ք. ա. 321-ից կամ 301-ից հետո),

Օրոմանես (Օրոմանա, Արամանյակ) – Ք. ա. IV դ. վերջ և / կամ III դ. առաջին տասնամյակներ,

Արիակես (Արիաուկա) Բ – Ք. ա. III դարի կեսեր,

Միհրդատ – Ք. ա. 180–170-ական թվականներ,

Սիսիս – (?) թթ.,

---

[61] «... եկավ Տիգրանը, որն ընտրված էր Ներոնի կողմից Հայաստանին տիրապետելու համար: Այդ Տիգրանը կապադովկիացիների ավագանուց էր, Արքելաոս թագավորի ծոռն էր ... Որպեսզի ավելի հեշտ լինի նոր թագավորությունը պահպանել, Հայաստանի որոշ մասերը, նայած թե ում էին սահմանակից, հրաման ստացան հնազանդվել Փարաստմանին, Պոլեմոնին, Արիստոբուլոսին և Անտիոքոսին» (նույն տեղում, 90–91):

[62] D. Magie. *Նշվ. աշխ., էջ 572–574, 1435, ծնթ. 21;* M. Schottky. *Նշվ. աշխ., էջ 95;* Ch. Marek. *Նշվ. աշխ., էջ 815: «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի ամփոփիչ ժամանակագրության բաժնում ևս այս թվականն է համարվում Փոքր Հայքի թագավորության վերացման տարի (ՀԺՊ, հ. I, էջ 721–726):*

Անտիպատրոս – Ք. ա. (?)–112 թթ.,
Միհրդատ Եվպատոր (Արտաշես) – Ք. ա. 112–71 և 68–66 թթ.,
Բրոզիտարոս Գալաթացի – Ք. ա. 64–52 թթ.,
Դեյոտարոս Գալաթացի – Ք. ա. 52–47 թթ.,
Արիոբարզանես Կապադովկիացի – Ք. ա. 47–44 թթ.,
Դեյոտարոս Գալաթացի – Ք. ա. 44–42 թթ. (երկրորդ անգամ),
Պոլեմոն Պոնտացի – Ք. ա. 34–30 թթ.,
Արտավազդ Ատրպատականցի – Ք. ա. 30–20 թթ.,
Արքեղայոս Կապադովկիացի – Ք. ա. 20 – Ք. ծ. 17 թթ.,
Կոտիս Թրակիացի – 38–54 (?) թթ.,
Արիստոբուլոս Քաղկիդիկացի – 54–72 թթ.:

Թերևս, իմաստ ունի գահացանկում հանդիպող «Միհրդատ» անուն նով երկու արքաներին, որպես Փոքր Հայքի արքաներ, նշել կարգահամարով. Ք. ա. 180–170-ական թվականներին իշխածին՝ Միհրդատ Ա, իսկ Միհրդատ Եվպատորին՝ Միհրդատ Բ Արտաշես:

Փոքր Հայքի թագավորության հետ կապված բազմաթիվ այլ հարցեր հետագա ուսումնասիրությունների առարկա են: Մասնավորապես, համակարգված և նորովի ուսումնասիրության կարիք ունեն Փոքր Հայքի թագավորության հետ կապված դրամները[63], արձանագրությունները և բոլոր այն նյութերը, որոնք թույլ կտան ամբողջական դնահատելու հայկական այս պետության տեղն ու դերը Հայաստանի և Անտիկ աշխարհի պատմության ընթացքում:

Արտակ Մովսիսյան – պ. գ. դ., պրոֆ., ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի հին շրջանի պատմություն և մշակույթ: Հեղինակ է 30 մենագրության և ավելի քան 100 հոդվածի: movsart@mail.ru, movsisyanartak@ysu.am

Լիաննա Կարապետյան – ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի լաբորանտ: Գիտական հետաքրքրությունը՝ Հայաստանի հին շրջանի պատմություն: Հեղինակ է 2 հոդվածի: lianna.karapetyan19@gmail.com

REFERENCES

Adcock F. E. Lesser Armenia and Galatia after Pompey's Settlement of the East. – "The Journal of Roman Studies", vol. 27, part 1 (Papers Presented to Sir Henry Stuart Jones). London, 1937.

Adonts N. Erker, h. D, Yerevan, 2009 (In Armenian).

Aleksandr Makedonatsi (targm. ruserenits` A. E. Sargsyan, R. B. Mavisakalyan), Yerevan, 1987 (In Armenian).

[63] *Այդ ուղղությամբ կատարված վերջին և առավել ամբողջական աշխատանքը տե՛ս* F. L. Kovacs. *Նշվ. աշխ., էջ 49–52:*

Appian Aleksandriysiy. Rimskaya istoriya. – “Vestnik drevney istorii”, 1946, № 4 (In Russian).
Chaumont M.–L., Traina G. Les Arméniens entre l’Iran et le monde Gréco-romain (V^{e} siècle av. J.- C. – vers 300 ap. J.- C.). – “Histoire du peuple arménien”, dir. G. Dédéyan. Toulouse, 2007.
Diodoros Sikiliatsi. – Otar aghbyurnere Hayastani ev hayeri masin, 14. Hin hunakan aghbyurner, B, Yerevan, 1985 (In Armenian).
Elchibekyan Zh. Hayastane ev Selevkyannere, Yerevan, 1979 (In Armenian).
Evtropiy. Kratkaya istoriya ot osnovaniya Gorada (per. A. I. Donchenko). M., 1997 (In Russian).
Hakobyan H. Tigran Meds, Yerevan, 2005 (In Armenian).
Harutyunyan B. Pontosi Mihrdat VI Evpator tagavore naev hayots arka.– PBH, 2003, № 3 (In Armenian).
Hay zhoghovrdi patmutyan krestomatia, h. 1 (kazmoghner` P. Hovhannisyan, A. Movsisyan), Yerevan, 2007 (In Armenian).
Hay zhoghovrdi patmutyun, h. I, Yerevan, 1971 (In Armenian).
Holleaux M. Etudes d’epigraphie et d’histoire grecques, III, Lagides et Seleucides. Paris, 1942.
Hovsepos Plavios, Dion Kassios.– Otar aghbyurnere Hayastani ev hayeri masin, 9. Hin hunakan aghbyurner, A, Yerevan, 1976 (In Armenian).
Hümann K., Puschtein O. Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband. Berlin, 1890.
K. Takitus (kaghec ev latinerenic targmanets P. Sotnikyan).– Otar aghbyurnere hayeri masin, № 3. Latinakan aghbyurner, Yerevan, 1941 (In Armenian).
Kovacs F. L. Armenian Coinage in the Classical Period. London, 2016.
Lomouri N. K istorii Pontiyckogo tsarstva, ch. 1. Tbilisi, 1979 (In Russian).
Lipinski E. Studies in Aramaic Inscriptions and Onomastics. Leuven, 1975.
Magie D. Roman rule in Asia Minor: To the end of the third century after Christ, vol. I. Princeton, New Jersey, 1950.
Maksimova M. Antichnye goroda yugo-vostochnogo Pruchernomorya. M.–L., 1956 (In Russian).
Manandyan H. Erker, h. A, Yerevan, 1977 (In Armenian).
Manaseryan R. Tigran Meds. Hayastani paykare Hromi ev Partevstani dem, Yerevan, 1987 (In Armenian).
Marek Ch. Geschichte Klaeinasien in der Antike. München, 2010.
Mark Tulliy Tsitseron, Retchi v dwukh tomakh, t. II: 62– 43 gg. do n. e. (per. V. O. Gorenshteyna). M., 1962 (In Russian).
Meyer Ed. Geschichte des Konigreichs Pontos. Leipzig, 1879.
Molev E. A. Malaya Armeniya i Mitridat Evpator.– “Problemy antichnoy istorii i kyl’tury” (doklady XIV Mezhdunarodnoy konferentsii antikovedov sotsialisticheskikh stran “Eyrene”). Yerevan, 1979 (In Russian).
Molev E. A. Mitridat Evpator. Sozdanie Chernomorskoy derzhavy. Saratov, 1977 (In Russian).
Mommzen T. Istoriya Rima, t. 2. M., 1997 (In Russian).

Mutafyan K. A. Lov E. V. Hayastani patmakan atlas. Merdzavor Arevelke ev Haravayin Kovkase m.t.a. VII darits minchev XXI dar, Yerevan, 2017 (In Armenian).

Ohanyan M. Aleksandr Makedonatsu arevelyan arshavanke ev Hayastane, Yerevan, 2003 (In Armenian).

Pavel Oroziy. Istoriya protiv yazychnikov (per. V. M. Tyuleneva). Knigi IV–V. SPb., 2002 (In Russian).

Pis'ma Marka Tulliya Tsitserona, t. II (per. i komment. V. O. Gorenshteyna). M.–L., 1950 (In Russian).

Pis'ma Marka Tulliya Tsitserona, t. III (per. i komment. V. O. Gorenshteyna). M.–L., 1951 (In Russian).

Plutarkh. Sravnitelnie zhizneopisaniya (per. V. A. Alekseeva). M., 2017 (In Russian).

Reinach T. Mithridate Eupator, roi de Pont. Paris, 1890.

Reinach Th. Villes méconnues. III. Aranda.– "Revue des Études Grecques", tome 18, fascicule 80. Paris, 1905.

Saprykin S. Pontiyskoe tsarstvo. Gosudarstvo grekov i varvarov v Prichernomore. M., 1996 (In Russian).

Sargsyan G. Antiokos G Selevkyane ev haykakan petutyunnere. – "Banber Yerevani hamalsarani", 1969, № 1 (In Armenian).

Schottky M. Klein-Armenien. – "Herrscherchronologien der antiken Welt: Namen, Daten, Dynastien", DND Suppl. I. Stuttgart-Weimar, 2004.

Strabon. Ashkharhagrutyun (kaghets ev targmanets H. Ajaryan).– Otar aghbyurner hayeri masin, № 1. Hunakan aghbyurner, Yerevan, 1941 (In Armenian).

Sullivan R. D. Near Eastern Royalty and Rome, 100-30 BC. Toronto, Buffalo, London, 1990.

Talakh V. H. Rozhdenniy pod znakom komety: Mitridat Evpator Dionis. Kiev, 2012 (In Russian).

Tiratsyan G. Ervanduninere Hayastanum.– HKhSH GA "Teghekagir hasarakakan gitutyunneri", 1958, № 6 (In Armenian).

Tiratsyan G. Strana Kommagena i Armeniya.– "Izvestiya obshestvennykh nauk" AN ArmSSL, 1956, № 3 (In Russian).

Toumanoff C. Studies in Christian Caucasian History. Washington, 1963.

Vardanyan R. Dramatogharkume Hayastanum hellenistakan ev hromeakan zhamanakashrjannerum.– Hayastani dramashrjanarutyan patmutyune, Yerevan, 2018 (In Armenian).

Vinogradov Yu. G., Kadeev V. I. Armyanskie luchniki na sluzhbe Mitridata Evpatora. – Vtaroy vsesoyuznyy simpozium po problemam ellinisticheskoy kultury na Vastoke. Tezisy dokladov. Yerevan, 1984 (In Russian).

Vinogradov Yu. Politicheskaya istoriya Olviyskogo polisa VII–I vv. do n. e. (istoriko-epigraficheskoe issledovanie). M., 1989 (In Russian).

Yustin. Epitoma sochineniya Pompeya Troga "Istoriya Filippa" (per. A. A. Dekonskogo, M. I. Rizhskogo). SPb., 2005 (In Russian).

ЦАРСКИЙ СПИСОК КОРОЛЕВСТВА МАЛОЙ АРМЕНИИ

АРТАК МОВСИСЯН, ЛИАННА КАРАПЕТЯН

Р е з ю м е

Ключевые слова: История Армении, Малая Армения, эллинистический период, Александр Македонский, Селевкидская империя, Рим, Понт, Митрауст, царский список.

В научных исследованиях до сих пор не был полностью восстановлен царский список королевства Малой Армении (331 г. до р. Хр. – 72 г. после р. Хр.). На основе исследования первоисточников (Арриан, Руфус, Диодор Сицилийский, Страбон, Юстин, Аппиан Александрийский, Дион Кассий, Иосиф Флавий, Плутарх, Тацит и др.) становится возможным восстановить полный царский список, который выглядит следующим образом:

Митрауст – 331–322 (?) гг. до р. Хр.,
Ариак (Ariauka) I – последние десятилетия IV в. до р. Хр. (возможно, после 321 или 301 г. до р. Хр.),
Ороман (Оромана, Араманьяк) – конец IV в. и / или первые десятилетия III в. до р. Хр.,
Ариак (Ариаука) II – середина III в. до р. Хр.,
Митридат – 180–170 гг. до р. Хр.,
Сисис – (?),
Антипатр – (?) –112 гг. до р. Хр.,
Митридат Евпатор (Арташес) – 112–71 и 68–66 гг. до р. Хр.,
Брогитар из Галатии – 64–52 гг. до р. Хр.,
Дейотар из Галатии – 52–47 гг. до р. Хр.,
Ариобарзан из Каппадокии – 47–44 гг. до р. Хр.,
Дейотар из Галатии – 44–42 гг. до р. Хр. (второй раз),
Полемон из Понта – 34–30 гг. до р. Хр.,
Артавазд из Атропатены – 30–20 гг. до р. Хр.,
Архелай из Каппадокии – 20 г. до р. Хр. – 17 после р. Хр.,
Котис из Фракии – 38–54(?) гг.,
Аристовул из Халкиды – 54–72 гг.

Артак Мовсисян – д. и. н., проф., заведующий кафедрой истории Армении ЕГУ. Научные интересы: история и культура древней Армении. Автор 30 монографий и более 100 статей. movsart@mail.ru, movsisyanartak@ysu.am

Лианна Карапетян – лаборант кафедры истории Армении ЕГУ. Научные интересы: история древней Армении. Автор 2 статей. lianna.karapetyan19@gmail.com

Փիլիսոփայական հանդես 2020 № 2 Историко-филологический журнал

THE KING LIST OF THE KINGDOM OF ARMENIA MINOR

ARTAK MOVSISYAN, LIANNA KARAPETYAN

S u m m a r y

Key words: Armenian history, Armenia Minor, Hellenistic period, Alexander Macedonian, Seleucid Empire, Rome, Pontus, Mithraustes, king list.

In scientific studies the king list of the Kingdom of Armenia Minor has not been fully restored until now (331 BC–72 AD). Based on the study of the primary sources (Arrian, Rufus, Diodorus of Sicily, Strabo, Justin, Appian of Alexandria, Dion Cassius, Josephus Flavius, Plutarch, Tacitus and others) it becomes possible to restore the complete king list, which is as follows:

Mithraustes – 331–322(?) BC,
Ariakes (Ariauka) I – last decades of the 4th century BC (possibly after 321 or 301 BC),
Oromanes (Oromana, Aramaniak) – end of the 4th century BC and/or first decades of the 3rd century BC,
Ariakes (Ariuka) II – middle of the 3rd century BC,
Mithridates – 180–170s BC,
Sisis – (?),
Antipater – (?)–112 BC,
Mithridates Eupator (Artashes) – 112–71 and 68–66 BC,
Brogitarus of Galatia – 64–52 BC,
Deiotarus of Galatia – 52–47 BC,
Ariobarzanes of Cappadocia – 47–44 BC,
Deiotarus of Galatia – 44–42 BC (second time),
Polemo of Pontus – 34–30 BC,
Artavasdes of Atrpatene – 30–20 BC,
Archelaus of Cappadocia – 20 BC–17 AD,
Cotys of Thracia – 38–54(?),
Aristobulus of Chalcis – 54–72.

Artak Movsisyan – Doctor of Sciences in History, Professor, Head of the YSU Chair of the History of Armenia. Scientific interests: Ancient history and culture of Armenia. Author of 30 monographs and over 100 articles. movsart@mail.ru, movsisyanartak@ysu.am

Lianna Karapetyan – Laboratory Assistant at the Chair of the YSU History of Armenia. Scientific interests: history of Armenia. Author of two articles. lianna.karapetyan19@gmail.com

ՄԵԾ ՄԱՍԻՍԻ ՆՈՐԱՀԱՅՏ «ՎԻՇԱՊ» ԿՈԹՈՂԸ, ԵՎ ԼԵՌԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ *

ԱՐՍԵՆ ԲՈՐՈԽՅԱՆ, ՍԱԱԿ ՏԱՐՈՆՑԻ

Բանալի բառեր՝ Մասիս, Իգդիր, Արալիկ, «վիշապ» կոթող, հնագիտական համատեքստ, պատմական տվյալներ, ավանդազրույցներ, ուղենիշ, սրբազան տարածք, ինքնություն:

Նախաբան

Հնագույն Հայաստանի հոգևոր մշակույթի կարևորագույն հուշարձան «վիշապ» քարակոթողների[1] հայտնագործող Ն. Մառը 1922 թ. «Վիշապ» գրքի հրապարակման կազմակերպման մասին» ձեռագիր փաստաթղթում լեռներ բարձրանալու իր առաջին վերապրումների մասին գրում է. «Այդքան վաղ արթնացած ճանաչողական խմբի խնդիրն էր ստուգել լուրերը ինչ-որ առեղծվածային քարե վիշապների մասին: Այն ժամանակ մեզանից ոչ ոք չէր գգում, որ յուրաքանչյուր քայլ դեպի վեր, դեպի այն բարձունքները, որոնք հավասար են հայտնի հայկական լեռների՝ Արագածի և Մասիսի կամ Արարատի բարձրությունները, մեզ մոտեցնում էր նյութական մշակույթի այնպիսի հուշարձաններին, որոնց գոյությունը չէր ենթադրվում նույնիսկ մարդկային կյանքի խորքային սահմաններում, և որոնք միջնադարում տեղական պատմիչների կողմից ներկայացվում էին որպես ընկած աստված-վիշապների լեռնային բնակության վայրեր: Պարզվեց, որ առեղծվածային հսկա այդ քարերը հիրավի վիշապներ էին՝ հաբեթական աչխարհի աստվածություններ, ձկներ»[2]: Դրանից առաջ՝ 1911 թ. օգոստոսի 21-ին, իր աշակերտ Հ. Օրբելուն՝

---

* *Ներկայացվել է 19. VI. 2020 թ., գրախոսվել է 23. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 30. VI. 2020 թ.:*

[1] *Այս կոթողները պատրաստված են բազալտից, ունեն 150–550 սմ բարձրություն, ըստ ձևի ու պատկերի լինում են ցլակերպ, ձկնակերպ և ձկնացլակերպ ու կապվում են հիմնականում ջրի, բայց նաև՝ այլ սինկրետիկ պաշտամունքների հետ: Խաչքարերի նման, «վիշապ» կոթողները հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհում՝ նրա բարձրլեռնային ու նախալեռնային գոտիներում: Կիրառման հիմնական շրջանն է բրոնզի դարը (Ք. ա. III հազ. վերջ – II հազ. վերջ): Այս կոթողների ուսումնասիրության պատմության և այլ մանրամասների մասին տե՛ս Վիշապ քարակոթողները. Խմբ.՝ Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան, Երևան, 2015, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին. Խմբ.՝ Ա. Բոբոխյան, Ա. Ջիլիբերտ, Պ. Հնիլա, Երևան, 2019:*

[2] Н. Я. М а р р. Об организации серии изданий ГАИМК «Вишапы», записка в Издательскую комиссию ГАИМК, 1922 г., Санкт-Петербургский филиал Архива Российской Академии наук, ф. 800, оп. 1, ед. хр. 1778, л. 1.

Անիից Վան ուղարկած նամակում, արդեն վիշապները հետազոտած գիտնականը չեչոում է. «Փնտրեք և տեղեկացեք քարե ձկների մասին լեռներում: Ես դեռևս մտածում եմ [դրանց հայտնաբերելու] հնարավորության մասին նաև այլ լեռներում՝ հատկ[ապես] Մասիսի և Ալագյոզի վրա»[3]: Այս դատողություններից երևում է, որ «վիշապ» կոթողների հետազոտության հենց ամենասկզբում Ն. Մառն արդեն զգացել էր Մասիսի կարևորությունն այդ կոթողների հետագա հետազոտման համատեքստում: Եվ տարիներ անց իր հրապարակած գրքում Մասիսի մասին գրում է. «Տեսարանը դեպի սուրբ լեռը միշտ առանձնահատուկ է վիշապների տեղադրության համար»[4]:

Ն. Մառի ու նրա աշակերտ Յ. Սմիրնովի՝ «վիշապ» կոթողների հայտնագործությունը մեծ արձագանք գտավ հայ իրականության մեջ: Թ. Թորամանյանն արձանագրեց, թե դրանով Մովսես Խորենացու վիշապազունների և վիշապների պալատի առասպելն իրականություն դարձավ[5], իսկ Լեոն նշեց, որ այս հայտնագործությունը ցույց է տալիս՝ Խորենացու հիշատակած «վիշապապաշտ կամ վիշապազուն ժողովուրդը, ուրեմն միայն Մասիսի վրա չէր ապրում, այլև դաշտում, Գառնիի լեռներում»[6]:

Մեր դասականների ժամանակներից անցել են տարիներ, ի հայտ են եկել բազմաթիվ փաստեր, որոնք հնարավորություն են տալիս նոր լույսի ներքո քննարկելու նրանց կարծիքները: Նման մի տվյալի՝ Մեծ Մասիսի հյուսիսարևելյան լանջերին հայտնաբերված «վիշապ» կոթողի և նրա կարևորության մասին է այս աշխատանքը:

Վիշապի հայտնաբերման հանգամանքները

2015 թ. հունիսին, ոչխարներ արածեցնելիս, Բերաթ Զաղա անունով մի հովիվ (ծնվ. 1994 թ.) Աղրը քաղաքից տեսնում է գանգվածեղ կոթողը Մեծ Մասիսի հյուսիսարևելյան լանջերին՝ «Իգդիր քաղաքի և Արալիկ գյուղի միջև», «մարդկանցից հեռու գտնվող անմատչելի մի վայրում», լեռնային-ալպիական գոտում: «Կապույտ» քարը հողի մեջ, կիսաթեք ընկած վիճակում է եղել: Հուլիսի 29-ին այդ քարի լուսանկարները Բ. Զաղան ուղարկում է հնագետ Սաակ Տարոնցուն (ում հետ կապի մեջ է եղել նախկինում՝ նրան ուղարկելով խաչքարերի նկարներ Արալիկ գյուղից)՝ նույնականացման նպատակով[7] (նկ. 1, 2):

---


[3] Н. Я. М а р р. Письма к И. А. Орбели. – «Арменоведческие иследования», т. I. Ереван, 1974, с. 237.

[4] Н. Я. М а р р, Я. И. С м и р н о в. Вишапы. Л., 1931, с. 92.

[5] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Հայկական ճարտարապետություն, հ. 1, Երևան, 1942, էջ 57:*

[6] *Լ ե ո. Հայոց պատմություն, հ. I – Հին պատմություն. – Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 389:*

[7] *Բերաթ Զաղայի նամակագրությունը Ս. Տարոնցու հետ՝ 29. 07. 2015 թ.: Արալիկ/Արալըխ գյուղը հարմար գոտի է Մասիս բարձրանալու կամ այնտեղից իջնելու համար. հմմտ. օր.՝* И. Д. Мансветов (ред.). Пятый археологический съезд в Тифлисе, т. I. Труды предварительных комитетов. М., 1882, с. 196 *(Ի. Պոլյակովի հաշվետվությունը).* А. В. П а с т у х о в. Восхождение на Арарат.



Նկ. 1. Մեծ և Փոքր Մասիսների տեղագրական հանույթն ու կտրվածքը (քարտեզի հեղինակ՝ Հենրիկ Դանիելյան):

Հանձին նորահայտ կոթողի՝ գործ ունենք ստորին հատվածում նեղ, վերնամասում՝ լայնացող և կլոր քանդակով բնորոշվող «վիշապի» հետ,

– «Известия Кавказского отделения Императорского русского географического общества», 1894, № 16, с. 442.

որի մոտավոր չափերն են 380 x 120 x 60 սմ: Կոթողի վերնամասում պատկերված է մորթված ցուլ, որի առջևի երկու վերջույթները տարածված են գլխի աջ ու ձախ կողմերում, իսկ բերանից, թերևս, ջուր է հոր-դում: Վիշապի չուրջ երևացող քարերի կուտակումներից կարելի է ենթադրել, որ կոթողն իր նախնական տեղում է՝ հավանաբար, հարթակ/կրոմլեխի մեջ, որտեղ նախապես կանգնած պիտի լիներ: Բ. Զաղայի նկարագրություններից վերականգնում ենք, որ կոթողը գտնվել է ծ. մ. մոտ 2.500 մ և ավել բարձրության վրա:

Մասիս լեռան շրջանից նախկինում վիշապներ չեն հայտնաբերվել: Միակ տվյալն այս կապակցությամբ վերաբերում է գրող Ատրպետին, ով XX դ. սկզբին հայկական սրբավայրերի ձեռագիր մի ցուցակում հիշում է «Մանկասար-Կրզըլ Զիարեթ (Ոսկիսարի ուխտ)»-ը, մեկ այլ տեղ չեշտում Մանկասար գյուղն ու գետակը, որը բխում է Շիշթափի լեռներից, և որտեղ կան «վիշապական արձաններ»[8]: Մանկասարը կամ Կրզըլ Զիարեթը գտնվում է Սինակ և Շիշթափա/Զոր լեռնագագաթների բարձրլեռնային գոտում, ինչը վկայում է այն մասին, որ տեղադրությամբ մոտենում է խնդրո առարկա գտածոյին, բայց անպայմանորեն չի համընկնում նրա հետ[9]: Ատրպետի արտահայտությունից ենթադրում ենք, որ լեռան՝ դեպի Հայկական պարը ճգվող հատվածում եղել են մեկից ավել վիշապներ:

Մասիսի հնագիտական համատեքստը

Մեծ և Փոքր Մասիսների հնությունների և հնագիտական միջավայրի մասին տվյալներ կան արդեն XIX դ. և XX դ. սկզբի հեղինակների մոտ[10]: Դրանցից ամենամանրամասն ճանապարհորդ Ա. Մխիթարյանի նկարագրությունն է, ով գրում է. «Մասիսի ուշադիր այցելուն ամեն մի քայլափոխում հանդիպում է մի հին, հրաշալի, կորած կուլտուրայի հետքերի, որ դիտեր օգուտ քաղել նույնիսկ լեռնային այս դժվարակոխ լանջերից և նրա զառիվերները, ուր միայն կար ամենափոքր հնարավորություն, դարձնել


---

[8] *Ա տ ր պ ե տ. Վիշապազանց վորորանը. – Հայաստանի պատմության թանգարանի արխիվ, ԱԱ 182, Լենինական, 1927, էջ 29, Նույնի՝ Վիշապազանց կուլտը և Անահիտ.– նույն տեղում, ԱԱ 177, Լենինական, 1931, էջ 33:*

[9] *Կրզըլ-Զիարեթը հայկական Պարի լեռնագագաթներից է (բ. ծ. մ. 2.897 մ), Սինակ (բ. ծ. մ. 2.774 մ) լեռնագագաթի մոտ, Գայլատու լճի (բ. ծ. մ. 2.247 մ) արևմտյան կողմում: Լեռան գագաթին եղել է մատուռ, որից սառնորակ աղբյուր է բխել: Տարածքը հարուստ է լճակներով, արոտավայրերով, ճահիճներով: Շիշթափա (Զոր)ը լեռնագագաթ է (բ. ծ. մ. 2.800 մ) Հայկական Պարի Մեծ Մասիս-Սինակ հատվածում, Գայլատու լճից 30 կմ արևելք: Սինակի լեռների ամենաբարձր գագաթներից է, որի մոտ գտնվում է Զորի լեռնանցքը (տեղադրություններն ըստ Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ստ. Տ. Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1–5, Երևան, 1986–2001):*

[10] *Դրանցից վաղագույններից է՝* Fr. Dubois de Montpéreux. Voyage aotour du Caucase, t. III. Paris, 1839, p. 454.

պարտեզ ու այգի»[11]: Մասնավորապես նա հիշատակում է կիկլոպյան պատեր, հսկայական ջրանցքներ և պատվար-պատնեշներ, աշտարակաձև հսկայական կառույցներ՝ ատամնավոր կատարներով, որոնք «կրում



Նկ. 2. Մեծ Մասիսի «վիշապ» կոթողը
(լուսանկարը՝ Բերաթ Զաղայի, գծանկարը՝ Արտակ Հախվերդյանի):

են խորին հնության կնիք» և պատկանել են «մի հին ու չքնաղ քաղաքակրթության»: Աշտարակների մասին խոսելիս գրում է. «Մեր առասպելական քաջերի բնակարանները չե՞ն արդյոք ղրանք» (նկատի ունի Արտավազդի պատմությունը): Ջրանցքի մասին էլ գրում է. «Ջրանցքը սկսվում է երկու խորաձորերի խաչաձև կտրվածքից, դեպի ուր հոսում են Մասիսի հավիտենական ձյունների ու սառույցների ամենաստորին սահմանից բխած ջրերը, և այս ցիկլոպյան ջրանցքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի արհեստական չտեմարան, ուր ամբարվում էին Մասիսի այնքան

[11] *Ա. Մ խ ի թ ա ր ե ա ն. Դէպի Արարատ, Թիֆլիս, 1904, էջ 17, 86–88, 147–148, 154: Համմտ. նաև Ն ո ւ յ ն ի՝ Վաղարշապատ, Էջմիածին, 1874, էջ 17:*

թանկագին ջրերը ու հոսում դեպի Կոգովտի մի ժամանակ բարեբեր և բուսաշատ, իսկ այժմ չոր, ամայի, անբնակ գավառը»: Մեկ այլ տեղ հեղինակը Փոքր Մասիսի վրա հիշում է կիկլոպյան չարվածքով պաշնավուրի/օղուզի գերեզմանները և/կամ աշտարականման կառույցներ[12]:

Փոքր Մասիսի (Սիսի) վրա գերեզմաններ է հիշատակում արդեն Ֆ. Պարրոտը[13]: Ճանապարհորդ Է. Ռեկլյուն Սևանա լճի ավազանում հիշում է «բազմաթիվ գերեզմանական հողաբլուրներ, որ կոչում են օղուզների, այն է՝ «հսկաների» չիրիմ», որոնք կանգնած են բարձրավանդակի վրա շատ տեղերում, առանձին կամ շարքերով, նման այն գերեզմաններին, որ գտնվում են Արագածի և մինչև անգամ Փոքր Մասիսի գագաթներին»[14]: Աչխարհագրագետ Մ. Թաղիադյանը նույնպես հիշատակում է «լիճ ի կատար Փոքուն Մասեաց՝ առ որով մացառք Թեղեաց և գերեզմանք Հսկայից՝ հասարակօրէն օղուզի գերեզման կարդացեալ»[15]: Ղ. Ալիշանը հիշատակում է « ... աշտարակաձեւ վէմս ցցուեալս, ընդ մէջ Փոքու Մասեաց», որ կարծում էին Թե քաջերի բնակարանն է կապված Արտավազդի պատմության հետ. բացի այդ «ի տափաձեւ գագաթանն կան մեծամեծ վէմք թաւալեալք, իբրեւ 15 երկայն, 5–6 լայն գորս ռամիկն կոչէ Գերեզմանս Օղուզի այսինքն Հսկայից»[16]: Ճանապարհորդ Ս. Ծոցիկյանը լրացնում է. «Անոր կատարին վրայ լճին եզերքը կը նկատուին քանի մը գերեզմաններ: Նախնադարեան այս հողակոյտերը իրենց վրայ կը կրեն չիրմաքարեր, կճեայ տապաններ: Ասոնցմէ ոմանք մինչև 16 ոտք երկայնութիւն և 6 ոտք լայնութիւն եւ հաստութիւն ունին ... Փոքրիկ Մասիսն ալ զուրկ չէ առասպելական աւանդութիւններէ: Արարատաբնակ ժողովուրդը կը կարծէ, Թե այդ լեռան կուրծքին մէջ կապրին դևեր, ամեհի օձեր, վիշապներ, բազմագլխեան հրէշներ, որոնք երբեմն դուրս կելլեն իրենց մթին որջերէն, և կիջնեն դաշտ: Կատարը գտնուող գերեզմանները քաջերու, պաշտուած հերոսներու և հսկաներու կը պատկանին: Այնտեղ կայ, ուղտերու կարաւան մըե քարացած: Ուղտապանին մեկ ձեռքը առաջնորդ ուղտին սանձը, իսկ միւս ձեռքը ցուպ մը»[17]: Լ. Տիգրանյանը նմանապես Փոքր Մասիսի գագաթին է հիշում պաշնավուրի/օղուզի/հսկաների գերեզմաններ

---

[12] *Նույն տեղում:*

[13] *Ֆ. Պ ա ր ր ո տ. Դորպատից Արարատ, Երևան, 1990, էջ 97–98:*

[14] *Է. Ռ ե կ լ յ ո ւ. Ռուսական Հայաստան, Վաղարշապատ, 1891, էջ 19: Օղուզի գերեզմանների մասին տե՛ս նաև՝* A d. B e r g é. Der Kaukasus in archäologischer Beziehung. – "Russische Revue" (St. Petersburg), 1874, № 5, S. 423.

[15] *Մ. Թ ա ղ ի ա դ յ ա ն. Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 51:*

[16] *Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 481, 485: Համմտ. Ա. Գ ր ի գ ո ր ե ա ն. Բնապաշտական եւ խորհրդաբանական ընկալումների դրսեւորումները Ղեւոնդ Ալիշանի երկերում. – «Բազմավէպ» (Վենետիկ), 2014, № 1–2, էջ 20, 25:*

[17] *Ս. Մ. Ծ ո ց ի կ ե ա ն. Արարատ-Կովկաս, հ. 1, Ֆրեզնո, 1917, էջ 413–414:*

և համապատասխան ավանդազրույցներ բերում[18]: Քննարկվող դամբարաններ/մեգալիթյան կառույցները պետք է վերաբերեն հնագույն շրջաններին, սակայն դրանց մեջ կարող են լինել նաև ավելի ուշ դարերի գերեզմաններ[19]:

Հիշյալ հարցին անդրադառնում է նաև հնագետ Ա. Երիցյանն ավելի լայն համատեքստում: Ըստ նրա՝ հեթանոսական շրջանում հայերը պաշտել են հատկապես լեռների ու բլուրների գագաթներն և այնտեղ տեղադրել իրենց սրբավայրերն ու նահատակների գերեզմանները, ինչն անցել է նաև քրիստոնեությանը: Եվ եթե սրան հավելենք այն, որ «հայ ազնվականներն ու հերոսները համարվում էին կիսաստվածներ», ապա պարզ կդառնա, որ «այսպես կոչված օղուզների՝ հսկաների, այն բոլոր դամբարանները, որոնք այժմ հանդիպում են Արարատի, Արագածի վրա և այլուր, 6 և 7 հազար ֆուտ բարձրության վրա, և որոնք այժմ էլ պաշտվում են բնիկների կողմից, հանդիսանում են ազնվականների և արքաների գերեզմաններ: Այս իմաստով, բարձր վայրերում, հաճախ քրիստոնեական հուշարձանների մոտ է պետք փնտրել կարևոր մարդկանց ամենալավ պահպանված դամբարանները, հնարավոր է նաև՝ աստվածների արձանները»[20]: Ի հաստատումն ասվածի, Ա. Երիցյանը հիշատակում է 1874 թ. Երզնկայի՝ լեռան վրա գտնվող Սբ. Սարգսի մատուռի մոտ հայտնաբերված Անահիտի բրոնզե կիսանդրին և «Արալեզ աստվածուհու» պատկերը[21]:

Հընթացս, ինչպես XIX դ. վերջերին և XX դ., այնպես էլ վերջին շրջանում Մասիսի շուրջ (ավելի քիչ լեռան վրա) հայտնաբերվել են տարատեսակ հնագիտական հուշարձաններ (բնակավայրեր, ամրոցներ, դամբարանադաշտեր, մեգալիթներ, քարանձավներ, սրբավայրեր, արձանագրություններ), որոնք վերաբերում են պղնձի, բրոնզ-երկաթի դարերից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջաններին[22]:

---

[18] *Հմմտ. Մ. Աբեղյան. Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 185–186, 192, Ա. Ղանալանյան. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 261, 468–469: Լ. Տիգրանյանի տեղեկության քննարկումը քաջքերի, դևերի ու Արտավազդի համատեքստում տե՛ս նաև՝ Բ. Գէորգեան. Խորենացուն Խորենացով պետք է հասկանալ, Էջմիածին, 1899, էջ 77–78:*

[19] *Փոքր Արարատի գագաթի հսկաների դամբարանների մեջ եղել են նաև այնպիսիք, որոնց վրա արաբական արձանագրություններ կան. դրանցից մեկը թվագրվում է XVIII դ.* [M. E b e l i n g. Der Begräbnisplatz und die Inschriften auf dem Kleinen Ararat.– "Verhandlungen der Gesellschaft für Erdkunde zu Berlin" (Berlin), 1898, № 2, S. 130; А. А. И в а н о в с к и й. По Закавказью.– Материалы по археологии Кавказа, т. VI. М., 1911, с. 34–35]*:*

[20] *Նույն տեղում:*

[21] *Հմմտ.* И. Д. Мансветов (ред.). Пятый археологический съезд в Тифлисе, с. 87. *Արարատի հսկաների դամբարանները հիշվում են այս նույն հրատարակության մեջ նաև Ա. Բերժեի, Ն. Էմինի ու Ի. Պոլյակովի հաշվետվություններում՝ էջ 32, 39, 48, 202:*

[22] *Մ. Սմբատյանց. Արձանագիր Ցոլակերտի.– «Արարատ» (Էջմիածին), 1870, № 5, էջ 175–176, Նույնի՝ Ցոլակերտի արձանագիրք. – «Արարատ», 1870, № 10–11, էջ 248–251, 272–274, Նույնի՝ Բազմարդիւն*

Հնագիտական առկա տվյալները Մասիսի տարածքում վերականգնում են այնպիսի պատմական մի լանդշաֆտ, համապատասխան կառույցների (լեռան բարձրադիր շրջանում՝ հսկաների / օղուզի / աժդահաների գերեզմաններ, աշտարակաձև կառույցներ, ջրանցքներ, ցածրադիր շրջանում՝ դամբարանաթմբեր, ամրոց-քնակավայրեր) այնպիսի մի ամբողջություն, որը հայտնի է նաև «վիշապ» կոթողների տարածման այլ շրջաններից և էապես լրացնում է Մասիսի նորահայտ «վիշապ» կոթողի պատմամշակութային միջավայրի մասին մեր պատկերացումները: Այս պարագայում հատկապես կարևոր է օղուզ / հսկաների գերեզմանների հիշատակումները Մասիսի վրա: Հնագետ Բ. Պիոտրովսկին Արագածի «վիշապ» կոթողների մասին գրում է. «Տեղացիներն այդ հուշարձանները կոչում են «օղուզների (հսկաների) գերեզմաններ»՝ ընդունելով դրանք որպես մեծ քարարկղերի տեսքով դամբարանների վերին սալեր»[23]: Մինչև Մասիսի մասին վիշապային պատկերացումներին անցնելը նշենք, որ, «օղուզ / հսկա-գերեզման-վիշապ-եզ» սեմանտիկական բույլը վաղուց վերծանել է խոշորագույն հայագետ Ա. Մնացականյանը[24]:

Վիշապային Մասիսը հայ և օտար հիշողության համակարգում

Մասիսը որպես վիշապային մի լեռ հայտնի է հայկական և հարակից որոշ ժողովուրդների հիշողության մեջ՝ արտահայտված մի կողմից պատմական, մյուս կողմից էլ՝ բանահյուսական տեքստերում: Բերենք դրանցից մի քանի օրինակ:

Արդեն ուրարտական աղբյուրներում Մասիսի արևելյան լանջերը հիշատակվում են Կուարզանե անվամբ՝ մի տեղա/ցեղանուն, որը, թերևս, կապվում է վիշապային Կուառ աստվածության հետ: Պատահական չէ, որ Աժդահակի սերունդ վիշապազուններին Խորենացին տեղադրում է

խմբագրության Արարատ ամսագրոյ.– «Արարատ», 1886, № 5, էջ 499–503, նույնի՝ Յոլակերտի բերդը.– «Արարատ», 1910, № 6, էջ 574–576. Б. А. Куфтин. Урартский «колумбарий» у подошвы Арарата и куро-аракский энеолит. – «Вестник Государственного музея Грузии», т. XIIIB. Тбилиси, 1944; R. D. Barnett. The Urartian Cemetery at Igdyr. – "Anatolian Studies" (London), 1963, № 13, pp. 153–198; T. A. Sinclair. Eastern Turkey: An Architectural and Archaeological Survey, vol. I. London, 1987, pp. 401–405; C. Başaran, V. Kaleş, V. Geissler. Mount Ararat Archaeological Survey. – "Bible and Spade" (US), 2008, № 21.3, pp. 70–96; A. Özfırat. Archaeological Investigations in the Mt. Ağrı Region: Bronze and Iron Ages. – "P. Matthiae, F. Pinnock, L. Nigro, N. Marchetti (ed.), Proceedings of the 6th International Congress on the Archaeology of the Ancient Near East, May 5th–10th, 2008, "Sapienza" – Università di Roma, v. 2". Roma, 2010, pp. 525–538; *Վ. Գուրզադյան, Վ. Հարությունյան. V–VI դդ. Հայկական բազիլիկ եկեղեցի Արարատի լանջին. – ՊԲՀ, 2006, № 2, էջ 206–209.*

[23] Б. Б. Пиотровский. Вишапы: каменные статуи в горах Армении. Л., 1939, с. 13. *Համմ. նաև* Н. Я. Марр, Я. И. Смирнов. *Նշվ. աշխ., էջ 64:*

[24] *Ա. Շ. Մնացականյան. Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 535:*

նույն այն գոտում, ինչ Կուարզանեն է՝ Մասիցից մինչև Նախիջևան ընկած տարածքում[25]:

Հայ միջնադարյան հեղինակների կողմից վիշապների վերաբերյալ հիշատակումները հաճախ Մասիսի շուրջն են պտտվում: Այսպես, Խորենացին վիշապներին հիշատակում է հիմնականում 2 համատեքստում՝ 1. վիշապաքաղ Վահագնի, ով կռվում է վիշապների դեմ և հաղթում նրանց, և 2. Աժդահակի (նույն ինքը վիշապի) ու նրա սերունդների (վիշապազունների), որոնք հիշվում են Տիգրանի, Արտաշեսի, Սաթենիկի, Արտավազդի կապակցությամբ (Տիգրանի կողմից Աժդահակին սպանելը, վերջինիս սերունդներին ու կնոջը՝ Անուշին՝ վիշապների մորը գերի տանելը, Արգավանի՝ Արտաշեսի դեմ դավ լարելը վիշապների տաճարում, Սաթենիկի սիրահարությունը Մասիսի ստորոտը գրաված վիշապազուններին, վիշապազունների կանանց՝ մանուկ Արտավազդին կախարդելն ու նրան գողանալը, և նրա տեղը դև դնելը, Արտաշեսի կռիվը վիշապազունների դեմ և նրանց ոչնչացնելը) (I: Լ, ԼԱ, II: ԽԹ, ԿԱ): Բացի այդ, վիշապ հեծած Տիգրան Երվանդյանի հրաշալի ծնունդը ևս տեղի է ունենում Հայկազեան երկրի սպիտակափառ և ցրտաշունչ սրբազան լեռան (անշուշտ՝ Մասիսի) գագաթին, ինչը խորհրդանշում է նրա հոգևոր արթնացումը ընդդեմ վիշապ Աժդահակի (I: ԻԶ)[26]:

Մասիս-վիշապ կապի համար կարևոր է Գրիգոր Լուսավորչի «Հարցմունք»-ը (IV–V դդ.), որը եզնիկ Կողբացու սկզբնաղբյուրն է հայկական հնագույն հավատալիքների վերաբերյալ: Երկում, այն հարցին, թե «ասեն քաջաց և վիշապաց տեարք (իմա՛ տաճարք) են ի լերինս բարձունս և բնակութիւնք, և զԱղէկսանդր կապեալ ունին ի Հռոմ, և զԱրտաւանդ ի Մասիս, և զԱրուանդ ի գետս և ի մառանս», որպես պատասխան է բերվում Արտավազդի՝ Մասիսի վրա չղթայվելու պատմությունը, ապա անցում է կատարվում վիշապին՝ որպես գետային նահանգի. «Զի թէ էր նահանգ մարմնաւոր՝ ոչ երբեմն կնոջ պէս ցուլ անուն անուանին, ոչ մերթ մարդ երևէր և մերթ աւճ, որով զաւճապաշտութիւն հնարեցաւ մուծանել յաշխարհս, նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ վիշապ երևէր, մերթ աւճ, մի անգամ մարդ, որպէս ցուցաքն: Իսկ թէ մարմնաւոր ինչ է, ապա փոխի ոչ. այլ թէ ի կալս ջորի ոք երևին և աներևութանան և ի դաշտս երագագդ [վերականգնվում է երագագանք՝ ըստ Եզնիկ Կողբացու]) ձգին, և ընթանան զհետ երէոց՝ դևք կերպարանին առ ի մոլորեցուցանելոյ զմարդիկ»[27]:

---

[25] *Վ. Ա. Իգումնով, Հ. Հ. Կարագյոզյան, Ս. Գ. Համայակյան. Օձասարի սեպագիր արձանագրությունը. – ՊԲՀ, 1997, № 1, էջ 194, 196–198, Ս. Համայակյան. Կուեռա-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում.– ՊԲՀ, 1990, № 1, էջ 152–167:*

[26] *Համմ. Ե. Մարգարյան. Դրվագներ Հին Հայաստանի հոգևոր մշակույթի պատմությունից, Երևան, 2001, էջ 63:*

[27] *Գ. Տեր Մկրտչյան. Նամակներ Նիկողայոս Մառին.– Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 256–259, Լ. Խաչիկյան. Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես հայ մատենագրության*

Վահրամ Րաբունու «Հարցմունք»-ը (XIII դ.), օգտվելով Գրիգոր Լուսավորչին վերագրվող վերոհիշյալ տեքստից, որոշ լրացումներ է կատարում: Արտավազդի՝ Մասիսի վիհերի պատմության համատեքստում Րաբունին նշում է, որ քաջքերը մոտ են հսկաներին ու վիշապներին, կապվում են գինու և ցորենի հետ՝ «Իսկ ընդէ՞ր որ ապա ասեն տեսեալ ոմանց քաջաց և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս և բնակութիւնս…», ապա շարունակում է, թե չկա այդպիսի բան որ քաջ է կամ վիշապ. վիշապը միայն բառ է, քանի որ այն, ինչ աշխարհում մեծ չափերի է, կոչվում է վիշապ[28]:

Ինչ վերաբերում է բանահյուսական տեքստերին՝ վիշապային լանդշաֆտն իր տոնածիսական համակարգով, արտահայտվում է մի շարք ավանդազրույցներում, որոնցից հիշատակենք մի քանիսը: Զագրոսն ու Տավրոսը եղջյուրներով վիշապներ են. կռվում իրար հարվածելով՝ Զագրոսի մի եղջյուրը պոկվում-հասնում և խրվում է այնտեղ, որ Մասիս է կոչվում[29]: Մասիսի (ամպրոպային) վիշապները մի քանի տարին մեկ մեծ կռիվ են ունենում Արագածի վիշապների հետ[30]: Արագած ու Մասիս քույրերը վիճում և փոխադարձ անիծում են իրար, որի արդյունքում Արագածի կատարին արտասուքից ջուր է գոյանում, իսկ Մասիսի վրա ոչ մարդ է բարձրանում, ոչ էլ մատաղ մորթվում[31]: Մասիսի մոտ է գտնվում Թափագյոզի (այսինքն՝ հսկայի, ցիկլոպի) քարայրը[32]: Աշտարակի Թուխ Մանուկ սրբավայրի հնձանաքաղը Աշտարակի օձերի թագավորի պալատն է. այստեղ է գտնվում նաև նրա զորքը, այստեղից է նա պատերազմ գնում Մասիսի կամ Արագածի օձերի թագավորների դեմ[33]:

Նոյը գինովնալուց հետո բարձրանում է Արարատի գագաթը, այնտեղից չնորհակալության զոհ մատուցում Աստծուն՝ ի պատիվ խաղողի որթի և գինու: Նոյը կապվում է նաև Վարդավառի հետ, ինչը մեկնաբանվում է որպես ջրհեղեղի հիշատակը պահող մի տոն[34]:

երախայրիք.– «Բանբեր Մատենադարանի», 1964, № 7, էջ 301–330 (ըստ Լ. Խաչիկյանի՝ երկի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է):

[28] Գ. Տեր Մկրտչյան. նշվ. աշխ. էջ 257, Լ. Խաչիկյան. նշվ. աշխ., էջ 311, 315, 326, 328, համմտ. Н. Я. Марр, Я. И. Смирнов. նշվ. աշխ., էջ 67–68, 99–100, Մ. Աբեղյան. «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 15 25, 45: Շիդար-Արտավազդին՝ վիշապների կողմից Մասիսի վրա արգելակելու միջնադարյան պատմություններըտե՛ս Ա. Ղանալանյան. նշվ. աշխ., էջ 362–364:

[29] Ա. Ղանալանյան. նշվ. աշխ., էջ 23–24:

[30] Մ. Աբեղյան. «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, էջ 23:

[31] Ա. Ղանալանյան. նշվ. աշխ., էջ ԽԴ, 10–11:

[32] Նույն տեղում, էջ 36–37:

[33] Պ. Պռոշյան. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 405. համմտ. Կ. Հովհաննիսյան. Վիշապի արխետիպային կերպարի դրսևորումները հայոց պատկերացումներում.– Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, էջ 88:

[34] Ա. Ղանալանյան. նշվ. աշխ., էջ 333, 414, Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոն-

Հայկական ծխական երգերում էլ է պահպանվել Մասիս-վիշապ կապը. այսպես, «Նարին, Նարին դու հուստ կուգաս» երգը կատարվել է անձրևաբեր ծեսի ժամանակ. Նուրիի տիկնիկը տնետուն ման տալիս հարց է տրվել՝ «Որտեղից ես գալիս», որի պատասխաններից մեկը եղել է «Մասիսի մոտից»: «Հելել, վելել, Մսրու դոմեչ հայու ցուլ, դոնի է»՝ ձկան և ցուլի պաշտամունքի հետ կապված երգում հիշվում է նաև Մասիսը[35]:

Մասիսի վերաբերյալ հիշյալ պատկերացումներն արտացոլված են նաև նրա անվանումներում: Այսպես, Անանունի մոտ վիշապային Մասիսը կոչվել է նաև «Գեղ լեառն»[36], անուն, որն ուղղակիորեն կապվում է վիշապների հետ[37]: Մասիսը Սև սար է անվանվում (Հայսմավուրքում), ժողովրդի մեջ՝ Մուրճ աչխարհ (հմմտ. հեքիաթներում հանդիպող և վիշապներին առնչվող Սև սար անունները)[38]:

Նաև որոշ ոչ հայկական ավանդազրույցներ կարող են առնչություն ունենալ Մասիսի հետ: Այսպես, Գր. Ղափանցյանը վիշապ կոթողների մեջ մարմնավորված է տեսնում մահվան և հարության աստվածության կերպարը, իսկ Մասիսը որպես վիշապների խորհրդանիշ համեմատում է միջագետքյան տեքստերի Արալու անդրաշխարհային սարի հետ, որը կապվում էր նաև կյանքի ջրերի հետ[39]: Անցնելով Մաշու երկգագաթ լեռը, որը վերահսկում է արևի շարժը, որի գագաթները պահում են երկնքի կառույցը, որի ընդերքի հիմքերը հասնում են մինչև անդրաշխարհ, որտեղ ապրում են վիշապային էակներ և որտեղ փչում է հյուսիսային քամին, Գիլգամեշը հայտնվում է հեքիաթային մի երկրում, որտեղ նա տեսնում է սերդոլիկ, լայվարդ և խաղող[40]: Խեթագետ Ֆ. Հասսը իր էպոսի այս հատվածում ելնելով հյուսիսային քամու հիշատակումից, ենթադրում է, որ «առասպելական Մաշու լեռը կարող էր գտնվել Հայկական

յան, Ս. Հոբոսյան, Պ. Ավետիսյան, Բ. Գասպարյան. Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005, էջ 255–256:

[35] Ժ. Խաչատրյան. Ծխական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Երևան, 2014, № 74, 92:

[36] Սեբէոս. Պատմութիւն, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարյանի, գլ. Ա, Երևան, 1979, Ա. հմմտ. Գ. Թումանյան. Վիշապաքարերի պաշտամունքային-կիրառական գործառույթները.– Վիշապ քարակոթողները, էջ 109:

[37] А. Е. Петросян. Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии. – «Вестник общественных наук» АН Арм. ССР, 1987, № 1, с. 56–70.

[38] Մ. Աբեղյան. Երկեր, հ. Ը, էջ 185–186, 192, հմմտ. նաև՝ Ա. Շ. Մնացականյան. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 464, Ա. Ղանալանյան. Նշվ. աշխ., էջ 261, 468–469, Ս. Հարությունյան. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 118, 448, Լ. Սիմոնյան. Հավքն իր թևով օճն իր պորտով, Երևան, 2011, էջ 71, 73:

[39] Գ. Ղափանցյան. Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 16. Г. Капанцян. О каменных стелах на горах Армении. Ереван, 1952, с. 45–46, 49.

[40] A. George. The Epic of Gilgamesh. London, 1999, p. 71.

լեռնաշխարհում», ինչի համար նա բերում է Մասիսի և Նեխ Մասիքի թեկնածությունը[41]: Խեթագետ Ն. Մարտիրոսյանին ևս Մաշու երկգագաթ լեռը «Մասիսը կը հիշեցնե»[42]: Այս համատեքստում հիշարժան է Վ. Բրյուսովի կարծիքը, թե Մայկոպի Մեծ դամբանաթմբից (թվագրվում է Ք. ա. IV հազ.) հայտնաբերված հայտնի արծաթե անոթի պատկերագրության մեջ կարող են փորագրված լինել Մասիսն ու Արագածը՝ նրանց միջև հոսող Արաքսով[43]:

Նման պատկերացումներ պահպանվել են նաև հետագայում: Այս կապակցությամբ հիշարժան է Կեղծ Պլուտարքոսի պատմությունը Միթրայի կողմից ժայռը բեղմնավորելու մասին, որի մանրամասները զուգահեռներ են գտնում խուռիական վիշապ Ուլիկումիի առասպելի հետ և Ա. Պետրոսյանի կողմից առնչվում են Մասիսին՝ դիտարկվելով «վիշապ» կոթողների համատեքստում[44]: Ուշագրավ է արաբ պատմիչ Յակուտ ալ Համավիի հետևյալ տեղեկությունը. «Արմինիայի մեջ երկու լեռներ են, որոնց վրա են գտնվում Հայաստանի թագավորների չիրիմները՝ իրենց դանձերով: Ասում են, թե Պլինիոս իմաստունը կախարդել է այդ լեռները՝ որպեսզի մարդիկ չկարողանան բարձրանալ վերև»[45]: Երկու լեռների և դրանց վրա բարձրանալու արգելքի պահը վկայում է, որ խոսքը Սիսի ու Մասիսի մասին է, մանավանդ որ հաջորդ տողում պատմիչը հիշում է Դվինի մոտ գտնվող Հարիս և Հուայրաս լեռները, այսինքն՝ նույն Մասիսն ու Սիսը: Ուշագրավ է նաև մեկ այլ հանգամանք. ըստ արաբ հեղինակի՝ Պլինիուս իմաստունը (Բալինաս) համարվում է Հուռուվքի/ Թալիսմանի հայր, ով շատ քաղաքներում թողնում է հմայակներ՝ պաշտպանելու համար դրանց փոթորիկներից, օձերի և կարիճների խայթոցից[46]: Լեռան, դամբարանի, Հուռուվքի և հողմի հիշատակումը կրկնակի կապ է ստեղծում վիշապային համատեքստի հետ:

Ուրեմն, ինչպես հայկական, այնպես էլ հարակից որոշ ժողովուրդների աշխարհայացքում Մասիսն ունեցել է խորհրդավոր և որոշակիորեն վիշապային բնույթ: Եվ սա պատահական չէ. չէ՞ որ Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր և ամենագրավիչ ուղենիշն է:

---

[41] V. H a a s. Hethitische Berggötter und hurritische Steindämonen. Mainz am Rhein, 1982, S. 112.

[42] *Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ (թարգմ. և ներած. Ն. Մարտիրոսյան), Երևան, 1963, էջ 119:*

[43] *Վ. Բ ր յ ո ւ ս ո վ. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 181:*

[44] *Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Երեսուն տարի անց. վիշապ քարակոթողները և վիշապամարտի առասպելը.– Վիշապ քարակոթողները, էջ 43:*

[45] *Յ ա կ ո ւ տ ա լ Հ ա մ ա վ ի. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ. 3, կազմ.՝ Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 51, 155, ծնթ. 139. Համմ. Ա. Ն. Տ է ր-Ղ ե ւ ո ն դ ե ա ն. Մասիս լերան մասին արաբական զրույցը.– «Հայկազեան հայագիտական հանդէս» (Բեյրութ), 1971, № 3, էջ 9–16:*

[46] *Նույն տեղում:*

Մասիսի պատմամշակութային նշանակության խնդիրը

Մասիս-Արարատ սարը ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ մշտապես դիտարկվել է իր համաշխարհային նշանակության համատեքստում՝ որպես բիբլիական տապանակիր լեռ[47]: Այս տեսանկյունից այն հնարավոր է դիտարկել երեք հիմնական մակարդակներում՝ որպես տարածական ուղենիշ, որպես սրբազան տարածք և որպես տնտեսական գոտի:

1. Որպես Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր կետ՝ Մեծ Մասիսը երկրի կարևորագույն ուղենիշն է եղել: Իր բարձրությամբ և գեղեցկությամբ այն որոշակի ճգողականություն է ապահովել՝ հստակորեն նպաստելով տեղական ինքնությունների ձևավորմանը: Այն երևում է տարբեր հեռավորություններից, օրինակ, Բյուրակնյան և Վարագա, Մուշի[48] կամ Ջավախքի[49] բարձունքներից: Այս իմաստով հայկական լեռները գտնվել են տեսանելիության ընդհանուր դաշտում, ինքնություն ձևավորող կարևոր հանգամանք է եղել, հատկապես, եթե հաշվի ենք առնում դրանց խորհրդավորության բարձր մակարդակը[50]: Այս տեսանկյունից պատահական չէ, որ «վիշապ» կոթողների բարձրադիր միջավայրերը, որպես կանոն, տեղադրված են այնպիսի առանցքի վրա, որի տեսադաշտում են գտնվում Մասիսի գագաթները, մի լեռ, որն էական դեր պիտի խաղար վիշապներին կերտողների արժեքային համակարգում, և որից, անշուշտ, կախված է եղել այդ կոթողների յուրահատուկ աշխարհագրական միջավայրի ընտրությունը:

2. Երբ նայում ենք լեռնաշխարհի նախաքրիստոնեական սրբավայրերի քարտեզին, ապա երևում են երեք հիմնական կենտրոններ՝ Այրարատ (Արարատի և Արագածի միջև), Տարոն (Քարքե լեռան չուրջ), Բարձր Հայք[51], որոնցից Այրարատում է նկատվում դրանց ամենամեծ կուտակումը[52]: Ինչ վերաբերում է Մասիսին, ապա այն հաճախ ընկալվում է որպես հիմնական սրբավայր՝ և՛ որպես առանձին լեռ (ուղենիշ), և՛

[47] *Այս մասին մանրամասն տե՛ս «Աստվածաշնչական Հայաստան» (Երևան, 2005) ժողովածուի բազմաթիվ հոդվածներում:*

[48] *Գ. Սրվանձտյանց. Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 64, 77, Ա-Դօ. Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան, 1912, էջ 118:*

[49] Г. Абих. Геология Армянского нагорья. Восточная часть. – «Записки Кавказского отдела русского императорского общества», т. XXIII. Пятигорск, 1902, с. 4, 13, 25; *Ե. Լալայան. Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 46:*

[50] *Լեռնային սրբավայրից լայն տեսարանի բացվելը կարևոր առանձնահատկություն է. համմա. Ստ. Լիսիցյան. Ազգագրական հարցարան, Երևան, 1946, էջ 76:*

[51] Г. Д. Вардумян. Дохристианские культы армян. – «Армянская этнография и фольклор», т. 18. Ереван, 1991, с. 112–113, *Ս. Հարությունյան. Նշվ. աշխ., էջ 195:*

[52] A. Parsamyan. Les sanctuares antiques en Arménie: panorama geographique. – “Vishap between Fairy Tale and Reality”, edited by A. Bobokhyan, A. Gilibert, P. Hnila, Yerevan, pp. 460–473.

որպես սրբազան տեղ, որի գագաթին նաև ծեսեր են կատարվել[53]: Այս տեսանկյունից, պատահական չէ, որ հայկական միջնադարյան գրականության մեջ Մասիսի համատեքստում հիշատակվում են վիշապների տաճարներ (Խորենացի II: ԾԱ), իսկ հեքիաթներում՝ վիշապների պալատներ[54]: Արվեստաբան Հ. Հովհաննիսյանը, հայ հին դրամայի ակունքների խնդիրը ներկայացնելով Խորենացու և այլ պատմիչների ավանդած վիշապազունների պատմության համատեքստում (Աժդահակ, Արտավազդ-Շիղար և դրանց զուգահեռ Պրոմեթևս-Ամիրան), անդրադառնում է նաև «վիշապ» կոթողներին: Մասնավորապես, հիշելով Խորենացու «վիշապաց տաճարը», գտնում է, որ այն ջրի հնագույն պաշտամունքի արձագանք է, ինչն արտացոլված է «վիշապ» կոթողների երևույթում: Ըստ նրա՝ Մասիսի վրա ջրի պաշտամունքի հետ կապված մի հնագույն սրբավայր է հավանաբար եղել, որտեղ հետագայում կառուցվել է Սբ. Հակոբի աղբյուրն ու մենաստանը[55]: Այս ենթադրությունը հաստատում է վիշապ քարակոթողի նորագույն գտածոն:

3. Մասիսը և Հայկական պարը, Արագածն ու Գեղամա լեռները եզերում են Հայկական լեռնաշխարհի տնտեսական և քաղաքական կենտրոնը՝ Արարատյան դոգավորությունը: Ցամաքային կլիմայի պատճառով ոռոգման հարցը խիստ կարևորվել է այստեղ բոլոր դարաշրջաններում: Պատմական Հայաստանի ոչ մի նահանգում ջրի համար մղվող պայքարն այնքան կատաղի բնույթ չի ունեցել, որքան Արարատյան դաշտում, որովհետև այս խիստ սակավանձրև գոտու այգեգործությունը, բանջարաբոստանային կուլտուրաների և հացաբույսերի կյանքը հիմնովին կապված էր արհեստական ոռոգման հետ: Եվ պատահական չէ, որ Հայաստանի բոլոր պետական կառույցները, իսկ պետության բացակայության դեպքում՝ հոգևոր հաստատությունները, Արարատյան դաշտում զբաղվել են ջրաշինարարական աշխատանքներով[56]:

Հին Հայաստանի հասարակական կյանքը հասկանալու տեսանկյունից՝ Արարատյան դաշտի ջրամատակարարման հարցը առանցքային է համարել Ն. Մառը, և պատահական չէ, որ այդ խնդիրը նա քննարկում է վիշապների կապակցությամբ, որոնք ջրի պաշտամունքին նվիրված ու ջրի անընդհատությունը ապահովող հուշարձաններ են եղել[57]: Այն հան-

---

[53] Срб. Лисицян. Духовная культура армянского народа: языческая религия армян.– Национальный архив Армении, ф. 428, оп. 5, д. 71, л. 2. *Համմա. Գ. Յովսէփեան. Արագածի գագաթին.– Մատենաշար «Հայաստանեայց Եկեղեցւոյ», հ. 1, Նիւ Եորք, 1941, էջ 22:*

[54] *Ե. Զաքարյան. Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, Երևան, 2016, էջ 47, Թ. Հայրապետյան. Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, 2016, էջ 236:*

[55] *Հ. Հովհաննիսյան. Հայ հին դրաման և նրա պայմանաճևերը, Երևան, 1990, էջ 34–35, 38, 48, 53–54:*

[56] *Մ. Տէր-Մովսիսեան. Էջմիածնի դաշտի ոռոգումը. – «Արարատ», 1912, № 4, էջ 334–346, Վ. Հ. Բդոյան. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 327:*

[57] Н. Я. Марр, Я. И. Смирнов. *Նշվ. աշխ., էջ 80–81: Ավելի մանրամասն տե՛ս Ա. Քալանթար. Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային*

գամանքը, որ վիշապները դրվել են Արարատյան գոգավորությունը եզերող լեռների առանցքային կետերում, ջրի հիմնական աղբյուրներին կից, վկայում է, որ վերջիններս ուղղված են եղել այնտեղ ներհոսող ջրային ռեսուրսների ապահովմանը: Ակնհայտ է, որ Արարատյան դաշտի բարեբերությունն առաջին հերթին ապահովել է Արագածը: Այս կապակցությամբ պատահական չէ, որ XIX դ. առաջին կեսի ճանապարհորդ Մ. Վագները Արագածը ներկայացնում է ջրի առատությամբ և լեռնահովիտներով բնորոշվող մի դրախտավայր, ինչն էլ հիմք է հանդիսացել, որպեսզի նրա շուրջ բնակավայրերի խիտ ցանց առաջանա. և սա չի կարելի ասել Մասիսի պարագայում[58]: Սակայն, ինչպես արդեն վերը նշեցինք, սկսած վաղ ժամանակներից մինչև վերջերս, Մեծ ու Փոքր Մասիսների գոգավորությունների վրա էլ են եղել ջրանցք-ջրավազաններ[59]: Այնուամենայնիվ, տնտեսական գործառույթը, անշուշտ, չի եղել ամենակարևորը Մասիսի համար. Մասիսը նախ և առաջ ուղենիշ էր ու սրբազան տարածք:

Եզրակացություն

Ի մի բերելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ Մեծ Մասիսի հյուսիսարևելյան լանջերին հայտնաբերված «վիշապ» կոթողը գալիս է մեկ անգամ ևս վկայելու այս լեռան վերաբերյալ հայկական, ու մասամբ հարևան ժողովուրդների հիշողության մեջ պահպանված պատկերացումների խոր հնության, ըստ որոնց՝ այդ լեռը վիշապային քաջքերի, հսկաների և վիշապապաշտ խմբերի բնակության վայր է, որի բարձունքներում եղել են վիշապի տաճար և արքայական թաղումներ, ու որտեղ վարդավառյան տոներ են իրականացվել: Հսկաների գերեզմանների, աշտարակաձև կառույցների ու ջրանցքների հնագիտական փաստաթղթերը Մասիսի վրա իրական հենք են ստեղծում հիշյալ ժողովրդական վերացարկված պատկերացումների բացատրության համար: Հնագիտական, գրավոր և բանավոր տվյալներով վերականգնվող Մասիսի խորհրդավոր ու վիշապային բնույթն ամենևին էլ պատահական չէ, քանի որ այս լեռը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր ու ամենադրավիչ ուղենիշն է և ինքնություն կերտող կարևորագույն գործոնը:

Հայաստանում. – «Տեղեկագիր ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի», 1937, № II, էջ 171–194, Գ. Շ ի ր մ ա զ ա ն. Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962:

[58] Մ. Վ ա կ ն ե ր. Ճանապարհորդություն ի Հայաստան, Վիէննա, 1851, էջ 105, 112, 123–124. Համմ. նաև՝ Г. А б и х. Геология Армянского нагорья. Западная часть. – «Записки Кавказского отдела русского императорского общества», т. XXI. Пятигорск, 1899, с. 20.

Key words: Hakob Mtsbnetsi, myth, Noah's Ark, modification, European travellers, travel notes, Mount Ararat, Etchmiadzin, St. Gregory.

The famous Armenian myth about St. Hakob Mtsbnetsi (also known as Saint Jacob of Nisibis, or Saint James of Nisibis), introduced into the literary circulation by Faustus of Byzantium in the 5th c. AD, appeared to be widespread in the narratives on Armenia and Mount Ararat in the travel notes of European travellers. The narrative about St. Hakob's climbing up to the Noah's Ark and returning with its particle, is narrated in the travel notes by foreign travellers Rubruck, Saint-Quentin, Mandeville, Newbury, Cartwright, La Boule-Le Guz, Chardin, Lucas, Tournefort, Gardane, Ker Porter, Dubois de Monperreux, Parrot, Kotzebue, Thielmann, Belanger and others.

As a rule, the travellers' notes are mainly composed of the same elements: in separate travel notes, only their correlation changes. From the general arsenal of traditional formula-motives, the narrator chooses one or another version, depending on individual addictions and used sources (written or oral). However, in a number of travelogues (Kotzebue, Thielmann, Belanger), one can see St. Hakob's replacement by Gregory the Illuminator. The thing is that the particle of the Noah's Ark granted to St. Hakob by the Lord, was transferred from St. Hakob Monastery to Ayrivank, and from there to Etchmiadzin.

In connection with its location, it became necessary to create a new myth. Narrating the story of St. Hakob's climbing Ararat, the clergy of Etchmiadzin Monastery began to link it to Etchmiadzin. Thereby, however, the process of myth-making did not cease: the aquisition of the relic kept in Etchmiadzin began to be considered the merit of St. Gregory, whose name was associated with the construction of the Cathedral shortly after the conversion of the Armenians to Christianity in the place where Christ had descended from heaven in the saint's vision. The substitution of St. Hakob by St. Gregory was designed to complement the substantial logical succession: Ararat – Gregory the Illuminator, the founder of the monastery – the Etchmiadzin Monastery – the relic preserved in the monastery.

Gohar Karagyozyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher in the Department of Foreign Literature and Comparative Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan. Scientific interests: comparative literature, travelogue genre. Author of 5 monographs and about 50 articles. gkaragyozian@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2020 № 2 Историко-филологический журнал

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔՈՒՄ»*

ԼԻԼԻԹ ՍԱՐՎԱԶՅԱՆ

Բանալի բառեր՝ Սմբատ Սպարապետ, «Դատաստանագիրք», ընտանեկան իրավունք, ազատ ընտրություն, բարոյական առաքինություններ, իրավական քաղաքականություն, ժառանգման կարգ, գույքային հարաբերություններ:

Նախաբան

Բոլոր պատմաշրջաններում Հայաստանում առկա է եղել ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման կարգ: Ընտանեկան իրավունքն իրավական այնպիսի նորմերի ամբողջություն է, որոնք կարգավորում են ամուսնությունից, ազգակցությունից ու օրենքով նախատեսված այլ հիմքերից ծագող անձնական՝ ոչ գույքային և դրանց հետ կապված գույքային հարաբերությունները: Ընտանեկան իրավունքի չատ ինստիտուտներ և սկզբունքներ որոշ փոփոխություններով ու խմբագրությամբ պահպանվել են: Այս համատեքստում կարևորում ենք հայ իրավունքի աղբյուրների, այդ թվում՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հետազոտությունը, որոնցում առկա են արդիական հնչեղություն ունեցող գաղափարներ, ինչպես՝ սիրո, փոխհամաձայնության և ազատ ընտրության վրա հիմնված ամուսնությունը, ամուսինների իրավահավասարությունը, կնոջ ու երեխաների հանդեպ բռնությունների, անբարո հարաբերությունների բացառումը, տոհմիկ սեփականության, ժառանգական իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ընտանեկան հարաբերությունների կարգավորման իրավաքաղաքական սկզբունքները

Սմբատ Սպարապետը (1208–1276 թթ.) հայտնի է որպես Կիլիկյան Հայկական պետության հռչակավոր սպարապետ (գունդստաբլ), հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ, օրենսդիր և պատմիչ: Նա մեծարվել է «Նրբամիտ փիլիսոփա», «Սմբատ քաջ», «Հայոց իմաստուն սպարապետ», «Մեծն իշխան» տիտղոսներով[1]: Սմբատը մեծ ներդրում ունի հայ իրավունքի պատմության մեջ՝ իր թարգմանչական և

---

* *Ներկայացվել է 03. VI. 2020 թ., գրախոսվել է 25. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 29. VI. 2020 թ.:*

[1] *Տե՛ս Գ ա բ ե գ ի ն Ա. Կ ա թ ո ղ ի կ ո ս. Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 951–952:*

օրենսդրական գործունեությամբ: Նա հին ֆրանսերենից թարգմանել է «Անտիոքի Ասիզները»[2]: «Դատաստանագիրքը» («Յաղագս դատաստանաց թագաւորաց կամ Օրէնք և կանոնք ընդհանրական եկեղեցականաց և աշխարհականաց»)[3] Սմբատ Սպարապետի գլուխգործոցն է, որը կազմվել է 1265 թ.՝ կիլիկյան Հայաստանում հասարակական-քաղաքական հարաբերությունները կարգավորելու նպատակով[4]: «Դատաստանագրքի» աղբյուրներն են՝ հայ սովորութային և կանոնական իրավունքը, մասնավորապես՝ Սահակ Պարթևի կանոնները, Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագիրքը» և հունաբյուզանդական ու լատինական որոշ իրավանորմեր:

Սմբատի «Դատաստանագրքի» հիմքում պետության ինքնիշխանության, օրենքի գերակայության, պետական չահերի առաջնայնության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության գաղափարներն են: Նա կարևորում էր ներպետական կյանքի բարեկարգման, հասարակական, այդ թվում՝ ընտանեկան հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները: Սպարապետը ձգտում էր օրենսդրորեն պահպանել հայ ընտանիքի՝ որպես պետության հիմքի կայունությունը, հնագույն ավանդույթներն ու կանխել ամուսնալուծությունները:

Ազգային իրավագիտակցության համաձայն՝ ամուսնությունն աստվածային հաստատություն է, տղամարդու և կնոջ հավերժական միություն. «... երկուսը կ՚լինին մէկ մարմին ... այն որ Աստուած միաւորեց, թող մարդը չ՚բաժանէ» (Մատթ., Գլ. Թժ, 6): Այս գաղափարը թափանցել է հայ կանոնական և աշխարհիկ օրենսդրության մեջ:

Ըստ Սմբատի «Դատաստանագրքի»՝ կնոջ և տղամարդու միությունը վավերացվում է նշանադրությամբ ու պսակադրությամբ: Նշանադրությունը, որոշ պայմանների հետ կապված, խոստումն է ամուսնանալու համար: Ամուսնության կարևոր փուլը պսակադրությունն է: Պսակը իրավանորմերով սահմանված կանոնական ծեսերի և որոշակի վարքագծի համակցություն է, ըստ որի՝ օրինականացվում է ամուսնությունը: Իրավագետ Գ. Սաֆարյանի դիտարկմամբ՝ «Պսակադրության կարգը առաջադիմական երևույթ էր հայ իրականության և իրավունքի պատմության մեջ: Պսակադրությունն անվիճելի ապացույց է ամուսնության: Պսակի

---

[2] Օրենսգիրքը գիտական աշխարհին հայտնի է Սմբատ Սպարապետի հայերեն թարգմանության շնորհիվ, քանի որ հին ֆրանսերեն տեքստը չի պահպանվել: Հայերեն տեքստը ֆրանսերեն վերաթարգմանել է Ղ. Ալիշանը 1876 թ. (տե՛ս Հ. Ղ ե ւ ո ն դ Վ. Մ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, Մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 111):

[3] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ Իշխանի (Գունդստաբլի) (Կիլիկեան Դատաստանագիրք XIII դարի), ձեռագրերի համեմատ. և առաջաբանը՝ Ա. Վրդ. Ղլտճեանի, Ս. Էջմիածին, 1918:

[4] «Դատաստանագիրք»-ը հետազոտել են Ղ. Ալիշանը, Խ. Սամուելյանը, Ա. Ղլտճյանը, Ա. Գալարյանը, Ա. Սուքիասյանը, Գ. Սաֆարյանը, Կ. Միրումյանը, Ռ. Ավագյանը, Խ. Թորոսյանը և այլոք, ովքեր անդրադարձել են կիլիկյան Հայաստանի պատմաքաղաքական իրողություններին ու իրավական համակարգին:

օրհնութ յամբ ամուսնացածները դատվում էին օրենքի և հոգևոր դասի պաշտպանութ յան ներքո»[5]:

«Դատաստանագրքում» սահմանված են ամուսնութ յան պայմանները.

– սեռը. ամուսնացողները պետք է տարբեր սեռի պատկանեն: Միևնույն սեռի պատկանող անձանց միջև ամուսնութ յունն անօրինական ու հանցավոր է, հետևաբար՝ նաև պատժելի:

– Մենամուսնութ յուն. ամուսնացած անձը չի կարող կրկին ամուսնանալ: Կրկնամուսնութ յունը և հարճեր պահելը արգելվում էր թե՛ կանոնական, թե՛ աշխարհիկ օրենքներով: Հիմնվելով Հայ կանոնական իրավունքի վրա՝ Սմբատը նույնիսկ թագավորին է արգելում արտաամուսնական հարաբերութ յուններ. «Օրենքը թույլ չի տալիս, որ թագավորը սիրուհու հետ ապրի առանց ամուսնութ յան»[6]:

– Ամուսնացողների կամավոր համաձայնութ յուն. պատիժ է սահմանվում այն հոգևորականների ու ծնողների համար, ովքեր երիտասարդներին ստիպում են ամուսնանալ բռնի՝ հակառակ իրենց կամքի[7]: Այս ամուսնութ յունը համարվում է անվավեր: Աղջկան առևանգելու միջոցով միութ յունը նույնպես անօրինական է, իսկ առանց «եկեղեցական պսակի» ծնված երեխաները՝ «ապօրինածին»:

– Ամուսնական չափահասութ յուն. Սմբատը տղայի ամուսնական տարիքը համարում է 15 տարեկանը: Մխիթար Գոշը տղաների համար ամուսնութ յան տարիք սահմանում էր 14 տարեկանը, իսկ աղջկա համար՝ 11–12 տարեկանը[8]: Սմբատը հարսնացուի տարիքը չի նշում «Դատաստանագրքում», թեև Սիսի՝ 1243 թ. եկեղեցական ժողովի VII կանոնն ամուսնութ յան նվազագույն տարիք տղայի համար սահմանել էր 14, իսկ աղջկա համար՝ 12 տարեկանը[9]: Հավանաբար, ժողովն իբրև հիմք ընդունել է Գոշի սահմանած օրենքները:

---

[5] Գ. Սաֆարյան. Իրավունքի պատմութ յան և տեսութ յան հիմնահարցեր, Երևան, 2010, էջ 171:

[6] Սմբատ Սպարապետ. Դատաստանագիրքը (այսուհետև՝ Սմբատ. Դատաստանագիրք), հոդ. 1.– տե՛ս Հայ իրավական մտքի գանձարան (մ. թ. ա. IX դ. – մ. թ. XIX դ.), աշխատ.՝ Ռ. Ավագյանի, գիրք Ա, Երևան, 2001, էջ 564:

[7] Դեռևս Ներսես Բ Կաթողիկոսն իր «Կանոնադրութ յան» ԻԳ կանոնում պատվիրում էր. «Տղայոց պսակ մի իշխեսցեն աւրհնել, և մի կատարելոցն, երկոցունց առանց զմիմեանս տեսանելոյ». տե՛ս Կանոնք Ներսէսի Բ. Կաթողիկոսի եւ Ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի, աշխատ.՝ Ա. Վրդ. Ղլտճեանի, Վաղարշապատ, 1905, էջ 24, նաև՝ Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի, Կանոն ԻԴ, Կանոնագիրք Հայոց, աշխատ.՝ Վ. Հակոբյանի, գիրք Ա, Երևան, 1964, էջ 382:

[8] Տե՛ս Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց (այսուհետև՝ Գոշ. Դատաստանագիրք), հոդ. 6.– Հայ իրավական մտքի գանձարան, էջ 403:

[9] Կիլիկյան Հայաստանում քաղաքական կամ այլ նպատակներով երբեմն խախտվում էր ամուսնական չափահասութ յան պայմանը: Օրինակ՝ Լևոն II-ը 60 տարեկանում ամուսնացավ Կիպրոսի թագավորի 11-ամյա աղջկա հետ: Լևոն II-ի 11-ամյա դստերը՝ Զաբելին, ամուսնացրին իշխան Ֆիլիպի, իսկ 12-ամյա Լևոն IV-ին՝ Լուսինյան իշխանատոհմի 7-ամյա արքայադստեր հետ.

– Դավանակցություն. թե՛ Գոշը, թե՛ Սմբատը մեծ նշանակություն էին տալիս դավանակցության պայմանին՝ արգելելով քրիստոնյաների ամուսնությունն այլադավանների ու աղանդավորների հետ: Օրենքը թույլատրում է ամուսնանալ ստրկուհու կամ ծառայի հետ՝ այն պայմանով, որ տղամարդը նրան քրիստոնեական հավատի դարձնի, մկրտի և նրա հետ ամուսնանա՝ իբրև օրինական կնոջ:

– Արյունակցական և խնամիական չհասություն. ամուսնության էական պայման է ամուսնացող զույգի միջև ազգակցական ու խնամիական կապերի բացակայությունը: Սմբատը հստակ չի նշում ազգականների միջև ամուսնության մասին: Սակայն այս պայմանը պարտադիր է համարվել թե՛ Հայ կանոնական իրավունքում, թե՛ Դավիթ Ալավկա որդու և Մ. Գոշի դատաստանագրքերում[10]: Կարծում ենք՝ այս հարցում ևս Սպարապետը հիմք է ընդունել օրենք դարձած ազգային ավանդույթը:

«Դատաստանագրքում» նաև սահմանված են որոշ սկզբունքներ ամուսնացողների համար: Օրինաչափ են համարվում տղամարդու հեղինակությունն ընտանիքում և կնոջ հնազանդությունը՝ ամուսնուն: Ամուսնացողները պետք է լինեն առողջ՝ երեխաներ ծնելու ու նրանց դաստիարակելու համար: Ըստ Սմբատի՝ առողջի արյունը չի կարելի «խառնել» անբուժելի հիվանդի արյանը, որ ազգն առողջ սերունդներ ունենա. «Օրենքը դատավորներին և աշխարհիկ բոլոր տերերին պատվիրում է, որ նրանք, ովքեր հորից որդի կամ ազգովին ... բորոտությամբ կամ պիսակոտությամբ են վարակված, թույլ չտալ ամուսնանալ, երբեք նրանց կին չտան և կին չվերցնեն», քանի որ «... հիվանդությունը ժառանգաբար է անցնում»[11]: Չի խրախուսվում նաև երկու կույրերի կամ համրերի ամուսնությունը, քանի որ նրանք չեն կարող սնել ու դաստիարակել երեխաներին: Օրենքը թույլատրում է ամուսնանալ ոչ ծանր աստիճանի հաշմանդամներին՝ կաղերին և խուլերին, « ... իսկ համրը, թե՛ այր, թե՛ կին, անասունի [չխոսողի] պես է համարվում. թող չամուսնանա»[12]:

Հիմնվելով Մովսիսական օրենքի վրա՝ Սմբատը նորապսակներին ազատում է պատերազմ գնալուց. «Նոր ամուսնացած մարդը չպետք է պատերազմ գնա, որ կնոջ համար անժամանակ սուգ չլինի»[13]:

«Դատաստանագրքում» նաև առկա են ապահարզանի պայմանները.

– կնոջ անհնազանդություն. Սպարապետի վկայությամբ՝ ավանդական կանոնները թույլ չէին տալիս անհնազանդության պատճառով կնոջից

տե՛ս Մ. Օրմանեան. Ազգապատում, Մասն Բ, Կ. Պոլիս, 1913, 1080, 1102 և 1213 ենթագլուխները:

[10] Տե՛ս Աշտիշատի ժողովին վերագրվող կանոնները, գլ. Ա.– Հայ իրավական մտքի գանձարան, էջ 106, Շահապիվանի կանոնները, գլ. ԺԲ.– Նույն տեղում, էջ 127–128, Վաչագան Թագավորի Սահմանադրությունը, գլ. Ժ–ԺԱ, Երևան, 2010, էջ 20, Դավիթ Ալավկա որդու Կանոնագիրք (Կանոնական օրինադրություն).– Հայ իրավական մտքի գանձարան, հոդ. 70, էջ 227, Գ ո շ. Դատաստանագիրք, հոդ. 192, էջ 473:

[11] Սմբատ. Դատաստանագիրք, հոդ. 116, էջ 613–614:

[12] Նույն տեղում, հոդ. 190, էջ 477–478:

[13] Նույն տեղում, հոդ. 108, էջ 612:

բաժանվել, բայց « … երբ տեսան, որ անհնարինության պատճառով կարող է ավելի մեծ դժբախտություն պատահել՝ այդ օրենքը մեղմացրին», և թույլատրվեց այդ հիմքով լուծարել ամուսնությունը: Այս պարագայում ամուսինը պետք է կնոջը տա այն ամենը, ինչ նա բերել է իր հետ հայրական տնից, «… որպեսզի կարողանա մեկ ուրիշի հետ ամուսնանալ»[14]:

– Ծանր հիվանդություններ. մարմնական և հոգեկան ծանր հիվանդությունները՝ ընկնավորություն, բորոտություն, ցավագարություն, գոնջություն ու այլն, ամուսինների համատեղ կյանքն անկարելի են դարձնում: Բայց Սմբատը պահանջում է հատուկ քննությամբ հաստատել հիվանդությունը: Բուժվելու դեպքում կինը կարող է վերադառնալ ամուսնու մոտ, իսկ չբուժվելու դեպքում ամուսինը պետք է հայրական տնից նրա բերած ողջ ունեցվածքը վերադարձնի՝ բացի ամուսնական պարգևից, և կարող է կրկին ամուսնանալ: Իսկ եթե ծնողներն ապացուցեն, որ հիվանդությունն ամուսնու տանն է եղել, ամուսինը 7 տարի պետք է համբերի, ու, եթե կինը չբժշկվի, « … նա իրավունք ունի բաժանվել և ուրիշ կին առնել»: Պայմանները նույնն են ամուսնու հիվանդության դեպքում: Ապահարզան թույլ չի տրվում, եթե հիվանդության մասին ամուսիններն իրազեկ են լինում, բայց կարևորություն չտալով՝ ամուսնանում են[15]:

– Ամուսիններից որևէ մեկի դերությունը, երկարատև բացակայությունը կամ մահը. դա կարող են դառնալ ամուսնության դադարման հիմք: Եթե կինը ստրկության է տարվում ամուսնու տնից, նրա փրկադինն ամուսինը պետք է վճարի, իսկ եթե ծնողների կամ եղբայրների տնից, նրանք պետք է վճարեն: Եթե 7 տարի հետո կինը ետ չդնվի, նրա օժիտը և ամուսնական նվերը պետք է վերադարձվեն: «Իսկ եթե երեխա մնացած լինի, այդ դեպքում պտույգը [օժիտը] երեխային է պատկանում»[16]: Այդպիսով՝ պաշտպանվում է երեխայի գույքային իրավունքը: Ամուսնու դերության կամ առևտրական գործերով բացակայության պարագայում՝ եթե լուր ստացվի, որ նա մահացել է, կինը 7 տարի սպասելուց հետո կարող է ամուսնանալ: Եթե ամուսինը վերադառնա, կարող է « … հետ վերցնել կնոջը»՝ միայն վերջինիս կամքով:

– Ամուսինների փոխադարձ ատելություն և հակակրանք. ընտանիքում երբեմն ստեղծվում են անհամատեղելի հարաբերություններ, հակակրանք ամուսինների միջև: Եթե պատճառը նրանց անբարո վարքագիծը չէ, օրենքը հրամայում է՝ քննել, թե մեղավորն ով է: Ամուսնու մեղավորության դեպքում կինը կարող է վերցնել իր օժիտը և ամուսնանալ ուրիշի հետ: Կնոջ մեղավորության պարագայում ամուսինն իրավունք ունի ոչինչ չտալ կնոջը և կրկին ամուսնանալ: Հոր մեղավորության դեպքում զավակները մորն են տրվում, հակառակ դեպքում՝ հորը:

– Ամուսնական անհավատարմություն. ամուսինն իրավունք ունի բաժանվել ամբարո կնոջից. «Օրենքը միշտ ճիշտ է համարում բաժանումն այն կանանցից, որոնք հետևյալ մեղքերը գործած լինեն՝ պոռնկություն,

---

[14] *Նույն տեղում, հոդ. 78, էջ 602:*

[15] *Տե՛ս նույն տեղում, հոդ. 80, 89, 104:*

[16] *Նույն տեղում, հոդ. 81, էջ 603:*

կախարդություն և սրանց նման այլ մեղքեր»: Բայց ամուսնուն «... պետք է ստիպել ապաշխարել»[17]: Եթե կինն առանց եկեղեցու թույլտվության և դատավորին համոզող լուրջ պատճառների ամուսնուց փախչի, նրան պետք է բռնեն և, իբրև ծառա, հանձնեն ամուսնուն: Նա իրավունք ունի կնոջ հետ վարվել ինչպես ցանկանա, բայց չի կարող վաճառել, սպանել և բաժանվել: Միայն անհավատարմության դեպքում ամուսինը իրավունք ունի կնոջը վաճառել: Իսկ եթե պարզվի, որ կինը հեռացել է « ... ամուսնու պիղծ վարքի պատճառով ... պետք է ամուսնուն լրջորեն խրատեն դատարանի և եկեղեցու պատիժներով»[18]: Ամուսնալուծություն նաև թույլատրվում է երկու կողմի մեղավորության դեպքում: Այդպիսով՝ անհավատարմության դեպքում կնոջ ամուսնալուծության իրավունքն ավելի սահմանափակ է, քան տղամարդունը: Բայց Սմբատը կնոջը լրիվ իրավազուրկ չի դարձնում[19]: Օրինակ՝ կնոջը բաժանվել թույլատրվում է այն դեպքերում, երբ ամուսինն անբարո կյանք է վարում, չի աշխատում և միջոցներ չունի, որ կարողանա ապահովել կնոջը: Փաստորեն, այս պարագայում կարևորվում է կնոջ բարեկեցության հարցը:

— Կնոջ ամլությունն ու տղամարդու անկարությունը. սա նույնպես ամուսնալուծության պատճառ են դառնում, թեև քրիստոնեական օրենքով՝ ամլությունը բաժանման պատճառ չէ: Ուստի՝ «Դատաստանագիրքը» պատվիրում է. «Բժիշկները պետք է քննեն ու պարզեն՝ չբերության պատճառը ամուսնուց է, թե կնոջից»: Եթե ամլությունը հիվանդության հետևանքով է, պետք է բուժել: Իսկ եթե անբուժելի է, պետք է քննել կնոջն ու ամուսնուն: Եթե ամուսինը տեղյակ է եղել հիվանդության մասին և ամուսնացել է, ամուսնալուծությունը բացառվում է: Միայն կնոջ թույլտվությամբ կարող է ամուսինը բաժանվել՝ նրան ապահովելով տնով ու անհրաժեշտ դույքով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև ամուսինների տարիքը, և «... բոլոր դեպքերում պետք է եպիսկոպոսը լուծում գտնի, որովհետև ուրիշ ոչ ոք իրավունք չունի»[20]: Այս դեպքում պայմանը 7 տարի սպասելն է, ու եթե կինն այլևս չցանկանա ամուսնանալ, ամուսինը պարտավոր է վերադարձնել օժիտը և ողջ կյանքի ընթացքում ապահովել նրան: Ինչ վերաբերում է տղամարդու անկարությանը, այս դեպքում ևս օրենքը տարբեր լուծումներ է առաջադրում. եթե տղամարդը չի կարողանում կատարել ամուսնական պարտականությունը, « ... պատշաճ չէ, որ կինը նրանից բաժանվելով հեռանա»: Հակառակ դեպքում՝ նա չի կարող նորից ամուսնանալ՝ առանց եկեղեցու միջոցով ապացուցելու, որ ամուսինն անկար է: Եթե որևէ մեկը խաբեությամբ ամուսնանա՝ թաքցնելով սեռական թուլությունը, կինը կարող է խնդիրը լուծել եկեղեցու

[17] Նույն տեղում, հոդ. 100, էջ 610:

[18] Նույն տեղում, հոդ. 112, էջ 612–613:

[19] Համմտ.՝ Ա. Գ. Սուքիասյան. Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI–XIV դդ.), Երևան, 1978, էջ 208:

[20] Սմբատ. Դատաստանագիրք, հոդ. 116, էջ 613–614, տե՛ս նաև հոդ. 84, էջ 605:

միջոցով, որից հետո « ... օրինական է նրան տալ ամուսնու ունեցվածքի կեսը, որպեսզի գնա և իր համար ուրիշ ամուսին առնի»[21]:

– Արվամոլությունը և անառնամոլությունը. այս դեպքում նույնպես կնոջն ամուսնալուծվելու իրավունք են տալիս. «Եթե ամուսինը մեկ ուրիշի հետ արվամոլությամբ խախտի կնոջ նկատմամբ հավատարմությունը, որը բացահայտվի, կամ եթե անասնամոլությամբ զբաղվի ... նա օրենքով պետք է բաժանվի և ... ստանա օժիտի կեսը»[22], իսկ ամուսնու համար սահմանվում է մարմնական պատիժ՝ անդամահատություն:

– Հավատի ուրացում. քրիստոնեական հավատի պահպանումն ու դավանակցությունն ընտանեկան կեցության կարևորագույն պայմաններից են: Հավատուրացության համար ամուսինները պատժվում են: Ուղղահավատ կինը կարող է. ա) բաժանվել, բ) չանալ «դարձի բերել» ամուսնուն, ինչի համար պարգևի կարժանանա: Կնոջ մեղավորության պարագայում ամուսինը կարող է ամուսնալուծվել:

– Կնոջ անմաքրասիրությունը և կռվարարությունը. Սմբատը տղամարդու համար ղժբախտություն է համարում «անբուժելի փնթի» կամ անդուսպ կնոջ հետ ամուսնացած լինելը: Այս դեպքում նա պատվիրում է վկաներ հրավիրել ու, եթե ամուսինն այլևս չհանդուրժի կնոջ թերությունները կամ կռվարարությունը, կարող է դրավոր ապահարզան տալ: Կինը հեռանալիս իրավունք ունի վերցնել օժիտն ու նորից ամուսնանալ: Իսկ ամուսինը չի կարող ամուսնանալ, քանի դեռ կինը կենդանի է:

– Կնոջը չարախոսելը և նրա նկատմամբ բռնությունները. օրենքով պաշտպանվում են կնոջ արժանապատվությունն ու անվտանգությունը ազրեսիվ ամուսնուց: Արգելվում են կնոջ մասին ոչ պատշաճ լուրեր տարածելը, կնոջ նկատմամբ բռնությունները՝ անարդարությամբ ծեծելը կամ հալածելը:

Հարկ է նշել, որ Սմբատ Սպարապետի սահմանած օրենքներն ակնհայտ կրում են Մ. Գոշի «Դատաստանագրքի» համապատասխան նորմերի ազդեցությունը[23]:

Սմբատը մեկնաբանում է նաև ծնողների ու երեխաների իրավունքները և պարտականությունները: Նա ծնողներին պատվիրում է հոգալ զավակների մասին: Հայրը պարտավոր է դաստիարակել զավակներին, նյութապես ապահովել և նախապատրաստել նրանց՝ ինքնուրույն ապրելուս: Զավակները պարտավոր են հնազանդվել ծնողներին, հոգալ նրանց մասին. «Եվ այն որդին, որն իրեն սնուցող ու խնամող հորը ուրանա և նրան թողնելով ... ուրիշների մոտ գնա, նրան Աստված և օրենքը ավելի խիստ են անիծելու»[24]: Ինչպես ծնողները, այնպես էլ խնամակալները պատասխանատու են հոգեկան ծանր վիճակում գտնվող մերձավորների ինքնասպանության համար: Նման դեպքերում պատիժը պետք է որոշվի՝ ելնելով մահվան հանգամանքներից: Սակայն ծնողը պատասխանա-

---

[21] *Նույն տեղում, հոդ. 102–103, էջ 611:*

[22] *Նույն տեղում, հոդ. 85, էջ 605:*

[23] *Տե՛ս Գ ո շ. Դատաստանագիրք, հոդ., 10–11, 14, 17–18, 28, 53, 111, 169, 172, 190, 192:*

[24] *Ս մ բ ա տ. Դատաստանագիրք, հոդ. 121, էջ 616:*

տու չէ որդու հանցագործության համար. «Եթե որդին օրենքով մահապատժի ենթարկվի, նրա հորը չպետք է բանտարկել, և ոչ էլ եղբորը»[25]:

Սպարապետի «Դատաստանագրքում» անտեսված չեն երեխաների կրթության ու դաստիարակության խնդիրները: Մեծատուն մեծ ամոթ է անվճար ուսուցում: Հատուկ խնամք է պահանջում որբերի և աղքատների համար, որպեսզի «... նրանցից չատերը ճգտեն և ուսանելու գնան», նրանց կարիքները պետք է վանքերը հոգան: Աղքատ ուսուցչին նվեր կարող է տալ աշակերտը՝ միայն իր կամքով, հակառակ դեպքում հարկ կլինի դատարանով ըստ արժանվույն պատժել ուսուցչին: Արգելվում են բռնություններն աշակերտների հանդեպ: Ինչպես հայրը, այնպես էլ ուսուցիչը իրավունք չունեն խրատելու նպատակով հարվածել երեխային. «Եթե վարդապետը ուսուցանելու ընթացքում աշակերտին այնպես հարվածի, որ վերջինս մահանա, նա մարդասպան է» և « ... այլևս չի կարող հոգևորական լինել»[26]: Այդպիսով՝ «Դատաստանագիրքը» պաշտպանում է երեխաների կրթության իրավունքը և անվտանգությունը՝ պատվիրելով մարդասիրական վերաբերմունք նրանց նկատմամբ:

«Դատաստանագրքի» բազմաթիվ հոդվածներ վերաբերում են ունեցվածքի ժառանգման կարգին, որն անմիջականորեն առնչվում է ընտանեկան իրավունքին: Ժառանգական իրավունքը իրավական այնպիսի նորմերի համակցություն է, որոնցով կարգավորվում է մահացածի ունեցվածքի ժառանգորդումը: Ժառանգությունը փոխանցվում է երկու ձևով՝ ըստ կտակի կամ ըստ օրենքի:

Սմբատ Սպարապետը կտակի իրավունքը դիտում էր որպես ժառանգորդման իրավունքի իշխող ձև Կիլիկյան Հայաստանում: Նա սահմանում է կտակ կազմելու օրինական պայմանները:

Կտակ կազմելու իրավունք ունի յուրաքանչյուր իրավունակ անձ: Կտակը կազմվում է բանավոր կամ գրավոր, նոտարի ու վկաների ներկայությամբ: Օրենքով սահմանվում է. «Քանի դեռ հիվանդի գիտակցությունը լիովին տեղն է, թող կանչի իր ծանոթներին և նոտարին ... և երեք վկայի ներկայությամբ պատվիրի ցուցակագրել իր ունեցվածքը, և իր կամքի համաձայն՝ որոշի իր հոգու փրկության համար և իր ժառանգներին տալիքը»: Եթե հիվանդն առողջանա, կտակարարը կաշկանդված չի լինի դրանով, քանի որ կտակն օրինական ուժ ունի միայն մահվանից հետո: Բայց և կտակում խոստացվածն անվերապահորեն պետք է կատարի առողջացած մարդը, իսկ եթե մահանա՝ հոգաբարձուները: Ընդ որում՝ « ... կտակը չի կարելի պակասեցնել, Աստծո առջև ուխտ է՝ չպետք է պակասեցնել»[27]: Կտակ կազմելիս կարևորվում է եկեղեցուն տրվելիք հոգեբաժինը. մահացողը « ... առաջին հերթին պետք է հոգա իր եկեղեցու մասին, որի ներքո է ինքը, որտեղ կնքվել է ... որովհետև դա պարտք է ... Եվ դրանից հետո, եթե այլ իրեր մնան, կարող է տալ՝ ում կամենա»[28]:

[25] *Նույն տեղում, հոդ. 124, էջ 617:*
[26] *Նույն տեղում, հոդ. 29, էջ 576–577:*
[27] *Նույն տեղում, հոդ. 144, էջ 624:*
[28] *Նույն տեղում, հոդ. 37, էջ 583:*

Կտակարարի կամքն օրենք է ժառանգների համար: Հայրն իրավունք ունի իր գույքը կտակել ոչ միայն ժառանգներին, այլև՝ ծառային: Նա կարող է իր անհնազանդ որդիներին զրկել ունեցվածքից և այն իր ծառային նվիրել: Փաստորեն, հայրն իրավասու է միայն անհնազանդ ու անարժան զավակներին զրկել ժառանգությունից, այն էլ՝ աշխարհիկ իշխանության թույլտվությամբ. «... թագավորները ... սահմանեցին ... որ դա կարող է լինել պարոնի գիտությամբ և համաձայնությամբ»[29]:

Մեկ այլ հոդվածում նշվում է. « ... բացի պարոնից և եկեղեցուց ոչ ոք ծառային չի կարող ո՛չ ժառանգ և ո՛չ էլ հոգևորական դարձնել»[30]: Օրինական ժառանգների նկատմամբ կտակարարի իրավունքի այս մասնակի սահմանափակումից զատ, այլ դեպքերում օրենքը կտակարարին լիակատար իրավունք է տալիս՝ սեփական գույքն իր հայեցողությամբ բաժանելու ժառանգների միջև: Այս իմաստով՝ կտակը օրենք է ժառանգների համար, և որևէ մեկն իրավունք չունի փոփոխել այն:

Հարկ է նշել, որ ըստ կտակի ժառանգումը նշանակալի դեր ուներ ոչ միայն կիլիկյան հայ հասարակության, այլև՝ արքայատան համար: Ըստ «Դատաստանագրքի»՝ թագավորն իրավունք ունի կտակ գրել թե՛ առողջ, թե՛ մահամերձ վիճակում և « ... լեռ ու դաշտ, և իր ողջ հողային կալվածքները տալ նրան, ում որ կամենա. ո՛չ որդին, ո՛չ այլ մարդ իրավունք չունի նրան ընդդիմանալ»[31]: Թեև իդեալական գծով ժառանգներն արական գծով ժառանգներին հավասար իրավունքներ չունեին, սակայն հայրն իրավունք ուներ կտակով իր աղջիկներին թողնել իր ունեցվածքի ցանկացած մաս:

Սմբատ Սպարապետը մեկնաբանում է ամուսինների գույքային իրավունքները: Եթե ամուսինները միասին են, և նրանց ողջ ունեցվածքն անբաժան է, ամուսինը կարող է կտակել ընդհանուր ունեցվածքից: Իսկ եթե կնոջ ունեցվածքն առանձնացված է, այն « ... կպատկանի իր հետևորդներին, ում ինքը ժառանգ կնշանակի»: Զավակներ չունենալու դեպքում պետք է ամեն ինչ որոշվի կտակով: Եթե ամուսնական համատեղ կյանքը կարճատև է, և զավակներ չեն լինում, կնոջն ամեն ինչ վերադարձվում է, ու ամուսինը դրանից բաժին չունի: Իսկ եթե երեխա ունեցած լինեն, ողջ ունեցվածքն ամուսնուն է պատկանում:

Այս իրավանորմերը սահմանելիս Սմբատը հաշվի էր առնում նաև ազգային սովորութային իրավունքը՝ պատվիրելով. « ... դատավորները պետք է լավ ուսումնասիրեն եղած պայմանը, երկրի սովորույթյունները և ըստ այդմ գործեն ու թերույթյունները լրացնեն»[32]: Այդպիսով՝ գույքի բաժանման յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է հիմք ընդունել հայ սովորութային իրավունքի սկզբունքներն ու գավառների ավանդույթները:

Կտակի բացակայության պարագայում ժառանգությունը բաժանվում է՝ ըստ օրենքի: «Դատաստանագրքում» սահմանված է միասնական կարգ՝ թե՛ ազնվականության, թե՛ հասարակության մյուս խավերի համար: Ըստ

[29] *Նույն տեղում, հոդ. 118, էջ 615:*
[30] *Նույն տեղում, հոդ. 147, էջ 625:*
[31] *Նույն տեղում, հոդ. 1, էջ 564:*
[32] *Նույն տեղում, հոդ. 145, էջ 625:*

ազգակցության աստիճանի՝ ժառանգորդները դասակարգվում են հետևյալ կարգով. ա) զավակներ, բ) եղբայրներ, գ) հորեղբայրներ, դ) արական գծով մյուս ազգականները՝ մինչև չորրորդ սերունդ. « ... օրենքը հրամայում է, որ ժառանգության այս կարգը հոր կողմից պահպանվի մինչև չորրորդ սերունդը»[33]: Կինը ժառանգ կարող է լինել, եթե ժառանգատուն նրանից երեխաներ ունի: Իգական գծով ժառանգներ են զավակները և արյունակից մյուս ազգականները՝ մինչև չորրորդ չառավիղը, իսկ ամուսինը ժառանգորդ կարող է լինել, եթե ժառանգատու կնոջ հետ նրա ամուսնության երեխա ունի:

Զավակներն առաջին օրինական ժառանգներն են, որոնց առկայությունը բացառում է այլ ժառանգորդների: Զավակներից առավելությունը տրվում է որդիներին, ովքեր, բացի ավագից ու կրտսերից, ստանում են հավասար բաժիններ: Ավագ որդին ստանում է կրկնակի բաժին, քանզի « ... անդրանիկ զավակին Աստված ինքն է առավելություն տվել, և պատշաճ է, որ նա փոխարինի հորը և երկու բաժին ստանա»: Իսկ եթե եղբայրն իր բաժինը վաճառի, պետք է մյուս եղբայրները « ... ըստ գնի՝ իրենց մեջ բաժանեն, և ոչ թե միայն մեկը տիրանա»: Կրտսեր որդին ժառանգում է հոր տունը: Եթե եղբայրները որոշում են միմյանցից բաժանվել, պետք է նախ իրենց ունեցվածքից ու եկամուտներից « ... իրենց կանանց բաժինը [ամուսնական նվերը] առանձնացնեն, իսկ հետո բաժանեն այն, ինչ իրենց է պատկանում»[34]:

«Դատաստանագրքում» սահմանված է ժառանգման կարգը. կինը ստանում է ամուսնուն հասանելիք բաժնի կեսը: Երկու չամուսնացած աղջիկները ստանում են այնքան, որքան տղան, « ... որովհետև երկու աղջիկը մեկ տղա է համարվում»[35]: Իսկ երկու ամուսնացած աղջիկները ստանում են չամուսնացած մեկ քրոջ բաժնի չափ: Իբրև բացառություն՝ միայն թագավորի ամուսնացած դուստրն է ստանում եղբոր բաժնի կեսը. «Դուստրերի վերաբերյալ հաստատված կարգ է, որ նրանց կնության տան նահապետների տներում ... Եվ պետք է աղջկան պոռոգ տրվի հայրական ունեցվածքից՝ եղբոր բաժնի կեսի չափով»[36]: Այս կանոնը տարածվում էր նաև իշխանների աղջիկների վրա:

Սմբատը վերահմաստավորում է Հայոց հին ժառանգական իրավունքին[37] բնորոշ տնփեսայության կարգը, որը բնավ նույնական չէ մայրիշխանության: Այն հարաբերությունը, որ գոյություն ունի տնփեսայի ու կնոջ միջև, որևէ կապ չունի մայրիշխանության հետ և նույնիսկ հակասում է դրան: Հարկ է նշել, որ տնփեսայության վերաբերյալ օրենքը առկա է միայն Սմբատի «Դատաստանագրքում», այն չկա ո՛չ Կանոնական

[33] *Նույն տեղում, հոդ. 118: Այս հոդվածը համահունչ է Մ. Գոչի սահմանած օրենքին (տե՛ս Գ ո չ. Դատաստանագիրք, հոդ. 101):*

[34] *Ս մ բ ա տ. Դատաստանագիրք, հոդ. 120, էջ 616:*

[35] *Նույն տեղում, հոդ. 118, էջ 614–615:*

[36] *Նույն տեղում, հոդ. 1, էջ 563:*

[37] *Հայոց ժառանգական իրավունքի մեկնաբանությունը տե՛ս Ա. Ղ լ տ ճ ե ա ն. Հայոց հին իրավունքը, Ալեքսանդրապոլ, 1913:*

իրավունքում, ո՛չ էլ Դավիթ Ալավկա որդու և Մ. Գոշի դատաստանագրքերում:

Տնփեսայության իրավական ըմբռնմամբ՝ եղբայրազուրկ աղջիկն իր հոր ժառանգն է: Այս իրավունքի գործադրությունը և՛ Հին Հայաստանում, և՛ Կիլիկիայում ուներ քաղաքական նպատակ՝ արու զավակ չունեցող ընտանիքների սեփականությունը պահպանելու ու օտարների միջև չբաժանելու իմաստով: Աղջիկների ժառանգական իրավունքով Սմբատը պաշտպանում էր հայկական տոհմիկ կալվածքները՝ խառն ամուսնությունների պարագայում դրանց օտարումը կանխելու նպատակով:

Ըստ Սմբատի՝ եթե ընտանիքում որդի չկա և « ... տնփեսա բերած լինեն, այդ դեպքում փեսան՝ իր կնոջ հետ, տղայի տեղ կհաշվի և պետք է տղայի նման չարժական ու անչարժ գույքից երկու քրոջ բաժին ստանան»: Տնփեսան կարող է օգտվել ընտանեկան գույքից, այն բազմապատկել, բայց իրավունք չունի վաճառել, կտակել կամ նվիրել այն: Ըստ օրենքի՝ կնոջ սեփականությունն անձեռնմխելի է: Սպարապետը միաժամանակ բացատրում է, որ « ... դուստրերի օրինական ժառանգությունն այդ ձևով կլինի միայն այն դեպքում, եթե հայրը կտակ թողած չլինի»[38], հակառակ պարագայում՝ ամեն ինչ պետք է կատարվի հոր կտակի համաձայն:

Եթե դուստրերը զավակներ ունենան, ապա փեսան, այլ տոհմից սերվածը, ինչպես նաև դստեր թոռը չեն կարող ժառանգորդ լինել, որովհետև օտար ցեղից են: Նույնը վերաբերում է քեռուն, քրոջ որդուն և մորեղբորը: Դուստրերի ժառանգությունից բաժին չունեն նաև հորեղբայրները և նրանց որդիները, եթե տանը չամուսնացած դուստր կա: Ամուսնացած և բաժանված դստեր պարագայում հորեղբայրը կարող է ստանալ քառորդ բաժին, բայց ոչ նրա որդիները:

Ըստ օրենքի՝ արական (հայրական) գծով ժառանգության այս կարգը պետք է պահպանվի մինչև չորրորդ սերունդ, *այսինքն՝ եթե չլինեն որդիներ, դուստրեր և նրանցից ծնված թոռներ: Այդ դեպքում ժառանգորդ դառնում են եղբայրները, եղբորորդիները և նրանց թոռները՝ մինչև չորրորդ սերունդ: Եթե եղբայրներ չլինեն, հայրենական ժառանգությունը պետք է տրվի հորեղբորը և նրա որդիներին՝ դարձյալ մինչև չորրորդ սերունդ: Իսկ արյունակից ազգականների բացակայության դեպքում ունեցվածքը համարվում է անժառանգ և փոխանցվում պետական գանձարան:*

Սմբատը սահմանում է նաև իգական (մայրական) գծով ժառանգման կարգը, որը համահունչ է արական գծով ժառանգմանը. «Եթե ժառանգություն թողնող կինը տղայի կողմից թոռ ունենա, և այդ թոռան հայրը կենդանի չլինի, ինչպես նաև աղջկա կողմից թոռ ունենա, և նրա մայրը կենդանի չլինի, այդ դեպքում թոռները պետք է ժառանգեն»[39]:

Հարկ է նշել, որ այս հոդվածը չի հակասում նախորդ՝ 118-րդ հոդվածին, որտեղ նշված է. « ... դստեր թոռը չի կարող ժառանգորդ լինել»: Պարզապես այնտեղ չի նշվում, որ թոռների ծնողների ողջ լինելու պարագայում վերջիններն են ժառանգորդը, քանզի « ... նրանք ավելի մոտ են

---

[38] *Սմբատ. Դատաստանագիրք, հոդ. 118, էջ 614–615:*

[39] *Նույն տեղում, հոդ. 119, էջ 615–616:*

ժառանգությանը»: Եթե այդ կարգի թոռներ չլինեն, պետք է ժառանգեն մերձավոր բարեկամները: Թոռների մահվան դեպքում ժառանգորդը հայրն է, որովհետև հայրն իր որդիների անվիճելի ժառանգորդն է այնպես, ինչպես որդիները՝ հոր, բայց դա մորը չի վերաբերում:

Այդպիսով՝ արական գծով ժառանգներն առավել իրավունքներ ունեն, քան իգական գծով ժառանգները: Այնուամենայնիվ, կանանց իրավունքն անտեսված չէ: Այդ է վկայում այն փաստը, որ Կիլիկյան Հայաստանում կանայք աստիճանաբար նվաճում էին տղամարդուն հավասար ժառանգման իրավունք:

Սմբատ Սպարապետն անդրադարձել է նաև որդեգրման հիմնահարցին: Օրենքը որդեգրում թույլատրում է, եթե չկան զավակներ և ազգականներ՝ մինչև չորրորդ շառավիղը, այսինքն՝ եթե օրինական ժառանգներ չկան: Թեև «Դատաստանագրքում» սահմանվում է միայն եկեղեցականի որդեգրման իրավունքը, սակայն դրանից կարելի հետևություն անել որդեգրման ինստիտուտի գոյության մասին: Որդեգրվածի («Հոգեորդու») իրավունքը տարածվում է որդեգրողի չարժական գույքի, բայց ոչ անշարժ սեփականության վրա. «Եթե ժառանգորդն իր ազգականից չէ, այլ միայն որդեգիրն է, նրան իր ցանկությամբ կարող է տրվել միայն չարժական գույքը, իսկ տունը և հայրենական կալվածքը եկեղեցուն են պատկանում»: Սակայն եթե որդեգիրը նվիրյալ հոգևորական և քահանայական կամ այլ հայտնի տոհմից սերված լինի, « ... որն անօրինական զավակ չէ, կարող է օրենքով ստանալ տան և կալվածքի կես մասը»[40]:

Եզրակացություն

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքով» Կիլիկյան Հայկական պետության մեջ ընտանեկան հարաբերությունները կարգավորվել են՝ ի բարօրություն հայ ընտանիքի և հանուն ազգային հողատիրույթների պաշտպանության:

Լիլիթ Սարվազյան – փ. գ. թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հասարակագիտության ամբիոնի դոցենտ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայ փիլիսոփայության պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ազգային իրավաքաղաքական ուսմունքների պատմություն, հայ պատմափիլիսոփայական հիմնախնդիրներ, արևմտահայ սահմանադրաիրավական մտքի պատմություն: Հեղինակ է 2 մենագրության, 4 ուսումնամեթոդական ձեռնարկի և 47 հոդվածի: lilit.sarvazyan@gmail.com

[40] *Նույն տեղում, հոդ. 41, էջ 585:*

REFERENCES

Alishan H. Ghevond V. M. Hayapatum, Masn A, Venetik, 1901 (In Armenian).
Datastanagirk Smbat Ishkhani (Gundstabli) (Kilikean Datastanagirk XIII dari), dzeragreri hamemat. ev arajabane` A. Vrd. Ghltjiani, S. Edjmiadsin, 1918 (In Armenian).
Garegin A. Katoghikos. Hishatakarank dzeragrats, h. A, Antilias, 1951 (In Armenian).
Ghltjyan A. Hayots hin iravunke, Aleksandrapol, 1913 (In Armenian).
Hay iravakan mtki gandzaran, ashkhat.` R. Avagyani, girk A, hod. 1; 6; 10; 11; 14; 17; 18; 28; 29; 37; 53; 70; 78; 80; 81; 84; 85; 89; 100; 101; 102; 103; 104; 108; 111; 112; 116; 118; 119; 120; 121; 124; 144; 145; 147; 169; 172; 190; 192 , Yerevan, 2001 (In Armenian).
Kanonk Nersesi B. katoghikosi ev Nershapuh Mamikoneits episkoposi, ashxat.` A. Vrd. Ghltjyani, Vagharshapat, 1905 (In Armenian).
Kanonk Srboyn Sahakay Hayots Hayrapeti, Kanon ID, Kanonagirk Hayots, Ashxat.` V. Hakobyani, girk A, Yerevan, 1964 (In Armenian).
Ormanyan M. Azgapatum, Masn B, K. Polis, 1913 (In Armenian).
Safaryan G. Iravunki patmutyan ev tesutyan himnahartser, Yerevan, 2010 (In Armenian).
Sukiasyan A. G. Kilikiayi haykakan petutyan ev iravunki patmutyun (XI–XIV dd.), Yerevan, 1978 (In Armenian).

ПРАВОВЫЕ ОСНОВЫ РЕГУЛИРОВАНИЯ СЕМЕЙНЫХ ОТНОШЕНИЙ В «СУДЕБНИКЕ» СМБАТА СПАРАПЕТА

ЛИЛИТ САРВАЗЯН

Р е з ю м е

Ключевые слова: Смбат Спарапет, «Судебник», семейное право, свободный выбор, нравственные добродетели, правовая политика, порядок наследования, имущественные отношения.

Известный полководец Киликийского Армянского государства, политический деятель, дипломат и законодатель Смбат Спарапет (1208–1276 гг.) в своем «Судебнике» (1265 г.) установил нормы, регулирующие семейные отношения, основываясь на армянском каноническом и обычном праве, а также на «Армянском судебнике» Мхитара Гоша. Смбат стремился сохранить армянскую семью – стабильную основу государства, ее древние традиции и предотвратить разводы. Регулирование семейных отношений принадлежало как светско-государственной, так и духовно-церковной юрисдикции.

Во многих статьях «Судебника» осуждаются насилие в отношении женщин и детей, внебрачные отношения, также защищаются личные и

имущественные права супругов. Обосновывается необходимость образования и воспитания детей, устанавливая бесплатное обучение для бедных и сирот.

Смбат Спарапет рассматривал право наследования по завещанию как доминантную форму в контексте права наследования в Киликийской Армении. При отсутствии завещания наследство делилось по закону. Был установлен единый порядок как для дворянства, так и для других слоев общества.

В «Судебнике» защищаются наследственные права армянских девушек. Действие данного закона имело политическую цель в Киликии, в плане защиты собственности и родовых владений семей, не имеющих детей мужского пола, и в целях предотвращения их отчуждения в случае смешанных браков.

Лилит Сарвазян – к. филол. н., доцент кафедры обществоведения АГПУ им. Х. Абовяна, старший научный сотрудник отдела истории армянской философии Института философии, социологии и права НАН РА. Научные интересы: история национальных политико-правовых учений, армянские историко-философские проблемы, история западноармянской конституционно-правовой мысли. Автор 2 монографий, 4 учебно-методических пособий и 47 статей. lilit.sarvazyan@gmail.com

THE LEGAL BASIS FOR THE REGULATION OF FAMILY RELATIONS IN SMBAT SPARAPET'S "CODE OF LAW''

LILIT SARVAZYAN

S u m m a r y

Key words: Smbat Sparapet, Code of Law, family right, free choice, moral virtues, legal policy, inheritance procedure, property relations.

Smbat Sparapet, an outstanding commander-in-chief, politician, diplomat and legist of the Cilician Armenian State, in his "Code of Law" (1265) established norms regulating family relations, based on the Armenian canonical and customary law, as well as on Mkhitar Gosh's "Armenian Code of Law". Smbat's efforts were aimed at preserving the stability of the Armenian family as the foundation of the state, the ancient traditions, and to prevent divorces. The regulation of family relations was subject to both, secular-state and spiritual-ecclesiastical jurisdiction.

Numerous articles in the "Code of Law" condemn violence against women and children, extramarital relations, and protect the personal and property rights of spouses. The necessity for education and upbringing of children is grounded by establishing free education for poor and orphaned children.

Գիտահրատարակչական հայերեն 2020 № 2 Историко-филологический журнал

Smbat Sparapet viewed the right to will as the ruling right of inheritance in Cilician Armenia. In the absence of a will the inheritance was divided according to the law. A common order was established for both the nobility and the other classes of the society.

The "Code of Law" protects the hereditary rights of Armenian girls. The application of this law in Cilicia had a political purpose, which was to protect the property of families without male children in terms of protecting ancestral estates, and in the case of mixed marriages to prevent their alienation.

Lili Sarvazyan – Candidate of Sciences in Philosophy, Associate Professor at the Chair of Social Sciences at the State Pedagogical University after Kh. Abovyan. Senior research fellow at the Department of Armenian Philosophy of the NAS RA Institute of Philosophy, Sociology and Law. Scientific interests: History of National Political-Legal Studies, Armenian Historical and Philosophical Issues, History of Western Armenian Constitutional and Legal Mind. Author of 2 monographs, 4 educational guides and 47 articles.
lilit.sarvazyan@gmail.com

II

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1881 թ.–1914 թ. սեպտեմբեր)*

ՆԻՆԵՏԱ ԱԴԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ Թիֆլիս, ԿՀԲԸ, Բ. Նավասարդյան, Ս. Հարությունյան, բարեգործություն, գաղթականներ, դպրոցներ, դրաստան, որբանոց, արհեստանոց:

Նախաբան

«Հիւսիսափայլ»-ում հասարակական գործիչ Ստեփանոս Նազարյանցի տպագրած հոդվածն[1] ազդակ էր, որպեսզի քայլեր ձեռնարկվեն հիմնելու մեկ ընդհանուր բարեգործական ընկերություն, որի նպատակն էր հայության շրջանում լուսավորություն տարածելը: Հոդվածագրի համոզմամբ, «Հայերը կարօտ են մի այնպիսի կրթութեան, որ իւրեանց միջից, արմատից դէպ ի վեր և ազգային հիմքից գոյանար ու յառաջ գնար. և այս գործը պարտական է կատարել Հայոց ազգը ամենևին ինքնիշխան, իւր յատուկ ձեռքի վաստակով, առանց նիւթական օգնութիւն խնդրելու տէրութենից: Մի ազգային միաբանութիւն, գործակից ընտրելով իւրեան մի ազգասէր, սրտացաւ հոգևոր գլուխ, կարող է մեծ վաստակներ վաստակել և լուծանել այն խնդիրը, որ ժամանակը և Նախախնամութիւնը դրել է Հայոց առաջև ...»[2]: Փաստորեն, հոդվածը խթան էր, որ հետագայում ոչ միայն Թիֆլիսում, այլև Բաքվում[3] ու Կովկասի հայաշատ այլ բնակավայրերում ստեղծվեն բարեգործական ընկերություններ:

Ընկերության գործունեության պատմությունից

Կովկասի հայոց բարեգործական ընկերության (այսուհետև՝ ԿՀԲԸ) ստեղծման աշխատանքներին մասնակցել են Թիֆլիսահայոց երևելի դեմքերից Բագրատ Նավասարդյանը, Գաբրիել Սունդուկյանը, Սենեքերիմ Արծրունին, նաև՝ Ալեքսանդր Մանթաշյանցը, Ավետիք Եզեկյանը, Հով-

---

** Ներկայացվել է 03. VI. 2020 թ., գրախոսվել է 04. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2020 թ.:*

[1] Ս. Նազարեանց. Հայերի կոչումը մարդկութեան մէջ.– «Հիւսիսափայլ» (Մոսկվա), 1859, յունվար, էջ 1–14:

[2] Նույն տեղում, էջ 10:

[3] Տե՛ս Ս. Առաքելյան. Բաքվի հայոց մարդասիրական ընկերության կանոնադրության չուրջ, էջ 186–191.– http://publications.ysu.am/wp-content/ uploads /2018/12/Araqeljan.pdf (*վերջին այցելությունը՝* 06. III. 20)*:*

հաննես Զիտախովը, Արշակ Նահապետյանն ու այլք[4]: Ըստ ներկայացված ծրագրի, որը գերազանցում էր անգամ Ստ. Նազարյանցի առաջարկությունը, բարեգործական ընկերությունը երկրի տարբեր վայրերում պետք է ունենար մասնաճյուղեր, նաև իր գործունեության մեջ ընդգրկեր հայկական բոլոր գաղթօջախները: Սակայն 1881 թ. հունիսի 6-ին Կովկասի իշխանությունները, հաստատելով ընկերության կանոնադրությունը[5], պարտադրեցին գործունեությունը սահմանափակել միայն փոխարքայության չրջանակներում: Նորաստեղծ ընկերությունը ստացավ «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում» անվանումը[6], որի նպատակն էր նպաստել լուսավորության տարածմանը հայերի մեջ Կովկասում ու Անդրկովկասում, ինչպես նաև՝ նյութապես օգնել առանց կրոնական խտրականության բոլոր կարիքավորներին:

ԿՀԲԸ-ն իր աշխատանքները սկսեց 1881 թ. նոյեմբերի 15-ին ու գործեց մինչև 1921 թ. սկիզբը[7]: Կանոնադրության համաձայն՝ ընկերության ղեկավար մարմիններն էին խորհուրդը և տեղական վարչությունը: ԿՀԲԸ-ին անդամակցում էին պատվավոր, մշտական և գործադիր անդամներ: Ընկերության նախագահն էր Բագրատ Նավասարդյանը, իսկ խորհրդի նախագահը մինչև 1899 թ.՝ Ալեքսանդր Անանյանը[8]:

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ընկերությունը ձեռք բերեց մեծ հեղինակություն և իր շուրջ համախմբեց ազգային լավագույն ուժերին: Գոյության առաջին տարում ԿՀԲԸ-ն ուներ 620 անդամ, որից 31-ը՝ մշտական, իսկ 589-ը՝ գործադիր[9]: Հաջորդ տարիներին անդամների թիվն ավելացավ. 1899 թ. հունվարի 1-ին մշտական անդամների թիվը

---

[4] *«Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), 1881, № 4, 25 յունուարի: Տես նաև՝ Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, կազմ. Լէօ, Թիֆլիս, 1911, էջ 37:* С. Гевенян. Мой Тифлис. Ереван, 2002, с. 111.

[5] *1881 թ. ԿՀԲԸ-ի կանոնադրության հեղինակներ էին Բագրատ Նավասարդյանը, Գաբրիել Սունդուկյանը և Սեմեքերիմ Արծրունին: Այն գլխավորապես կազմված էր ռուսական կարմիր խաչի կանոնադրության օրինակով:*

[6] *Վ. Երկանյան. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), Երևան, 1970, էջ 69:*

[7] *Մանրամասն տե՛ս Լ է օ. Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան տասնամեակը.– «Տարազ» (Թիֆլիս), 1891, № 48, էջ 706–717, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911 Թիֆլիս, 1911 թ., Մնայուն Յուշարձան Կով. Հայոց Բարեգ. Ընկ. XXX-ամեակի.– «Տարազ», 1911, № 12, Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. 6, Երևան, 1981, էջ 760, Վ. Երկանյան. Հայկական մշակույթը 1800–1917 թթ., Երևան, 1982, էջ 58–59,* С. Гевенян. *Նշվ. աշխ., էջ 107–122, Հ. Հ. Շատվորյան. Թիֆլիսի հայ բարեգործական հաստատությունների պատմությունից (19-րդ դարի վերջ–20-րդ դարի սկիզբ), Երևան, 2007, էջ 11:*

[8] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 5, թ. 3–4:*

[9] *«Տարազ», 1891, № 48, էջ 711, «Մեղու Հայաստանի», 1881, № 265, 19 դեկտեմբերի, հավելված: Մշտական անդամն ընկերությանը միանվագ նվիրում էր 300 ռ., իսկ գործադիրը՝ ամեն տարի 5 ռ.:*

հասավ 43-ի, նրանց վճարած անդամավճարների հաշվին ձևավորվեց ընկերության անձեռնմխելի գումար՝ 51.034 ռ. 34 կ.[10]:

ԿՀԲԸ-ն գործունեության առաջին փուլը պայմանականորեն կարելի է համարել 1881–1899 թթ.: Այդ ընթացքում ընկերությունը երկու անգամ կտակի տեսքով ստացել է խոշոր նվիրատվություն. առաջինը Հովսեփ Մուրադյանից՝ 7.000 ռ.[11], երկրորդը՝ Հովհաննես Խուդադյանից՝ 111.997 ռ.[12]: Նշված ժամանակահատվածում ընկերությունն իրականացնում էր բազմաբնույթ մշակութային-լուսավորական գործունեություն՝ նպաստներ տալիս դպրոցներին, չքավոր աշակերտներին ամսավճարներ տրամադրում, բացում գրադարան-ընթերցարաններ, զբաղվում աղքատախնամ գործունեությամբ, ինչպես նաև՝ օգնություն ցուցաբերում տարերային աղետներից տուժածներին:

Արդեն 1880-ական թվականների կեսերից ռուսական իշխանությունները փոխեցին իրենց քաղաքականությունը կայսրության ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի նկատմամբ: 1881 թ. գահ բարձրացած Ալեքսանդր III-ը (1881–1894) դիմեց կտրուկ քայլերի, որոնք ուղղված էին առաջին հերթին մշակութային օջախների դեմ: 1896 թ. Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ և ռազմական տարածաշրջանի զորքերի հրամանատար նշանակվեց իշխան Գ. Գոլիցինը, ով հայ ժողովրդի կենսական շահերը ոտնահարող բազմաթիվ որոշումների նախաձեռնողն էր[13]: Իշխանի կառավարման տարիները հայտնի են «Գոլիցինյան ռեժիմ» անվամբ, որի օրոք ԿՀԲԸ-ի իրավունքները սահմանափակվեցին: 1899 թ. հուլիսի 6-ին Կովկասում գործող բարեգործական ընկերությունների համար Ռուսաստանի ներքին գործերի նախարար, սենատոր Ի. Գորեմիկինի կողմից հաստատվեցին նոր կանոնադրություններ: Ընկերությունները հարկադրված էին ենթարկվել, քանի որ հակառակ դեպքում իրենց հետագա գործունեությունը կարգելվեր:

ԿՀԲԸ-ի համար սկսվեց գործունեության երկրորդ փուլը՝ 1899–1908 թթ.: Նոր կանոնադրության համաձայն՝ ԿՀԲԸ-ը վերանվանվեց Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերություն (այսուհետև՝ ԹՀԲԸ), փակվեցին

---

[10] *Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 126:*

[11] *Նույն տեղում, էջ 127:*

[12] *Տեղեկագիր Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, 1896 եւ 1897, Տասն եւ վեցերորդ տարի, Տասն եւ եօթերորդ տարի (այսուհետև՝ Տեղեկագիր 1896–1897), Թիֆլիզ, 1898, էջ 82–97, Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1908 թ. գործունէութեան (այսուհետև՝ Տեղեկագիր 1908), Թիֆլիս, 1909, էջ 56:*

[13] *Ավելի մանրամասն տե՛ս Վ. Երկանյան. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), էջ 216–292, Է. Կոստանդյան. Մկրտիչ Խրիմյան: Հասարական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008, էջ 495–416, Հայոց պատմություն, հ. 3. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), Երևան, 2015, էջ 151:*

մասնաճյուղերը[14]: Սա նոր բնույթի ընկերություն էր, որի գործունեության շրջանակները սահմանափակվում էին Թիֆլիսով: Ընկերության անդամներ կարող էին լինել միայն կառավարչապետության կենտրոնի մշտական բնակվողները: Անդամավճար էր նշանակվում տարեկան 6 ռ.: Վարչության նախագահ է ընտրվում Մարկոս Դոլուխանյանը: Ընկերությունը կտակի տեսքով խոշոր նվիրատվություն ստացել է մեկ անդամ 1907 թ.՝ վաճառական Եղիա Գալստյան Բուդաղյանից 10.000 ռ.[15]:

Հայկական բարեգործական ընկերություններին արգելվեց զբաղվել մշակութային-լուսավորական գործունեությամբ, ուստի ԹՀԲԸ-ն ստիպված էր անցնել աղքատախնամ գործունեության: Բացվեցին աշխատանքի տներ (աշխատանքի տեղավորման գործակալություն), անկելանոցներ, բարեգործական ճաշարաններ, որբանոցներ[16]:

ԹՀԲԸ-ի հետագա գործունեության հարցում մեծ նշանակություն ունեցան 1904–1905 թթ. ղեկքերը՝ Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը, Գ. Գոլիցինի հեռացումը, փոխարքայության վերականգնումն ու Ի. Վորոնցով-Դաշկովի նշանակումը[17]:

1908 թ. կարելի է համարել ընկերության վերաբացման և գործունեության երրորդ փուլի սկիզբ. այն կրկին վերանվանվեց ԿՀԲԸ: Հունվարի 31-ին չնչին փոփոխություններով վերականգնվում է 1881 թ. հաստատված ընկերության կանոնադրությունը[18]: Փետրվարի 2-ին կայանում է վերաբացված ընկերության առաջին ընդհանուր ժողովը: Կովկասի փոխարքան դարձավ ընկերության պատվավոր անդամ: ԿՀԲԸ-ի խորհրդի նախագահ ընտրվեց Սամսոն Ստեփանի Հարությունյանը[19], նրա տեղակալն էր իշխանուհի Մարիամ Մարկովնա Թումանովան (Մարիամ Մարկոսի Թումանյան)[20]:

ԿՀԲԸ-ի խորհուրդը մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղավ աշխատանքին: Անհրաժեշտ էր ընկերության ճյուղերի վերաբացում, դրա հետ մեկտեղ վարել ընթացիկ գործերը՝ որբանոց-դպրոցի, ճաշարանի, աղքատների նպաստների և այլն, հատկապես, երբ խորհուրդը ընկերության կենտրոնական գործադիր մարմինն էր ու միևնույն ժամանակ Թիֆլիսի մասնաճյուղի վարչությունը:

Խորհուրդը, փետրվարի 20-ի նիստում կայացրած որոշման համաձայն, բաժանվեց մասնաժողովների՝ որբանոցի, ճաշարանի, նպաստների, ֆի-

---

[14] Устав Тифлисского армянского благотворительного общества. Тифлис, 1900. *Տե՛ս* Վ. Երկանյան. *Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), էջ 222–223:*

[15] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 57:*

[16] *ՀԺՊ, հ. 6, էջ 764:*

[17] *Հայոց պատմություն, հ. 3, էջ 12–19:*

[18] *Կանոնադրութիւն Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, 1908:*

[19] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 3:*

[20] *Տե՛ս Տեղեկագիր Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան 1911 թ. (այսուհետև՝ Տեղեկագիր 1911), Թիֆլիս, 1912, էջ 4,* С. Гевенян. *Նշվ. աշխ., էջ 47:*

նանսական և այլն, որոնք, բացի հերթական նիստեր գումարելուց, պետք է զբաղվեին իրենց ենթակա հիմնարկների կանոնավոր գործունեությամբ ու զարգացմամբ[21]:

Արդեն 1908 թ. ընկերությունն ուներ 304 անդամ, յուրաքանչյուրը վճարում էր տարեկան 5 ռ. անդամավճար: Անդամների թիվը 1910 թ. հասնում է 342-ի[22]: Ընկերությունը 1908 թ. ևս ունեցել է խոշոր նվիրատուներ՝ Ա. Անանյանը (20.000 ռ.), Ալ. Ղարաջանյանը (22.187 ռ. 48 կ.), Ա. Մանթաշյանը (20.000 ռ.), Տ. Աֆրիկյանը (6.900 ռ.) ու այլք[23]:

1908 թ. Թիֆլիսում՝ Աբաս Աբադյան հրապարակում, ԿՀԲԸ-ի համար կառուցվեց երկհարկանի շենք: Այստեղ էին գտնվում մանկատունը, գրադարան-ընթերցարանը, աշակերտների համար բարեգործական ճաշարանը, խորհրդի գրասենյակը, երկրորդ հարկում՝ ընդարձակ դահլիճը, որտեղ տեղի էին ունենում ժողովները, դասախոսությունները, բարեգործական երեկոները: Շենքի կառուցման արժեքն էր 22.187 ռ. 48 կ. ամբողջ գումարը նվիրաբերել էր Ալ. Ղարաջյանը[24]:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը ԿՀԲԸ-ն զբաղվում էր իր բնականոն գործունեությամբ, ուներ պատկառելի կապիտալ: Ընկերության խորհուրդը զբաղվում էր իր մասնաճյուղերի, նպաստով պահվող դպրոցների, խուդադյան որբանոցի, ճաշարանի, գրադարան-ընթերցարանի և այլ հաստատությունների կառավարումով: Խորհուրդն իր մասնաճյուղերով հանգանակություններ էր կատարում պահեստազորի զինվորների ընտանիքներին օգնություն ցուցաբերելու, վիրավորների համար հիվանդանոցներ բացելու (Թիֆլիս, Երևան, Պյատիգորսկ, Ալեքսանդրապոլ) և գաղթականների վիճակը բարելավելու համար:

ԿՀԲԸ-ի նախաձեռնությամբ 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում ընկերության 126 անդամների, իր մասնաճյուղերի ու ռուսահայ ազգային, մշակութային և բարեգործական 18 հաստատությունների ներկայացուցիչների ու պատվավոր հյուրերի ներկայությամբ տեղի է ունենում համագումար: Ստեղծվում է Հայկական կենտրոնական կոմիտե (ՀԿԿ)[25], որը պետք է օգներ պատերազմից տուժածներին և գործելու էր ԿՀԲԸ-ի խորհրդին կից[26]:

---

[21] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 5–9:*

[22] *Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 268:*

[23] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 47–55:*

[24] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 7, 50–52, Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1909 թ. գործունէութեան (այսուհետև՝ Տեղեկագիր 1909), Թիֆլիս, 1910, էջ 36, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 270–271,* С. Гевенян. *Նշվ. աշխ., էջ 119:*

[25] *Նշենք, որ ՀԿԿ-ն հատուկ կազմակերպություններ չարքում էր և ուներ իր ներկայացուցչին Ներքին գործերի առանձին խորհրդակցությունում՝ ի դեմս Պետական դումայի անդամ Մ. Ածեմյանի: Քանի որ ՀԿԿ-ն ստեղծվել էր ԿՀԲԸ-ին կից, գործը կանոնակարգելու համար որոշվեց օգտվել շրջաններում գործող ընկերության մասնաճյուղերի ծառայություններից:*

[26] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 108, թթ. 57–58 շրջ., 62, Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1914 թ., XXXIV տարի (այսուհետև՝ Տեղեկագիր 1914), Թիֆլիս, 1915, էջ 12–13, «Հորիզոն» (Թիֆլիս), 17. IX. 1914:*

Մասնաճյուղեր

Ընկերության կանոնադրության 16-րդ կետի համաձայն՝ ԿՀԲԸ-ն կարող էր մասնաճյուղեր բացել: 1882 թ. Գ. Սունդուկյանն ու Բ. Նավասարդյանը ԿՀԲԸ-ի խորհրդին ներկայացնում են ծրագիր-հրահանգ[27], ըստ որի՝ կազմակերպվում և կանոնակարգվում էր մասնաճյուղերի գործունեությունը:

Ընկերության գոյության առաջին իսկ տարում մասնաճյուղեր են բացվում Թիֆլիսի նահանգի գավառներում, Շուշիում, Երևանում, Կարսում, Ախալքալաքում, Նոր Բայազետում, Նախիջևանում, Վաղարշապատում, Արդվինում, Նուխում, Բաթումում, Գորիում, Արմավիրում, Ախալցխայում, Թելավիում, Սիգնախում, Դերբենտում և Մոզդոկում[28]: Սակայն 1891 թ. հունիսի 17-ի Թիֆլիսի ոստիկանապետի գրության համաձայն, կանոնադրությունից հանվեցին 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները, ըստ որոնց՝ ընկերությունը կարող էր մասնաճյուղեր բացել Կովկասի ու Անդրկովկասի այն վայրերում, որտեղ դրա անհրաժեշտությունը կար[29]: Այդ իսկ պատճառով 1882–1899 թթ. ընթացքում գործում էր միայն 21 մասնաճյուղ[30]:

Հանելով այդ հոդվածները կանոնադրությունից՝ 1895 թ. ընկերությունը չարունակեց իր աշխատանքները: Ընկերությունն իր գործունեության երկրորդ փուլում՝ 1899–1908 թթ., Կովկասում գործող բարեգործական ընկերությունների համար հաստատված նոր կանոնադրության համաձայն, իրավունք չուներ մասնաճյուղեր ունենալ, ուստի գործող մասնաճյուղերը փակվեցին:

1908 թ. վերաբացված ԿՀԲԸ-ն տարեվերջին արդեն ուներ 42 մասնաճյուղ[31]. 1909 թ. ընթացքում այդ թիվը մնաց անփոփոխ: Մասնաճյուղերն օգնել են աղքատներին, պահել են դպրոցներ, թոշակներ են բաժանել ուսման համար, բացել են գրադարան-ընթերցարաններ, զարկ են տվել արհեստների տարածմանը և այլն:

1914 թ. սկզբին մասնաճյուղեր են բացվել նաև Ճիաթուրում, Գրոզնիում, Կիսլավոդսկում, Ղարաբաղում՝ Վարդաշենում, Կուսապատում և Աղբաշում: Նախատեսվում էր մասնաճյուղ բացել նաև Թիֆլիսում՝ Հավլաբարում, սակայն պատերազմի պատճառով այն այդպես էլ չբացվեց[32]: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը՝ 1910–1914 թթ., գործում էր 65 մասնաճյուղ[33]:

---

[27] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 2, թթ. 15–26: Տե՛ս նաև Հրահանգ տեղական վարչութիւնների եւ մասնաժողովներին Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Տփխիս, 1882:

[28] Տե՛ս С. Гевенян. Նշվ. աշխ., էջ 113:

[29] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 6, թթ. 5, 12, 13 շրջ.:

[30] Տե՛ս Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 142–210, С. Гевенян. Նշվ. աշխ., էջ 113:

[31] Տե՛ս Տեղեկագիր 1909, էջ 43, Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 315–328:

[32] Տե՛ս Տեղեկագիր 1914, էջ 5:

[33] Մասնաճյուղերի թիվն ըստ տարիների հետևյալն է. 1910 թ.՝ 45 (տե՛ս Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 329),

Կրթամշակութային գործունեությունն

ԿՀԲԸ-ն մեծ ուշադրություն էր դարձնում լուսավորության տարածմանը՝ այն համարելով ընկերության առաջնահերթ խնդիրներից մեկը: Գործունեության առաջին փուլում՝ 1881–1899 թթ., ընկերությունը Թիֆլիսի դպրոցներում սովորող չքավոր աշակերտներին մասնավոր ամսավճարներ էր տալիս, իսկ քաղաքի աղքատ ծխական դպրոցներին՝ նպաստներ: Նաև նախատեսվում էր բացել ապաստարան աղքատ 20 աշակերտների համար, սակայն ներքին տարաձայնությունների պատճառով այդ ծրագիրը չիրականացավ[34]*:*

ԿՀԲԸ-ն կրթաթոշակ էր տրամադրում Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններում սովորող կարիքավոր, սակայն չնորհաշատ հայ ուսանողներին, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ու Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի աշակերտներին:

Ընկերության միջոցներով Գորիում 1885 թ. բացվեց աշակերտական հանրակացարան, որտեղ բնակվում էին հայախոս և վրացախոս հայ աշակերտներ, որպեսզի վերջիններս սովորեին հայերեն: Ազգային դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու գործին նպաստելու նպատակով ընկերությունը 1887 թ. հատուկ թոշակ է սահմանում Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտում՝ պայմանով, որ այն ստացողը հայկական դպրոցի սան լինի[35]*:*

1889 թ. մարտի 22-ին ռուսական իշխանությունների կողմից ընդունված օրենքի համաձայն՝ ծխական դպրոցներում ռուսերեն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն դասավանդող ուսուցիչներն ու վարժուհիները պետք է ունենային ուսուցչական ցենզ (արտոնակարգ). դա ստանալու համար 1893 թ. ԿՀԲԸ-ն հատուկ դասընթացներ կազմակերպեց Ախալցխայում և Թիֆլիսում[36]*:*

Սակայն 1899 թ. հուլիսի 6-ին, ինչպես նշվեց, ներքին գործերի նախարարը Ի. Գորեմիկինի հաստատած նոր կանոնադրության համաձայն՝ Կովկասում գործող բարեգործական ընկերություններին արգելվում է զբաղվել լուսավորական գործունեությամբ: ԹՀԲԸ-ն 1899–1908 թթ. ընթացքում կրթամշակութային գործունեություն չի իրականացրել:

1911 թ.՝ 51 (տե՛ս Տեղեկագիր 1911, էջ 6), 1912 թ.՝ 58 [Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1912 թ. (այսուհետև՝ Տեղեկագիր 1912), Թիֆլիս, 1913, էջ 139–141], 1913 թ.՝ 63 [Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1913 թ., XXXIII տարի (այսուհետև՝ Տեղեկագիր 1913), Թիֆլիս, 1913, էջ 185–187]: Отчет о деятельности Армянского центрального комитета и отдела по снабжению продовольствием беженцев Кавказского фронта на казенные средства при Армянском благотворительном обществе на Кавказе, с августа 1914 г. по январь 1917 г. Тифлис, 1917, с. 13–14.

[34] *Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 69–71:*

[35] *Վ. Երկանյան. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), էջ 69:*

[36] *Ավելի մանրամասն տե՛ս Տեղեկագիր հայոց բարեգործական ընկերության Կովկասում 1894, Տասն եւ չորրորդ տարի (այսուհետև՝ Տեղեկագիր 1894), Թիֆլիս, 1895, էջ 47–57, ՀԺՊ, հ. 6, էջ 762–763:*

1908 թ. վերաբացված ընկերության գլխավոր նպատակն էր սատարել հայ ժողովրդի կրթության գործին: Եթե նախկինում ԿՀԲԸ-ն միայն նպաստներ ու կրթաթոշակներ էր տրամադրում և տեղյակ չէր գավառների կրթական վիճակից, քանզի ծխական դպրոցներով զբաղվում էին մասնաճյուղերը, ապա ընկերությունը փոխեց իր ռազմավարությունը՝ ստեղծելով մասնաժողով, որը վերահսկում էր նպաստ ստացող դպրոցներին:

Համաձայն ԿՀԲԸ-ի նոր ծրագրի՝ 1908 թ. խորհուրդը չուրջ 15.650 ռ. նպաստ է տվել Երևանի ու Թիֆլիսի թեմերի 63 եկեղեցական-ծխական դպրոցների[37]: Հաջորդ տարիների ընթացքում, սակայն, տրամադրվող նպաստի չափը նվազում է՝ միջոցների սղության պատճառով:

Ստորև ներկայացնում ենք ըստ ուսումնական տարիների նպաստ ստացող դպրոցների թիվն ու նպաստի չափը:

Ուսումնական տարի	Դպրոցներ	Նպաստի չափը (ռուբլի/կոպեկ)
1909/10 թթ.[38]	54	12.080 ռ.
1910/11 թթ.[39]	56	11.300 ռ.
1911/12 թթ.[40]	61	14.920 ռ.
1912/13 թթ.[41]	63	16.452 ռ. 74 կ.
1913/14 թթ.[42]	88	20.763 ռ. 67 կ.

Մասնաճյուղերի աջակցությամբ նպաստներ էին տրվում ուսուցիչներին, դպրոցական շենքերի կահավորման, վերանորոգման, նոր դպրոցներ կառուցելու համար գումարներ էին հատկացվում: Ընկերության նպաստով պահվող դպրոցներին ուղարկվում էր «Գյուղատնտես» շաբաթաթերթը և «Նոր դպրոց» մանկավարժական ամսագիրը[43]:

Նշենք նաև, որ Նոր Բայազետի մասնաճյուղն իր միջոցներով տարեցների համար պահում էր կիրակնօրյա դպրոց՝ 80 աշակերտով[44]:

ԿՀԲԸ-ն իր մասնաճյուղերի և շրջիկ լիազորների միջոցով տեղեկություններ էր հավաքում ժողովրդի կրթվածության մակարդակի և գործող դպրոցների վերաբերյալ[45]:

Բարեգործական ընկերության և անհատների ջանքերի շնորհիվ հայ իրականության մեջ լայն տարածում ստացավ արհեստագիտական ուսու-

[37] Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 30:
[38] Տե՛ս Տեղեկագիր 1909, էջ 29:
[39] Տե՛ս Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1910 թ. գործունեության (այսուհետև՝ Տեղեկագիր 1910), Թիֆլիս, 1911, էջ 21:
[40] Տե՛ս Տեղեկագիր 1911, էջ 21:
[41] Տե՛ս Տեղեկագիր 1912, էջ 22:
[42] Տե՛ս Տեղեկագիր 1913, էջ 24–25, 33–36:
[43] Տե՛ս Տեղեկագիր 1911, էջ 27:
[44] Տե՛ս Տեղեկագիր 1909, էջ 83:
[45] Մանրամասն տե՛ս ԿՀԲԸ-ի խորհրդի լիազոր Վահան Տեր-Աբրահամյանի կազմած հաշվետվությունը (Տեղեկագիր 1908, էջ 18–40):

ցումը: Մի շարք դպրոցներում (Երևան, Կարս, Իգդիր, Կաղզվան, Նախիջևան) այլ առարկաներին զուգահեռ արհեստագիտական ուսուցում էր կազմակերպվում: Դա ավելի կազմակերպված ընթացք ուներ որբանոց-դպրոցներում:

Գորիի, Վլադիկավկազի, Դիլիջանի, Ախալքալաքի և Սղնախի մասնաճյուղերը բացել էին կարուձևի, ջուլհակագործական, զամբյուղագործական արհեստանոցներ[46]:

Ընկերությունը 1911 թ. դեկտեմբերի 31-ին ստեղծում է ուսուցչական ֆոնդ, որը մինչև 1913 թ. հունվարի 1-ը հանգանակեց 47.097 ռ.[47]. Նպատակն էր օգնել հայկական դպրոցներում դասավանդող ուսուցիչներին կամ նրանց այրիացած և որբացած ընտանիքներին[48]:

Ընկերությունից նպաստ ստացող դպրոցների ցանցն ընդարձակելու նպատակով՝ 1914 թ. սկզբին մի շարք նոր դպրոցներ էին ներգրավվում՝ դրանց թիվը հասցնելով 111-ի, իսկ տրամադրվող ֆինանսավորումը՝ 20.589 ռ. 26 կ.[49]: Սակայն 1914/15 թթ. ուսումնական տարին ամենաանպաստն է եղել դպրոցների համար. սկսված պատերազմի պատճառով դրանց դրությունը և գոյության պայմանները խաթարվեցին, իսկ մի քանիսն անգամ չբացվեցին:

Ըստ 1881 թ. կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ընկերությունն իրավասու էր հրատարակել գրքեր ու պարբերականներ. գործունեության սկզբնական շրջանում դա չի հաջողվել: Ընկերության հաշիվների, ինչպես նաև բարեգործական այլ ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություն տալու նպատակով Բ. Նավասարդյանը 1889 թ. խորհրդին առաջարկել է պարբերական հիմնել[50]: Առաջարկությունը հավանության է արժանացել և 1892 թ. նախահաշվի մեջ ներառվել են հրատարակչական ծախսեր, սակայն գործն անհայտ պատճառներով ընթացք չի ստանում[51]:

Գրադարանների ստեղծման և դրանց համալրման գործում մի շարք բարեգործական-լուսավորական ընկերությունների հետ զգալի ներդրում կատարեց նաև ԿՀԲԸ-ը: Մինչև Թիֆլիսում կենտրոնական գրադարան-ընթերցարանի ստեղծումը՝ ԿՀԲԸ-ն 1881–1899 թթ. ընթացքում միայն հինգ մասնաճյուղում կարողացավ գրադարան-ընթերցարան բացել՝ Նա-

[46] *Տե՛ս Տեղեկագիր 1911, էջ 114:*

[47] *Տե՛ս Տեղեկագիր 1912, էջ 4–5:*

[48] *Տե՛ս Հրահանգ ԿՀԲԸ-ն ուսուցչական ֆոնդի (Տեղեկագիր 1913, էջ 28–30):*

[49] *Տե՛ս Տեղեկագիր 1914, էջ 5–9:*

[50] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 11, թթ. 17–18:*

[51] *Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 87: ԿՀԲԸ-ի ղեկավարությունը մշտապես տարեվերջյան տեղեկագրեր կամ պարբերականներում («Տարազ», «Մշակ», «Հորիզոն» և այլն) հաշվետվություններ է հրապարակել կատարված աշխատանքների ու ստացված նվիրատվությունների վերաբերյալ: Ընկերությունը 1915–1917 թթ. հրատարակում էր «Համբավաբեր» շաբաթաթերթը, որը ընկերության պաշտոնական օրգանն էր, և որտեղ մանրամասն ներկայացվում էր ԿՀԲԸ-ի գործունեությունը:*

խիջևանում (1887 թ.), Շուշիում (1889 թ.)[52], Ախալցխայում (1892 թ.), Նուխիում (1894 թ.) ու Կարսում (1896 թ.)[53], քանի որ իշխանությունների համար ցանկալի չէր հայերենով գրքերի կուտակումը: Բացի այդ, կար թույլատրված գրքերի ցանկ, որոնց մեջ չկային հայերենով գրքեր, և որոնց համար պետք էր լրացուցիչ թույլտվություն ստանալ[54]: Մասնաճյուղերում գործող գրադարանների մասին, ցավոք, սակավաթիվ տեղեկություններ են պահպանվել:

1894 թ. սեպտեմբերի 1-ին ԿՀԲԸ-ն Թիֆլիսում բացում է կենտրոնական գրադարան-ընթերցարան[55], որին իշխանուհի Սոֆիա Արղությեան-Երկայնաբազուկը նվիրել էր իր անձնական գրադարանը՝ բաղկացած 2.536 գրքից[56]: 1896 թ. մինչև 1898 թ. հունվարի 1-ը կենտրոնական գրադարան-ընթերցարանում կար 6.536 գիրք[57]: 1899 թ. կանոնադրության փոփոխության պատճառով գրադարան-ընթերցարանը փակվում է: Այն վերաբացվեց միայն 1909 թ. դեկտեմբերի 21-ին[58]: Թիֆլիսի հայ մտավորականությունը, նաև առանձին անհատներ՝ Ա. Էնֆիաջյանը, Ս. Գյուլիչամբարյանը, Դ. Հովհաննիսյանը, գրադարանին նվիրաբերեցին գրքերի ժողովածուներ ու անձնական գրադարաններ:

Ստորև ըստ տարիների ներկայացնում ենք կենտրոնական գրադարան-ընթերցարանում առկա գրքերի քանակն ու ընթերցողների թիվը:

Տարին	Գրքեր (կտոր)				Ընթերցողներ (իգ./ար.)
	հայերեն	ռուսերեն	այլ լեզուներով	ընդհանուր	
1910 թ.[59]	3.400	6.500	923	10.823	22.175
1911 թ.[60]	3.650	7.600	1.350	12.700	43.178
1912 թ.[61]	4.500	8.100	1.400	14.000	54.105
1913 թ.[62]	5.500	9.212	1.500	16.212	40.414
1914 թ.[63]	–	–	–	–	36.927

[52] Ս. Հ. Պետոյան. Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը (1889–1900 թթ.).– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 1, էջ 68–82:

[53] Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 157, 167, 185, 206:

[54] Վ. Երկանյան. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), էջ 70:

[55] Գրադարան-ընթերցարանի կանոնադրությունը, որով սահմանվում էր նրա գործողությունները տե՛ս Տեղեկագիր 1894, էջ 72–75, Վ. Երկանյան. Հայկական մշակույթը 1800–1917 թթ., էջ 75–76:

[56] «Տարազ», 1891, № 49, էջ 643:

[57] Տե՛ս Տեղեկագիր 1896–1897, էջ 66, 131:

[58] Տե՛ս Տեղեկագիր 1909, էջ 24:

[59] Տե՛ս Տեղեկագիր 1910, էջ 18, 20, С. Гевенян. Նշվ. աշխ., էջ 119:

[60] Տե՛ս Տեղեկագիր 1911, էջ 16, 18:

[61] Տե՛ս Տեղեկագիր 1912, էջ 16–17, С. Гевенян. Նշվ. աշխ., էջ 119:

[62] Տե՛ս Տեղեկագիր 1913, էջ 20, 22:

[63] Տե՛ս Տեղեկագիր 1914, էջ 10:

ԿՀԲԸ-ի մասնաճյուղերի աջակցությամբ գավառներում բացվում են հասարակական ընթերցարաններ, իսկ գյուղերում՝ գրագիտությունը տարածելու նպատակով, դպրոցներին կից հիմնվում են մանկական գրադարաններ: Այդ գործին մեծ զարկ տվեց խորհրդի անդամ Ն. Աբելյանը[64]:

1913 թ. Թիֆլիսում ստեղծվեց գրապահեստ, որը հնարավորություն էր ընձեռում ուսուցիչներին մատչելի գներով գրենական պիտույքներ ձեռք բերել[65]:

Աղքատախնամ գործունեություն

1903 թ. ԹՀԲԸ-ն բացում է Խուդադյան[66] որբանոցը, որում պահվում էր 20 երեխա (7 որբ՝ 6–11 տարեկան և 13 միակողմանի որբ՝ 6–9 տարեկան): Կառավարիչներ նշանակվեցին ընկերության անդամներ՝ իշխանուհի Մ. Թումանյանը և Ա. Խատիսյանը: Որբերի թիվը 1908 թ. կազմում էր 33 հոգի[67]: Շենքային պայմանների և միջոցների սղության պատճառով այդ թիվը պահպանվեց մինչև 1914 թ. սկիզբը, երբ նրանք դարձան 27[68]: ԿՀԲԸ-ի Երևանի մասնաճյուղը 1910 թ. նոյեմբերին ևս բացել էր որբանոց-արհեստանոց, որտեղ տարեվերջին կար 10 որբ (6–8 տարեկան)[69]:

1904 թ. ապրիլի 25-ի ԿՀԲԸ-ի խորհրդի նիստում որոշվեց աղքատ աշակերտների համար Թիֆլիսում բացել բարեգործական ճաշարան: Այն իր աշխատանքները սկսեց նոյեմբերի 12-ին՝ ընկերության կողմից վարձակալված տան առաջին հարկում: Սկզբնական շրջանում ճաշարանը պահվում էր միայն ընկերության միջոցներով, այնուհետև միջոցներ տրամադրեց նաև Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների խորհուրդը: ԹՀԲԸ-ն 1907 թ. 6.009 ռ. 86 կ. գումարով բաժանել էր 38.386 ճաշ[70]: Ի դեպ, ընկերությունը փորձեց Թիֆլիսահայերի շրջանում տարածել այն գաղափարը, որ «քելեխի»՝ հոգեհացի համար ծախսվող գումարը նվիրեն բարեգործական ընկերություններին: Ճիշտ է «քելեխի» սովորույթը չվերացավ, սակայն հանգուցյալների ընտանիքները սկսեցին նվիրատվություններ կատարել ճաշարանի օգտին:

---

[64] *Տե՛ս Տեղեկագիր 1913, էջ 10:*

[65] *Տե՛ս նույն տեղում:*

[66] *Հովհաննես Դավթյան Խուդադյանը վաճառական էր, իր ունեցվածքը՝ 111.997 ռ., 1897 թ. կտակել էր ԿՀԲԸ-ին: Կտակի համաձայն՝ ընկերությունը պարտավորվում էր այդ գումարով բացել ապաստարաններ, դպրոցներ, աղքատանոցներ, անվճար հիվանդանոցներ և այլն:*

[67] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 10–12, Մ. Թումանյան. Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողություննները, կազմ., առաջ. և ծանոթ. Ա. Բախչինյանը, Երևան, 2003, էջ 8, 206–212: Որբանոցում պահվող 33 որբերի ցուցակը տե՛ս Տեղեկագիր 1909, էջ 17:*

[68] *Տե՛ս Տեղեկագիր 1914, էջ 10:*

[69] *Տե՛ս Տեղեկագիր 1910, էջ 64:*

[70] *Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 241:*

1908 թ. ավարտվեց ԿՀԲԸ-ի շենքի շինարարությունը (Թիֆլիսում), որի ներքնահարկում տեղավորվեց բարեգործական ճաշարանը: Դրանից օգտվում էին բացառապես աշակերտներն ու ԽուդադՅան որբանոցի սաները: Ճաշողների թիվը 1908 թ. կազմել է օրական 168[71], 1909 թ.՝ 200[72], 1910 թ.՝ 264[73], 1911 թ.՝ 300[74], 1912 թ.՝ 247[75], 1913 թ.՝ 212[76], 1914 թ.՝ 243[77] հոգի:

Աղետներ

ԿՀԲԸ-ն օգնություն էր ցուցաբերում կարիքավորներին նաև տարերային աղետների, հրդեհների, համաճարակների և սովի ժամանակ: Դեռ չէր մոռացվել 1892 թ. խոլերայի համաճարակը[78] և չէին վերացվել 1894 թ. սովի հետևանքները, երբ սկսվեց մի նոր աղետ՝ արևմտահայերի կոտորածները, որոնց հետևանքով մեծ թվով փախստականներ փրկություն գտան Կովկասի փոխարքայությունում: ԿՀԲԸ-ն կարողացավ գաղթականներին նյութապես օգնել միայն 1895 թ. աշնանը: Նույն թվականին Բաթումում և Թիֆլիսում գաղթականներին տրվել էր 2.700 ռ. օգնություն[79]: Իսկ գաղթականների կարիքները բազում էին. ԿՀԲԸ-ն օգնում էր բնակարաններ վարձակալելով, սննդադրամ (ամսական և միանվագ) ու ճանապարհածախս տրամադրելով, աշխատանք գտնելով, հագուստով, բժշկական օգնություն ցույց տալով և այլն:

1896 թ. ԿՀԲԸ-ն գաղթականների օգտին հանգանակեց 19.253 ռ. 32 կ., իսկ 1897 թ.՝ 15.886 ռ. 62 կ.: Ընկերությունը Թանդոյանց եկեղեցու բակում գործող հիվանդանոցին նպաստներ էր տալիս գաղթականների համար ամսական 150 ռ., նաև 10 գաղթական աշակերտի տալիս էր մշտական թոշակ[80]: Երկու տարվա ընթացքում գաղթականների կարիքները հոգալու համար ծախսվել էր 41.492 ռ. 88 կ.[81]:

---

[71] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 15:*

[72] *Տե՛ս Տեղեկագիր 1909, էջ 20:*

[73] *Տե՛ս Տեղեկագիր 1910, էջ 16, Երեանամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 292:*

[74] *Տե՛ս Տեղեկագիր 1911, էջ 5:*

[75] *Տե՛ս Տեղեկագիր 1912, էջ 21:*

[76] *Տե՛ս Տեղեկագիր 1913, էջ 16:*

[77] *Տե՛ս Տեղեկագիր 1914, էջ 10:*

[78] *ԿՀԲԸ-ն ստեղծել էր առողջապահական մասնաժողով, որը ղեկավարում էր Բ. Նավասարդյանը: Մասնաժողովի անդամները շրջել են բնակավայրերով, որտեղ տարածվել էր խոլերայի համաճարակը: Նրանք բժշկական օգնություն են ցուցաբերել կարիքավորներին: Բ. Նավասարդյանի հաշվետու-նամակները (տե՛ս «Տարազ», 1892, №35, էջ 431; №36, էջ 434; №37, էջ 448; №38, էջ 454; №39, էջ 465–466):*

[79] *Տե՛ս Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 113:*

[80] *Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 118–122:*

[81] *Տե՛ս Տեղեկագիր 1896–1897, էջ 122:*

երբ 1908 թ. իրավիճակն Արևմտյան Հայաստանում փոքր-ինչ կայունացավ, ԿՀԲԸ-ի խորհուրդը սկսեց օգնել փախստականներին վերադառնալ հայրենի օջախներ: Օգնությունը չարունակական էր և զգալի. դրա չնորհիվ միայն սահմանամերձ շրջաններից իրենց բնակավայրերը վերադարձան շուրջ 13.000 գաղթական: Նրանց օգնելու գործում աչքի ընկավ Կարսի վարչությունը, նաև՝ Բաթումի, Իգդիրի, Երևանի, Արմավիրի մասնաճյուղերը: Միայն Կարսի վարչությունը ճանապարհել է 10.000-ից ավել գաղթական[82], որի համար տրամադրվել է 6.225 ռ. 92 կ.[83]:

1908 թ. Ալեքսանդրապոլում տեղի ունեցած ջրհեղեղը մեծ վնասներ էր հասցրել քաղաքին, զոհվել էին նաև մարդիկ: ԿՀԲԸ-ն ներկայացուցիչ էր ուղարկել դրությունը ուսումնասիրելու համար և հատկացրել 500 ռ.[84]:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես ընկերությունը վերակառուցվեց պատերազմի պահանջներին համապատասխան:

Եզրակացություն

Այսպես. նշված ժամանակահատվածում ԿՀԲԸ-ի գործունեությունը բաժանել ենք երեք փուլերի. առաջին՝ 1881–1899 թթ., երկրորդ՝ 1899–1908 թթ., երրորդ՝ 1908–1914 թթ. սեպտեմբեր: Նշենք նաև, որ ընկերությունը, գործելով հայ ժողովրդին վիճակված ծանր ժամանակներում, զգալի աշխատանք կատարեց բոլոր փուլերում: Հաղթահարեց սոցիալ-տնտեսական բազում դժվարություններ՝ զգալի աշխատանք կատարելով հայ մշակույթի և կրթության զարգացման ուղղությամբ, ինչպես նաև՝ մարդասիրական օգնություն ցուցաբերելով ընչազուրկ ընտանիքներին ու փախստականներին:

Նինետա Ադամյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ բարեգործական կազմակերպությունների գործունեություն, Առաջին համաշխարհային պատերազմ, գաղթականներ, Արևմտյան Հայաստան: Հեղինակ է 6 հոդվածի: ninettadamyan@gmail.com

REFERENCES

Arakelyan S. Bakvi hayots mardasirakan enkerutyan kanonadrutyan shurj.– http://publications.ysu.am/wp-content/uploads/2018/12/Araqeljan.pdf (In Armenian).

Eresnamyak hayots baregordzakan enkerutyan Kovkasum 1881–1911, kazmets Leo, Tiflis, 1911 (In Armenian).

Erkanyan V. Haykakan mshakuyte 1800–1917 tt., Yerevan, 1982 (In Armenian).

[82] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 46, 63:*

[83] *Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881–1911, էջ 302:*

[84] *Տե՛ս Տեղեկագիր 1908, էջ 8:*

Erkanyan V. Paykar haykakan nor dprotsneri hamar Andrkovkasum (1870–1905), Yerevan, 1970 (In Armenian).

Gevenyan S. Moi Tiflis. Yerevan, 2002 (In Russian).

Hay joghovrdi patmutyun, h. 6, Yerevan, 1981 (In Armenian).

Hayastani azgayin arkhiv, f. 28, c. 1, g. 2, tt. 15–26; g. 5, t. 3–4; g. 6, tt. 5, 12, 13 shrj.; g. 11, t. 17–18; g. 108, tt. 57–58 shrj. 62 (In Armenian).

Hayots patmutyun, h. 3, Nor jamanakashrjan (XVII dari erkrord kes – 1918 t.), girk II, (1901–1918 tt., hay gaghtavayrere, parberakan mamule ev mshakuyte XIX d. ev XX d. skzbin), Yerevan, 2015 (In Armenian).

"Horizon" (Tiflis), 1914, № 204 (In Armenian).

Hrahang teghakan varchutunneri ev masnajoghovneri Hayots baregordzakan enkerutyan Kovkasum, Tpghis, 1882 (In Armenian).

"Hyusisapail" (Moskva), 1859, hunvar (In Armenian).

Kanonadrutun Hayots baregordzakan enkerutyan Kovkasum, Tiflis, 1908, (In Armenian).

Kostandyan E. Mkrtich Khrimyan. Hasarakakan-kaghakakan gorcuneyutun, Yerevan, 2008 (In Armenian).

"Meghu Hayastani" (Tiflis), 1881, № 4, 25 yunuari; № 265, 19 dectemberi (In Armenian).

Otchet o deyatelnosti Armyanskogo centralnogo komiteta i otdela po snabjeniyu prodowolstviem bejencev Kawkazskogo fronta na Kazennie sredstwa pri Armyanskom blagotworitelnom obshestve na Kavkaze, s avgusta 1914 g. po yanvar 1917 g. Tiflis, 1917 (In Russian).

Petoyan S. H. Kovkasi hayots baregordzakan enkerutyan Shushii masnachughi gradaran-ynterdsaraney (1889–1900 tt.).– HH GAA "Lraber hasarakakan gitutunneri", 2019, № 1 (In Armenian).

Shatvoryan H. H. Tiflisi hay baregordzakan hastatutunneri patmutunits (19-rd dari verj – 20-rd dari skizb), Yerevan, 2007 (In Armenian).

"Taraz" (Tiflis), 1891, № 48, 49; 1892, № 35, 36, 37, 38, 39; 1911, № 12 (In Armenian).

Teghekagir Hayots baregordzakan enkerutyan Kovkasum 1894, Tasn ev chorrord tari, Tiflis, 1895 (In Armenian).

Teghekagir hayots baregordzakan enkerutyan Kovkasum, 1896 ev 1897, Tasn ev vetserord tari, Tasn ev yoterord tari; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1908 t. gordzuneutyan; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1909 t. gordzuneutyan; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1910 t. gordzuneutyan; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1911 t.; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1912 t.; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1913 t., XXXIII-rd tari; Teghekagir Kovkasi hayots baregordzakan enkerutyan 1914 t., XXXIV-rd tari (In Armenian).

Tumanyan M. Im hamarot kensagrutyun ev im hishoghutyunnere, kazm., araj. ev tsan. A. Bakhchinyane, Yerevan, 2003 (In Armenian).

Ustav Tifliskogo Armyanskogo blagotvoritelnogo obshchestva. Tiflis, 1900 (In Russian).

ИЗ ИСТОРИИ КАВКАЗСКОГО АРМЯНСКОГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ОБЩЕСТВА (1881 г. – сентябрь 1914 г.)

НИНЕТА АДАМЯН

Р е з ю м е

Ключевые слова: Тифлис, КАБО, Б. Навасардян, С. Арутюнян, благотворительность, беженцы, школы, библиотека, детские дома, мастерские.

В ноябре 1881 г. в Тифлисе, благодаря усилиям видных армянских деятелей Баграта Навасардяна, Габриэла Сундукяна, Сенекерима Арцруни, а также Александра Манташянца, Аветика Езекяна, Ованеса Читахова, Аршака Нахапеткяна и др., было основано Кавказское армянское благотворительное общество (КАБО), которое просуществовало до 1921 г.

Целью общества было распространение просвещения среди армян на Кавказе и в Закавказье, а также оказание материальной помощи нуждающимся, без религиозной дискриминации. Деятельность КАБО в указанный период условно можно разделить на 3 этапа: 1) 1881–1899 гг., 2) 1899–1908 гг. и 3) 1908 г. – сентябрь 1914 г.

Несмотря на сложную социально-политическую ситуацию, члены КАБО проделали большую работу на всех трех этапах, содействуя развитию армянской культуры и образования, открывая сиротские приюты, мастерские, образовательные учреждения, в частности школы.

Нинета Адамян – младший научный сотрудник отдела новой истории Института истории НАН РА. Научные интересы: деятельность благотворительных организаций, Первая мировая война, беженцы, Западная Армения. Автор 6 статей. ninettadamyan@gmail.com

FROM THE HISTORY OF THE ARMENIAN BENEVOLENT SOCIETY OF THE CAUCASUS (1881–September, 1914)

NINETA ADAMYAN

S u m m a r y

Key words: Tiflis, ABSC, B. Navasardyan, S. Harutyunyan, charity, refugees, schools, library, orphanages, workshops.

In November, 1881 thanks to the efforts of the prominent Armenian figures – Bagrat Navasardyan, Gabriel Sundukyan, Senekerim Artsruni, as well as Alexander Mantashyants, Avetik Yezekyan, Hovhannes Chitakhov, Arshak Nakhapetkyan and others, the Armenian Benevolent Society of the Caucasus (ABSC) was founded, which existed until 1921.

The aim of the Society consisted in spreading enlightenment among the Armenians of the Caucasus and Transcaucasia as well as providing the destitute with financial aid without any religious discrimination. The activity of the ABSC in the given period can hypothetically be divided into 3 phases: 1) 1881–1899, 2) 1899–1908, 3) 1908–September, 1914.

Notwithstanding the hard socio-political situation, the members of the ABSC did much work during the aforementioned three phases, thus, contributing to the development of the Armenian culture and education and foundation of orphanages, workshops and educational institutions, in particular, schools.

Ninetta Adamyan – Junior Researcher at the Department of Modern History of the NAS RA Institute of History. Scientific interests: activities of benevolent organizations, World War I, refugees, Western Armenia. Author of 6 scientific articles. ninettadamyan@gmail.com

ՀԱՄՇԵՆ ԳԱՎԱՌԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՃՄԻԼ/ՋԻՄԻԼ ԳՅՈՒՂԸ ԸՍՏ ՀԱՅ ԵՎ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ (XVI դ. – XIX դ. առաջին քառորդ)*

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Համշեն, Խաղտիք, Ճմիլ/Ջիմիլ, հիշատակարան, օսմանյան աշխարհագիր, անձնանուն, տեղանուն, ձեռագիր, իսլամացված:

Նախաբան

Համշեն գավառը, գտնվելով Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանները երիզող Խաղտիքի երկրամասի լեռնային հատվածում, եղել է հայոց պետականության բաղկացուցիչներից և իր ուրույն տեղն ունեցել մեր պատմության մեջ: Համշեն գավառի իշխանության, քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի, բնակչության զբաղմունքի, լեզվական իրողությունների մասին բացառիկ տեղեկություններ են հաղորդում XVI–XVII դարերի համշենցի գրիչների հիշատակարանները: Համշեն գավառին պատկանող Ճմիլ/Ջիմիլ հայկական գյուղն առաջին անգամ հիշատակվում է համշենցի գրիչ Լևոն քահանայի 1513 թ. ընդօրինակած «Շարակնոց»-ում:

Համշեն գավառի պատմության համար չափազանց արժեքավոր են հարկահավաքության նպատակով կազմված 1520/30, 1554, 1556, 1681/82 թթ. օսմանյան աշխարհագիր (Tahrir) *ու հարկային մատյանները, որոնք բացահայտում են տարածաշրջանում Օսմանյան կայսրության վարած վարչական, էթնոկրոնական, ժողովրդագրական և հարկային քաղաքականությունը: Այս մատյանները նաև լեզվական հարուստ փաստեր են հաղորդում տեղանունների ու անձնանունների ուսումնասիրությանը: Օսմանյան աղբյուրների՝ լեզվական փաստերի վերծանումներով, ներկայացնենք Ճմիլ/Ջիմիլ գյուղի հայ հարկատուների անվանացանկերը, պատմահամեմատական, տարաժամանակյա և արտահարաբերման մեթոդների կիրառմամբ վերականգնենք Համշենի նշանավոր բնակավայրերից մեկի՝ Ճմիլ/Ջիմիլ գյուղի վարչական վիճակն ու ժողովրդագրական պատկերը:*

Ճմիլ/Ջիմիլ գյուղի տեղադրությունը

Համշենի գավառի Ճմիլ/Ջիմիլ գյուղը սփռված է Պարխարյան կամ Խաղտյաց[1] լեռների Քաչքարի լեռնաշղթայի՝ ամենաբարձր՝ Վերջենիկ

---

* *Ներկայացվել է 29. VI. 2020 թ., գրախոսվել է 03. VII. 2020 թ., ընդունվել է տպագրության 08. VII. 2020 թ.:*

[1] *«Պարխարյան կամ Պոնտական լեռները ձգվում են Սև ծովի հարավային ափերով: Այս լեռնաշղթան արևելքում սկսում է Ճորոխ (Ակամսիս) գետի ստո-*

լեռան չարունակութիւնը կազմող Դեմիր դաղի (Երկաթի սար) ստո-
րոտում և իր աշխարհագրական դիրքով բարձրադիր է Վերին Համշենից
(Բաշ Համշեն): Այս բնակավայրը հայկական ձեռագրերում հիշվում է Ձ-
միլ, Ճիմիլ, Ճեմել, իսկ օսմանյան և գերմանական աղբյուրներում՝ Ջիմիլ,
Ջեմիլ անուններով: Ներկայումս այս գյուղը՝ Ջիմիլ անունով, Թուրքիայի
Ռիզե նահանգի Իքիզդերեի գավառի վարչական շրջաններից մեկն է և
գտնվում է Ռիզե քաղաքից դեպի հարավ՝ 84 կմ հեռավորության վրա:
Ջիմիլը բաժանված է երեք թաղի՝ Բաշ քյոյ (Վերին գյուղ), Հափինչ (Օր-
թայ քյոյ Միջին գյուղ, նոր անունը՝ Փաշա քյոյ) և Աշաղը քյոյ (Ներքին
գյուղ, նոր անունը՝ Գյուվեն): Բաշ քյոյը Ռիզեի ամենաբարձր և վերջին
համշենական գյուղն է[2]: Օրթա քյոյի մեջտեղով է հոսում Հափինչ<Ա-
փինց (այժմ՝ Փաշա քյոյ) գետը: Ղ. Ինճիճյանը նշում է, որ «Ճեմիլ գետին
ակներուն մօտ կան Վանէ եւ Կաւկամէ երկու գիւղեր, որոնց միջավայրէն
մի ջուր կը հոսի. այս ջրի մէկ մասը կը քարանայ»[3], իսկ մյուս մասը հո-
սում է դեպի Իրիզեի կարադերե՝ խառնվելով Կալոպոտամոս գետին:
Ջիմիլն այսօր էլ հայտնի համշենական գյուղ է. այնտեղ չարունակում են
ապրել իսլամացված համշենցիների սերունդները, որոնք կրոնափոխ
լինելուց հետո ժամանակի ընթացքում կորցրել են իրենց հայկական
ինքնությունն ու դարձել թրքախոս: Այսպես են ջիմիլցի համշենցիները
ներկայացնում իրենց գյուղի դիրքն ու առանձնահատկությունները խա-
ղիկներում. Arkası Demir dagı / Cimil üc para köydür… / **Ետևում Դեմիր դաղն**
է, Ջիմիլը երեք թաղ է… *կամ՝* Üstüne Demir dağı / Cimilin üstü Sokhovit dağı /
Dayman met ederler Kuruyatağı… / **Վերևում Դեմիր դաղն է, Ջիմիլի վրա Սո-**
ղօվիտ սարն է / Բայց գովում են միշտ Քուրուաթաղը[4]:

րին հոսանքից և ճգվելով՝ հասնում է արևմուտք՝ մինչև Իրիս գետի հովիտը: Երկարությունը՝ մոտավորապես 1000 կմ է: Այն տարբեր հատվածներում ունի այլ անուններ. արևելյան հատվածը՝ Քաջքար գագաթով, կոչվում է Արևելա-պոնտական, Խաղտեաց, Պարխարյան, Պարիադես Լազիստանի, ունի 3937 մ բարձրություն» (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-ռարան, հ. 4, Երևան, 1998, էջ 356):

[2] Ö. Öztürk. Karadeniz. Ansiklopedik Sözlük, c. 1. İstanbul, 2005, s. 227. *Վերոնշյալ Բաշ քյոյ, Օրթա քյոյ և Աշաղը քյոյ գյուղերը չպետք է շփոթել Վերին Համշենի (Բաշ Համշեն) համանուն գյուղերի հետ (Վերին Համշենի մա-սին տե՛ս Լ. Սահակյան. Համշենը հայկական ձեռագրերում, Երևան, 2019, էջ 234):*

[3] Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն ա-ռաջին, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 397: Ղ. Ինճիճյանի հիշատակած այս գյուղերը հունական էին, և ներկայումս էլ այնտեղ ապրում են կրոնափոխ հույներ:

[4] Համշենում դաշտային աշխատանքների ժամանակ գրանցել ենք Ջիմիլի ա-րոտավայրերի հետևյալ հայկական անունները՝ Սալէր, Սօխօվիտ, Քէղուտ (Գե-ղուտ), Օվիդ (Հովիտ), Ջուրմոնիմոն կամ Ջիրմանիման (ջուր և ման բառերից է կազմված): Քէղուտ և Ջուրմոնիմոն անուններով արոտավայրեր ունեն նաև Սե-նոզի շրջանի և Խոտորջուրի համշենցիները (Խոտորջուրում՝ Ջուրիման): Ջիմիլին է պատկանում նաև Քուրուչայթաք, Սարֆին կոչվող արոտավայրերը, որտեղ

Հունական աղբյուները վկայում են, որ դեռևս հնագույն ժամանակներից Պարխարյան կամ Խաղտյաց լեռներն ունեցել են հարուստ երկաթի հանքեր, և Խաղտիքի բնակիչները՝ խաղտիքցիները, որոնք հայտնի էին ամենոխալիք անունով՝ երկաթի հայտնաբերողներն էին: Նրանց հանքերից սկզբում արտահանվել է արծաթ[5]: Հույն պատմիչները խաղտիք (խալիբ) անվանումը հիշատակում են ոչ թե որպես էթնոնիմ, այլ՝ որպես մասնագիտություն, որով զբաղվել են խաղտիքցիները[6]: Քսենոփոնի նկարագրությամբ՝ խալյուբները հռչակված են եղել որպես հմուտ երկաթագործներ[7], ինչն էլ եղել է նրանց մեծ մասի ապրուստի աղբյուրը[8]: Խաղտիքի երկաթի հանքերի գոյությունը հաստատում է նաև հույն աշխարհագրագետ և պատմագիր Ստրաբոնը: Պատմիչը տեղեկացնում է, որ Սպերին հարևան այս տարածքը հարուստ էր երկաթի ու արծաթի հանքերով, և այնտեղ ապրողները հիմնականում զբաղվել են հանքարդյունաբերությամբ[9]: Ղ. Ալիշանի տեղագրությամբ՝ Խաղտյաց կամ Պոնտական լեռների շարքի մեջ «ի հիւսիսակողման պարուս են լերինք Պարխարայ, յորս բարձրն Խաչաքար կամ Վարսամպէկ (որ է Վարշամակ), իբրեւ 12000[10] ի կողմանս Համշինու, այս բազուկ երկայնեալ պատի զհարաւով Պոնտոսի»[11]:

Քաչքարի կամ Խաչքարի լեռնաշղթայի մաս կազմող Դեմիր դաղը, որի ստորոտում է Ջիմիլ գյուղը, նույնպես հայտնի է եղել երկաթի հանքերով: Օ. Օզթուրքն իր «Սև ծով. հանրագիտարանային բառարանում» նշում է, որ Համշենի Եղնովիտ գյուղն ունեցել է դարբնոցներ, որտեղ մշակել են մոտակա լեռներից բերված երկաթի հումքը[12]: Կատարված դաշտային աշխատանքների ժամանակ տեղացիները ևս հաստատեցին, որ դարբնոցներ եղել են նաև Համշեն գավառի Ջիլ քալեի (Ներքին բերդ,

հիմնականում անասնապահությամբ են զբաղվում Զայելիի գավառի Սենոզի շրջանի համշենցիները:

[5] Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 72:

[6] Б. Арутюнян. К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох VII–IV вв. до н. э.– ИФЖ, 1998, № 1–2, с. 234–235.

[7] Հ. Մարտիրոսյան. Լեռնային ակունքի ֆառնը, Արշալույսի ղեկուհին և գլխի ու մորթու զոհածեսը վիշապակոթողների իմաստաբանական հենքում.– Վիշապ քարակոթողները, Երևան, 2015, էջ 146:

[8] Քսենոփոն. Անաբասիս, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 94:

[9] Տե՛ս նաև Ռ. Նահապետյան. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 2018, էջ 94, Ստրաբոն. Աշխարհագրություն, կազմող և առաջաբանի հեղինակ Ս. Հովհաննիսյան, Երևան, 2011, գիրք XVI, I, 24:

[10] Նկատի ունի ոտնչափ բարձրությունը (տե՛ս Հ. Յ. վրդ. Տաշեան. Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 79):

[11] Ղ. Ալիշան. Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 1:

[12] Ö. Öztürk. Karadeniz. Ansiklopedik Sözlük, c. 1, s. 350–351.

Ջամլըհամչին) մոտակայքում, ինչպես նաև Ջիմիլին առավել մոտ գտնվող Սենոզի լեռնային գյուղերից մեկի՝ Քեղուտի (Գեղուտ, այժմ վերածվել է ամառանոցի և արոտավայրի) հարևանությամբ գտնվող ու լքված Այդվար (Արտվար) գյուղում: Ուշագրավ մի փաստ է արձանագրված Համշենին վերաբերող 1530 թ. օսմանյան Աչխարհագիր մատյանում. Համշենի Քալե-ի Բալա բերդում (Վերին բերդ) օսմանյան զինատեսակների և այլ կենցաղային առարկաների շարքում գրանցվել է տեղեկություն նաև 10 կտոր հայկական երկաթի՝ ճուլածոների ու բերդում ապրող 4 դարբինների մասին[13]: Հավանաբար Համշենում հայ դարբինների ճուլած երկաթն առանձնահատուկ էր, որի համար էլ հայտնի էր «հայկական երկաթ» անունով: Այսօր էլ Դեմիր դաղի վրա երևում են հին հանքահորերի հետքեր, և չի բացառվում, որ դրանք հենց այն հանքավայրերն են, որոնք շահագործվել են դեռևս հնագույն ժամանակներից[14]:

Ուրույն է նաև Ճմիլ/Ջիմիլ համշենական այս բնակավայրի հին տների տեսքը. դրանք չինված են հսկա ծառերի բներից, որոնք միմյանց ամրացվել են ցեխի շաղախով: Նախկինում բնակիչները զբաղվել են մեղվապահությամբ[15]:

Ճմիլի/Ջիմիլի հայկական ձեռագիր մատյանները

Ճմիլի «Շարակնոցը», 1513 թ.

Ճմիլ/Ջիմիլ գյուղի անցյալի վերաբերյալ հայկական աղբյուրներում գրեթե տեղեկություններ չեն պահպանվել: Սակայն այս գյուղում ընդօրինակված երկու բացառիկ ձեռագիր՝ «Շարակնոցը» (տե՛ս նկ. 1, 2) և «Ավետարանը», հաստատում են, որ Ճմիլը/Ջիմիլը եղել է հայոց բնակավայր: Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում պահվող 1513 թ. մագաղաթյա բոլորգիր և խազերով «Շարակնոցի»[16] հիշատակարանում նշվում է, որ ձեռագիր մատյանի օրինակողն ու ծաղկողը Համշենցի գրիչ

---

[13] Başbakanlık Osmanlı Arşivi, Tahrir Devteri (*այսուհետ՝* BOA. TD.), Numaralı Muhasebe-i Vilayet-i Karaman ve Rûm Defteri, no 387 (H.937/M.1530), s. 732, 733.

[14] *Լ. Սահակյան. Համշենը հայկական ձեռագրերում, էջ 18–26:*

[15] Ö. Öztürk. Karadeniz. Ansiklopedik Sözlük, c. 1, s. 227. *Տե՛ս նույնի՝* Pontus: Antik Çağ'dan Günümüze Karadeniz'in Etnik ve Siyasi Tarihi. Ankara, 2011, s. 771.

[16] *Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան (այսուհետև՝ Վնն.), ձեռ. Հ՝թ 994: «Թուղթ 355, մեծությունը՝ 12.5x7: Գրություն՝ 9.5x6: Տող՝ 22: Գիրը՝ բոլորգիր, մանր, հստակ և ընտիր, Զարդագիրք՝ թռչնագիր, գույնզգույն, խորագրերը՝ կարմրագիր: Գրիչ, ծաղկող և կազմող՝ Լևոն քահանա: Տեղ՝ Ճմիլ գյուղ: Ստացող՝ Տեր Սահակ: Ժամանակը ՋԿԲ (1513)»: Հ. Օգոստինոս Ամրիկյանը 1921 թ. ձեռագիրը բերում է Վիեննա (նկարագրությունը տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, կազմեց Հ. Հ. Ոսկեան, Վիեննա 1963, էջ 583–584): Նշենք, որ Հ. Ոսկյանի «Բարձր Հայքի վանքերը» գրքում սխալմամբ այս ձեռագրի համարը նշվել է 999-ը (տե՛ս Հ. Ոսկեան. Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 583–584):*

Լևոն քահանան է: Վերջինս մատյանում թողել է հետևյալ հիշատակարանը.

«Փառք սուրբ երրորդութեանն և միասուածութեան հաւր և որդւոյ և սուրբ հոգւոն ամէն: Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղաւոր եւ անարժի քահանայի Լեւոնի [ի] գիւղս, որ կոչի Ճմիլ՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Խաչիս եւ ամենայն սրբոց: Ի թվիս ՋԿԲ: Եւ ընտիր աւրինակէ գրեցաւ: Եւ վասն սղալանաց սորա թողութիւն արէք, զի կար իմ այսչափ էր: Եւ որք եղանակելով հանդիպիք ի սմա յիշեսջիք զաշխատող սորա ի մաքրափայլ աղաւթս ձեր, թողութիւն խնդրեցէք վասն միոյ մեղաւորիս: Եւ աստուած փրկէ զձեզ յամենայն վորձութենէ եւ արժանի արասցէ արքայութեանն»[17]:

Մատյանում այլ ձեռագրով առկա է մեկ այլ հիշատակագրություն ստացողների մասին. «Գրեցաւ եղանակաւորս տառս. յիշատակ է չարակայանոց Նորհատին և որ կողակցին Յիսխմին, ի ձեռս Տէր Սահակայ եպիսկոպոսին, ի դուռն սուրբ Խաչիկ հօրն: Յիշատակ է, ով ոք չունի յիշխանութիւն կամ առնելոյ կամ ծախելոյ կամ գրաւակ դնելոյ ...»[18] *(տե՛ս նկ. 3):*

Լևոն քահանայի հիշատակարանից հայտնի է դառնում, որ Ճմիլ/Ջիմիլը եղել է հայաբնակ, և այնտեղ 1513 թ. գործել են Սբ. Աստվածածին ու Սբ. Խաչ եկեղեցիները: Այս «Շարակնոցը» 1513 թ. ստացել է Համշենի Սբ. Խաչիկ հոր վանքի եպիսկոպոս Տեր Սահակը, որը ձեռագրում թողել է իր հիշատակագրությունը՝ հաղորդելով, որ մատյանն օրինակվել է՝ ի հիշատակ Նորհատի և նրա կնոջ՝ Յիսխմինի: «... ի դուռն սուրբ Խաչիկ հօրն» արտահայտությունը վկայում է, որ Եղնովիտի վանքին կից գործել է գրչութ-



Նկ. 1. Վնն., ձեռ. Հ^{մր} 994, «Շարակնոց», Համշեն, Ճմիլ, Սբ. Աստվածածին, գրիչ՝ Լևոն քահանա:

յան դպրոց: Լեզվական առումով արժեքավոր են նաև հիշատակագրության մեջ նշված Լևոն, Սահակ, Նորհատ, Յիսեմին (Յասեմին) անունները, որոնք լրացնում են Համշենում գործածված անձնանունների շարքը[19]*:*

[17] *Վնն., ձեռ. Հ^{մր} 994, 341ա:*

[18] *Նույն տեղում:*


[19] *Լ. Մ ա հ ա կ յ ա ն. Համշենը հայկական ձեռագրերում, էջ 256:*

Ճմիլի «Ավետարանը» և 1621 թ. հիշատակարանը

Ճմիլի «Ավետարանի» մասին միակ վկայությանը հանդիպում ենք Մ. Սանոսյանի հոդվածում[20]: Այստեղ տեղանունը հիշվում է ճիմիլ տարբերակով: Հոդվածագիրն այս մատյանը տեսել է Սպեր գավառի Մաթուսանց գյուղում ու տվել հետևյալ նկարագրությունը. «Մաթուսանց գիւղ. ճիմիլի Ս. Աւետարան, մեծադիր մագաղաթեայ, երկչջ, փոքր երկաթագիր: Ռիզէ գաւառակին ճիմիլ գիւղէն եկած: ճիմիլ այժմ լազաբնակ գիւղ մըն է»[21]: Մ. Սանոսյանը նաև գրում է, որ ձեռագրի գրչության և հիշատարակնի թիվը պահպանված չեն: Սանոսյանը մեջբերում է «Ավետարանի» նորոգման հիշատակարանից հետևյալ տողերը. «Նորոգեցաւ Ս. Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՌՀ. (670)» և մեկնաբանում է. «ըսել է, թէ 300 տարի մը առաջ գրուած է, որով



Նկ. 2. Վնն., ձեռ. Հ՟ր 994, «Շարակնոց», Համչեն, Ճմիլ, Սբ. Աստվածածին, գրիչ՝ Լևոն քահանա, սկզբնաթերթ:



Նկ. 3. Վնն., ձեռ. Հ՟ր 994, «Շարակնոց», Համչեն, Ճմիլ, Սբ. Աստվածածին, գրիչ՝ Լևոն քահանայի հիշատակարանը և ստացողի հիշատակագրությունը, 341ա:

[20] *Մ. Սանոսեան. Սպերի հնութիւնները.— «Արեւելք» (Պոլիս), 1904, թիւ 5579:*

[21] *Նույն տեղում:*

900–1000 տարուան գրչութիւն մը կը կարծուի: Յիշատակարանը կրօնական յուզիչ բաներ կաւանդէ»[22]: *Նկատենք, որ այս հոդվածում Սանոսյանի նշած «Հայոց Ռ.» ոչ թե 670, այլ՝ 1621 թվականն է: Հավանաբար վրիպակի հետևանք է: Իսկ եթե հաշվի առնենք Սանոսյանի այն տեղեկությունը, որ ձեռագիրը մոտավորապես 900–1000 տարվա հնություն ունի և ելակետ ընդունենք հիշատակարանի նորոգման 1621 թվականը, ապա այն պետք է, որ գրված լիներ 621–721 թթ.: Սա նաև կարող է հաստատել ձեռագրի երկաթագիր լինելու փաստը:*

Հ. Տաշյանը, ևս անդրադառնալով այս հոդվածին, գրում է. Երբ «Ճեմիլ բռնադատուած էր իսլամանալ, փախստականք կրցած էին ազատել եկեղեցւոյն հին մագաղաթեայ երկաթագիր Աւետարանը, որ անոր համար «Ճիմիլ-Աւետարան» կը կոչուէր: Ասի վերանորոգուած էր 1621-ին: Թուրք գրաքննութիւնը չէր ներեր, որ հրատարակուէր գոնէ այս նորոգման պատմական յիշատակարանը, որ կրօնական յուզիչ բաներ կաւանդէ: Սպերի Մաթուսանց գիւղը գտնուած այս հին Ձեռագիրը, թէ այժմ ինչ եղած է 1915ին աղետքէն ետքը՝ չենք գիտեր»[23]:

Մ. Սանոսյանը Ճիմիլ գյուղը 1904 թ. սխալմամբ ներկայացնում է որպես լազաբնակ: Այնինչ այս գյուղը երբեք լազաբնակ չի եղել: Մինչև այժմ էլ այնտեղ ապրում են իսլամացված համշենցիների սերունդները:

Ճմիլ/Ջիմիլ բնակավայրը Օսմանյան կայրության վարչական բաժանումներում և աչխարհագիր մատյաններում

Հայկական աղբյուրներում Ճմիլի մասին պահպանվել են կցկտուր տեղեկություններ: Այդ բացը, սակայն, որոշ առումով լրացնում են XVI–XVII դդ. օսմանյան Աչխարհագիր ու հարկային մատյանները: Համշենում օսմանյան իշխանությունները առաջին գրառում-հաշվառումներն անցկացրել են 1486 թ.[24] *Հավաքած տեղեկություններն ամփոփելով Տրապիզոնի սանջակի Աչխարհագիր մատյանում: Նման միջոցառումները կայսրությունում իրականացվում էին նոր տարածքներ գրավելուց անմիջապես հետո՝ այն յուրացնելու, կառավարումը դյուրացնելու և հարկահավաքությունը կազմակերպելու հեռագնա նպատակներով*[25]*: Վերոնշյալ մատյանում Համշենը գրանցվել է որպես օս-*

[22] *Նույն տեղում: Տե՛ս նաև Հ. Ոսկեան. նշվ. աշխ., էջ 159:*

[23] *Հ. Յ. վրդ. Տաշեան. Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Վիեննա, 1921, էջ 29:*

[24] BOA. Maliyeden Müdevver Defteri, no 828 (H.891/M. 1486), s. 326.

[25] *Եթե գրանցման ենթակա վայրը նոր էր գրավված, սկզբում թահրիր (աչխարհագիր) անցկացնող էմինը (մարգահամար և հողի հաչվառում կատարող պաշտոնյա) հաստատում էր տվյալ տարածաչրջանի վարչական պատկանելութիւնն ու բաժանումը: Այնուհետև իրավասու պաշտոնյաններն այցելում էին բոլոր բնակավայրերը, արձանագրում հարկ վճարողների հողային տիրույթները (խաս, թիմար, զիամեթ)՝ ներառյալ հարկերից ազատվածներին, հողատերերին ու հողազուրկներին, ընտանիքավորներին և ամուրիներին, տարիքավորներին ու*

մանյան զեամեթ (գամին)[26] թիմարային հողատիրության տեսակ: Պարբերաբար անցկացվող օսմանյան աշխարհագիրները վկայում են, որ XV դ. վերջին և XVI դ. սկզբին Քալքարի լեռնագոգերում սփռված հայոց Համշեն գավառը հայտնվել էր օսմանյան վարչաքաղաքական ու տնտեսական վերահսկողության ներքո: Պաշտոնական այս գրանցումներում հայ բնակչությունը Համշենում կազմում էր ճնշող մեծամասնություն:

Օսմանյան գրագրության մեջ Ճմիլն առաջին անգամ հիշատակվում է 1520/30 թթ. համառոտ մատյանում[27] Ջիմիլ տարբերակով: Ըստ այս աղբյուրի՝ Համշենի քազան բաժանված էր երեք նահիյեի (գյուղախումբ)՝ Հեմշին (ներկայիս Համշեն գավառ), Քարահեմշին (ներկայիս Զամլըհեմշինի գավառ) և Էքսանոց (ներկայիս Սենոզի չրջան)[28]: Համշենի քազայի Ջիմիլ գյուղը վարչականորեն պատկանում էր տասը գյուղերից բաղկացած Քարա Հեմշին (Համշեն)[29] նահիյեին: Ինչպես պարզ է դառնում մատյանից, Ջիմիլ գյուղն ուներ 34 տուն հարկատու գեբր[30] (անհավատ), 8 տուն մու-

---

այրիներին, արհեստավորներին, իմամին (մոլլա, կրոնապետ), փափազին (քահանա), նույնիսկ հաշմանդամներին: Էմինի պահանջով տվյալ չրջանի թիմարատերերը նրան էին ներկայացնում հողատիրության ձևերը հաստատող փերմանները, բերաթները, թիմարատիրոջ սեփականության իրավունքը կամ հարկերից ազատված լինելը հաստատող այլ վկայագրեր: Արձանագրվում էին նաև քշլաղները (ձմեռանոցներ) և յայլաները (ամառանոցներ), բերքի տեսակները, դրանց տարեկան քանակությունը, ջրաղացները, ձիթհանները, տարեկան եկամտի չափերը: Ապա մանրամասն տեղեկություններ էին տրվում ցանքատարածությունների ու արոտավայրերի մասին: Էմինին էր վերապահված գրանցման աշխատանքներից հետո հաշվետվություններ կազմելու պարտականությունը՝ հարկատու չրջանների առանձնահատկությունների ու հարկերի միջև եղած տարբերությունների, թիմարատերերի և նրանց ծառաների վերաբերյալ: Դրան հետևում էին թիմարների վերաբաժանումը՝ ըստ եկամուտների, որոնք արձանագրվում էին առանձին մատյանում: Ընդհանուր հաշվառումները կատարվում էին ըստ վիլայեթների և լիվաների (տե՛ս Լ. Սահակյան. Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 34–43):

[26] Զեամեթ – օսմանյան հողատիրության ձև: Տրվում էր պետական երկրորդ կարգի պաշտոնյաներին՝ գանձարանի հաշվապահներին, գնդերի հրամանատարներին և քարտուղարներին: Զաիմ – նշանակում է ավատատեր (Մ. Աբեկեան. Ընդարձակ բառարան Տաճկերէն հայերէն, Կ. Պոլիս, 1892, էջ 296):

[27] BOA. TD., no 387 (H.937/M.1530), s. 732, 733.

[28] Նույն տեղում, էջ 731: Նաև՝ M. H. Bostan. XV–XVI Asırlarda Trabzon Sancağında Sosyal ve İktisadî Hayatı. Ankara, 2002, s. 221.

[29] BOA. TD., no 387 (H.937/M.1530), s. 731.

[30] Գեբր (گبر) – պարսկերեն նշանակում է կրակապաշտ, զրադաշտ: Տվյալ դեպքում օգտագործվել է անհավատ իմաստով և համարժեք է գյավուր բառին: Վերջինս առաջացել է գեբր բառից (տե՛ս F. Develliоğlu. Osmanlıca – Türkçe Ansiklopedik Lûgat, Eski ve Yeni Harflerle, 19 Baskısı. Ankara, 2002, s. 155*):*

սելլեմ և 3 տուն սիփահի[31]*: Համշենին վերաբերող օսմանյան մատյանների մասին շատ կարևոր դիտարկում են արել թուրք աղբյուրագետները. Թուրքիայի Հանրապետության Գլխավոր վարչապետական արխիվի տնօրինության՝ Օսմանյան արխիվի բաժնի հրատարակած «387 համարի Քահրամանի և Ռումի նահանգների մատյանների հաշվեմատյանում» նշվում է, որ 1530 թ. Համշենի քազային*[32] *վերաբերող Համառոտ մատյանում գեղը կոչվող տների կողքին գրանցված մուսելլեման*[33] *եզրը սխալ է որպես մուսուլման ընթերցելը, և այն կարող է թյուրըմբռնման տեղիք տալ (նշենք նաև՝ արաբատառ գրությամբ այս երկու բառերը նման են): Թուրք աղբյուրագետները, քննելով 288 և 442 համարների աշխարհագիր մատյանները, եզրակացնում են, որ Համշենի բնակավայրերի գրանցումներում որևէ փաստ չի հանդիպում մուսուլման տների գոյության մասին, ուստի ճիշտ է մուսելլեման տուն ընթերցումը*[34]*: Այս բացատրությունը չափազանց կարևոր է, քանի որ որոշ թուրք աղբյուրագետներ Համշենին վերաբերող մատյաններում իսկապես այս եզրը կամ սխալ են ընթերցել կամ էլ միտումնավոր կեղծել՝ գավառի ժողովրդագրական պատկերն աղճատելու նպատակով*[35]*: Իսկ այս աղբյուրներում գրանցված հայկական անուններին առհասարակ չեն անդրադարձել: Ինչ վերաբերում է մուսելլեմաններին, նրանք հարկերից ազատված, տվյալ դեպքում, հայ քրիստոնյաներ էին: Չի բացառվում, որ հիշատակված երեք տուն սիփահիները ևս հայեր էին, քանի որ օսմանյան հասարակության մեջ սիփահի կարող էին լինել նաև քրիստոնյաները*[36]*: Ջիմիլին վերաբերող հետագա գրանցումներում սիփահիների այլևս չենք հանդիպում:*

Այնուհետև, 1554 թ. Մանրամասն (Mufassal) *աշխարհագիր մատյանում Ջիմիլը հիշվում է որպես Համշենի քազայի գյուղերից (տե՛ս աղյուսակը): Տրված են հարկատու բնակչության՝ արական սեռի անձնանունները. նշվում են տուն-գերդաստան՝ հայրերի, որդիների և եղբայրների անունները: Պաշտոնական այս գրանցումները հիմնակա-*

31 Սիփահի – հեծելազոր՝ օսմանյան ռազմաավատական համակարգում:

32 Քազա – օսմանյան վարչական միավոր. օգտագործվել է ավան իմաստով:

33 Մուսելլեման (مسلمان)*– Օսմանյան կայսրության կազմավորման ժամանակ և Օրհան Գազիի սուլթանի օրոք (1329–1359) ձևավորված զինվորական ծառայության մեջ գտնվող հարկերից ազատ դասի անունը* (M. Z. P a k a l ı n. Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü, c. 2. İstanbul, 1993, s. 627. *Տե՛ս նաև* H. İ n a l c ı k. Osmanlı İmparatorluğu'nun Ekonomik ve Sosyal Tarihi – I. Ankara, 1959, s. 10–11, 107–109*):*

34 BOA. TD., no 387 (H. 937/M.1530), s. 50.

35 Տե՛ս M. H. B o s t a n. *Նշվ. աշխ., էջ 348–348:*

36 Տե՛ս Gayri Müslim *բառհոդվածը,* İslam Ansiklopedisi (https:// islamansi klopedisi.org.tr/gayri-muslim).


ԱՂՅՈՒՍԱԿ

Ջիմիլի հարկատու հայ բնակչութիւնն՝ ըստ 1554 Աշխարհագիր մատեանի[37]						
Համշենին ենթակա Ջիմիլ գիւղը						
Զաքուրի (Զաքար) որդի Ալէքսանոս	Եղբայր Խաչադուր (Խաչատուր) ամուրի	Ազադի որդի Սիմէոն	Գէվօրգի որդի Ռէհան	Եղբայր Գաբրիմ ?[38] ամուրի	Մարադինի (Մարտին) որդի Աւաստադուր (Աստուածատուր)	Մանվէլի որդի Միգաք (Միքայէլ) ամուրի
Գուլիկի (Գրիգոր) որդի Գուլբէգ	Եղբայր Կոստոն-դուր (Կոստան-դին)	Շադիի որդի Խաչէրէս	Եղբայր Խաջաք (Խաժակ)	Եղբայր Վարդա-գադ	Թօրոսի որդի Գալուս (Գալուստ)	Խաչադուրի որդի Թոռնիկ
Բալաբակ (?) որդի Խոսրով	Օհանէսի (Հովան-նես) որդի Շիրին	Եղբայր Գիրքօր (Գրիգոր), ամուրի	Խուբի-արի որդի Խաջաք (Խաժակ)	Եղբայր Մելիք	Օվանի (Հովան) որդի Սիմաւօր	Թօրոսի որդի Լազուր (Լազար)
Սթէֆան-օսի որդի Մէսրօբէ (Մեսրոպ)	Եղբայր Մախիր (Մհեր)	Օհանէսի որդի Նօրդունկ, ամուրի	Աբրա-համի որդի Վահան	Եղբայր Սարգիս ամուրի	Դավիդի (Դավիթ) որդի Նօրագիզ	Գիրքօլի (Գիրքոլ) որդի Արսլան ամուրի
Եղբայր Ամիրզադի ամուրի	Ամիրզադի որդի Թօրօս	Առաքիլի (Առաքել) որդի Բարօն	Մարդ-րօսի (Մարտի-րոս) որդի Թօրօս	Բօղօսի (Պողոս) որդի Գօզալա-մէր	Գուլամիրի որդի Գէվօրգ	Եղբայր Փայլաբէգ (?)
Եղբայր Գիրագօս	Նօրբարօնի որդի Ղազարօս	Իչխանի որդի Աւաստա-դուր (Աստուա-ծատուր)	Եղբայր Սենեսար (Սանա-սար)	Գիրքօրի (Գրիգոր) որդի Սիրագ (Սմբատ)	Ամիրմէլիքի որդի Մօսիք	Եղբայր Էղսար (Եղզար, Եղազար)
Աւաստա-դուրի (Աստուա-ծատուր) որդի Միրան	Եղբայր Գասբար	Ավաղիքի (Ավետիք) որդի Ղազարոս	Եղբայր Բարոն (Պարոն) ամուրի	Փարա-մուզբեգ որդի Լազարե	Թաթոսի որդի Վարդեր	Գիրքօրի (Գրիգոր) որդի Մելիք
Եղբայր Աստուր (Աստուր)	Օվանոսի (Հովան-նես) որդի Մոսէ	Եղբայր Կոստոն-դուր (Կոստան-դին)	Օհանի որդի Ակօբ (Հակոբ)	Օհանեսի որդի Խաչա-դուր	Եղբայր Գյուլազիզ	Առաքիլի (Առաքել) որդի Դիրատուր (Տիրատուր)
Ամիրի որդի Միրան	(Սաքար) Զաքար որդի Սուրխան (Սարու-խան)	Եղբայր Ազադ	Սուրխա-նի (Սարու-խան) որդի Սաքար (Զաքար)	Եղբայր /// Սալղ-րուն	Մօսիի որդի Գուլակ	Առաքիլի որդի Գիրաքօս (Կիրակոս)
Սէրովբէի որդի Ակօբ (Հակոբ)	Ավաղիքի (Ավետիք) որդի Սարգիս					

[37] BOA. TD., no 288 (H.961/M.1554), s. 556.

[38] *? նշանը դրված է չվերծանված անունների փոխարեն:*

նում արվել են օսմաններեն, որոնք առհասարակ չեն արտացոլում հայերենի բաղաձայն հնչյունների համակարգն ամբողջությամբ: Բնականաբար, գրագիրն անձնանուններն արձանագրել է՝ համապատասխանեցնելով օսմաններենի տառադարձումներին, որի հետևանքով շատ դեպքերում անձնանունների գրանցումներն ունեն աղճատված պատկեր: Իսկ այս գրագրությանը բնորոշ սիյաքատ ձեռագրերում ձայնանիշների և տառերի համապատասխան նշանների բացակայությունն էլ ավելի է բարդացնում որոշ անձնանունների ընթերցումն ու վերականգնումը: Անունները վերծանելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ լեզվական այս իրողություններն իրենց վրա կրում են Համշենի բարբառի տեղական խոսվածքի հնչարտասանական նստվածքը: Ուստի կարևորել ենք նաև տեղացիների հետ կատարած լեզվական ճշտումներն ու Համշենի բարբառին հատուկ հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները:



Նկ. 4. վարչապետական օսմանյան արխիվ, աչխարհագիր մատյան 288 (H. 961/M. 1554), էջ 556:

Վերը բերված աղյուսակում բերված անձնանունները հստակ պատկերացում են տալիս Ջիմիլ գյուղի ազգային նկարագրի մասին: Միաժամանակ լեզվական այս փաստերում տեղ գտած հնչյունական դրսևորումները բացահայտում են Ջիմիլի լեզվավիճակը: Գրանցված և վերծանված անձնանուններին կից տրվում են վերականգնված ձևերը[39]: Մատյանում գրանցումը կատարվել է նկ. 4-ում բերված հերթականությամբ:

Այսպիսով, XVI դարում Համշենի Ջիմիլ գյուղում տարածված էին հետևյալ արական անձնանունները. Աբրահամ, Ազադ, Ալեքսանոս, Ակոբ (Հակոբ), Ամիր, Ամիրզադ, Ամիրմելիք, Առաքիլ (Առաքել), Արսլան, Ասադուր (Աստուր), Ասվասադուր (Աստվածատուր), Ավատիք (Ավետիք), Բալաբագ (Բալաբեկ), Բարոն (Պարոն), Բողոս (Պողոս), Գասբար (Գասպար), Գալուս (Գալուստ), Գիրագոս (Կիրակոս), Գիրքոլ (Գիրգոլ), Գիրքոր (Գրիգոր), Գոզալամիր, Գյուլազիզ, Գյուլամիր, Գուլիկ (Գլակ), Գևորգ, Դավիդ (Դավիթ), Դիրադուր

[39] *Օսմանյան այս վավերագրերի վերծանումներում մեզ օգնելու համար շնորհակալություն ենք հայտնում օսմանագետ Իրֆան Ալեքսիվա Զաղաթայլին:*

(Տիրատուր), Զաքուր (Զաքար), Էղզար (Եղիազար), Թորոս, Թոռնիկ, Իչխան, Լազուր (Լազար), Խաչերես, Խաչադուր (Խաչատուր), Խաջակ (Խաժակ), Խոսրով, Խուբիար, Կոստանդուր (Կոստանդին), Ղազարոս, Մանվել, Մարադինի (Մարտին), Մարղրոս (Մարտիրոս), Միգաք (Միքայել), Մելիք, Մեսրոբե (Մեսրոբ), Միրան, Մոսէ (Մովսես), Մոսիք (Մոսիկ), Նորդունգ (Նորատուն), Նորազիզ, Նորբարոն (Նորպարոն), Շադի, Շիրին, Ռեհան, Սենեսար (Սանասար), Սարգիս, Սարո, Սբատ (Սմբատ), Սերովբե, Սիմեոն, Սթեֆանոս (Ստեփանոս), Սուլթան, Սուրխան (Սարուխան), Վահան, Վարթեր (Վարդեր), Վարդազար, Փառամուզաբեկ, Քասբար (Գասպար), Օհան (Հովան), Օհանես (Հովհաննես)[40]*:*

Մատյանում գրանցված ամուրիները[41] *վճարել են նախատեսված հարկի կեսը՝ ընդունված կարգի և իրենց սոցիալական վիճակի համաձայն: Օսմանյան գրանցումներից պարզվում է, որ Համշենի հայ բնակչությունից հարկը գանձվել է միասնական և բնամթերքի տեսքով (մեղր, մեղրամոմ, ընկույզ և այլն): Ըստ այս աղբյուրի՝ 1554 թ. Զիմիլում կար հարկատու 55 տուն և առանձին՝ 12 ամուրի, ընդհանուր առմամբ՝ 110 չունչ: Հիմնականում կանայք, անգործները, հոգևորականները, տարեցները, անդամալույծներն ու այրիները ազատված էին գլխահարկից*[42]*, և նրանց անունները, բնականաբար, տեղ չեն գտել մատյաններում:*

Հայկական աղբյուրները վկայում են, որ հայ ավանդական ընտանիքն ունեցել է 6–8 չունչ, երբեմն՝ 10-ից ավելի[43]*: Համշեն գավա-*

---

[40] *Պատմաբան Գ. Բաղալյանի հրատարակած Տայքի նահանգին վերաբերող օսմանյան ընդարձակ մատյանի անձնանունների հետ համեմատելիս նկատում ենք որոշ անձնանունների կաղապարաձևերի ակնհայտ նմանություններ և կրկնություններ [տե՛ս Գ. Բաղալյան. Տայքի կենտրոնական և արևելյան գավառների ազգային նկարագիրը XVI դարի վերջին. ըստ «Գյուրջիստանի վիլայեթի» ընդարձակ հարկացուցակի.– «Վեմ» (Երևան), 2017, թիվ 4, էջ 49–50]:*

[41] *Ամուրին չունի հողակտոր կամ ապրում է հոր հետ և պիտանի է աշխատանքի: Ամուրի տղամարդկանցից գանձվում էր մոտավորապես 6 ակչե, աղջիկներից՝ 60 ակչե, այրի կանանցից՝ 30 ակչե (տե՛ս Լ. Սահակյան. Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, էջ 285):*

[42] *Երբեմն գլխահարկ գանձում էին 10-ից մինչև 80 տարեկան արական սեռի ներկայացուցիչներից (տե՛ս* Y. Koç. Ömer Lütfi Barkan'ın Tarihsel Demografi Çalışmalarına Katkısı ve Klasik Dönem Osmanlı Nüfus Tarihini Sorunları, Bilig, №: 65. Ankara, 2013, s. 185)*:*

[43] *Լ. Սահակյան. Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, էջ 60–61: Թուրք հայտնի աղբյուրագետ Օ. Բարքանն առաջարկում է օսմանյան մատյաններում գրանցված տները հաշվել միջինը 5 չունչ (տե՛ս* Ö. L. Barkan. Tarihî Demografi Araştırmaları. İstanbul, 1953, TM, sayı X, s. 11–12)*: Սակայն XVII–XIX դդ. հայկական աղբյուրները վկայում են, որ Համշենի ան-*

ռում ևս պահպանվել էր բազմանդամ ընտանիքի ավանդույթը, անգամ իսլամացումից հետո[44]: Այս ամենը հաշվի առնելով՝ կարող ենք ենթադրել, որ Ջիմիլը եղել է հայկական հոծ բնակավայր:

Ջիմիլի բնակավայրը հիշվում է նաև 1564 թ. Համշենի քազային վերաբերող Մանրամասն աշխարհագիր մատյանում[45]: Այստեղ ևս արժեքավոր տեղեկություններ են արձանագրված Ջիմիլի ժողովրդագրության վերաբերյալ: 10 տարի անց արված այս գրանցումը կրկին անուն առ անուն ներկայացնում է հարկատու հայերին՝ 108 տուն և 51 ամուրի: Նշենք, որ այս աղբյուրում կրկնվում են նախորդ մատյանում հիշվող հարկատուների անունների մի մասը[46]: Ահա վերծանված և վերականգնված անձնանունները. Ազատ, Ադամ (Ատոմ), Ալթուն, Անդրանիկ, Անդրեաս, Ակոբ (Հակոբ), Ամիրզադ, Ամիրվան, Ամիրխան, Առաքիլ (Առաքել), Ասլան, Աստվասադուր (Աստվածատուր), Ասդուր (Աստուր-Աստուր), Արդոս, Բաքուր (Բակուր), Բարոն (Պարոն), Բարոն-Վարթ (Պարոն-Վարդ), Բեդիք (Պետիկ), Բեդրոս (Պետրոս), Գուլարսլան, Գուլամիր, Գուլակ (Գլակ), Գևորգ, Դավիդ (Դավիթ), Զադ, Զարվուշ, Զորավար, Էղզար (Եղզար-Եղիազար), Էրեմիա (Երեմիա), Թաթոս, Թագվոր (Թագավոր), Թոթիկ, Թորոս, Լազուր (Լազար-Եղիազար), Լուսիկ, Խաչադուր (Խաղատուր), Խաչերես, Խարգոսար (Գորգասար), Խոսրով, Խոսդիդ (Խոսդեղ), Խուբիար, Ջերոն (Ծերոն), Գարաբեդ (Կարապետ), Գիրագոս (Կիրակոս), Գոսդան (Կոստան), Ղազարոս, Ղուգաս (Ղուկաս), Մանթաչ, Մանուկ, Մարքար (Մարգար), Մարդրոս (Մարտիրոս), Մեսրոբ, Միրհան, Մոսիք, Նորադունկ (Նորատուն), Նորարև, Նուբան, Շադի, Շահամիր, Շահբեկ, Շահրիման, Շամչադին, Շիրին, Սարգիս, Վահան, Վարդ, Վարդան, Վարթևան, Վարդերես, Քասփար (Գասպար), Քրիքոր (Գրիգոր), Քիրքոր (Գիրգոր), Քանոս (Գինոս), Քրիստոսդուր (Քրիստոսատուր), Ստեփանոս, Սուլթան, Փիրում, Օվանես (Հովհաննես), Օվիք (Հովիկ), Օվսեր (Հովսեր) և այլն:

միջական հարևանությամբ Սպեր գավառի գյուղերում և, առհասարակ, Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում հայ ավանդական ընտանիքը բաղկացած է եղել 10–20, երբեմն՝ 30 չնչից ավելի: Ուստի վերոնշյալ դարերում հայկական ավանդական ընտանիքի տան անդամների միջին թիվը պետք է հաշվարկել 8 չնչից ոչ պակաս (այդ մասին առավել մանրամասն տե՛ս Լ. Սահակյան. Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, էջ 61–62):

[44] *Այդ մասին տե՛ս Լ. Սահակյան. Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները.– Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Երևան, 2006, էջ 214–215:*

[45] BOA.TD., no 442 (H.972/M.1564).

[46] *Նույն տեղում, էջ 151–152:*

1681/1682 թթ. օսմանյան իշխանությունները Համշենում իրականացնում են նոր աշխարհագիր՝ ավարիզ (արտակարգ) կոչվող հարկը գանձելու նպատակով: Այս և նախորդ գրանցումները վավերացնող մատյանները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել Համշենի ժողովրդագրական վիճակի ու դրա փոփոխությունների մասին: 1681/1682 թթ. դրությամբ գավառում ավարիզի հարկ վճարողների 80 %-ը, այսինքն՝ 870 չունչ, կազմում էր հայ բնակչությունը, իսկ 19 %-ը, այսինքն՝ 209 չունչ, մուսուլման բնակիչներն էին: Ուշագրավ է, որ մատյանում հայերը տարբերակված են նեֆերան էրմենյան (neferân Ermeniyan - نفراً ارمنيان) *հայ չունչ եզրույթով: Տվյալ դեպքում նեֆերան նշանակում է չափահաս արական սեռի չունչ*[47]*: Թեև նույն մատյանում տեղ են գտել նաև մուսուլման բնակիչները, սակայն գրանցված հայկական անունները հաստատում են, որ Համշենում այդ ժամանակ հայերը դեռևս ճնշող մեծամասնություն էին: Ինչ վերաբերում է մուսուլման բնակչության առկայությանը, ապա այն պայմանավորված էր XVII դ. վերջին Համշենում սկսված իսլամացման գործողություններով:*

1681/1682 թթ. մատյանից տեղեկանում ենք, որ Ջիմիլը վարչականորեն գտնվում էր Համշենի նահիյեի[48] *կազմում: Չնայած այդ շրջանում Համշենում արդեն նկատելի էր ժողովրդագրական որոշ փոփոխություն, սակայն Ջիմիլ գյուղի հիմնական բնակիչները հայերն էին:*

Այս գրանցումը կատարվել է նույն սկզբունքով. տուն-գերդաստան՝ հայր-որդի, եղբայր: Որպես ավարիզի հարկ վճարող՝ մատյանում արձանագրվել է 64 տուն՝ 116 չունչ[49]*: Ներկայացնենք օսմաներենից վերծանված ու վերականգնված անձնանունները՝ Ալեքս, Ամիրվարդ, Անդոն (Անտոն), Աչոդ (Աչոտ), Արթին, Ասլան, Ասվասադուր (Աստվածատուր), Ավադիք (Ավետիք), Բաղդասար, Բողոս (Պողոս), Բեդրոս (Պետրոս), Գալոս (Գալուստ), Գարաբիդ (Կարապետ), Գևորգ, Գիրաքոս (Կիրակոս), Գիրքոր (Գրիգոր), Դավիթ, Էրեմիա (Երեմիա), Թորոս, Թումաս, Խաչադուր, Խուբասար (Գումբասար), Ծերոն, Ղազար, Մանուկ, Մարգար, Մարդոս (Մարտիրոս), Մինաս, Մխրհան, Նորագիդ, Նորհատ, Նորպարոն, Ռեհան, Շահմելիք, Շիրին, Սարգիս, Սիմեոն, Սթեփանոս, Սողոմոն, Սուրխան (Սարուխան), Վախան (Վահան), Վարդ, Վարդան, Քոսթան (Կոստան), Օհան, Օվաննես (Հովհաննես), Օսքովարթ (Ոսկեվարդ)*[50] *և այլն:*

---

[47] BOA. Kamil Kepeci (KK.). (Mevkufat Kalemi) Defteri, no 2697 (H.1093/M.1681/1682), s. 132a. Neferân Ermeniyan *եզրի տակ պետք է հասկանալ հետևյալը. պետությունն արական սեռի ներկայացուցիչներին առանձին-առանձին գրանցելուց հետո նրանց խմբավորում էր՝ ըստ տնտեսական դրության՝ որպես ավարիզի հարկ վճարող տուն:*

[48] Ö. Öztürk. Pontus: Antik Çağ'dan Günümüze Karadeniz'in Etnik ve Siyasi Tarihi, s. 771.

[49] BOA. KK., no 2697 (H.1093/M.1681/1682), s. 131b–132b.

[50] *Տե՛ս նույն տեղում:*

Առհասարակ, անձնանուններն ազգային պատկանելության կարևոր ցուցիչներ են, սակայն վերը բերված օրինակներից երևում է՝ XVI–XVIII դդ. հայկական միջավայր էին թափանցել արաբապարսկական, թուրք-թաթարական ծագման անձնանուններ կամ անվանակազմ բաղադրիչներ, որոնք հետևանք էին լեզվական փոխչփումների ու փոփոխությունների: Այնուհանդերձ, գերակշռող հայկական անձնանուններն, աներկբայորեն, վկայում են, որ Համշեն գավառը XVI–XVII դդ. պահպանել էր իր ազգային նկարագիրը: XVIII դ. առաջին քառորդում տարածաշրջանում սկսեց զանգվածային իսլամացումը:

Ավելի ուշ՝ 1853 թ., Սպերի և Ռիզեի քազաներից ու Համշենի գյուղերից կազմվում է Քուրա-ի Սեբա (Յոթ գյուղ) նահիյեն, որի մեջ ընդգրկվում է նաև իսլամացված Ջիմիլը[51]:

Այսպիսով, XVI–XIX դդ. օսմանյան գրանցամատյաններում արձանագրված պատմալեզվական բացառիկ նյութն արժեքավոր է Համշենում Օսմանյան կայսրության վարած վարչական սոցիալ-տնտեսական, էթնիկական քաղաքականության, ժողովրդագրության, լեզվական փաստերի՝ տեղանունների և անձնանունների ուսումնասիրության համար:

Ջիմիլ գյուղի մասին չափազանց կարևոր են 1843–1844 թթ. Համշեն այցելած գերմանացի պրոֆեսոր Կարլ Կոխի տեղեկությունները[52]: Այդ ժամանակ Համշենի սանջակը, թեև գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ, սակայն ուներ կիսանկախ կարգավիճակ, և կառավարվում էր վոյեվոդ (գավառապետ)[53] կոչվող պաշտոնյան: Այդ շրջանում Ջիմիլի բնակչությունը Համշենի մյուս բնակավայրերի նման իսլամացված էր: Կոխի պարզաբանմամբ՝ վոյեվոդները կառավարում էին երկրամասի բնակչության քրիստոնյա հատվածին, իսկ մուսելիմ-

[51] BOA. İrade - Meclisi Vâlâ. (İ.MVL.), no 272/10521 (H.1269/M.1853). *1856 թ. Ռիզեի, Քուրա-ի Սեբայի և Համշենի քազաները միավորվելով՝ հիմնվում է Ռիզեի գայմագամությունը: Հետագայում Համշենը դառնում է Լազիստանի սանջակի մաս: Քուրա-ի Սեբան և Համշենը ձեռք են բերում նահիյեի կարգավիճակ [տե՛ս* Sedaret - Başbakanlık Osmanlı Arşivi, Mektubî Kalemi - Nezâret-Devâir Giden Defter (BOA. A.MKT.NZD.), no 183/17 (H.1272/M.1856)]*:*

[52] K. Koch. Wanderungen im Oriente, während der Jahre 1843 und 1844. II: Reise im pontischen Gebirge und türkischen Armenien. Landes-Industrie-Comptoirs. Weimar, 1846, pp. 11–40.

[53] *Վոյեվոդ– սլավոնական լեզուներում վոյեվոդ են կոչել հրամանատարներին կամ արքայազներին: Օսմանյան կայսրությունում վոյեվոդը (թրք. վոյվոդա) նույն սանջակ բեյն էր՝ գավառապետը, ով վերահսկում էր քրիստոնյա բնակչությանը և կազմակերպում հարկահավաքությունը: Ըստ* “Türk Dil Kurumu” *բառարանի՝ վոյեվոդ* (Voyvoda) *օսմանյան շրջանում Վալախիայի և Բեսարաբիայի որոշ բեյերին տրված տիտղոսի անվանումն է* (*տե՛ս* Türkçe Sözlük, 10. Baskı. Ankara, 2005, s. 2096)*:*

ները[54] (նահանգապետ կամ գավառապետ) իսլամ բնակչություն ունեցող շրջաններին: Այսինքն՝ վոյեվոդների առկայությունը վկայում է, որ Համշենում դեռևս կային քրիստոնյա հայ ընտանիքներ:

Համշենը XIX դ. առաջին քառորդում վարչականորեն բաժանված էր երեք ձորապետությունների (դերեբեյություն), որոնցից մեկի կենտրոնը Ջեմիլ գյուղն էր՝ համանուն գետով: Երկրորդ ձորապետության կենտրոնն էր Օրթա քյոյը՝ Մափավրա գետի ափին, իսկ երրորդի կենտրոնը՝ Մարմանդ[55] գյուղը՝ Աթինա ծովափնյա գյուղաքաղաքից 2,5 ժամվա հեռավորության վրա էր[56]: Այս վարչական միավորները գտնվում են ներկայիս Ռիզեի նահանգի կազմում: Կոխի հիշատակած Մափավրա գետի ափին գտնվող Օրթա քյոյ գյուղը Ջայելիի գավառի Սենոզի շրջանում է, Մարմանդ գյուղը՝ Փազարի գավառում, որը ձևափոխվելով դարձել է Մերմոնադ:

Կ. Կոխի նկարագրությամբ՝ Ջիմիլ/Ջեմիլ գյուղի թիկունքում վեր է խոյանում Գարագթուր լեռնագագաթը, որը դեպի արևմուտք ձգված Սպերի գավառ իջնող ճապանց լեռան գագաթնագիծն է կազմում[57]: Գարագթուր անունը, ինչպես գրում է Հ. Տաշյանը, կազմված է հայերեն Քարա (քարե) – կտուր բաղադրիչներից և թուրքերեն քարա–սև բառի հետ առնչություն չունի[58]: Չի բացառվում, որ Դեմիր դաղ լեռան նախկին անունը եղել է Քարակտուր: Ըստ Հ. Տաշյանի՝ Ջեմիլ/Ճեմիլ տեղանունը ծագում է արաբերեն ճեմիլ՝ գեղեցկատեսիլ բառից և բնակավայրն այդպես է կոչվել բնակչության իսլամացումից հետո[59]: Սակայն, ինչպես նշել ենք, 1513 թ. գրիչ Լևոն քահանայի հիշատակարանում այս բնակավայրն արդեն հայտնի էր Ճմիլ անունով և հիմնականում հայաբնակ էր, իսկ Համշենի իսլամացումն սկսվել է ավելի ուշ՝ XVII դարավերջին: Չի բացառվում՝ Ճեմիլ>Ճիմիլ> Ճմիլ> Ջեմիլ>Ջիմիլ տեղանվան հիմքը ճեմ>ճիմ բառն է, որը խոտով ծածկված մեծ հողակտորից[60], գուղճից բացի՝ նշանակում է ճմայինե-

---

[54] *Մուսելլիմ– վարչական պաշտոն, էյալեթի կամ սանջակի կառավարչին տրվող անուն* (M. Z. Pakalın. *Նշվ. աշխ., էջ 628.* Türkçe Sözlük, s. 1439)*:*

[55] *Մարմանդ գյուղանուն տե՛ս նաև Բ. Թոռլաքյան. Համշենահայերի ազգագրությունը, հ. 13, Երևան, 1981, էջ 29:*

[56] K. Koch. *Նշվ. աշխ., էջ 22–25: Տե՛ս նաև Լ. Խաչիկյան. Էջեր համշինահայ պատմությունից. Աշխատություններ, հ. Բ, Երևան, 2017, էջ 164:*

[57] K. Koch. *Նշվ. աշխ., էջ 25:*

[58] *Հ. Յ. վրդ. Տաշեան. Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, էջ 18:*

[59] *Նույն տեղում, էջ 19:*

[60] *Հ. Աճառյան. Հայերենի արմատական բառարան, հ. 3, Երևան, 1926, էջ 200: Հայերենի բարբառներում ճիմ նշանակում է «հողի մեծ կտոր գուղճ, որի վրա լինում է կանաչ խոտ: Ճիմով ջրի հոսքը կտրեց»: Առկա են նաև ճիմ-*

ճահճային հանքաքար, գորշ երկաթաքար[61]: Ճմայինն հողակտորները լինում են ջրառատ, ջրից գոյացած ճահճային վայրերում, իսկ Ջիմիլի տեղանքը լի է լեռներից հոսող վտակներով: Ինչ վերաբերում է գորշ երկաթաքարին, ապա, ինչպես նշել ենք, Ջիմիլ գյուղի շրջակայքը հարուստ է երկաթի հանքավայրերով: Եթե համարենք, որ տեղանվան բառահիմքում ճեմ>ճիմ արմատն է, բառավերջի -իլ ածանցն անսովոր չէ հայերենին: Նշենք՝ հայերենի որոշ բառերում առկա -իլ վերջածանցը Գ. Ջահուկյանը համարում է հնդեվրոպական ծագման[62]:

Ջիմիլ գյուղում Կ. Կոխին հյուրընկալում է իշխան Գումբասարը: Վերջինս Սոլիման աղա անունով հայտնի ավազակապետ էր[63]: Հ. Տաշյանը կարծում է, որ իշխանին տրվող Գումբասար անունն ուղղակիորեն կապված էր նրա ենթակայության տակ գտնված Գոմբու սար հովտի անվան հետ, որի կենտրոնը Ջիմիլ գյուղն էր (հետաքրքիր է, որ Գումբասար անձնանունն է գրանցվել 1681/1682 թթ. Ավարիզ մատյանում: Այսօր Ջիմիլում ապրում են Գումբասարների սերունդները՝ պահելով իրենց գերդաստանի անունը): *Սոլիման աղան հայտնի էր իր քաջությամբ և ապրում էր արկածախնդիր կյանքով: Սակայն Տրապիզոնի Օսման փաշան, ցրելով պոնտական ձորապետությունները, վերջ է դնում ձորապետերի ավազակությանը: Սոլիման աղան թեև մի քանի տարի անցկացնում է բանտում, սակայն փախչելով՝ կարողանում է իր բնօրրանում շարունակել ազատ և կիսանկախ ապրել[64]:*

Գումբասար իշխանի մասին գրած Կ. Կոխի պատմությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու Ջիմիլ գյուղի հեղինակավոր ավազակապետի կյանքի մասին, և տվյալ պատմաքաղաքական միջավայրում բացահայտելու իսլամացած համշենցու այս կերպարի մարդկային չփումները, կենցաղվարությունն ու ազդեցությունը: Ինչպես գրում է Կոխը, «Հանկարծակի հարձակումների ժամանակ Գումբասար իշխանն աչքի է ընկել իր հանդգնությամբ: Նրանից մեծ նեղություններ էին կրել հարուստ քարավանները, հատկապես՝ Լազիստանի ձորապետերը: Նրա այս ալպյան բնակավայրն ամեն կողմից պաշտպանված էր բարձրաբերձ լեռներով, և այսպես բազմաթիվ թշնամիներ չէին համարձակվում հարձակվել նրա վրա իր իսկ որջի մեջ: Սակայն խորամանկ Օսման փաշան կարողացավ թակարդ սարքել և բռնել նրան: Կոստանդնուպոլսում՝ մութ բանտի մեջ, մի քանի տարի տանջվելուց հետո, վերջապես կաշառքի միջոցով հաջողացնում է փախչել բանտից և ապաստանում մի ավտրիա-

կա>Ջիմգաք բառերը՝ ճահիճ իմաստով (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, Երևան, 2004, էջ 388):

[61] Է. Աղայան. Արդի հայերենի բառարան, հ. 2, Երևան, 1976, էջ 994:

[62] Գ. Ջահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 806:

[63] K. Koch. *Նշվ. աշխ., էջ 116:*

[64] Նույն տեղում:

կան նավում: Ուզում էր անցնել Ավստրիա՝ այնտեղ իր հարստությունը հանգիստ վայելելու համար:

Նրա փախուստը, սակայն, մատնված էր և Զմյուռնիայում տաճկական կառավարությունը պահանջում էր ավազակապետին: Երկար բանակցություններից հետո, երբ ավստրիական հյուպատոսը համոզվեց, որ իր պաշտպանյալ փախստականն իրոք մի ավազակապետ էր եղել և բռնվել էր մի կողոպուտի ժամանակ, հանձնում են նրան: Սակայն նոր, ավելի մեծ կաշառքների միջոցով երկրորդ անգամ հաջողվում է նրան փախչել՝ այս անգամ հասնելով իր լեռները: Նա խոստանում է հրաժարվել նախկին վարքից և այսպես վայելում է իր իշխանությունը, որը երաշխավորվեց նրան»[65]:

Գերմանացի գիտնականը, Գումբասար իշխանի մասին խոսելիս, նշում է՝ հայի տիպար էր, և որ նրա երակներում մեծապես եռում էր հայի արյունը: Այդպես բնորոշելով՝ մատնանշում է Գումբասարի հայկական ծագումն ու բնավորության գծերը: Վերջինս էլ իրեն համարում էր Համամաշենի, որ հետո Համշեն կոչվեց, իշխանության հիմնադիր Համամ իշխանի սերունդներից[66]:

Եզրակացություն

Ինչպես ցույց են տալիս հունահռոմեական աղբյուրները, Խաղտիքի լեռներում գտնվող Ճմիլ/Ջիմիլ գյուղի տարածքը դեռևս հնագույն ժամանակներում հայտնի էր իր երկաթի հանքերով: Մեզ հասած հայկական ձեռագրերի հիշատակարանները վկայում են, որ հոգևոր առումով Ճմիլ/Ջիմիլը կապված է եղել Համշենի թեմին և ունեցել է Սբ. Աստվածածին ու Սբ. Խաչ եկեղեցիները: Օսմանյան Աչխարհագիր և հարկային մատյանները հաստատում են, որ այս բնակավայրն իր հայահոծ բնակչությամբ վարչականորեն Համշեն գավառի անքակտելի մաս է կազմել և իր ազգային նկարագիրը կարողացել է պահել մինչև XVII դարավերջը: Վերոբերյալ փաստերը Ջիմիլի հայկական գյուղ լինելու անհերքելի ապացույցներ են: Հատկապես XVIII դ. առաջին քառորդում Համշենում օսմանյան իշխանությունների իրականացրած խլամացման քաղաքականության հետևանքով կրոնափոխվեց նաև Ճմիլ/Ջիմիլի բնակչությունն ու դարձավ Թրքախոս՝ կորցնելով իր ազգային ինքնությունը, սակայն մինչ օրս իր տեղի Թուրքական բարբառում պահպանել է հայերեն բառեր և տեղանուններ: Աղբյուրագիտական հենքի վրա Ճմիլ/ Ջիմիլ

---

[65] *Տե՛ս Հ. Յ. վրդ. Տաշեան. Տայք, դրացիք եւ խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, էջ 20–21,* K. Koch. *Նշվ. աշխ., էջ 31–32:*

[66] *Տե՛ս Հ. Յ. վրդ. Տաշեան. Տայք, դրացիք եւ խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, էջ 19–20: Համմա.* K. Koch. *Նշվ. աշխ., էջ 25:*

գյուղի համապատկերի վերականգնումը լրացնում է Համշեն գավառի պատմության՝ ուսումնասիրությունից դուրս մնացած էջերը:

Լուսինե Սահակյան – բ. գ. թ., ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչությունների բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի պատմական ժողովրդագրություն, տեղանվանագիտություն, Օսմանյան կայսրության էթնոքաղաքականություն, Համշենի պատմություն, բարբառագիտություն, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն: Հեղինակ է 5 մենագրության, չուրջ 50 հոդվածի և հրապարակումների: lkhastur@yahoo.com, lsahakyan@ysu.am

REFERENCES

Abikean M. Endardzak bararan Tachkeren hayeren, K. Polis, 1892 (In Grabar).
Adonts N. Hayastane Hustinianosi darashrjanum, Yerevan, 1987 (In Armenian).
Aghayan E. Ardi hayereni bararan, h. 2, Yerevan, 1976 (In Armenian).
Ajaryan H. Hayereni armatakan bararan, h. 3, Yerevan, 1926 (In Armenian).
Alishan Gh. Tekhagir hayots medsats, Venetik, 1855 (In Grabar).
Arutyunyan B. K voprosu ob etnicheskoy prinadlezhnosti naseleniya basseyina reki Chorokh VII–IV vv. do. n. e.– IFZh, 1998, № 1–2 (In Russian).
Badalyan G. Tayki kentronakan ev arevelyan gavarneri azgayin nkaragire XVI dari verjin. est "Gyurjistani vilayeti" endardzak harkatsutsakneri.–"Vem" (Yerevan), tiv 4, 2017 (In Armenian).
Barkan Ö. L. Tarihî Demografi Araştırmaları. Istanbul, 1953, TM, sayı X.
BOA. Maliyeden Müdevver Defteri, no 828 (H.891/M. 1486)
BOA. TD., no 288 (H.961/M.1554); no 387 (H.937/M.1530); no 442 (H.972/M.1564)
BOA. KK., no 2697 (H.1093/M.1681/1682)
BOA. İrade - Meclisi Vâlâ. (İ.MVL.), no 272/10521 (H.1269/M.1853)
BOA. A.MKT.NZD., no 183/17 (H.1272/M.1856)
Bostan M. H. XV–XVI Asırlarda Trabzon Sancağında Sosyal ve İktisadî Hayatı. Ankara, 2002.
Devellioğlu F. Osmanlıca – Türkçe Ansiklopedik Lûgat, Eski ve Yeni Harflerle, 19 Baskısı. Ankara, 2002.
Djahukyan G. Hayeren stugabanakan bararan, Yerevan, 2010 (In Armenian).
Hayastani ev harakits shrjanneri teghanunneri bararan, h. 4, Yerevan, 1998 (In Armenian).
Haykuni S. Trapizoni hay gyughatsvots kyankn, "Ararart", Vagharshapat, 1905 (In Armenian).
Hayots lezvi barbarayin bararan, h. 3, Yerevan, 2004 (In Armenian).
Injijyan Gh. Ashkharhagrutivn chorits masants ashkharhi, Masn arajin, h. A, Venetik, 1806 (In Grabar).

Inalcık H. Osmanli Imparatorluğu'nun Ekonomik ve Sosyal Tarihi–I. Ankara, 1959.

Khachikyan L. Ejer hamshinahay patmutyunits, Ashkhatutyunner, h. B, Yerevan, 2017 (In Armenian).

Ksenophon. Anabasis, targm.` S. Krkyasharyani, Yerevan, 1970 (In Armenian).

Koch K. Wanderungen im Oriente, während der Jahre 1843 und 1844. II: Reise im pontischen Gebirge und türkischen Armenien. Landes-Industrie-Comptoirs. Weimar, 1846.

Koç Y. Ömer Lütfi Barkan'ın Tarihsel Demografi Çalışmalarına Katkısı ve Klasik Dönem Osmanlı Nüfus Tarihini Sorunları, Bilig, № 65. Ankara, 2013.

Martirosyan H. Lernayin akunki farne, Arshaluysi ditsuhin ev glkhi u mortu zohatsesn vishapakotoghneri imastabanakan henkum.–Vishap karakotoghnere, Yerevan, 2015 (In Armenian).

Nahapetyan R. Hunakan ev Hromeakan antik skzbnaghbyurneri azgagrakan teghekutyunnere Hayastani ev hayeri masin, Yerevan, 2018 (In Armenian).

Öztürk Ö. Karadeniz. Ansiklopedik Sözlük, c. 1. İstanbul, 2005.

Öztürk Ö. Pontus: Antik Çağ'dan Günümüze Karadeniz'in Etnik ve Siyasi Tarihi. Ankara, 2011.

Pakalın M. Z. Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü, c. 2. İstanbul, 1993.

Sahakyan L. Bardzr Hayki Baberd, Sper, Derjan gavarneri teghanunnern u zhoghovrdagrutyun XVI dari osmanyan ashkharhagir matyannerum, Yerevan, 2007 (In Armenian).

Sahakyan L. Osmanyan kaysrutyunum hamshenahayeri brni mahmedakanatsman kaghakanutyan hetevanknere.– Turkagitakan ev osmanagitakan hetazotutyunner, h. IV, Yerevan, 2006 (In Armenian).

Sahakyan L. Hamshen haykakan dzeragrerum, Yerevan, 2019 (In Armenian).

Sanosean M. Speri hnutivnnern.– "Aryevelk" (Polis), 1904, tiv 5579 (In Armenian).

Strabon. Ashkharhagrutyun, kazmogh ev arajabani heghinak S. Hovhannisyan, Yerevan, 2011 (In Armenian).

Tashean H. H. vrd. Hay bnakchutivne Sev tsoven minchev Karin, patmakan-azgagrakan harevantsi aknark me, Vienna, 1921 (In Armenian).

Tashean H. H. vrd. Tayk, dratsik ev Khotorjur, patma-teghagrakan usumnasirutivn, h. B, Vienna, 1980 (In Armenian).

Torlakyan B. Hamshenahayeri azgagarutyune, h. 13, Yerevan, 1981 (In Armenian).

Tsustak hayeren dzeragrats Mkhitarean Matenadarani i Vienna, h, B, kazmets H. H. Voskean. Vienna, 1963 (In Armenian).

Türkçe Sözlük. 10. Baskı. Ankara, 2005.

Voskean H. Bardzr Hayki vankern, Vienna, 1951 (In Armenian).

Viennayi Mkhitaryan miabanutyan matenadaran, dzer. h^{mr} 994 (In Armenian).

ЗНАМЕНИТОЕ СЕЛО ЧМИЛ/ДЖИМИЛ ОБЛАСТИ АМШЕН СОГЛАСНО АРМЯНСКИМ И ИНОЯЗЫЧНЫМ ИСТОЧНИКАМ (XVI в. – первая четверть XIX в.)

ЛУСИНЕ СААКЯН

Р е з ю м е

Ключевые слова: Амшен, Хахтик, Чмил/Джимил, памятная запись, османский реестр переписи населения, имя собственное, топоним, рукопись, исламизированный.

Область Амшен, располагавшаяся в горных районах края Хахтик, окаймлявшего северо-западную границу Великой Армении, была одной из составляющих армянской государственности и сыграла значительную роль в нашей истории.

Одним из наиболее значимых селений области Амшен является армянское село Чмил/Джимил, расположенное на склоне горы Демир даг – Железной горы (места эти со стародавних времен славились железными рудниками). Источники содержат лишь отрывочные сведения об этом селе. Так, из памятной записи «Шаракноца» (Гимнария), списанного в 1513 г. писцом-монахом Левоном, мы узнаем, что в Джимиле были церкви Сурб Аствацацин (Пресвятой Богоматери) и Сурб Хач (Святого Креста), относившиеся к Амшенской епархии. Недостаток информации восполняется и данными из османских реестров переписи населения и налоговых реестров. В них проливается свет на административную, этнорелигиозную, демографическую и налоговую политику, проводимую Османской империей, а также содержится обширный языковой материал для лингвистов, предметом изучения которых являются топонимы и имена собственные.

Анализ османских реестров переписи населения и налоговых реестров за 1520/30, 1554, 1556, 1681/82, 1853, 1856 годы позволил восстановить картину административного статуса и демографического состава села Джимил. Перечень имен армянских налогоплательщиков, включенных в упомянутые реестры, свидетельствует о том, что Джимил со своим многочисленным армянским населением был неделимой частью области Амшен и сумел сохранить национальную идентичность до конца XVII века. Вследствие осуществленной в первые тридцать лет XVIII века османской политики исламизации от христианской веры отступилось и население Джимила и, как следствие, стало туркоязычным. В их диалекте турецкого языка, однако, и сегодня сохранились армянские слова, в частности, топонимы. В данное исследование вошли также сведения, содержащиеся в путевых заметках профессора Карла Коха (Германия), побывавшего в Амшене в 1843–1844 гг.

Филологический журнал 2020 № 2 Историко-филологический журнал

Восстановление обобщающей картины села Джимил на основе источниковедческого анализа восполняет отсутствующие страницы истории области Амшен.

Лусине Саакян – к. филол. н., доцент кафедры туркологии ЕГУ, заведующая отделом армяно-османских связей Института арменоведческих исследований ЕГУ. Научные интересы: историческая демография Армении, топонимика, этнополитика Османской империи, история Амшена, диалектология, Армянский вопрос и Геноцид армян. Автор 5 монографий, около 50 статей и публикаций. lkhastur@yahoo.com, lsahakyan@ysu.am

THE FAMOUS VILLAGE OF TCHMIL/JIMIL OF THE REGION OF HAMSHEN IN ARMENIAN AND FOREIGN SOURCES

LUSINEH SAHAKYAN

Summary

Key words: Hamshen, Khakhtiq, Tchmil/Jimil, colophon, Ottoman register of population census, proper names, toponyms, manuscript, Islamized.

The region of Hamshen, situated in the mountainous areas of the land of Khakhtiq, which outlined the northwest boundary of Great Armenia, was one of the components of the Armenian statehood and played a prominent role in our history.

One of the famous villages of the Hamshen region was the Armenian village of Thcmil/Jimil on the slope of Demir dagh – Mountain of Iron (since ancient times the terrain had been known for its iron mines). The sources provide scarce information about this settlement. Thus, from the colophon in the "Sharaknots" (Hymnary), copied by monk Levon in 1513, we learn that in Jimil, there were Churches of Surb Astvatsatsin (Holy Mother of God) and Surb Khach (Holy Cross), related to the Diocese of Hamshen. The lack of information was partially compensated by the data from the Ottoman census and tax registers. They shed light on the administrative, ethnic, religious, demographic and tax policies, pursued by the Ottoman Empire. The registers also contain ample material for the scholars who focus on the study of place and proper names.

The analysis of the Ottoman census and tax registers of the years of 1520/1530, 1554, 1556, 1681/82, 1853, 1856 made it possible to restore the administrative and demographic situation in the village of Jimil. The list of Armenian tax-payers' names in said registers points to the fact that Jimil with its numerous Armenian population, as indivisible part of Hamshen, had been able to maintain its national identity up to the end of the 17th century. In the first three decades of the 18th century, however, due to the Ottoman policy of Islamization, the dwellers of Jimil underwent conversion and over time changed their language

to a local dialect of Turkish, having only preserved some Armenian words, place names in particular.

The paper also contains information gathered from the traveler's notes by Professor Karl Koch (Germany), who journeyed through Hamshen in 1843-1844.

The restoration of a comprehensive picture of the village of Jimil based on the analysis of available sources fills the gap in knowledge about the history of the region of Hamshen.

Lusineh Sahakyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor (YSU), Head of the Department of Armenian-Ottoman Relations of the YSU Institute of Armenian Studies. Scientific interests: historical demography of Armenia, toponymics, ethnopolicy of the Ottoman Empire, history of Hamshen, dialectology, the Armenian Cause and the Armenian Genocide. Author of 5 monographs, about 50 articles and publications. lkhastur@yahoo.com, lsahakyan@ysu.am

ՀԱՐԱԲԵՐՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՇՐՋՈՒՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

ԼԱԼԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ շարահյուսական կառուցատիպ, հետադաս շարադասություն, խնդիր-լրացում, հարաբերական բառեր, հարաբերյալներ, երկրորդական նախադասություն, նախադասության տրոհված անդամներ:

Նախաբան

Հին հայերենի շարահյուսական մակարդակում նախադասությունները կառուցվածքային որոշակի յուրահատկություններ են դրսևորում. ինքնուրույն ու թարգմանական երկերում հանդիպում են շարադասության չրջուն կառուցատիպեր, տրոհված անդամներով նախադասություններ, լրացումների՝ թե՛ նախադաս և թե՛ հետադաս կիրառություններ, անվանական ու ղերբայական նախադասություններ[1], պարզ նախադասության տարատեսակ կառուցվածքներ[2] և այլն:

Նախադասությունների շարահյուսական յուրահատկությունները մասնավորապես վերաբերում են հին հայերենի շարադասական այն կաղապարներին, որոնց բաղադրիչները հանդես են գալիս չրջուն շարադասությամբ: Շրջուն շարադասությունը, սակայն, չպետք է ըմբռնել նախադասության անդամների դիրքային փոփոխության կամ դիրքային տարբերակների տեսակետից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հին հայերենի մակարդակում հանդիպում են որոշակի կառուցատիպի նախադասություններ, որոնք զգալիորեն տարբերվում են նախադասությունների ընդունված (կամ մեզ դիտականորեն ծանոթ) շարադասական կաղապարներից: Հարցը մասնավորապես առնչվում է այն բարդ ստորադասական նախադասություններին, որոնց արտահայտության պլանում հարաբերական բառերը, որոնք պետք է գետեղված լինեին գլխավոր նախադասությունների մեջ, սակայն գտնվում են երկրորդական նախադասություններում՝ այդպիսով ցուցաբերելով տրոհման կամ չրջուն շարադասության յուրահատուկ դրսևորումներ: Այդպիսի կառուցատիպի նախադասությունների ուսումնասիրությունը որոշակիորեն կարող է համալրել հին հայերենի շարադասական կաղապարների դիտական նկարագրությունը:

---

* *Ներկայացվել է 18. III. 2020 թ., գրախոսվել է 23. III. 2020 թ., ընդունվել է տպագրության 03. VI. 2020 թ.:*

[1] *Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 350–351, 369–370:*

[2] *Ս. Հայրապետյան. Գրաբարի շարադասությունը, Երևան, 2005:*

Հարաբերյալների և հարաբերական բառերի շրջուն շարադասությունը

Հին հայերենին հատուկ շարահյուսական այդ կառույցների հարցը կարելի է լուծել դրանց արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննությամբ միայն[3]. դրանք կարելի է վերլուծել ըստ հետևյալ մեկնակետերի.

1. ըստ հարաբերական բառերի տեսակի և արտահայտության պլանի.

ա) իբրև հարաբերականներ՝ կիրառվում են որ, ուր, ուստի այլ բառեր,

բ) հարաբերականները հանդես են գալիս ուղիղ (որ) կամ թեք ձևերով (զորմէ, որով) և այլն,

2. ըստ հարաբերյալ բառերի շարադասական դիրքի.

ա) գլխավոր նախադասության հարաբերյալները գտնվում են երկրորդական նախադասության մեջ,

բ) հարաբերյալները հաջորդում են միջադաս նախադասությանը:

Կանոնավոր շարադասության դեպքում սովորաբար հարաբերյալներին հաջորդում են երկրորդական նախադասության համապատասխան հարաբերական բառերը[4]: Հմմտ. «Առաքեալքն արբուցին տիեզերաց երկուք բաժակօք՝ որք կամեցան ըմպել զինչ կամեցանն» *(Ագաթ., 254).* (առաքեալքն .... որք)*:* «Նա և նոքին իսկ, որ չարքն կարծին անմտաց, երբէք երբէք օգտակար լինին և զերծուցիչք ի մահուանէ» *(Եզն., 63).* (նոքին ... որ)*:* «Եթէ բազումք և հոլովք, որք յենթակայէ միայնոյ են... ոչ զոն կատարեալք» *(Անյ., 48).* (բազումք և հոլովք ... որք)*:*

Հին հայերենի թարգմանական և ինքնուրույն մատենագրական երկերում հանդիպում են նաև այնպիսի նախադասություններ, որոնց արտահայտության պլանում երկրորդական նախադասության անդամները երբեմն միջարկված են մեկ այլ երկրորդական նախադասությամբ կամ որոշ դեպքերում գլխավոր նախադասության անդամները զետեղված են երկրորդական նախադասություններում: Հմմտ. «Զիա՞րդ պաշտիցեմք զաբեգակն, որ մերթ կոչի իբրեւ զծառայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ» *(Եզն., 14): Այստեղ* «առ ի սպասն հասանելոյ» *պարագայական կապակցությունը միջարկվել է* «յոր կարգեցաւ» *երկրորդական նախադասությամբ, որ հանդես է եկել միջադաս չարադասությամբ: Հմմտ. նաև՝* «Բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արուեստիւք» *(Եղ., 101): Փխն.՝* «Բազումք ի ձէնջ լաւագոյնք էք արուեստիւք, քան զիս»*:*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստվածաշնչի թարգմանական գրքերում[5] և հին հայերենի ինքնուրույն մատենագրական եր-

[3] *Լեզվական միավորների քննության հարաբերակցական եղանակն առաջարկել և կիրառել է Գ. Ջահուկյանը. տե՛ս նրա «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», 1974:*

[4] *Տե՛ս Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 205–206: Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան. Գրաբարի դասագիրք, Երևան, 2004, էջ 297–298:*

[5] *Քննության բնագիր ենք ընտրել Հայաստանի աստվածաշնչային ընկերության 1997-ին հրատարակած մատյանը: Բնագրային օրինակներն ըստ «Հա-*

կերում գլխավոր նախադասության հարաբերյալները (խնդիր-լրացումները) գտնվում են երկրորդական նախադասությունների մեջ կամ միջարկված են լինում այլ նախադասություններով. այսինքն՝ հարաբերականները նախորդում են հարաբերյալ բառերին[6]:

Համեմատենք հետևյալ նախադասություններում հարաբերյալների և հարաբերական բառերի շարադասական յուրահատկությունները: Ընդ որում՝ հարաբերյալների շարահյուսական պաշտոնները տվյալ դեպքում էական դեր չեն կատարում: Համմտ. «Զի արժանի զգերութիւն ընկալցի, որ առ ի քէն քան զամենայն առաւել պատուական էր երկիրն» (Իմաս. ԺԲ. 7): Փխն.՝ «Զի արժանի զգերութիւն ընկալցի երկիրն, որ առ ի քէն քան զամենայն առաւել պատուական էր» (ենթակա): «Ո՞ւր է, որ ծնաւ արքայն Հրէից» (Մատ. Բ. 2): Փխն.՝ «Ո՞ւր է արքայն Հրէից, որ ծնաւ» (ենթակա): «Երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէս խնդրեցէր փոխանակաց քոց» (Բուզ., 174): Փխն՝ «Երթ, տուեալ լիցի քեզ զինչ, որ յինէս խնդրեցէր փոխանակաց քոց» (խնդիր): «Դագաղք էին, ասէ, ոսկեղէնք… և պատմուճանն որ մարմնովն՝ ոսկեթել» (Խոր., 190): Փխն.՝ «Դագաղք էին, ասէ, ոսկեղէնք… և պատմուճանն ոսկեթել, որ մարմնովն» (որոշիչ): «Քաջալ սարկաւագ, ուստի եպիսկոպոսն էր՝ յՈչտունեաց» (Եղ., 179): Փխն.՝ «Քաջալ սարկաւագ յՈչտունեաց, ուստի եպիսկոպոսն էր» (պարագա):

Նմանատիպ կառույցները վերլուծելու տարբեր մեկնակետեր կան. մենք նպատակահարմար ենք համարում դրանց ուսումնասիրությունը կատարել ըստ այն գործոնի, թե գլխավոր նախադասության հարաբերյալով արտահայտված որ անդամն է գտնվում երկրորդական նախադասության մեջ:

Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ համատիպ նախադասություններում հարաբերական բառերին գերազանցապես հաջորդում է գլխավոր նախադասության հարաբերյալի դեր կատարող ենթական[7]. նրան վիճակագրորեն հաջորդում են խնդիր և պարագա

մաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցւոյ» աշխատության (Երուսաղեմ, 1895):

[6] Հին հայերենի շրջանակներում այս իրողությանը մասնակիորեն անդրադարձել է Ա. Բագրատունին՝ կապված որ հարաբերական դերանվան հետադաս շարադասության հետ (Ա. Բ ա գ ր ա տ ո ւ ն ի. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 367): Վ. Առաքելյանը նկատում է, որ այս երևույթը հատուկ կարող է լինել միայն մշակութային գործընթաց ապրած որևէ գրական լեզվի կամ կարող է լինել թարգմանության հետևանք (Վ. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 124, 134): Մեկ այլ աշխատության մեջ նա այդ կարգի կառույցները դիտում է մեկ՝ երբայաբանության, մեկ՝ ժողովրդական խոսքային հավելադրության հատկանիշ (Վ. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 225): Ա. Աբրահամյանն այս կառուցատիպերը դիտարկում է որպես շրջուն շարադասության հետևանք (Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 417):

[7] Հին հայերենում ենթակայի դերով հարաբերյալ բառերի հետադաս շարադասության մասին տե՛ս Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հին հայերենի շարահյուսական մեկ կառուցատիպի մասին.— Շիրակի հայագիտական հետազոտութ-

լրացումները[8]: Այդպիսի նախադասությունների դիտվածքում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում այն կառույցները, որոնց հարաբերյալ բառերը կատարում են խնդրային գործառույթ:

Նման նախադասության հետագա հարաբերյալները հանդես են գալիս երկու դիրքով. մի դեպքում հարաբերյալը գտնվում է երկրորդական նախադասության մեջ, երկրորդ դեպքում՝ գլխավոր նախադասության հարաբերյալն ու մյուս անդամները միջարկվում են երկրորդական նախադասությամբ:

Դիտարկենք այդ դեպքերն առանձին-առանձին:

Ա) Գլխավոր նախադասության հարաբերյալը գտնվում է երկրորդական նախադասության մեջ

*Այս կարգի բարդ նախադասությունների արտահայտության պլանում հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունները միջադաս դիրք են գրավում՝ գտնվելով գլխավոր նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև: Համմտ. *«Եւ զայլ ամենայն որ այր կռուոյ յաշխարհի գտանէր, ցանեցի, ցրուեցի»[9]* (որ... այր կռուոյ)*: Փխն.՝ «Եւ զայլ ամենայն այր կռուոյ ցանեցի, ցրուեցի, որ յաշխարհի գտանէր»* (այր կռուոյ, որ)*: *«Դու որ գործէին զամբարտաւանութիւն զսովոմացիսն խայտառակեցեր»* (որ... զսովոմացիսն)*: Փխն.՝ «Դու խայտառակեցեր զսովոմացիսն, որ գործէին զամբարտաւանութիւն»* (զսովոմացիսն, որ)*:*

*Երբեմն երկրորդական նախադասության մեջ զետեղված հարաբերյալը, որ կատարում է ենթակայի պաշտոն, ուղիղ շարադասության դեպքում հանդես է գալիս խնդրի պաշտոնով: Համմտ. *«Դու որ յառաջ զանօրէնութիւնսն գործէին հսկայս ... ջնջեցեր»* (որ ... զհսկայս)*: Փխն.՝ «Դու ջնջեցեր զհսկայս, որ յառաջ զանօրէնութիւնսն գործէին»* (զհսկայս, որ)*:*

Հանդիպում են որոշակի կառուցատիպի նախադասություններ, որոնց երկրորդական նախադասությունները վերջադաս դիրք են գրավում գլխավոր նախադասության նկատմամբ. հարաբերյալները դարձյալ գտնվում են երկրորդական նախադասությունների մեջ: Համմտ. «Կորոյս զոր առնէր զփառս անմահութեան» (Եղ., 37). (զոր... զփառս)*: Փխն.՝ «Կորոյս զփառս, զոր առնէր անմահութեան»* (զփառս, զոր)*:*

Այսպիսի նախադասությունների շարքում որոշակի կշիռ ունեն այն կառուցատիպերը, որոնք սկսվում են հարաբերական դերանունով: Համմտ. «Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն և մարգարէքն, գտաք զՅիսուս» (Յովհ. Ա. 45). (զորմէ... զՅիսուս)*: Փխն.՝* «Յիսուս, զորմէ *գրեաց Մովսէս յօրէնսն և մարգարէքն, գտաք»* (զՅիսուս, զորմէ)*: *«Զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր, դա ի միում ամի կորոյս* զերկիրն ամե-

յունների կենտրոն, գիտական աշխատություններ, Գյումրի, 2020, № 1, էջ 199–210:

[8] Տրոհված պարագայական լրացումների քննությունն առանձին հոդվածի նյութ է:

[9] Ա. Բագրատունու վերը նշված աշխատության 367-րդ էջից բերված օրինակները տալիս ենք աստղանիշով:

նայն» (զոր... զերկիրն ամենայն)։ *Փխն.՝ «Զամենայն երկիրն, զոր նախ-նեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր, դա ի միում ամի կորոյս»* (զամենայն երկիրն, զոր)։ *«Զոր մարգարէն նշանակաւ զբանն խօսեցաւ և առակաւ, սոքա առեալ պարզ և ուղիղ ի վերայ վիմին մեկնեցին»* (զոր... զբանն)։ *Փխն.՝ «Զբանն, զոր մարգարէն նշանակաւ խօսեցաւ և առակաւ, սոքա առեալ պարզ և ուղիղ ի վերայ վիմին մեկնեցին»* (զբանն, զոր)։ *«Զոր բազում սպառնացաւ թագաւորն՝ զամենայն չարիսն կամի ան-ցուցանել ընդ աշխարհն Հայոց» (Եղ., 49)*. (զոր... զամենայն չարիսն)։ *Փխն.՝ «Զամենայն չարիսն, զոր բազում սպառնացաւ թագաւորն՝ կամի անցուցանել ընդ աշխարհն Հայոց»* (զամենայն չարիսն, զոր)։ *«Եւ որք խաչեցան յերկուց աւազակացն մին ապաշխարեաց»* (որք... յերկուց աւա-զակացն)։ *Փխն.՝ «Եւ յերկուց աւազակացն, որք խաչեցան՝ մին ապաշ-խարեաց»* (յերկուց աւազակացն, որք)։ *«Ապա զոր ունիցին ևս զբարիսն հանել ի նոցանէ»* (զոր... զբարիսն)։ *Փխն.՝ «Ապա զբարիսն, զոր ունիցին, ևս հանել ի նոցանէ»* (զբարիսն, զոր)։

Որոշակի դեպքերում հետադաս հարաբերյալը կարող է լինել նաև նախադրության խնդիր։ Հմմտ. «Լուաւ ի նմանէ վասն, որ ի Քրիստոս Յիսուս հաւատոցն» (Գործ. ԻԴ. 24). (որ... հաւատոցն)։ *Փխն.՝ «Լուաւ ի նմանէ վասն հաւատոցն, որ ի Քրիստոս Յիսուս»* (հաւատոցն, որ)։

Ելնելով այն հանգամանքից, որ հարաբերական բառերը հարաբե-րակցում են հարաբերյալներով արտահայտված խնդիր-լրացումներին՝ կարելի է այդ կարգի լրացումները դիտարկել տարբեր մոտեցումներով՝ միօրինակութիւնից խուսափելու նպատակով։ Ըստ այդմ՝ խնդրային լրացում հարաբերյալները կարելի է դիտարկել արտահայտման ձևի տեսակետից՝ առանձնացնելով բառային և բառակապակցական տե-սակները։

1) Բառային հարաբերյալներ

Բառային հարաբերյալները խնդիր-լրացումներ են, որոնք հանդես են գալիս ինչպես ուղիղ, այնպես էլ թեք հոլովներով։ Գրաբարագետ մատ-յաններն այս առումով հարուստ նյութ են պարունակում։ Այսպիսի կա-ռուցատիպերում հարաբերական բառերով կապակցվող երկրորդական նախադասութիւնները նախադաս դիրք ունեն։ Հմմտ. «Այլ զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք» (Եղ., 26). (զոր... օրէնս)։ *Փխն.՝ «Այլ զօրէնս, զոր տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք»* (զօրէնս, զոր)։ *«Զոր արդարև Բանն Աստուած հաստատէ» (Փարպ., 33)*. (զոր... զբանն)։ *Փխն.՝ «Զբանն, զոր արդարև Աստուած հաստատէ»* (զբանն, զոր)։ *«Զոր Բանն Աստուած հրեշտակօք բացեալ՝ յայտնէր զինքն հա-ւատացելոց յանուն նորա» (Փարպ., 93)*. (զոր... զբանն)։ *Փխն.՝ «Զբանն, զոր Աստուած հրեշտակօք բացեալ՝ յայտնէր զինքն հաւատացելոց յանուն նորա»* (զբանն, զոր)։ *«Զոր պատուական և մեծարգոյ համարէաք զմահն այնպիսի քան զամենայն գփառս և զմեծութիւնս աշխարհիս» (Փարպ., 105)*. (զոր... զմահն)։ *Փխն.՝ «Զմահն, զոր պատուական և մե-ծարգոյ համարէաք այնպիսի քան զամենայն գփառս և զմեծութիւնս աշ-խարհիս»* (զմահն, զոր)։ *«Զոր սկիզբն արարեալ էր բանիցն իւրոց առաջնոց՝ զնոյն յաճախեալ բազմացուցանէր» (Ագաթ., 103)*. (զոր...

զնոյն)*: Փխն.՝ «Զնոյն, զոր սկիզբն արարեալ էր բանիցն իւրոց առաջնոց, յաճախեալ բազմացուցանէր»* (զնոյն, զոր)*: «Որոց էութիւնքն զանազանք են, այսոցիկ և կատարելութիւնք զանազանք գոն» (Անյ., 80).* (որոց... այնոցիկ)*: Փխն.՝* «Այսոցիկ, որոց *էութիւնքն զանազանք են, և կատարելութիւնք զանազանք գոն»* (այսոցիկ, որոց)*: «Որովք կերպարանի աստուածայինն,* նոքիմբք *կերպարանի և կատարեալ իմաստասէրն» (Անյ., 82).* (որովք... նոքիմբք)*: Փխն.՝ «Նոքիմբք, որովք կերպարանի աստուածայինն, կերպարանի և կատարեալ իմաստասէրն»* (նոքիմբք, որովք)*: «Որ անպիտանք են՝* զնոսա *տանջանօք և կորստեամբ լցցէ» (Ագաթ., 266).* (որ... զնոսա)*: Փխն.՝* «Զնոսա, որ *անպիտանք են, տանջանօք և կորստեամբ լցցէ»* (զնոսա, որ)*:*

Որոշակի կառուցատիպերում երկրորդական նախադասութիւնները վերջադաս դիրք ունեն: Համմտ. «Երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէս խնդրեցեր փոխանակաց քոց*» (Բուզ., 174).* (որ... ինչ)*: Փխն.՝ «Երթ, տուեալ լիցի քեզ* զինչ, որ յինէս խնդրեցեր փոխանակաց քոց» (զինչ, որ...)*:*

Ինչպես երևում է վկայված բնագրային օրինակներից, թեք հոլովներով արտահայտված հարաբերյալները հանդես են գալիս սեռական, հայցական և գործիական հոլովներով. բնականաբար, նույն հոլովներով են արտահայտվում նաև համապատասխան հարաբերական բառերը:

2) Բառակապակցական հարաբերյալներ

Շրջուն չարադասութեամբ հարաբերյալներն արտահայտված են լինում նաև բառակապակցութեամբ: Բառակապակցական հարաբերյալները տարատեսակ դրսևորումներ ունեն. հանդիպում են ինչպես սովորական, այնպես էլ հատկանվանական կապակցութիւններով:

Սովորական կապակցութիւններով *հարաբերյալները զգալի տեսակարար կշիռ ունեն մատենագրական երկերում: Համմտ. «Ոչ այլ ինչ նշանակէ երեւութիցս չարժումն, եթէ ոչ* որ *ի Հայկազնեանն Տիրանայ հասանելոց է մեզ* բռնութեան յարձակումն*» (Խոր., 77).* (որ... բռնութեան յարձակումն)*: Փխն.՝ «Ոչ այլ ինչ նշանակէ երեւութիցս չարժումն, եթէ ոչ* բռնութեան յարձակումն, որ *ի Հայկազնեանն Տիրանայ հասանելոց է մեզ»* (բռնութեան յարձակումն, որ)*: «Եւ* զոր *արտաքոյ քան զամուրսն գտանէին* զբազմութիւն մարդկանն*, վարեցին ի գերութիւն» (Եղ., 126).* (զոր... զբազմութիւն մարդկանն)*: Փխն.՝ «Եւ* զբազմութիւն մարդկանն, զոր *արտաքոյ քան զամուրսն գտանէին, վարեցին ի գերութիւն»* (զբազմութիւն մարդկանն, զոր)*: «Զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և ի կայսեր դրանն և յայլ ազգս պատմեսցի* Համբաւն այն*» (Փարպ., 55).* (զոր... Համբաւն այն)*: Փխն.՝ «Համբաւն այն,* զոր *ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և ի կայսեր դրանն և յայլ ազգս, պատմեսցի»* (Համբաւն այն, զոր)*: «Զոր լուեալ արքային Հազկերտի* զկոտորումն լաւ արանց *... յահաւոր սուգ ընկղմանել խռովէր» (Փարպ., 73).* (զոր... զկոտորումն լաւ արանց)*: Փխն.՝ «Զկոտորումն լաւ արանց,* զոր *լուեալ արքային Հազկերտի ... յահաւոր սուգ ընկղմանել խռովէր»* (զկոտորումն լաւ արանց, զոր)*: «Զոր իբրև տեսեալ երանելեաց քահանայիցն Խորենայ և Աբրահամու զբռնաբար դահճաց արգելուլն զնոսա անդէն ի չահաստանին՝*

մեծապէս խռովեալք տրամէին» (Փարպ., 94). (զոր... զարդելուլն զնոսա)*: Փխն.՝ «Զարդելուլն զնոսա, զոր իբրև տեսեալ երանելեաց քահանայիցն Խորենայ և Աբրահամու զբռնաբար դահճաց անղէն ի չահաստանին՝ մեծապէս խռովեալք տրամէին»* (զարդելուլն զնոսա, զոր)*: «Յորս մատուցեալք դարբինքն ... և ոչ կարացին կտրել զստուարութիւն բևեռացն» (Փարպ., 92).* (յորս... զստուարութիւն բևեռացն)*: Փխն.՝ «Զստուարութիւն բևեռացն, յորս մատուցեալք դարբինքն ... և ոչ կարացին կտրել»* (զստուարութիւն բևեռացն, յորս)*: «Որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս» (Ագաթ., 448).* (որ... աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս)*: Փխն.՝ «Աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս, որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ»* (աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս, որ)*: «Զայս և այսպիսի ինչ, և որ ինչ այսմիկ նման էին բանք, խօսէր հանապազ» (Բուզ., 67).* (որ... զինչ բանս)*: Փխն.՝ «Զայս և այսպիսի զինչ բանս, և որ ինչ այսմիկ նման էին, խօսէր հանապազ»* (զինչ բանս, որ)*: «Զի որ զայն անունն ունիցին, մի՛ զտցի ոսկւոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք» (Բուզ., 85).* (որ... զայն անունն)*: Փխն.՝ «Զի զայն անունն, որ ունիցին, մի՛ զտցի ոսկւոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք»* (զայն անունն, որ)*: «Զայս և այսպիսի և որ ինչ նման է այս բանիւ, աւելի և բազում քան զսոյն խօսեցաւ» (Բուզ., 166).* (որ... զայսպիսի ինչ)*: Փխն.՝ «Զայս և զայսպիսի ինչ, և որ նման է այս բանիւ, աւելի և բազում քան զսոյն խօսեցաւ»* (զայսպիսի ինչ, որ)*: «Զայս և այսպիսի և որ ինչ նման են այսպիսի բանք, խօսեցաւ» (Բուզ., 166).* (որ... զայսպիսի ինչ)*: Փխն.՝ «Զայս և զայսպիսի ինչ և որ նման են այսպիսի բանք, խօսեցաւ»* (զայսպիսի ինչ, որ)*: «Զայս և այսպիսի և որ ինչ այս բանիւ նման են բանք, խօսեցաւ» (Բուզ., 218).* (որ... զայսպիսի ինչ)*: Փխն.՝ «Զայս և զայսպիսի ինչ և որ այս բանիւ նման են բանք, խօսեցաւ»* (զայսպիսի ինչ, որ)*:*

Մեր ուսումնասիրած բնագրերում հատկանվանական կապակցութիւնները *համեմատաբար սակաւ են: Օրինակներ՝ «Նախ եւ առաջին փոխարէն բարեացն հատուցանելով առնն զօրաւարի և իմաստնոյ, որ ի Հրէից՝ Շամբատայ Բագարատ» (Խոր., 104).* (որ... Շամբատայ Բագարատ)*: Փխն.՝ «Նախ եւ առաջին փոխարէն բարեացն հատուցանելով առնն զօրաւարի և իմաստնոյ, Շամբատայ Բագարատ, որ ի Հրէից»* (Շամբատայ Բագարատ, որ)*: «Եւ աղերսեալ որ ի Հրէից՝ Շամբատայ Բագարատ» (Խոր., 117).* (որ... Շամբատայ Բագարատ)*: Փխն.՝ «Եւ աղերսեալ Շամբատայ Բագարատ, որ ի Հրէից»* (Շամբատայ Բագարատ, որ)*: «Զոր մատնեալ Աստուծոյ ի ձեռս արանց զօրուն Վահանայ Մամիկոնէնի... զիշխանն Սիւնեաց զԳդիհոն ... ներէր խնայելով» (Փարպ., 152).* (զոր... զիշխանն Սիւնեաց զԳդիհոն)*: Փխն.՝ «Զիշխանն Սիւնեաց զԳդիհոն, զոր մատնեալ Աստուծոյ ի ձեռս արանց զօրուն Վահանայ Մամիկոնէնի... ներէր խնայելով»* (զիշխանն Սիւնեաց զԳդիհոն, զոր)*:*

Այս կարգի հետաքրքրական հարաբերյալների հարցը քննելիս անհրաժեշտ է որոշակի վերապահում ցուցաբերել. հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնց հարաբերյալները երկրորդական նախադասութիւններում ուղղականաձև ենթականեր են. բուն չարադասութեան դեպ-

քում դրանք «վերադառնում են» հայցական հոլովին: Հմմտ. «Զի որ միանգամ գոցին անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց՝ թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով» (Խոր., 341). (որ... գիրք): *Փխն.՝ «Զի զգիրս, որ միանգամ գոցին անդ ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց՝ թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով»* (զգիրս, որ): *«Ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որք ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք» (Խոր., 43).* (որք... նորատիք): *Փխն.՝ «Ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և զնորատիս, որք ի տէգ նիզակի կամակարողք»* (զնորատիս, որք): *«Եւ որ ի վերայ բազնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ» (Խոր., 152).* (որ... պատկերքն): *Փխն.՝ «Եւ զպատկերսն, որ ի վերայ բազնին և սեանն կային, ծածկեալ պատեցին եղեգամբ»* (զպատկերսն, որ):

Բ) Գլխավոր նախադասության հարաբերյալը մյուս անդամներից միջարկված է երկրորդական նախադասությամբ

Այդպիսի կառույցներում հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունները հանդես են գալիս ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ կառուցատիպերով: Նախադասության այդ կարգի կառուցատիպերը հին հայերենին բնորոշ իրողություններ են[10]*:*

*Այսպես, հետևյալ նախադասություններում երկրորդական նախադասությունները դիմավոր բնույթի են, որոնց արտահայտության գծային պլանում գտնվում են հարաբերյալները: Հմմտ. *«ի մէջ առնու և զոր Հիմենոս և Փիլետոս յարուցին ամբոխումն»* (զոր... ամբոխումն): *Փխն.՝ «ի մէջ առնու և զամբոխումն, զոր Հիմենոս և Փիլետոս յարուցին»* (զամբոխումն, զոր): **«Ոչ հնձես, զոր ոչ արկեր զսերմանս»* (զոր... զսերմանս): *Փխն.՝ «Ոչ հնձես զսերմանս, զոր ոչ արկեր»* (զսերմանս, զոր):

*Որոշ դեպքերում երկրորդական նախադասությունը միջադաս դիրք ունի: Հմմտ. *«Զոգեկանն՝ որ ի յառաքինութենէն է՝ պինդ պահիցեմք զազատութիւն: Փխն.՝ «Զազատութիւն ոգեկանն՝ որ ի յառաքինութենէն է՝ պինդ պահիցեմք»:*

*Անդեմ բնույթի երկրորդական նախադասությունները համեմատաբար սակավ են. հանդիպում է հետևյալ նախադասությունը. *«Ըստ մարգարէին, որ առ քահանայն Իսրայելի ամբաստանութեան»: Փխն.՝ «Ըստ մարգարէին ամբաստանութեան, որ առ քահանայն Իսրայելի»:*

Եզրակացություն

Հին հայերենի մատենագրական երկերի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ նրանցում հանդիպում են որոշակի կառուցատիպի բարդ ստորադասական նախադասություններ, որոնց արտահայտության պլանում հարաբերյալ բառերը հանդես են գալիս ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական նախադասությունների մեջ: Հին հայերենի շարադասության օրինաչափությունն այն է, որ հարաբերյալ բառերը նախորդում են հարաբերական բառերին, սակայն հան-

[10] *Է դ. Մ կ ր տ չ յ ա ն. Գրաբարի դասընթաց, Երևան, 2008, էջ 192–206:*

դիպում են զգալի թվով կառույցներ, որտեղ հարաբերական բառերն են նախորդում հարաբերյալներին: Այլ կերպ ասած՝ հարաբերյալ բառերը, հանդես գալով հետադաս դիրքում, կա՛մ գտնվում են երկրորդական նախադասության մեջ, կա՛մ գլխավոր նախադասության մյուս անդամներից տրոհված են լինում երկրորդական նախադասությամբ:

Հին հայերենի ինքնուրույն մատենագրական երկերում և Աստվածաշունչ մատյանում հետադաս (չրջուն շարադասությամբ) հարաբերյալները կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ. որոշակի յուրահատկություն են դրսևորում այն կառույցները, որոնց արտահայտության պլանում հարաբերյալները կատարում են խնդրային գործառույթ:

Անշուշտ, հին հայերենի մատենագրական երկերի և Աստվածաշունչ մատյանի համաժամանակյա ուսումնասիրությունը կարող է նորանոր իրողություններ ի հայտ բերել, սակայն դիտարկված բնագրային վկայությունները որոշակի գաղափար են տալիս խնդրի գործառույթով հարաբերյալ բառերի հետադաս շարադասության վերաբերյալ: Տվյալ իրողության տարժամանակյա ուսումնասիրությունը կարող է բացահայտել համատիպ կառույցների շարադասության պատմական փոփոխությունների ընթացքն ու այդպիսով ամբողջացնել հայերենի շարադասության ամբողջական գործընթացի դիտական նկարագրությունը:

Լալիկ Խաչատրյան – բ. գ. դ, պրոֆ., Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, դրաբար, հայոց լեզվի տեսություն, բառագիտություն, բառարանագրություն: Հեղինակ է 20 գրքի և շուրջ 160 հոդվածի:
lingualal51@mail.ru

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) Գրաբարի բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909:

Անյ. – Դ ա ւ ի թ Ա ն յ ա ղ թ. Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960:

Բուզ. – Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն. – Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. – Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Խոր. – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913:

Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփխիս, 1904:

Բ) Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997:

Իմաս. – Իմաստութիւն Սողոմոնի:

Մատ. – Աւետարան ըստ Մատթէոսի:

Յովհ. – Յայտնութիւն Յովհաննու:

Գործ. – Գործք Առաքելոց:

REFERENCES

Abrahamyan A. Grabari dzeṛnark, Yerevan, 1976 (In Armenian).
Aṛakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).
Arakelyan V. Hingerord dari hay targmanakan grakanutyan lezun ev voje, Yerevan, 1984 (In Armenian).
Avetisyan H., Ghazaryan Ṛ. Grabari dzeṛnark, Yerevan, 1976 (In Armenian).
Bagratuni A. Hayeren kerakanutivn i pets zargatselots, Venetik, 1852 (In Grabar).
Hayrapetyan S. Grabari sharadasutyune, Yerevan, 2005 (In Armenian).
Jahukyan G. Hayots lezvi patmutyun. nakhagrayin jamanakashrjan, Yerevan, 1987 (In Armenian).
Jahukyan G. Zhamanakakits hayereni tesutyan himunknere, Yerevan, 1974 (In Armenian).
Khachatryan L. Hin hayereni sharahyusakan mek karutsatipi masin.– Shirak hayagitakan hetazotutyunneri kentron, gitakan ashkhatutyunner, Gyumri, 2020, № 1 (In Armenian).
Khachatryan L., Tosunyan G. Grabari dasagirk, Yerevan, 2004 (In Armenian).
Mkrtchyan Ed. Grabari dasentats, Yerevan, 2008 (In Armenian).
Tadeos vardapeti Astvatsaturean Arapkertsvoy. Hamabarbaṛ hin ev nor ktakaranats, Jerusalem, 1895 (In Grabar).

ИНВЕРСИРОВАННЫЙ ПОРЯДОК ОТНОСИТЕЛЬНЫХ И СООТНОСИТЕЛЬНЫХ СЛОВ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛАЛИК ХАЧАТРЯН

Р е з ю м е

Ключевые слова: синтаксический структурный тип, постпозиционный порядок слов, дополнение, относительные слова, соотносительные слова, второстепенное предложение, обособленные члены предложения.

В синтаксическом строе древнеармянского языка особый структурный тип формируют те предложения, в которых соотносительные слова следуют за относительными словами.

Существуют разные аспекты анализа таких конструкций:

а) по относительным слова (**որ, ուր, ուստի**), б) по форме выражения относительных слов – прямой или косвенной (**որ, զորմէ, որով**).

Обособленные соотносительные слова имеют разный порядок:

а) соотносительные слова главного предложения находятся в второстепенном предложении, б) соотносительные слова следуют за постпозитивными предложениями.

Обособленные дополнения по форме разделяются на две группы: лексические и сочетаемые.

Исследование показывает, что конструкции с обособленными относительными словами древенеармянского языка встречаются не только в переводческих книгах Библии, но и в самостоятельных библиографических трудах.

Лалик Хачатрян – д. филол. н., проф., заведующий лабораторией лингвистических исследований АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: общая лингвистика, история армянского языка, древнеармянский язык, теория армянского языка, лексикология, лексикография. Автор 20 книг и около 160 статей. lingualal51@mail.ru

THE INVERSELY SYNTAX OF RELATIVE AND CORRELATIVE WORDS IN THE OLD ARMENIAN LANGUAGE

LALIK KHACHATRYAN

S u m m a r y

Key words: syntax structural type, postposition word order, object, relative words, correlative words, secondary members of sentence, dependant members of sentence.

In the syntax structure of Old Armenian language unique structural type have such sentences where relative words are put before correlative words. Certain uniqueness show such structures where correlative words have function of object.

There are different aspects to analize that structures:
a. according to relative words (**որ, ուր, ուստի**), b. according to form of relative words – direct and oblique (**որ, զորմէ, որով**).

Isolated correlative words have the following postions:
a. correlative words of principal clause are in dependant sentence, b. correlative words are put after interposition sentence.

Isolated correlative words from the point of view of form can be divided in two groups – lexical and word-combination.

The surveys show that structures with isolated correlative words in Old Armenian are testified or in translation books of the Bible either in independent bibliographical works.

Lalik Khachatryan – Doctor of Sciences in Philology, Professor, Head of Lingustics Research Laboratory of ASPU after Kh. Abovyan. Scientific interests; general lingustics, history of Armenian language, Old Armenian, theory of Armenian language, lexicology, lexicography. Author of 20 books and about 160 articles. lingualal51@mail.ru

ՈՒՇ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՁԵՌԱԳԻՐ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՐՈՒՑԱՐԱՆՆԵՐ. ԴՐԱՆՑ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բանալի բառեր՝ քերականական ղրուցարան, ձեռագիր, ուսումնական ձեռնարկ, չարահյուսական կապակցությունների ուսմունք, համաձայնության կերպեր, Մ. Սեբաստացի, Մ. Ջամչյան, Ստ. Սերեբրակյանց, Մ. Սալլանթյան:

Նախաբան

Հարց-պատասխանի (կատեխեզիս) ժանրային ձևը հայերենի քերականության մեջ դոյութիւն է ունեցել բավական երկար ժամանակ. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (ՄՄ) պահվող հնագույն նմանօրինակ քերականությունը թվագրվում է XIV–XV դարերով[1], հետագայի՝ հարց ու պատասխանի ձևով գրված քերականությունների թվագրումները հասնում են մինչև XIX դարի վերջը: Սրանք ուրույն կառուցվածքով երկեր են՝ քերականական ղրուցարաններ, որտեղ հարց ու պատասխանի միջոցով պարզաբանվում են քերականության հիմնական հասկացությունները, ընդ որում՝ տրված բացատրությունները սովորաբար հակիրճ են, օրինակները՝ առատ, այսինքն՝ կառուցվածքով և բովանդակությամբ հարմարեցված են ուսումնական նպատակի:

Քերականական ղրուցարանների ձեռագրագիտական տվյալները և դրանց աղբյուրները

Հայերենի քերականության պատմության մեջ այս քերականությունների ուսումնասիրությունը սահմանափակվում է XVII դարով[2]. հետագա՝ XVIII–XIX դդ.՝ հարցարան-քերականությունների առանձնահատկությունը որոշելու համար ուսումնասիրել ենք Մատենադարանում պահվող ուշ շրջանի այդօրինակ մի քանի քերականություններ, որոնք ավանդված են հետևյալ ձեռագրերով՝ ՄՄ 4335, 9616, 9770, 11101:

Սրանցից գրչության ժամանակով առաջինը ՄՄ 11101՝ XVIII դարի վերջերին Նոր Ջուղայում գրված փոքրածավալ գրչագիր է[3]: Մյուսները

---

* *Ներկայացվել է 19. V. 2020 թ., գրախոսվել է 20. V. 2020 թ., ընդունվել է տպագրության 05. VI. 2020 թ.:*

[1] *Տե՛ս Տ. Մանուկյան. Կատեխիզիսային քերականությունները XIV–XVII դդ. հայերեն ձեռագրերում.– Բանբեր Երևանի համալսարանի, 2013, 140.2, էջ 34–40:*

[2] *Տե՛ս Գ. Ջահուկյան. Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 329–350, նաև Ն. Ադոնց. Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ XX և այլն:*

[3] *Ձեռագիրը 2002 թ. իր անձնական հավաքածուից Մատենադարանին է նվիրաբերել իրանահայ բանասեր, Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի*

թվագրված են հաջորդ դարով. ՄՄ 4335-ը ժողովածու է, չունի հստակ հիշատակարաններ, գրչության հավանական ժամանակ է նշվում XIX դարը (1810 թ. հետո), վայր՝ էջմիածինը, ՄՄ 9616-ն ամբողջովին քերականական նյութ է, գրվել է 1864 թ. Աստրախանում, հեղինակի՝ Ստեփանոս Սերեբրակյանցի ձեռքով (ինքնագիր), ՄՄ 9770-ը նույնպես ժողովածու է՝ գրված 1881–1882 թթ. Գանձակում:

Բովանդակային բազմաթիվ համընկնումները հուշում են, որ այս քերականական հարց ու պատասխաններն ընդօրինակված են Մխիթար Սեբաստացու և Միքայել Զամչյանի քերականություններից կամ նշանակալի չափով հենվում են դրանց վրա՝ երբեմն զուգորդելով տեղեկություններ այլ քերականներից:

Սեբաստացին իր քերականությունը սկսել է խոսքի մասերի գործնական-ձևաբանական քննությամբ՝ տալով դրանց իրացման նկարագիրը, նաև ներքին բաժանումները, ապա հավելվածում գործնական իմացությանն օժտել է համառոտ տեսությամբ և այն կառուցել հարց ու պատասխանի ձևով. նման եղանակ ընտրվել է մանկավարժական նկատառումով, որպեսզի քերականական նյութն ու դրա առանձնահատկությունները «սերտողաբար տպաւորիցեն ի միտս ուսանողաց»[4]: Նույն կրթական նպատակով այն հետագայում անջատվել է մայր գործից և կիրառության մեջ դրվել իբրև առանձին ձեռնարկ. այդպիսի օրինակ է ՄՄ 11101 ձեռագիրը, որը Սեբաստացու քերականության առաջին մասի հավելվածի բառացի ընդօրինակությունն է, միայն թե ոչ ամբողջական՝ խոսքի մասերի շարադրանքը սահմանափակված է անվան և ղերանվան նկարագրությամբ[5]: Քանի որ եղած նյութի վրա որևէ ինքնուրույն հավելում կամ մեկնաբանություն չի արվել, ավելորդ ենք համարում դրա առանձին քննությունը:

Մ. Զամչյանը, ինչպես հայտնի է, քերականության իր համակարգման մեջ հետևել է Մ. Սեբաստացուն[6], նա նույնպես սկզբում տվել է քերականական միավորների գործնական-ձևաբանական նկարագիրը, բայց առանց ամփոփիչ հարցարանի: Նման հարց ու պատասխանային քերականություն ստեղծելու փորձ կարելի է համարել հաջորդ՝ ՄՄ 4335 ձեռագրի քերականական հատվածը, որը, ըստ էության, Զամչյանի բնագիրը մատուցում է Սեբաստացու մշակած կաղապարով:

Քերականական նյութը կոչվում է «Յաղագս հարցման զքերականութենէ», դասակարգված է ըստ սովորականի՝ դիր, վանկ, բառ, բան հաջորդականությամբ, սակայն չունի ավարտուն կառուցվածք, խոսքի մասերից տրված են միայն անունը, ղերանունը և, մասամբ, բայը: Հեղինակը, պահպանելով հարց ու պատասխանի ձևը, երբեմն նաև նախապատվություն տալով Մխիթարի ձևակերպումներին [օրինակ՝ «Զի՞նչ է

դրադարան-մատենադարանի, Թանգարան-տպարանի տնօրեն Լևոն Մինասյանը. տե՛ս Լ. Մինասյան. Յուցակ հին և նոր գրչագրերի.– «Հասկ» հայագիտական տարեգիրք (Անթիլիաս), 2001, Թ տարի, էջ 291–292:

[4] *Մխիթար Սեբաստացի. Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի (այսուհետև՝ Մ. Սեբաստացի), Վենետիկ, 1730, էջ 5:*

[5] *Համմ.՝ նույն տեղում, էջ 193–199:*

[6] *Տե՛ս Գ. Ջահուկյան. Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 306:*

բանն».— «Է չարմանութիւն բառից ...» (ՄՄ 4335, 76ա, հաջորդիվ կնշվեն միայն ձեռագրի էջերը)[7] և այլն], հիմնականում դիմել է Զամչյանի քերականութեանը և դրա հիմքով ոչ միայն ընդարձակել է նախնական նյութը, այլև ներմուծել է նոր հարցեր ու պատասխաններ:

Այսպես՝ ա) սահմանումներ՝ ըստ Զամչյանի. «[Անուն] է մասն բանի, որով իրն յորջորջի, այսինքն՝ է այնպիսի բառ, որով իրն ասի այս ինչ, կամ որ զէութիւն իրին նշանակէ» (76բ)[8], «[Գոյական] է, որ ինքնին վարի ի բանս և նշանակէ զիրս էականս կամ իբր էականս» (նույն տեղում)[9], «Ածականն է, որ ինքնին ոչ վարի ի բանս, այլ պահանջէ յարիլ ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութեան նոցա» (77ա)[10], «[Դերանուն] է մասն բանի, որ փոխանակ անուան դնի, և առ որոշեալ դէմսն վերաբերի» (80ա)[11] և այլն, բ) Սեբաստացու բնագրի համեմատությամբ՝ նոր հարցեր ու պարզաբանումներ. բանի կատարյալ և անկատար տեսակներ՝ «Զի՞նչ է կատարեալն».— «Կատարեալն է, որ անթերի յայտնէ զդատմունս մտաց», «Զի՞նչ է անկատար բանն».— «Իսկ անկատարն է, որ տայ զսկզբնաւորութիւն իմանալոյ զդատմունս մտաց, բայց ոչ աւարտէ» (76ա)[12], ածականի համեմատության աստիճաններ՝ «Զի՞նչ է դրականն».— «Դրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ կամ նուազեցուցանելոյ», «Զի՞նչ է բաղդատականն».— «Բաղդատականն է, որ բաղդատելով զմի իր ընդ այլում իրի ցուցանէ զորպիսութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ, քան զմիւսոյն», «Զի՞նչ է գերադրականն».— «Այն է, որ ցուցանէ զորպիսութիւն իրին յոյժ առաւելեալ կամ յոյժ նուազեալ, քան զայլոցն» (77աբ)[13], անվան քերականական կարգեր՝ «Զի՞նչ են պարագայք անուանց».— «Են այնք, որք յանուանս մտածին իբր հետևումն որպիսութեան նոցա» (77բ)[14], դերանվան թվի տեսակներ՝ «Զի՞նչ է եզականն».— «Այն է, որ իբրև զմի իր դիմաւոր նշանակէ», «Զի՞նչ է յոգնականն».— «Է այն, որ իբրև զբազում դիմաւորս նշանակէ» (81ա)[15] և այլն:

ՄՄ 9616 ձեռագրի հեղինակը, ինչպես նշվեց, հայտնի է՝ Ստեփանոս Սերեբրակյանց, քերականական նյութը կառուցված է հարց ու պատասխանի ձևով, որը ծավալվում է հայտնի աստիճանակարգությամբ՝ ըստ քերականության 4 մասերի, և ապա՝ բանի 8 մասերի. չարահյուսութ-

[7] *Համմտ.՝ Մ. Սեբաստացի, էջ 193, ըստ Միքայէլ Զամչեանի՝ «Է կարգաւոր չարամանութիւն բառից...» [Մ. Զամչեան. Քերականութիւն հայկազեան լեզուի (այսուհետև՝ Մ. Զամչեան), Վենետիկ, 1779, էջ 153]:*

[8] *Համմտ.՝ Մ. Զամչեան, էջ 156:*

[9] *Համմտ.՝ նույն տեղում:*

[10] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 157:*

[11] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 197:*

[12] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 154:*

[13] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 159–160:*

[14] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 164:*

[15] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 203:*

յանն անդրադարձ չի արվում: Աշխատանքը գրված է աշխարհաբարով, հիմնական հասկացություններին կից տրված են դրանց ռուսերեն համարժեքները, ինչպես՝ «վանկ (слогъ)», «*բառ* (слово)», «*անուն* (имя)», «*ընդունելութիւն* (причастіе)», «*միջարկութիւն* (междометіе)» *(ՄՄ 9616, 1աբ, հաջորդիվ կնշվեն միայն ձեռագրի էջերը) և այլն:*

Այս քերականական հարց ու պատասխանը կազմված է նույն սկզբունքով, ինչ՝ նախորդը, այսինքն՝ կառուցվածքով կրկնում է Մ. Սեբաստացու հավելվածը, բովանդակությամբ՝ հարում է Մ. Զամչյանի քերականությանը: Հեղինակը փորձել է աշխարհաբարով վերարտադրել վերջինիս գրաբար բնագիրը, սակայն չի ձգտել ճշգրիտ փոխադրության, այլ ազատ շարադրանքով, երբեմն դիմելով նաև կրճատումների՝ բավական պարզեցրել է աղբյուրի տեղեկությունները:

Հմմտ.՝ «Գիրն մին խազ է, որ պետք է նշանակէ տառ, իսկ տառն է մին ձայն կպնելի, որ միանում է ուրիշ ձայնի հետ ու հանում է կատարեալ ձայն» (1ա). «Գիր է գիծ ինչ, որ կարգեալ է նշանակել զտառն...: Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի և հեգելի, այսինքն այնպիսի հնչումն, որ յօդի ընդ այլում հնչման. և հեգեալ ընդ նմա՝ զկատարեալ ձայն հնչէ»[16]*: «Վանկ է մին ձայն, որ մին ճնշումով դուրս է գալի մարդոյ բերանից միաւորութեամբ ձայնաւոր ու բաղաձայն տառերի» (նույն տեղում). «Վանկն է ձայն ինչ՝ որ միով հնչմամբ ելանէ բերանոյ մարդոյն՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից»*[17]*: «Բառն է մին նշանական ձայն, այսինքն՝ այնպիսի ձայն, որ կարկուած է մին բան նշանակելոյ համար» (նույն տեղում). «Բառն է ձայն նշանական, այսինքն այնպիսի ձայն, կարգեալ է՝ առ ի նշանակել ինչ»*[18]*: «Դերանունն է մասն բանի, որ անունի տեղ է դրվում և դէպի մին որոշեալ դէմքին է վերաբերում» (4ա). «Դերանունն է մասն բանի՝ որ փոխանակ անուան դնի, և առ որոշեալ դէմս վերաբերի»*[19]*: «Բայ է մասն բանի, որ նշանակում է առնելութիւն, կրելութիւն ու լինելութիւն ժամանակի տակ որոշեալ դէմքով» (5ա). «Բայ է մասն բանի, որ գառս, կամ գկիրս, և կամ գլինելութիւնս իրաց՝ ընդ ժամանակաւ նշանակէ՝ ըստ որոշեալ դիմաց»*[20]*: «Ընդունելութիւնն է մասն բանի, որ նշանակում է մին գործողութիւն առնելութեան մէջ ու կամ կրելութեան մէջ ու կամ առնելութեան ու կրելութեան՝ ժամանակի տակ» (7ա). «Ընդունելութիւնն է մասն բանի, որ նշանակէ գիրն ի յառնելութեան կամ ի կրելութեան, և մերթ գառս կամ գկիրս ընդ ժամանակաւ»*[21]*: «Նախատութիւնն է մասն բանի, որ կպնելով անունին՝ ցոյց է տալի մի բանի պարագայն, որ անուն է նշանակում» (նույն տեղում). «Նախադրութիւն է մասն բանի, որ ի յարիլն յանուանս՝*

[16] *Նույն տեղում, էջ 146:*
[17] *Նույն տեղում, էջ 150:*
[18] *Նույն տեղում, էջ 152:*
[19] *Նույն տեղում, էջ 197:*
[20] *Նույն տեղում, էջ 208:*
[21] *Նույն տեղում, էջ 243:*

և և յայլ մասունս բանի իբր յանուանս, ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ»[22] և այլն:

Սկզբնաղբյուրի նյութն ազատորեն գործածելու, հեղինակային ոճ ձևավորելու միտումը ինքնուրույնության որոշ երանգ է հաղորդել նաև բովանդակությանը. օրինակ՝ իր «յորջորջելու» անվան հատկությունը Սերբերակյանցը փոխադրել է իբրև իր «զանազանելու» կարողություն. «Անունն բանի մասն է, որով մին բանն զանազանվում է, այսինքն՝ այնպիսի բառ է, որով մին բան ասվում է կամ էությունն մին բանի նշանակում է» (1բ). «Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի, այսինքն է՝ այնպիսի բառ, որով իրն անուանի՝ և ասի այս ինչ, կամ այսպիսի ինչ ...: Անունն է մասն բանի, որ զէությունն իրին նշանակէ»[23]: Կամ՝ ածականին վերագրել է «որքանությունն» նշելու հավելյալ հատկանիշ, հմմտ.՝ «Ածական անուն է, որ կպնելով գոյական անունին՝ յայտնում է նորա որպիսությունն, որքանությունն» (2ա). «Ածական... պահանջէ յարել ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութեան նոցա»[24]: Ջամչյանն այս հատկանիշը դնում է ածականի համեմատության աստիճանների նկարագրության մեջ՝ «Դրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ, կամ նուազեցուցանելոյ»[25]: Նույնը նաև՝ քննարկվող ձեռագրում. «Տրական ածական անուն է, որ ցոյց է տալի մին բանի որպիսութիւնն կամ որքանութիւնն պարզ՝ առանց աւելացնելոյ կամ պակասացնելոյ» (նույն տեղում). զրուցարանի հեղինակը, ըստ երևույթին, փորձել է մեկտեղել ածականի հատկանիշները՝ սպառիչ բնութագրություն տալու համար, սակայն, թերևս, հաշվի չառնելով, որ ածականի հատկության չափը կամ «որքանությունը» արտահայտվում է հենց համեմատության աստիճաններով:

Ջամչյանի քերականության չի առնչվում գոյականի սահմանումը. Սերեբրակյանցն այն բնորոշել է զուտ իմաստաբանական տեսանկյունից՝ իբրև զգայելի և ընկալելի իր. «Գոյական անունն է, որ նշանակում է ինչ, որ աչօք տեսնում, ձեռօք բռնում եմք ու մտօք ճանաչում եմք» (1բ): Գոյականն այս հատկանիշներով սահմանվել է նաև ժամանակի այլ քերականություններում[26]:

Այս քերականությունը, սակայն, բավարար խնամքով մշակված չէ, դրաբար բնագրի սխալ փոխադրության հետևանքով աղճատվել են որոշ արտահայտությունների նախնական իմաստները. օրինակ՝ վերջավորության «որպիսութիւն»՝ «պէսպէսութեան» փոխարեն. «Անուանց հոլովմունքներն են որպիսութիւններն վերջաւորութեան սեռական ու գործիական հոլովների» (4ա). «Հոլովմունք անուանց են պէսպիսութիւնք վերջաւորութեանց նոցա ի սեռական և ի գործիական հոլովս միանգա-

[22] *Նույն տեղում, էջ 250:*
[23] *Նույն տեղում, էջ 156:*
[24] *Նույն տեղում, էջ 157:*
[25] *Նույն տեղում, էջ 159:*
[26] *Տե՛ս Մ. Պօղոսեան. Հայկական քերականութիւն, Կ. Պոլիս, 1843, էջ 100, նաև Յ. և Դ. Արզանեանց. Քերականութիւն հայ համառօտ, Տփխիս, 1840, էջ 12:*

մայն»[27], կամ «բնական հոգի»՝ «բնական կրքի» փոխարեն. «Միջարկութիւնն է մասն բանի, որ բնական հոգւոյ կիրքն է յայտնում» (7բ). «Իսկ միջարկութիւնն ի միջի արկեալ ի բանս՝ յայտ առնէ զբնական կիրս հոգւոյն»[28] և այլն:

ՄՄ 9770 ձեռագրի քերականությունը թե՛ ծավալով, թե՛ հարցերի ընդգրկմամբ գերազանցում է նախորդներին և միակն է այդ չարքում, որ ունի չարահյուսության բաժին: Սա ևս իր հորինվածքով հիշեցնում է Մ. Սեբաստացու քերականության զրուցարանային հատվածը, քերականությունը սահմանված է զուտ գործնական առումով՝ իբրև ճիշտ խոսելու և գրելու արվեստ, ու կառուցված է դրից՝ բան առ ինչ ճանական նկարագրությամբ (ՄՄ 9770, 51ա և այլն, հաջորդիվ կնշվեն միայն ձեռագրի էջերը): Հեղինակն իր շարադրանքում զուգադրել է տեղեկություններ մի քանի քերականներից՝ հիմնականում Մ. Զամչյանից և Մ. Սալլանթյանից, միայն թե, ի տարբերություն սրանց, գրել է աշխարհաբարով և տեղ-տեղ տվել ինքնուրույն ձևակերպումներ:

Այսպես, Սալլանթյանի հետևողությամբ՝ գիրը ղիտված է նյութական՝ թղթի վրա գրելի միավոր, տառը՝ արտասանական միավոր. «Տառն է միևնոյն գիրն, որ եթէ թղթի վերայ գրվի, գիր կասվի, թէ բերանով հնչուի, տառ կասվի» (նույն տեղում)[29]: Դարձյալ ըստ Սալլանթյանի՝ բանը ներկայացված է երեք տեսակով՝ «նախադասութիւն, պարպերութիւն, ճառ», որոնք մյուս զրուցարան-քերականություններում բացակայում են. «Նախադասութիւնն է մի համառօտ խօսք բաղկացած մի քանի բառերից, որն որ միայն մէկ խորհուրդ կյայտնէ», «Պարպերութիւնն է խօսակցութիւն բաղկացեալ երկու կամ երեք նախադասութիւնից», «Ճառն է երկար խօսակցութիւն բաղկացեալ չատ պարպերութիւնից և կարգած մէկ խորհրդոյ և առարկայի վերայ» (51բ)[30]:

Այլ տեղեկություններ, որոնք նոր են՝ նախորդ զրուցարանների համեմատությամբ. ըստ Զամչյանի՝ գոյականը «նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս. թէ՛ բնականք լցեն, և թէ՛ արհեստականք. զորօրինակ, մարդ. մարմին. տունկ ևն. որք են էականք և բնականք: Աթոռ. թուղթ. տուն ևն. որք են էականք և արհեստականք: Գոյն. լոյս. հաւատ. քաղցրութիւն ևն. որք են իբր էականք և բնականք: Նկար. փորոք. չինութիւն ևն. որք են իբր էականք և արհեստականք»[31]: Այսինքն՝ առանձնացված է գոյականի երկու խումբ՝ «էական» և «իբր էական», որոնց հատուկ են գոյգ հատկանիշներ՝ «բնական» և «արհեստական»: Քերականության հեղինակը սրանք համարել է առանձին տեսակներ և յուրովի մեկնաբանել, ընդ որում՝ «բնականը» սխալմամբ ընթերցելով «բանական». «Էականն է, որ կնշանակէ էացած, այսինքն՝ գոյացած նիւթաւոր և թանձրացեալ բառ,

---

[27] *Մ. Զ ա մ չ ե ա ն, էջ 190:*

[28] *Նույն տեղում, էջ 273:*

[29] *Հմմտ.՝ Մ ի ք ա յ է լ Ս ա լ լ ա ն թ ե ա ն. Քերականութիւն գրաբառ լեզուիս հայոց (այսուհետև՝ Մ. Ս ա լ լ ա ն թ ե ա ն), հ. Ա, Փոքր քերականութիւն, Մոսկվա, 1827, էջ 8:*

[30] *Հմմտ.՝ նույն տեղում, էջ 3:*

[31] *Մ. Զ ա մ չ ե ա ն, էջ 156:*

որն որ աչօք կտեսնենք և ձեռօք կշօշափենք, զոր օրինակ՝ մարդ, քար, տուն և այլն», «Իբր էականն է, որ կնշանակէ աննիւթ բառ, որ միայն մտօք կկարենք իմանալ, զոր օրինակ՝ հաւատ, յոյս, սէր, օրհնութիւն և այլն», «Բանականն է, որ ածանիցէ ստեղծագործուած, զոր օրինակ՝ մարդ, քար և այլն», «Արհեստականն է, որ մարդոյ ձեռով է արհեստագործուած, զոր օրինակ՝ տուն, աթոռ, զգեստ և այլն» (51բ–52ա): Ջամչյանի քերականութեան հիմքով են առանձնացված նաև թվականի տեսակները՝ «ընդարձակ» (մի), «դասական» (առաջին), «զատական» (միակ), «կրկնական» (կրկնապատիկ), «անձներական» (երկոքեան) (52բ–53ա)[32], ածանցավոր բայի «անցողական» տեսակը (գնացուցանիմ) (56բ)[33] և այլն:

Ինչպես նախորդ հարցարանում՝ այստեղ ևս սկզբնաղբյուրների նյութը երբեմն բավարար չափով մշակված չէ. «քանակական կամ մեծական» բառերը հեղինակը վերնագրում անվանում է անուն, չարադրանքի մեջ՝ ածական (52բ): Այս հակասությունը, հավանաբար, առաջ է եկել երկու աղբյուրների տեղեկությունների մեքենական համադրման հետևանքով. այդ բառերին կրկնակի անվանում է տալիս նաև Սալլանթյանը և դնում է ածականի տակ[34], իսկ Ջամչյանը սրանք դիտում է որպես անվան տեսակ և կոչում միայն «մեջական»[35]: Սրա տեսակները նկարագրելիս հեղինակն արդեն դիմում է Ջամչյանի բնորոշումներին. համմտ.՝ «Հարցականքն են, որ հարցման ձևով կվարին» (նույն տեղում). «Հարցականք են, որք հարցականապէս վարին»[36], «Վերբերականքն են, որ նմանութիւն մեջ բերելով կնշանակեն» (նույն տեղում). «Վերբերականք են, որք ի մէջ բերեն զբաղդատութիւն ինչ որպիսութեան կամ որքանութեան»[37] և այլն:

Շարահյուսությունը հավասարեցված է խոսքի մասերի համաձայնությանը՝ որպես կապակցությունների ուսմունք՝ դարձյալ ըստ Ջամչյանի[38]. համմտ.՝ «Մասանց բանի համաձայնութիւնքն են նրանց կապակցութիւնքը միմեանց հետ բան կամ խօսակցութիւն կազմելոյ համար» (59բ). «Համաձայնութիւնք մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս առ ի կազմել զբան»[39]:

Առանձնացնելով նույնքան կապակցություն, այսինքն՝ 8 տեսակ՝ ըստ խոսքի մասերի, հեղինակը, սակայն, սրանցից մի քանիսի կապակցելի եղրերն ամբողջությամբ չի տալիս, համմտ.՝ «բայը անուան հետ և ընդունելութեան հետ» (նույն տեղում). «բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութեան»[40], «ընդունելութիւն անուան հետ» (նույն տե-

[32] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 163–164:*
[33] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 216:*
[34] *Տե՛ս Մ. Սալլանթեան, էջ 16:*
[35] *Տե՛ս Մ. Ջամչեան, էջ 162:*
[36] *Նույն տեղում:*
[37] *Նույն տեղում:*
[38] *Գ. Ջահուկյան. Գրաբարի քերականության պատմություն, էջ 326:*
[39] *Մ. Ջամչեան, էջ 277:*
[40] *Նույն տեղում:*

դում). «ընդունելութեան ընդ ընդունելութեան, ընդ անուան և ընդ դերանուան»[41] և այլն:

Գոյականների համաձայնության կերպերը ևս ներկայացնում է՝ ինչպես Զամչյանը՝ ընդունելով «բացայայտիչ-բացայայտեալ», «յատկացուցիչ-յատկացեալ» և «խնդիր-խնդրեալ» զույգերը (59բ): Այսինքն՝ գոյականին նույնպես հատկացնում է խնդրառություն՝ պահպանելով սկզբնաղբյուր բնագրի եզրաբանությունը, քանի որ խնդիր պահանջում են բայանունները, դրանք, ըստ իրենց սկզբնական՝ բայական ձևի սեռային պատկանելության, լինում են «ներգործականահաղորդ», «կրաւորականահաղորդ», որոնք ստանում են «սեռի խնդիր», և «չեզոքականահաղորդ», որը ստանում է «բնութեան խնդիր» (60ա)[42]: Ածականների և գոյականների համաձայնության 6 կանոն է բերում՝ Զամչյանի թվարկածից մեկով պակաս, սակայն հիշատակում է միայն 3-ը՝ կրկնելով նրա ձևակերպումները. համմտ.՝ «Երբ ածական անուանքն կյետադասին գոյականացը, կհամաձայնին նրանց հետ թուով և հոլովով» (60բ). «Ածական անուանք յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ»[43], «Երբ ածական անուանքն նախադասվին գոյականացը, հասարակօրէն չեն համաձայնիլ նրանց հետ ո՛չ թուով և ո՛չ հոլովով» (նույն տեղում). «Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց, ո՛չ համաձայնին ընդ նոսա ո՛չ թուով և ո՛չ հոլովիւ»[44] և այլն: Շարահյուսության այլ հարցեր չեն քննարկվում, այսինքն՝ բաժինը թերի է նկարագրված:

Եզրակացություն

Այսպիսով, ուշ չրջանի՝ հարց ու պատասխանի եղանակով գրված քերականությունները տեսական մտքի առումով նշանակալի արժեք չունեն: Իհարկե, նկատելի են նաև ինքնուրույնության փորձեր, բայց հաճախ միայն ձևակերպումների մեջ, իսկ այն հատուկենտ մեկնաբանությունները, որոնք կարող են դիտվել իբրև հեղինակային, էական նորություն չեն բերում: Ուստի կարելի է միայն արձանագրել, որ այս գործերը հարազատ են իրենց ժանրային ձևին ու ստեղծվել են ըստ դրա պահանջների՝ եղած նյութը կաղապարի մեջ դնելու և մատչելի ներկայացնելու համար: Քերականությունը սխեմավորելու և խրատի պես ավանդելու այս ոճը առհասարակ պետք է համարել նմանօրինակ երկերի գլխավոր արժանիքը, քանի որ դրանք սովորաբար չեն պարունակում տեսական նորույթներ, այլ ընդամենը սեղմ ձևով վերարտադրում են հայտնի քերականությունները[45], այլ կերպ ասած՝ որոշակի միջավայրում, որոշակի հեղինակների վերաշարադրած ուսումնական ձեռնարկներ կամ դասագրքեր են:

---

[41] *Նույն տեղում:*

[42] *Համմտ.՝ նույն տեղում, էջ 295–305:*

[43] *Նույն տեղում, էջ 322:*

[44] *Նույն տեղում, էջ 325:*

[45] *Բացառություն է, թերևս, միայն Դավիթ Զեյթունցու՝ հարց ու պատասխանի ձևով չարադրած քերականությունը, որտեղ ձևաբանության առանձին*

Տիգրան Սիրունյան – բ. գ. թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի թարգմանական մատենագրության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ լատինաբան գրաբար, հայերենի քերականության պատմություն: Հեղինակ է 1 մենագրության, 14 հոդվածի:
tigran.sirunian@gmail.com

Տաթևիկ Մանուկյան – բ. գ. թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրագիտության, միջնադարյան գրականության և բանասիրության բաժինների ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ձեռագիր մատյաններ, հայերեն ձեռագիր քերականություններ: Հեղինակ է 20-ից ավելի հոդվածի: t.manukyan@matenadaran.am

REFERENCES

Adonts N. Erker, h. G, Yerevan, 2008 (In Armenian).
Arzaneants H. and D. Kerakanutiun hay hamarot, Tpghis, 1840 (In Grabar).
Chamchyan M. Kerakanutiun haykazean lezui, Venetik, 1779 (In Grabar).
Jahukyan G. Grabari kerakanutyan patmutyun, Yerevan, 1974 (In Armenian).
Jahukyan G. Kerakanakan ev ughghagrakan ashkhatutyunnere hin ev midjnadaryan Hayastanum, Yerevan, 1954 (In Armenian).
Manukyan T. Katekhizisayin kerakanutyunnere XIV–XVII dd. hayeren dzeragrerum. – Banber Yerevani Hamalsarani, 2013, 140.2 (In Armenian).
Minasyan L. Tsutsak hin ev nor grchagreri. – "Hask" hayagitakan taregirk (Antilias), 2001, T tari (In Armenian).
Poghosyan M. Haykakan kerakanutiun, K. Polis, 1843 (In Grabar).
Sallantyan M. Kerakanutivn grabar lezuis hayots, h. A, Pokr kerakanutivn, Moskva, 1827 (In Grabar).
Sebastatsi M. Kerakanutiun grabari lezui Haykazean seri, Venetik, 1730 (In Grabar).
Zeytuntsi D. Meknutyun kerakani, Yerevan, 1981 (In Armenian).

НЕСКОЛЬКО РУКОПИСНЫХ ГРАММАТИЧЕСКИХ РАЗГОВОРНИКОВ ПОЗДНЕГО ПЕРИОДА: ИХ ПРИРОДА И ИСТОЧНИКИ

ТИГРАН СИРУНЯН, ТАТЕВИК МАНУКЯН

Р е з ю м е

Ключевые слова: грамматический разговорник, рукопись, учебное пособие, обучение синтаксическим связям, виды согласования, М. Себастаци, М. Чамчян, Ст. Серебракянц, М. Саллантян.

Հարցեր մեկնաբանված են նորովի. տե՛ս Դ ա ւ ի թ Զ է յ թ ո ւ ն ց ի. Մեկնութիւն քերականի, Երևան, 1981:

Жанр «вопрос-ответ» в армянской грамматике существовал в XIV–XV веках и дошел до конца XIX века.

В Матенадаране им. М. Маштоца такие грамматики содержатся в следующих рукописях XVIII–XIX веков: M 4335, 9616, 9770, 11101. Эти грамматические вопросы и ответы взяты из грамматики Мхитара Себастаци и Микаэла Чамчяна, или в какой-то степени основаны на них, иногда объединяя информацию из других грамматик. Грамматическая часть из рукописи M 4335 – текст М. Чамчяна, снабженный шаблоном, разработанным М. Себастаци. Автор рукописи M 9616 известен как Степанос Серебракянц. Этот грамматический вопрос и ответ формируется по тому же принципу, что и предыдущий, то есть, повторяет схему М. Себастаци, по содержанию близок к грамматике М. Чамчяна. Грамматика из рукописи M 9770, как по объему, так и по охвату, превосходит предыдущие и является единственной в своем роде, она имеет раздел синтаксиса. Это напоминает разговорную часть грамматики М. Себастаци. Грамматика из рукописи M 11101 является буквальной копией приложения к первой части грамматики М. Себастаци, однако затрагивает не все части речи, а ограничивается лишь описанием существительного и местоимения.

Основное достоинство таких трудов следует рассматривать как схематическое представление и передачу их в виде уроков, поскольку они обычно не содержат теоретических нововведений, а лишь кратко воспроизводят известные грамматики.

Тигран Сирунян – к. филол. н., старший научный сотрудник отдела переводческой литературы Матенадарана им. М. Маштоца. Научные интересы: латинизирующий грабар, история армянской грамматики. Автор 1 монографии и 14 статей. tigran.sirunian@gmail.com

Татевик Манукян – к. филол. н., старший научный сотрудник отдела кодикологии, средневековой литературы и филологии Матенадарана им. М. Маштоца. Научные интересы: рукописи, грамматики в армянских рукописях. Автор более 20 статей. t.manukyan@matenadaran.am

SOME HANDWRITTEN GRAMMAR PHRASEBOOKS OF THE LATE PERIOD: THEIR NATURE AND SOURCES

TIGRAN SIRUNYAN, TATEVIK MANUKYAN

S u m m a r y

Key words: grammar phrasebook, manuscript, grammar textbook, teaching syntactic connections, aspects of concard, M. Sebastatsi, M. Chamchyan, St. Serebrakyants, M. Sallantyan.

The genre of "question-answer" in Armenian grammar existed in the 14-15th centuries and reached the end of the 19th century. The basic concepts in such grammars are explained using questions and answers.

Such grammars in Matenadaran named by M. Mashtots are preserved in the following manuscripts of the 18-19th centuries: M 4335, 9616, 9770, 11101. These grammar questions and answers are taken from the grammar of Mkhitar Sebastatsi and Mikael Chamchyan, or are based to some extent on them, sometimes combining information from other grammars. The grammar of the manuscript M 4335 is the text of M. Chamchyan, equipped with a template designed by Mkhitar Sebastatsi. The author of the manuscript M 9616, unlike others, is known as Stepanos Serebrakyants. This grammatical question and answer is formed on the same principle as the previous one, that is, it repeats the scheme of M. Sebastatsi, content belongs to the grammar of M. Chamchyan. The grammar from the manuscript M 9770, both in volume and in scope, exceeds the previous ones and is the only one in this series in which there is a section of syntax. This resembles the colloquial part of M. Sebastatsi's grammar. M 11101, which is a literal copy of the appendix to the first part of Mkhitar's grammar, only the composition is incomplete and part of the speech is limited to the description of the noun and pronoun.

The main advantage of these works should be considered as a schematic representation and their transfer in the form of lessons, since they usually do not contain theoretical innovations, but only briefly reproduce well-known grammars.

Tigran Sirunyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department of Translating Literature in Matenadaran named after M. Mashtots. Scientific interests: Latinizing Grabar, History of Armenian Grammar. Author of 1 monograph and 14 articles. tigran.sirunian@gmail.com

Tatevik Manukyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department Codicology, Department of Secular Literature and Philology in Matenadaran named after M. Mashtots. Scientific interests: Manuscripts, Grammars in Armenian manuscripts. Author of more then 20 articles.
t.manukyan@matenadaran.am

«ՀԱԳՈՒՍՏ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՆՇՈՂ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

Բանալի բառեր՝ միջին հայերեն, հագուստ, փոխառություն, գլխի ծածկոց, վերնազգեստ, ոտնաման, կտորեղեն, բառակազմություն, գրաբար, բարբառ:

Նախաբան

Հայոց լեզվի զարգացման ընթացքում կատարված բոլոր ձևափոխությունները տեղի են ունեցել՝ ա) ներքին, այսինքն՝ բնական ճանապարհով՝ իբրև արդյունք բնական զարգացման, բ) արտաքին, այսինքն՝ փոխառություններով՝ իբրև արդյունք օտար ազդեցությունների, և գ) անհատական ճանապարհով, այսինքն՝ գրական նորամուծությունների չնորհիվ: Հրաչյա Աճառյանը գրում է. « ... ամեն մի ձևափոխություն ունի իր բուն պատճառը՝ ներքին, արտաքին կամ անհատական, որոնց միջոցով էլ լեզվի պատմությունը կապվում է նույն ազգի քաղաքակրթության պատմության, քաղաքական պատմության և գրականության պատմության հետ»[1]:

Օտար լեզուների ազդեցությունը միջին հայերենի բառապաշարի վրա

Հայտնի է, որ մի շարք օտար լեզուների ազդեցությունը միջին կամ կիլիկյան հայերենի վրա բնական և անխուսափելի լեզվական երևույթ է եղել: Ա. Այտընյանը գրում է, որ IX–X դդ. գրական հուշարձաններում ի հայտ են եկել բազմաթիվ փոխառյալ, նորակազմ, իմաստափոխված բառեր[2]: Դա պայմանավորված էր քաղաքական, տնտեսական ու մշակութային մի շարք գործոններով. մի կողմից՝ կիլիկյան Հայաստանը մշտական շփման մեջ է եղել հարևան ժողովուրդների հետ, մյուս կողմից էլ՝ հայկական լեռնաշխարհում տարբեր ժամանակներում հաստատվել են օտար ժողովուրդներ՝ հույն, ասորի, հրեա, պարսիկ, արաբ, քուրդ, թուրքական ցեղեր և այլն՝ ներմուծելով իրենց լեզուն ու մշակույթը[3]: Ժողովուրդների տնտեսական և մշակութային շփումները

---

* *Ներկայացվել է 06. IV. 2020 թ., գրախոսվել է 17. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 03. VI. 2020 թ.:*

[1] *Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 7:*

[2] *Տե՛ս Ա. Այտընեան. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 142:*

[3] *Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, մաս Ա, Երևան, 1972, էջ 197–198:*

պատճառ են դարձել լեզվական միավորների փոխազդեցության, ինչպես նաև՝ օտար բառերի ներթափանցման միջին հայերենի բառային կազմ: Լեզվաբան Ղ. Հովնանյանն այդ շրջանում օտար բառերի ներթափանցման չափազանց մեծ քանակի պատճառը պատմական բնական իրողություն է համարում և ոչ թե «ճաշակի պակասության կամ նորասիրության» արդյունք[4]:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիլիկյան հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում դրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական ու միջնորդավորված փոխառությունները, որոնք արտացոլում են կյանքի տարբեր կողմերը: Դրանք կարելի է խմբավորել ըստ իմաստային-կիրառական ոլորտների, որոնցից մեկը «Հագուստ» իմաստային դաշտն է: Համապատասխան նյութերը քաղել ենք միջին հայերենով գրված աշխատություններից և միջին հայերենի բառային կազմն ընդգրկող բառարաններից: Ներկայացվում են միջին հայերենում փոխառված այն ձևաիմաստային միավորները, որոնք անվանվում են հագուստ, նաև հագուստի մաս, հանդերձանքին հարակից այլ հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, գործվածքը կամ հյուսվածքը: Նյութերը դասակարգել ենք ըստ իմաստային ենթախմբերի՝ հընթացս ներկայացնելով դրանց փոխառության աղբյուրները, փոխատու լեզվում և միջին հայերենում ունեցած իմաստները, հնչյունական առկա տարբերակներն ու լեզվական այլ առանձնահատկություններ:

Գլխի ծածկոց

Գլուխը հարդարելու, ծածկելու նպատակ կամ ծիսական խորհուրդ ունեցող գլխաշոր նշող փոխառություններից են՝

– պարսկերեն՝ փոչի (<pušidān) *«մետաքսե փայլուն գլխաշոր, փուչի» [«Գլխուն փոչին վար առեր, սև պոյին պատենք է ձևեր» (ՀԲ, 440)],* ախախճին[5] (<ārāğčin) *«թասակ գլխարկ (սովորաբար ասեղնագործ)»,* լաչակ[6] (<lāčāk) *«կանացի գլխաշոր»,* սարախուճ (<sarāğūǰ) *«գլխաշոր»,* սարքուլայ (<sar-kūlāh) *«գդակ»,* պէչայ//պէչայ *և այլն:*

Ինչպես նկատում ենք, նշված օրինակներից առանձնանում է «լաչակ, գլխաշոր» նշող պէչայ//պէչայ *(<պրսկ.* piče, *թուրք.* peče*) հնչյունատարբերակային զուգաձևությունը: Փոխատու լեզուներում գրանցված է չնչեղ խուլով ձևը՝ «Ես ալ ի դէմիկն ելայ՝ նեղ սօղախ ու խիստ դա-*

---

[4] Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ, Վիեննա, 1897, էջ 266:

[5] Բառերը և դրանց ստուգաբանությունները տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Ա–Դ, Երևան, 1971–1979, Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՍԲ), Երևան, 2010, Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Երևան, 2009, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, մաս Ա:

[6] Բոլոր բառերի համար բնագրային օրինակներ չեն նշվում՝ հոդվածը չծանրաբեռնելու նպատակով (օրինակները տե՛ս ՄՀԲ-ում):

լապայ. Պէչան ալ ի վեր տարաւ, ուներովն արաւ, թէ՝ Գնա» (ՆՔ, 123): Տվյալ դեպքում տեղի է ունեցել չ բաղաձայնի ձայնեղացում, և պէչայ ձևին զուգահեռ հանդիպում է նաև ջ չնչեղ ձայնեղով պէջայ տարբերակը:

Թուրքերենից կատարվել են հետևյալ փոխառությունները՝

– եաամայ (<yazma) «գլխի ծաղկակար թաշկինակ», թութուխ (<tutuk) «ծածկոց, շղարշ», չալմայ (<čalma) «փաթթոց (գլխին փաթաթելու երկար նուրբ կտոր)», պուրունճուկ (<büründcük) «թափանցիկ նուրբ գործվածք. շղարշ», քցպէ թերևս (<թուրք. kispet, kisve «ծածկոց, ծածկույթ. հագուստ») «կրոնավորի գլխարկ, գլխի ծածկոց», պօխտախ (<թթր. boğtağ «թաթար կանանց գլխարկ») «թաթար մեծավորի կանանց գլխարկ», ուռվիպաք (<ürpäk) «քող» և այլն:

Ունենք նաև աղլուխ (<aγlux, yaqioq)՝ «թաշկինակ, գլխաշոր» իմաստով փոխառություն, որն ունի մեկ այլ հնչատարբերակ՝ եաղլխ՝ ու>գաղտնավանկ ը-ի հնչյունափոխությամբ: Փոխատու լեզվում ևս բառը հնչատարբերակային է, և բառասկզբի ե-ի առկայությունը բացատրելի է թուրքերենի լեզվական օրենքներով. չի բացառվում ե-ի հավելման կամ կորստի իրողությունը:

Կան լեզուներ, որոնցից փոխառված բառերից հանդիպել ենք միայն մեկական օրինակ, ինչպես՝

– արաբերենից՝ մանդիլ (<արաբ., պրսկ. māndil) «գլխաշոր, վարշամակ» [«Եւ բացեալ զմանդիլն ցուցանէր» (ԽԿ, 194)],

– լեհերենից՝ քօլփաք «թասակ, գլխադիր»,

– ֆրանսերենից՝ չաբրուն «կրոնավորի գլխի ծածկույթ. վեղար»: Ֆրանսերենից կատարված չաբրուն բառանուշը հանդիպում է նաև չաբրոն հնչատարբերակով, որտեղ, հավանաբար, ու-ն ենթարկվել է պարզեցման:

Վերնազգեստ (արտահագուստ)

«Վերնազգեստ (արտահագուստ)» իմաստով փոխառություններ ենք հանդիպել հետևյալ լեզուներից՝

– պարսկերենից՝ պալափուշ (<bala-puš) «թիկնոց, վերարկու» [«Ամղան, վերարկու, կամ պալափուշ նկարէն» (ՌՀ)], մուշտակ (<մ.պ. muštak, նպրսկ. mušta) «կենդանիների մազոտ մորթուց կարված վերնազգեստ, քուրք» [«Ունի ծախու աղվոր մուշտակ» (ՀՄՀ, 288)]: Այս բառանունը գործածվել է նաև հնչյունափոխված տարբերակով (ու> գաղտնավանկ ը)՝ մշտակ. ի դեպ, այս հնչյունափոխված տարբերակը Արարատյան և Ղարաբաղի բարբառներում ունի բոլորովին այլ իմաստներ՝ «1. սալորի և դամբուլի սպիտակ գույն, չհասունացած անկորիզ պտուղը, որ ունի երկար ու տափակ ձև, 2. դեռևս չհատիկավորված կանաչ լոբի»:

– Թուրքերենից՝ եապաղ (<թուրք. espap <արաբ.) «չոր, զգեստ, հագուստ» [«Քան զասպաղ ի ծալն էի, նա տրկուկ տրկուկ քակեցայ» (ՀԵ, 159)], խաբդան (<qaftan) «կանանց երկար վերնազգեստ» [«Գացէք մեծ վարպետ բերէք, ազուրին խաբդան ձևեցէք» (ՀԲ, 424)], ուռուպա

(<թուրք. urba, ruba*<իտ.) «զգեստ, հագուստ» և այլն: Ունենք նաև փարաճիկ (<թուրք.* ferace *<արաբ.) փոխառություն՝ «կանացի չրջազգեստ» իմաստով: Այստեղ պետք է նկատել, որ գրավոր աղբյուրներում հանդիպում ենք նաև ֆարաճիկ տարբերակով, ինչպես՝ «Հագեր ես քիմխայ կապայ, ֆարաճիկ զարպապ սազեսազ» (ՆՔ, 187), ինչը վկայում է այն մասին, որ միջին հայերենում թեև արդեն փ-ի անցում էր տեղի ունեցել ֆ-ի, բայց դեռևս ֆ-ն ու փ-ն զուգահեռաբար գործառվում էին:*

– Արաբերենից՝ կապայ *(<արաբ., պրսկ.* qabā*) «1. հոգևորականի զգեստ, պարեգոտ, 2. ընդհանրապես՝ կանանց երկար զգեստ» [«Քանի՛ ու քանի՛ սաեմ. զիմ յարին կապան կարեցէք» (ՆՔ, 70, 99)],* խիլախ *(<արաբ., թուրք.* xīlaḫt*) «իբրև նվեր տրվող զգեստ, խալաթ», ս-չ բաղաձայնների հնչատարբերակներով՝* նասիճ//նաչիճ *(<արաբ., պրսկ.* nasīj*) «1. հյուսված, գործված, 2. հյուսակեն զգեստ՝ հագուստ» [«Է՞ր ես հագել դու նասիճ Ու նստել զինչ մէկ ի Նուին» (ՃրՔ, 128)],* ջուպայ//ճուպայ *(<արաբ.* ǰubba*, պրսկ.* ǰobbe*) «արևելյան տարազի երկար և լայն վերնազգեստ» [«Հագեր վալայ, վրան ջուպայ» (ՀԹ, 227), կամ՝ «Հովհաննէսին մայրն է, տըղայ հագեր վալայ վըրան ճուպայ» (Կե, 165)], բաղաձայնների (խ>հ) և ձայնավորների (ա>ի) հնչյունափոխությամբ՝* խալաթ//խիլաթ//հալաթ *(<արաբ., պրսկ.* xālǰāt*) «իբրև նվեր տրված թանկագին հագուստ» [«Երեսո նոցա խալաթ զգեստ արքայական» (ՊՃՄ, 86)] և այլն:*

Ներքնահագուստ

Մեզ հանդիպած «ներքնահագուստ» իմաստով փոխառությունները կատարվել են միայն պարսկերենից, ինչպես՝

– պարսկերենից՝ վալայ (<valāh) *«1. մի տեսակ բրդե կտոր, 2. կոշտ ու կոպիտ մազե ներքնազգեստ, 3. մի տեսակ մետաքսե կտոր՝ գործվածք» [«Անձիկն էր չապկի սովոր, աճապ ո՞նց հագաւ նա վալայ» (ՆՔ, 63)],* չմաթ *(<*šāmād *«նուրբ սպիտակ կտոր, որ գործ են ածում իբրև ծածկույթ քնելու ժամանակ, սավան») «բարակ կրծկալ, որ ծածկում են կանանց կուրծքը» և այլն:*

Ոտնաման

«Ոտնաման» նշանակությունն ունեցող փոխառությունները նույնպես սակավաթիվ են, ինչպես՝

– պարսկերենից՝ բաբուճ *(<*pā *«ոտք» և* pūš *«ծածկ») «անկրունկ կոշիկ, հողաթափ» [«Փայտէ բաբուճ մի հագեր է, որ բարձրութիւն երկու թիզ կայ» (Պատմ., 272)],* չարուխ *(<պրսկ.* čaroğ*, թուրք.* čarık*) «տրեխ», չմուշկ «ոտնաման»,*

– թուրքերենից հանդիպել ենք միայն մեկ օրինակ՝ ջըզմայ (<čizme) *«կոշիկ»:*

Հագուստի մաս

«Հագուստի մաս» իմաստով ունենք հիմնականում պարսկերենից, թուրքերենից, լատիներենից կատարված մի քանի փոխառություն, ինչպես՝

– պարսկերենից՝ փէշ (<päš) *«զգեստի քղանցք» [«Ցետ տանեմ զփէշ կապայիս» (ՆՔ, 70)],* փառչամ (<pārčām) *«1. զգեստի քղանցք, 2. գլխի մազերի հյուսածո փունջ, ցցունք», ձայնավորների՝ է>ա և ա>է հնչունափոխությամբ ունենք* քամար//քէմէր, քէմար *(<պրսկ.* kāmār, *թուրք.* kemer*)՝ «գոտի, մեջկապ» փոխառությունը:*

– թուրքերենից՝ եախայ (<yaka) *«օձիք» [«Գլուխն ի բաց և մեծ եախայ, սև չար մ՛ առեալ գլխոյն վերայ» (Պատմ., 271)],* տիւկմէ (<düğme) *«կոճակ, ճարմանդ» («Թևերուն տիւկմէ կարեցէք» [ԳԺՏ, 346)],* խուշախ (<ğušağ) *«գոտի»,* բուքլա *(<թուրք.* bukle *<ֆր.) «ճարմանդ»,*

– լատիներենից՝ կոպաղ (<copla, copula) *«գոտի, որից կախում են զենքը» [«Սքեմ է նոցա գրատք դիպակք և գաղտագէնք ի կոպաղս ոսկիս» (ՄԳԴ, 138)] և այլն:*

Կտորեղեն

Համեմատաբար մեծ թիվ են կազմում «կտորեղեն» իմաստով փոխառությունները՝

– ասորերենից՝ չուշփայ (<šūšeppā) *(եկեղ.) «սրբերի մասունքներ, խաչ կամ ավետարան փաթաթելու շոր մեկ այլ տարբերակում այ երկհնչյունը հնչյունափոխվել է է-ի, ինչպես՝* չուշփէ,

– հունարենից՝ կուկուլ (<kūkkūlos) *«մետաքս, մետաքսաթել»,*

– պարսկերենից՝ տիպարի *(<պրսկ., թուրք.* diba*) «նախշավոր մետաքսե կտոր» [«Ելներ նախշի ապուրշումնի… եկթայ վալայ, շար, տիպարի» (ՀԲՔ, 507)],* չալ (<šal) *«բրդե հասարակ և հաստ կտոր՝ գործվածք» [«Մէկին բեհեզ և ծիրանի, մէկին բրդէ չալ մի չանկնի» (ՃրՒ, 236)],* քիմխայ *(<պրսկ.* kāmxa, *թուրք.* kemha*) «1. մետաքսե նուրբ կտոր՝ գործվածք, 2. կապույտ լեղակի գույն» [«Հագեր ես քիմխայ կապայ» (ՆՔ, 85, 187)],* չամաթ (<šāmād) *«նուրբ սպիտակ արծաթաթել կտոր» [«Շապիկդ է չամաթ, պռկիկդ է չէրպէթ» (ՂՍ, 199)],* քթան (<kātan) *«1. (բսբ.) կտավազգիների ընտանիքին պատկանող բույս. կտավատ, վուշ, 2. կտավատի թելից գործած կտոր, կտավ, քաթան, 3. կտավե, քաթանե» [«Ջանջիլ քթան շապիք ունի, ջաղջեր ունի կարմիր մորթի» (ՀՄՀ, 268)],* այդպես նաև՝ թավթայ (<tāftan, tāfta) *«մետաքսե դիպակ, նրբադիպակ»,* բօղչէ (<boğče) *«քառանկյունի շոր՝ հագուստներ, կտորեղեն կապելու համար. բոխչա»,* սուսար (<susı) *«նախշեր ունեցող մետաքս կամ բամբակյա կտոր»,* կազի (<gazī) *«չղարչանման բարակ կտոր» և այլն,*

– թուրքերենից՝ չաթմայ (<čatma) *«մետաքսե գործվածքի տեսակ» [«Ջանուն ապըրչում ասեն, որ գործեն մախմուր և չաթման» (ԿԲ, 140բ)],* թօփ (<top) *«գործվածքի կտոր»,* չիթ (<čith) *«կտորի մի տեսակ»,* դէյիմ (<giyim (kiyim)*) «հագուստ, համազգեստ»,* չուլ *(չուլ)* (<čul) *«հնամաշ հագուստ» և այլն: Ձայնեղների խլացմամբ՝ դ>տ, և է>ա ձայնավորների հնչյունափոխմամբ ունենք՝* դօլպէնտ (<tülbent)

«բամբակե բարակ գործվածք»-տօլպանդ-տօլպանտ (<tülbent) *հնչատարբերակներով փոխառություն՝ «1. բամբակե նուրբ կտոր՝ գործվածք, մարմաշ, ապարոշ» իմաստներով,*

– արաբերենից՝ լատիֆայ *(<արաբ., թուրք.* ğadife*) «թավիշ» [«Ագռավն է հագեր. աթլաս ու քիմխայ. ի մէջքն է կապել ոսկի հայասայ, ի վերէն քարշեր կանաչ լատիֆայ» (ՎԱԱ, 334)],* կումաչ (<qumaš) *«1. ընտիր կերպաս, 2. չարժական գույք»,* ղումաչ (<qumaš) *«մետաքսե նուրբ կտավ՝ գործվածք, կերպաս»,* մախմուր (<maxmar) *«թավիշ, թավչյա կտոր»,* մեզար (<meþzār) *«քառակուսի կտոր՝ ավետարանը փաթաթելու և մաքուր պահելու համար»,* մուշախայ (<mušga, mišga) *«հին կտոր, լաթ կամ բամբակ» և այլն:* Սաֆ, սօֆ *(<արաբ.* ṣūf, *թուրք.* sof*) հնչատարբերակներով հանդիպում ենք մեկ այլ փոխառություն՝ «բրդյա նուրբ գործվածք՝ կտոր» իմաստով, ինչպես՝ «Նախ ու նասիֆ, քեմխայ ու սաֆ, կուլխտանիքն, որ դու հագար» (ՃրԴ, 479): Ջմռանանք, որ օ-ն՝ իբրև փակ հնչյուն, ձևավորվել է միջին հայերենում, այստեղից էլ՝ սօֆ հնչատարբերակի գործածությունը:*

«Հագուստ» իմաստային դաշտին վերաբերող այսպիսի բազմաթիվ փոխառություններ կարելի է գտնել միջին հայերենյան գրավոր աղբյուրներում ու բառարաններում, որոնք անընդմեջ համալրում են փոխառությունների շարքը, ինչպես՝ ռուփակ *(<պրսկ.* ru-pak*) «1. թաշկինակ, 2. ձեռքի կամ երեսի սրբիչ» [«Թաշկինակ. որով զքիրտն սրբեն, որ է վարշամակ, կամ մանտիլ, կամ ռուփակ, կամ դաստառակ, կամ քողղ» (ԲՀ)], այդպես նաև՝* տաստխմալ *(<պրսկ.* dāst-mal*) «թաշկինակ»,* փէշտամալ *(<թուրք.* peštamal*) «գոգնոց»,* փարթալ *(<թուրք.* partal*) «հին՝ հնամաշ հագուստներ, հնոտիք»,* փարթալ-փուրթալ *«հագուստեղեն», ինչպես նաև՝ ղ>խ, ր>ռ ձայնեղ բաղաձայնների խլացմամբ ունենք* եարաղ//եարախ//եառաղ *(<պրսկ.* yārağ*) փոխառությունը՝ «հանդերձանք, պատրաստություն» [«Ցըրիկ, զարթի՛ր ի խոր քնոյդ՝ եարաղ արա քեզ գնալու» (ՃրԴ, 310)] իմաստով և այլն:*

Հնարավոր է, որ այս կարգի փոխառություններից շատերը հնադույն ժամանակներից եղել են հայերենի բառապաշարում: Օրինակ՝ միջին հայերենում հանդիպող փոխառություններից մի քանիսը գրաբարում արդեն կան, ինչպես՝ միթր *(միջին հայերենում՝ միդր) «եպիսկոպոսական թագ, խույր»,* սանդալ *«առանց կրունկի ոտնաման, հողաթափ, մուճակ, մոյկ»,* չար *«մետաքսից թափանցիկ ու նուրբ գործվածք»,* ղենչակ *«չորի կտոր, որ օգտագործում են որպէս սփածանելի՝ ծածկոյթ. գոգնոց, կամ պաստառակալ, կամ սրբիչ»,* եմիփորոն *(միջին հայերենում՝ եմիֆօրօն) (եկեղ.) «խաչերով զարդարված երկար և լայն ուրար»,* վիռն//վիռոն *(եկեղ.) «փիլոն» և այլն*[7]*:*

Վերը նշված փոխառությունները միջին հայերենում իրենց ինքնուրույն արժեքով և հնչյունական ձևավորմամբ ենթարկվել են ածանցման ու բառաբարդման՝ կազմելով նոր բառամիավորներ, ինչպես՝

[7] *Տե՛ս Ռ. Ղ ա զ ա ր ե ա ն. Գրաբարի բառարան, հ. 1–2, Երևան, 2000:*

ա) ածանցավոր բառեր. մեզ հանդիպած ածանցավոր բաղադրութ-յունները միայն վերջածանցավոր են, ինչպես՝ պօխտախ+աւոր =պօխ-տախաւոր՝ «պոխտախ կրող, գլխարկավոր», ա>գաղտնավանկ ը-ի՝ ք[ա]թան+եղէն=քթանեղէն՝ «քաթանից պատրաստած՝ գործած, քա-թանե», ա ձայնավորի սղումով՝ լաչ[ա]կ+իկ=լաչկիկ՝ «նվազ. լաչակ-ի՝ գլխաչոր», այ երկհնչյունի սղումով՝ կապայ+աւոր=կապաւոր՝ «կապա հագած» և այլն: Ենթադրվում է, որ միջին հայերենում, բացի բառա-վերջի հիմնական շեշտից, եղել է նաև բառասկզբի վանկի ճայնավորի վրա ընկնող երկրորդական շեշտ, որի պատճառով էլ, հավանաբար, բառակազմության ժամանակ բառամիջի անգամ ուժեղ ճայնավորներն ընկնում են կամ հնչյունափոխվում են գաղտնավանկ ը-ի, ինչպես վերոնշյալ օրինակներում[8]:

բ) Բարդ բառեր՝ ա հոդակապով, ինչպես՝ ք[ա]թան+զգեստ=քթա-նազգեստ՝ «քաթան հագած, քաթանե կտորից զգեստ հագած», ք[ա]թան+գործ=քթանագործ՝ «քաթան՝ կտավ գործող արհեստավոր». այս կազմության մեջ դարձյալ երկու և ավելի ա լինելու պատճառով առաջին բաղադրիչի ա-ն հնչյունափոխվել է գաղտնավանկ ը-ի:

Անհոդակապ բարդություններ. պապուճ//բաբուճ հնչատարբերակ-ներից կազմվել է պապուճկար բարդությունը. դա ևս վկայում է այն մասին, որ միջին հայերենում ճայնեղները հիմնականում խլացել են:

-կար վերջնաբաղադրիչով կազմվել են մի քանի անհոդակապ բարդություններ, ինչպես՝ ջուպա+կար=ջուպակար՝ «ջուպա կարող», մուճակ+կար=մուճկար՝ «մուճակ կարող արհեստավոր, մուճակակար, կոշկակար», մուշտակ+կար=մուշտկար՝ «մուշտակ կարող արհեստա-վոր, մուշտակագործ»: Ինչպես նկատեցինք, վերջին երկու կազմութ-յուններում տեղի է ունեցել հնչյունների ամփոփում. իրար հաջորդող նույն վանկերից մեկը կրճատվել է: Կապայ+կար=կապակար՝ «կապա կարող, դերձակ» կազմության մեջ այ երկհնչյունը վերածվել է ա-ի:

Մեզ հանդիպել է միայն մեկ բարդածանցավոր բառ. կազ-ից՝ կազա-գործութիւն «կերպասագործություն, ոստայնանկություն»:

Ինչպես հայերենի զարգացման բոլոր փուլերում, այնպես էլ միջին հայերենում անվանական խոսքի մասերից (տվյալ դեպքում փոխ-առյալ բառերից) բայական մասնիկավորմամբ կազմվել են բայեր, ինչ-պես՝ խալաթ-ից՝ խալաթել՝ «խալաթ տալ, որևէ զգեստ ընծայել՝ նվիրել մեկին, մեծարել» իմաստով կամ՝ ա>գաղտնավանկ ը հնչյունափո-խությամբ՝ խլաթել տարբերակը, խիլայ-ից՝ խիլայել «զգեստ նվիրելով պատվել, ընծաներով մեծարել, խիլա ընծայել» և այլն[9]:

Վերոնշյալ օտար ձևույթ+մայրենի լեզվի ձևույթ կաղապարով կա-ռույցները Լ. Հովհաննիսյանը փոխառություններ չի համարում[10], սա-կայն դրանց ուսումնասիրությունը կարևորում է նրանով, որ քննութ-

---

[8] Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան. Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2017, էջ 97:

[9] Տե՛ս ՄՀՔ:

[10] Լ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 9:

յամբ ավելի լիարժեք է բացահայտվում օտար ազդեցությունների դերը փոխառու լեզվում:

Միջին հայերենում փոխառված հագուստի անվանումներից մի մասն այսօր բնորոշ է մեր գրական լեզվի երկու տարբերակներին:

Արդի գրական արևելահայերենում ու նրա խոսակցական տարբերակում գործածվում են՝ լաչակ, փեշ, մուշտակ, շալ, չմուշկ, քաթիան// քթան, գազ//կազ, չալմա (խսկց.), չիթ, խալաթ, կապա, սաֆ-ից է, հավանաբար, սաֆյան կազմությունը, որն ունի «1. նուրբ կաշի՝ այծի և ոչխարի մորթու վերամշակումով, 2. այդպիսի կաշվից կարված՝ պատրաստված» իմաստը, չուշփա//չուշպա, կուկուլ (ունի այլ իմաստներ, որոնցից մեկը՝ «կնգուղ»-ն է) և այլն[11]:

Արևմտահայերենում վերոհիշյալ փոխառություններից գործածվում են արախչի, լեչակ, չմաթ, կազ *(«նուրբ շղարշ» իմաստով),* մեզար *(«1. կանացի գոգնոց, 2. սփռոց, 3. ծածկոց» իմաստներով),* չուչփայ *(«1. մաքուր կտավի կտոր, որ դրվում է սկիհի տակ կամ ծառայում է այն մաքրելուն, 2. դաստառակ, 3. սփռոց» իմաստներով) և այլ բառանուններ[12]:*

Հայերենի տարածքային մի շարք բարբառներ միջինհայերենյան փոխառություններից պահել են բավական թվով բառեր, ինչպես՝ խլլա, չուչփա, արախճին, բաբուճ, լեչակ, չալ, չարուխ, չմուշկ, սարաղունջ// սարախուճ, վալա, փուչի//փոչի, չամաթ, կազ, չմաթ, փեշ, խալաթ, մանդիլ, ջուբա, ղումաչ, մախմուր, աղլուխ, թոփ, չալմա, ջղմա, չիթ, ջուլ *և այլն[13]:*

Եզրակացություն

Այսպիսով, «հագուստ» հասկացություն նշող մեր հավաքած օրինակները ցույց են տալիս, որ այս շրջանում կատարված փոխառությունների մեծ մասը կատարվել է պարսկերենից (28 բառ) և թուրքերենից (26 բառ): Փոքրաթիվ փոխառություններ կան արաբերենից (13 բառ), մեկական օրինակ՝ ասորերենից, հունարենից, ֆրանսերենից և լեհերենից: Դրանք բառակազմական ակտիվություն չունեն. հիմնականում հանդիպել ենք 4 ածանցավոր, 7 բարդ և 1 բարդածանցավոր բառ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

արաբ.— *արաբերեն*
բսբ.— *բուսաբանական*
եկեղ.— *եկեղեցական*
թթր.— *թաթարերեն*
թուրք.— *թուրքերեն*
իտ.— *իտալերեն*
խսկց.— *խոսակցական*

[11] *Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1–4, Երևան, 1969–1980:*

[12] *Տե՛ս Ռ. Ս ա ք ա պ ե տ ո վ ե ա ն. Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, 2011:*

[13] *Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1–7, Երևան, 2001–2012:*

մ.պ. – միջին պարսկերեն
նպրսկ.– նոր պարսկերեն
պրսկ.– պարսկերեն
ֆր.– ֆրանսերեն
ԲՀ – Բառգիրք հայոց, Ալիկօռնայ, 1698, Երևան, 1975:
ԳԺՏ – Մ. Աբեղյան. Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտուններ, Երևան, 1940:
ԽԿ – Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958:
ԿԲ – Կարապետ Բաղիշեցի. Ոտանաւորս ասացեալ է Կարապետ վարդապետէ, ի վերայ որդոցն Նոյի, որ բաժանեցին գաշխարհս Զ բաժին (Մաշտոցի անվ. Մատենադարանի № 33 ձեռագիր):
ԿԵ – Կոստանտին Երզնկացի. Տաղեր, Երևան, 1962:
ՀԲ – Ա. Զոպանյան. Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:
ՀԲՔ – Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979:
ՀԵ – Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958:
ՀԹ – Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր, Երևան, 1960:
ՀՄՀ – Ա. Մնացականյան. Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980:
ՂՍ – Ղազար Սեբաստացի (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3):
ՄԳԴ – Մխիթար Գոշ. Գիրք Դատաստանի, Երևան, 1975:
ՆՔ – Նահապետ Քուչակ. Հայրենի կարգավ, Երևան, 1957:
Պատմ. – Պատմութիւն Վենետիկ քաղաքին, Պատմութիւն Փարէզի և Վեննայի, Երևան, 1966:
ՊՖՄ – Պատմութիւն ֆարման մանկանն, Երևան, 1957:
ՎԱԱ – Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894:
ՖրԲ – Ֆրիկ. Բանաստեղծությունները, Երևան, 1941:
ՖրԴ – Ֆրիկ. Դիւան, Նյու-Յորք, 1952:

Լուսինե Ղամոյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ «հազուստ» իմաստային դաշտի քննություն, գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերություն, սխալ քերականություն: Համահեղինակ է 1 դրքի, հեղինակ՝ 1 մենագրության և չուրջ 20 հոդվածի:
lgamoyan@mail.ru

REFERENCES

Abadjyan A., Dilbaryan N., Yuzbashyan A. Hayots lezvi patmutyun, Yerevan, 2017 (In Armenian).
Ajaryan H. Hayeren armatakan bararan, h. A–D, Yerevan, 1971–1979 (In Armenian).
Ajaryan H. Hayots lezvi patmutyun, mas I, Yerevan, 1940 (In Armenian).
Aknarkner midjin grakan hayereni patmutyan, mas A, Yerevan, 1972 (In Armenian).

Aytenian A. Qnnakan qerakanutivn ashxharabar kam ardi hayeren lezui, Vienna, 1866 (In Armenian).
Djahukyan G. Hayeren stugabanakan bararan, Yerevan, 2010 (In Armenian).
Ghazaryan R., Avetisyan H. Midjin hayereni bararan, Yerevan, 2009 (In Armenian).
Ghazaryan R. Grabari bararan, h. 1–2, Yerevan, 2000 (In Armenian).
Hayots lezvi barbarayin bararan, h. 1–7, Yerevan, 2001–2012 (In Armenian).
Hovhannisyan L. Hayereni iranakan pokharutyunnere, Yerevan, 1990 (In Armenian).
Hovnanyan G. Hetazotutivnq nakhneac ramkorenin vray, Vienna, 1897 (In Armenian).
Jamanakakic hayots lezvi bacatrakan bararan, h. 1–4, Yerevan, 1969–1980 (In Armenian).
Saqapetoyean R. Arevmtahayeren-arevelahayeren nor bararan, Yerevan, 2011 (In Armenian).

ЗАИМСТВОВАНИЯ, ОБОЗНАЧАЮЩИЕ ПОНЯТИЕ «ОДЕЖДА» В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛУСИНЕ ГАМОЯН

Р е з ю м е

Ключевые слова: среднеармянский, одежда, заимствование, головные уборы, верхняя одежда, обувь, текстиль, словообразование, грабар, диалект.

В среднеармянском языке существует ряд иностранных слов (арабские, персидские, греческие, турецкие и т. д.), которые были заимствованы посредством письменного и устного общения – как прямого контакта с армянами, так и посредством культурных контактов с различными народами. Эти слова отражают разные стороны жизни, в частности, семантическое поле «одежда». Сюда входит много слов, обозначающих головные уборы, верхнюю одежду, нижнее белье, обувь, части одежды, текстиль. Большинство этих заимствованных слов были сохранены и использованы в диалектах, а некоторые вошли в литературный и разговорный лексикон восточноармянского и западноармянского языков.

Лусине Гамоян – к. филол. н., старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Г. Ачаряна НАН РА. Научные интересы: семантическое поле «одежда», взаимоотношения литературного и разговорного языков, неправильная грамматика. Соавтор 1 книги, автор 1 монографии и более 20 статей. lgamoyan@mail.ru

THE BORROWINGS DENOTING THE CONCEPT OF "CLOTHING" IN THE MIDDLE ARMENIAN LANGUAGE

LUSINE GHAMOYAN

S u m m a r y

Key words: Middle Armenian, semantic field of "clothing", borrowings, headgears, outerwear, underwear, shoes, part of clothing, textiles, word formation, Grabar, dialects.

There are a number of foreign words in the Middle Armenian language (from Arabic, Persian, Greek, Turkish, etc.), that were transmitted to the Armenian language through written and oral communication, both direct contact with Armenians, and through cultural contacts with various peoples. These words reflect different aspects of life, one of which is the semantic field "clothing". There are included many words indicating the meanings of headgear, outerwear, underwear, footwear, part of clothing, textiles. Most of these borrowings are preserved and used in dialects, another part has passed literary and spoken vocabulary of Eastern and Western Armenian languages.

Lusine Ghamoyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Institute of Language after H. Acharyan of the NAS RA. Academic interests: semantic field of "clothing", the relationship between literary and spoken languages, incorrect grammar. Co-author of 1 book, author of 1 monograph and more than 20 articles. lgamoyan@mail.ru

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (570 – 591 թթ.)*

ԼԻԶԱ ՔԱՐԻՄՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայ-բյուզանդական հարաբերություններ, Քաղկեդոնի 451 թ. ժողով, քաղկեդոնականություն, Հուստինոս II կայսր, Տիբերիոս կայսր, Մավրիկիոս կայսր, պարսկաբյուզանդական պատերազմ, Կ. Պոլսի 591 թ. ժողով, Հովհաննես Բագարանցի, Մովսես Եղիվարդեցի:

Նախաբան

Հայագիտության երախտավորներից Ե. Տեր-Մինասյանն՝ անդրադառնալով հայ-բյուզանդական հարաբերությունների էությանը, ընդհանրացված ձևով պնդում է. «... բյուզանդական թե՛ կայսրերը, և թե՛ հոգևոր պետերն ամեն անգամ, երբ հարաբերություն են ունենում հայերի հետ, իրենց անտեղի հավակնությունը միշտ առաջին տեղն են դնում՝ հայոց եկեղեցին «հերետիկոսությունից» փրկելու և «ճշմարիտ» (իմա՛ բյուզանդական) կրոնին դարձնելու»[1]: Հ. Բարթիկյանը պարզաբանում է. « ...այդ նկատառումով անհրաժեշտ է մի փոքր ավելի հանդամանորեն խոսել հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների մասին, քանզի նրանք պարզապես հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները աքողող մի վարագույր են սոսկ»[2]:

Այդ պնդումները հենված են այն պատմական իրողությունների ընդհանրացման վրա, որոնք տեղ են գտել Հայաստանի նկատմամբ VI դարի երկրորդ կեսին ֆինանսական ու ռազմական տեսակետից ուժաս-

---

** Ներկայացվել է 11. V. 2020 թ., գրախոսվել է 20. V. 2020 թ., ընդունվել է տպագրության 10. VI. 2020 թ.:*

[1] Ե. Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն. Հայոց եկեղեցին, Ս. Էջմիածին, 2014, էջ 105–106:

[2] Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Թեոփանես Խոստովանողը, նրա «Ժամանակագրությունը» և հայ-բյուզանդական հարաբերությունները VII–VIII դարերում. – Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13. Բյուզանդական աղբյուրներ, Դ, Երևան, 1983, էջ XXIX: Հեղինակը նաև հավելում է. «Բյուզանդիան չէր կարող նպատակներին հասնել, քանի դեռ հայ ժողովուրդը եկեղեցական առումով չէր ենթարկված իրեն և հանդես էր գալիս կայսրության որդեգրած քաղկեդոնական դավանանքի դեմ: Բյուզանդիային մնում էր բոլոր միջոցներով հաղթահարել միակամությունը Հայաստանում, հայ ժողովրդին դարձնել քաղկեդոնական: Եկեղեցուն ենթարկվելը նախապայման էր նաև քաղաքական ենթարկման: Եվ կայսրությունը ամեն միջոցներով դեռևս V դ. սկսած փորձեց իրականացնել իր նպատակները» (նույն տեղում):

պառ եղած և անանկացման եզրին գտնվող Բյուզանդական կայսրության վերաբերմունքում[3]*:*

Հայ-բյուզանդական հարաբերությունները Հուստինոս II կայսեր օրոք

Հայտնի է, որ Հուստինոս II կայսրը (565–578 թթ.), հրաժարվելով արտաքին թշնամիներից դրամով փրկագնվելու քաղաքականությունից, «իր իշխանության յոթներորդ տարում թեթևամտորեն խախտեց պարսիկների հետ կնքված դաշինքը»[4] *և դադարեցրեց 562 թ. պայմանագրով նախատեսված ամենամյա նպաստի վճարումը նրանց*[5]*:*

Անդրադառնալով Հուստինոս II կայսեր շրջանում ընթացող պարս-կաբյուզանդական պատերազմների վերլուծությանը՝ Լեոն մատնանշում է այն իրողությունը, որ «մեծ էր այդ պատերազմների ազդեցությունը հայ ժողովրդի վիճակի վրա, քանի որ Հայաստանն էր նրանց գլխավոր բեմը և ժողովրդական կյանքի մեջ շատ նշանավոր երևույթներ այդ պատերազմների ազդեցության տակ էր, որ ընդունեցին այս կամ այն ուղղությունը»[6]*: Եվ քանի որ Բյուզանդիան այլևս չուներ պահանջվող զինվորական ուժեր*[7]*, գործի դրեց իր փորձված դիվանագիտությունը և Պարսկաստանի դեմ ընդհանուր ճակատ կազմեց Միջին Ասիայից՝ թուր-*

---

[3] *Մանրամասները տե՛ս* Г. Острогорский. История Византийского государства. М., 2011, с. 123; Ѳ. Успенскій. Исторія Византійской Имперіи, т. I. СПб., 1912, с. 608; Н. Пигулевская. Византия и Иран на рубеже VI–VII веков. М.–Л., 1946, с. 58; A. Cameron. The Early Religious Policies of Justin II.–Studies in Church History. The Orthodox Churches and the West, vol. 13, Oxford, 1976, pp. 51–69; *նույնի՝* Early Byzantine Kaiserkritik: Two Case Histories. – Byzantine and Modern Greek Studies. Oxford, 1977, vol. 3, pp. 9–11; E. Stein. Studlen zur Geschichte des byzantinischen Reiches: vornehmlich unter den Kaisern Justinus II u. Tiberius Constantinus. Stuttgart, 1919, S. 1–55. *Տե՛ս նաև Վ. Իսկանյան. Հայ-բյուզանդական դաշինքը Պարսկաստանի դեմ (VI դար). – ՊԲՀ, Երևան, 1963, № 4, էջ 51, Կ. Գյուտերբոք. Բիւզանդիոն եւ Պարսկաստան եւ անոնց դիւանագիտական եւ ազգային-իրաւական յարաբերութիւնները Յուստինիանոս ժամանակ.– Ազգային Մատենադարան, ԿԲ, Վիեննա, 1911, էջ 151:*

[4] *Տե՛ս* Ф. Симокатта. История, кн. III, гл. IX. 3–4. М., 1957, с. 81. *Պատմիչը նաև հավելում է. «... դաշինքը խախտվեց և խզվեց կայսեր մեծ հիմարության պատճառով» (նույն տեղում, էջ 82):*

[5] *Տե՛ս* Е. Схоластик. Церковная история, кн. V, гл. 7. СПб., 2010, с. 352; Ф. Симокатта. *Նշվ. աշխ., գլ. IX. 10, էջ 82: Տե՛ս նաև Կ. Գյուտերբոք. Նշվ. աշխ., էջ 49, 144–145:*

[6] *Լեո. Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1967, էջ 199:*

[7] *Այդ փաստն է վկայում Գ. Օստրոգորսկին, երբ գրում է, որ Բյուզանդիան այլևս չէր կարողանում վարձկաններով համալրել իր բանակը և «Հուստինոս II-ը հարկադրված իր հայացքը դարձրեց դեպի Հայաստանի մարտական ժողովուրդը»* (Г. Острогорский. *Նշվ. աշխ., էջ 125): Համամիտ է նաև Է. Շտեյնը. տե՛ս* E. Stein. *Նշվ. աշխ., էջ 5–7:*

քերի[8] և Արևմուտքից՝ բյուզանդական ու դաշնակից ուժերի, այդ թվում՝ հայերին ներգրավելով: Ընդ որում, այդ պատերազմում «բյուզանդական դիվանագիտությունն իր հարձակման համար էլ ընտրում էր հին թատերաբեմը–Հայաստանը: Այս անգամ սկսողները, առաջին պատճառը հայերը պիտի դառնային, և այս առիթով Բյուզանդիան հանձն էր առնում մի դեր, որ իբրև դիմակ էլ չատ անգամ չէր երևացել նրա դեմքին, մանավանդ հայերի վերաբերմամբ: Այդ քրիստոնեության պաշտպանի և ազատիչի դերն էր (ընդգծումը մերն է.– Լ. Ք.)»[9]:

Թե ինչպիսին էր բյուզանդական քաղաքականության էությունը, կարելի է դատել Մենանդրոս պատմիչի տողերից, ով հաղորդում է թուրք խաքանի հետևյալ խոսքերը. « … հռոմեացիներդ բազում լեզուներ ունեք: … Պարզ ասած՝ չոյելով բոլոր ժողովուրդներին և հրապուրելով նրանց ճառերի փայլով ու հոգու նենգությամբ, դուք արհամարհում եք նրանց, երբ նրանք գլխով դժբախտության մեջ են ընկնում, իսկ դրանից օգուտ ստանում եք դուք՝ ինքներդ»[10]: VI դ. 70-ական թվականներին նման քաղաքականություն է դրսևորվել նաև հայոց նկատմամբ:

Եվագրիոս պատմիչը պարսկաբյուզանդական բախումների պատճառ է համարում այն, որ պարսկահայ «քրիստոնեական [հավատ] դավանողները, դաժան կերպով տառապելով պարսիկներից, … գաղտնի դեսպանություն ուղարկեցին Հուստինոս II-ի մոտ, աղաչելով իրենց ընդունել Հռոմի իշխանության տակ, որպեսզի կարողանան Աստծուն զոհեր մատուցել անվտանգության մեջ և առանց որևէ մեկի կողմից հարուցված արգելքի»[11]: Այդ տեսակետն են պաշտպանում նաև VI դ. մատենագիրները[12]:

---

[8] *Թուրք-բյուզանդական բանակցությունների մանրամասները տե՛ս* Византійскіе историки. Дексиппъ, Эвнапій, Олимпіодоръ, Малхъ, Петръ Патрицій, Менандръ, Кандидъ, Нонносъ и Ѳеофан Византіецъ. СПб., 1860, с. 418–422. *Կարծիք կա նաև, որ «եթէ Յուստինոս կարծած չըլլար, որ Պարսից դեմ պատերազմի մը միջոցին իբր դաշնակից պիտի ունենայ Թուրքերը, թերեւս խաղաղութիւնը աւրելը յապաղէր» (Կ. Գյութերբոք. Նշվ. աշխ., էջ 145):*

[9] Լեո. Նշվ. աշխ., էջ 199:

[10] Византійскіе историки, էջ 419: *Տե՛ս նաև* Ө. Успенскій. *Նշվ. աշխ., էջ 623–626:*

[11] Е. Схоластик. *Նշվ. աշխ., գիրք V, գլ. 7, էջ 351–352:*

[12] *Տե՛ս* Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. Եկեղեցական պատմություն.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8. Ասորական աղբյուրներ, Ա, Երևան, 1976, էջ 387–390: Հովհաննես Բիկլարացին նույնպես հավաստում է, որ Հուստինոս II-ի առաջին տարում հայ և իբերիացի ժողովուրդները, մերժելով կուռքերի պաշտամունք ընդունելու Խոսրովի սրբապիղծ հրամանը, բյուզանդահպատակություն ընդունեցին և «սեփական նահանգները հանձնեցին հռոմեացիներին, դա խախտեց հռոմեացիների և պարսիկների խաղաղության պայմանագիրը» [J. Biclarensis Abbas. Chronicon / Patrologiae cursus completus. Series Latina (accur. J.-P. Migne). T. LXXII. Parisiis,

Պատմագիտության մեջ, սակայն, վիճարկվում է վերոնշյալը[13]: Հիմքն այն է՝ ըստ Ասողիկ պատմիչի, ապստամբության պատճառն եղել է, որ Հայաստան գալով՝ Սուրենն մարզպանը «կալաւ զերկիրս մեր՝ յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց. զի չնայր ընդ կանայս ազատաց՝ ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ»[14]: Պարսից մարզպանների համար սովորական էր նաև հայերի ազատությունների սահմանափակումն ու երկրի կեղեքումը:

Տեղեկություններ են պահպանվել նաև այն մասին, որ մինչև ապստամբության սկիզբը Վարդան Մամիկոնյանը և հայոց ավագանին երկու անգամ «գաղտնի դեսպաններ են ուղարկել Հուստինոսի մոտ, խնդրելու նրա բարեկամությունը»[15]: Եվ, այդուհանդերձ, աներկբա է, որ «բյուզանդական դրդումներն առաջնակարգ դեր էին կատարել ապստամբական տրամադրություններ ստեղծելու մեջ ... »[16]: Միանգամայն բնական է նաև, որ «Հուստինոսը բարեսրտորեն ընդունեց [այդ դիմումը] և երբ արքայի կողմից առաջադրված մի շարք պայմաններ ամրապնդվեցին դաժան երդումներով, հայերը սպանեցին իրենց կառավարիչներին և հարևանների հետ, որոնց նրանք իրենց կողմը գրավեցին, ինչպես ցեղակիցներին, այնպես էլ օտարներին ողջ զանգվածով անցան հռոմեական իշխա-

---

1849, col. 863B. *Տե՛ս նաև Մ. ա ր ք. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001, էջ-սյուն 654–655]:*

[13] *Լեոն այդ կապակցությամբ գրում է.* «Մոռացվում էին մյուս բոլոր շարժումները՝ կրոնական պատճառն առաջ քաշելու համար, քանի որ միայն կրոնի հարցն էր, որ կարող էր ապստամբական լուրջ շարժում բորբոքել ամբողջ հայ ժողովրդի մեջ: *Թեև Սուրենի արածը դեռ մի ատրուշան կառուցելու պատրաստությունների հետու չէր գնում, բայց հայ հոգևորականությունն ու նրա հետ միացած նախարարությունն այդքանն էլ բավական համարեցին հռչակելու համար ամեն տեղ, թե պարսիկները կրոնական հալածանք են սկսել հայության դեմ (ընդգծումը մերն է.– Լ. Ք.)» (Լ ե ո. Նշվ. աշխ., էջ 201: Տե՛ս նաև* Н. П и г у л е в с к а я. Сирийская средневековая историография. Исследования и переводы. СПб., 2000, с. 293–296)*:*

[14] *Ս. Տ ա ր ա ն ե ց ի Ա ս ո ղ ի կ. Պատմութիւն Տիեզերական. – Մատենադիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար: Պատմագրութիւն երկու դրքով, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 692: Պատմիչը հավելում է նաև. «Նախ Դենչապուհ, որ զչնմոլութիւնն չատացոյց եւ զորմզդական հուրն վառեաց ի Ռչտունիս. եւ ստիպէր զՔրիստոնեայս կրակի երկիր պագանել, յաղագս որոյ բազումք մեռան: Եւ յետ նորա Վարազդատ ոմն պարսիկ ի նմին տոհմէ» (Նույն տեղում, էջ 691–692: Տե՛ս նաև Հավաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, ի 1862, էջ 61):*

[15] Е. С х о л а с т и к. *Նշվ. աշխ., գիրք V, գլ. 7, էջ 351: Տե՛ս նաև Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 259–260, Մ. վ ր դ. Զ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 284: Ըստ Է. Շտեյնի, դաշինքը կայացել է 570 թ. (*E. S t e i n. *Նշվ. աշխ., էջ 22–23):*

[16] *Լ ե ո. Նշվ. աշխ., էջ 199, Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ-սյուն 655: Համմտ.՝ Վ. Ի ս կ ա ն յ ա ն. Նշվ. հոդվ., էջ 61:*

նութ֊յան տակ՝ նրանց առաջնորդը ծագումով, արժանապատվութ֊յամբ և ռազմական վաստքով գարճավ Վարդանը»[17]*:*

Իրականում Արևելյան Հայաստանը գրավելու սպառնալիքը Բյուզանդիայի ձեռքին խաղաթուղթ է եղել Պարսկաստանին հարկադրելու հրաժարվելու կայսրութ֊յունից պահանջվող ամենամյա դրամից: Եվ իր չահերից բխող այդ կարևոր խնդրին է ծառայեցվել նաև ժամանակի հայ-բյուզանդական դաշինքը: Առավել ևս, որ կայսրութ֊յունը նախօրոք ստույգ ու անհրաժեշտ տվյալներ էր հավաքել այն մասին՝ պատերազմի դեպքում Պարսկաստանի դեմ դուրս կգան նրան հարևան ու թշնամի շատ ժողովուրդներ, այդ թվում՝ պարսիկներին հպատակ հայերը[18]*: Անկասկած, դա է եղել պատճառը, որ Հուստինոս II-ը, Խոսրովի դեսպաններին հետ ուղարկելով, հայտարարել է՝ կողմերի միջև «խաղաղութ֊յունն ավարտվել է, և քրիստոնյաները չեն կարող մերժել պատերազմի ժամանակ իրենց մոտ ապաստան որոնող քրիստոնյաներին»*[19]*:*

Բյուզանդիայի դրդմամբ այդպես սկսվել է 571 թ. հակապարսկական ապստամբութ֊յունը[20]*: Վարդան Մամիկոնյանի ղեկավարութ֊յամբ ապստամբները սպանել են «զՍուրէնն մարզպան յանկարծաւրէն ի Դուին*

---

[17] Е. Схоластик. *Նշվ. աշխ., գիրք V, գլ. 7, էջ 351–352: Տե՛ս նաև Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. Նշվ. աշխ., էջ 391,* Византійскіе историки, с. 428. *Հմմտ.՝* Ф. Симокатта. *Նշվ. աշխ., գլ. IX. 8, էջ 82,* E. Stein. *Նշվ. աշխ., էջ 37: Սիմոկատտաս պատմիչը պատերազմի պատճառ է համարել նաև հարավարևմտյան Արաբիայում պարսիկների պայքարն ընդդեմ Բյուզանդիայի դաշնակից Եթովպիայի, ինչպես նաև՝ պարսիկների կողմից ալանների կաշառումը (*Ф. Симокатта. *Նշվ. աշխ., գիրք III, գլ. IX. 6–7, էջ 82):*

[18] *Վ. Իսկանյան. Նշվ. հոդվ., էջ 52: Տե՛ս նաև Կ. Գյուտերբոք. Նշվ. աշխ., էջ 144–145,* Ө. Успенскій. *Նշվ. աշխ., էջ 623:*

[19] *Տե՛ս* Е. Схоластик. *Նշվ. աշխ., գիրք V, գլ. 7, էջ 352,* Византійскіе историки, с. 404. *Եվագրիոսը հավելում է նաև. «Այդպես նա պատասխանեց. իրականում պատերազմի չպատրաստվեց, այլ տրվեց առօրեական հաճույքների, ամեն ինչ երկրորդական համարելով սեփական հաճույքների համեմատութ֊յամբ»* (Е. Схоластик. *Նշվ. աշխ., գիրք V, գլ. 7, էջ 353): Պարսկաբյուզանդական պատերազմի ընթացքի մասին տե՛ս նաև* Ф. Симокатта. *Նշվ. աշխ., գիրք III, գլ. IX. 8–9, էջ 82, գլ. X. 1–9, էջ 82–83, գլ. XI. 1–3, էջ 83–84:*

[20] *Ասողիկ պատմիչն ապստամբութ֊յան սկիզբ է համարում «ամ եւթներորդ թագաւորութեան Յուստիանոսի, յամսեանն արեգի Իբ ան ամսոյն» (Ս. Տարաւնեցի Ասողիկ. Նշվ. աշխ., էջ 691): Այդ կարծիքին են նաև Մաղաքիա արք. Օրմանյանը և Յու. Կուլակովսկին. տե՛ս Մ. արք. Օրմանեան. Նշվ. աշխ., էջ-սյուն 655,* Ю. Кулаковский. История Византии, т. II: 518–612 годы. СПб., 1996, с. 293. *Ապահովութ֊յան համար Կարին-Թեոդուպոլիս են տեղափոխել նաև «սպասք ամենայն եկեղեցւոյն որ ի Դըւնի սրբոյն Գրիգորիե, ինչպես նաև դիվանը (տե՛ս Սեբէոս. Պատմութիւն. – Մատենագիրք Հայոց, հ. Դ, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 491, Լեո. Նշվ. աշխ., էջ 203):*

քաղաքի՝ առին զաւար բազում եւ գնացին ի ծառայութիւն Յունաց»[21]: Ռազմական գործողություններին մասնակից է դարձել նաև կայսերական օժանդակ զորքը[22]: Պարսկաստանի դեմ ապստամբել են նաև հայերին միացած վրացիները ու աղվանները[23] և հայտարարել են Բյուզանդիային միանալու մասին[24]: Սակայն հետագա իրադարձությունները ակնհայտ ցույց տվեցին, որ հակապարսկական այդ ապստամբությանն աջակցելը Բյուզանդիայի համար եղել է լոկ խաղաքարտ: Դա միանգամայն ակնհայտ երևում է այն փաստից, որ ավելի ուշ պարսիկների հետ վարած հաշտության բանակցություններում բյուզանդացիները առանց այլևայլության համաձայնվել են նրանց զիջել Արևելյան Հայաստանն ու Իբերիան՝ պայմանով՝ Պարսկաստանը հրաժարվի իրենց նկատմամբ ունեցած դրամական պահանջներից[25]: Մենանդրոս պատմիչը նաև հավաստում է, որ «գլխավոր այդ խնդիրը» լուծելուց զատ Հուստինոս II կայսրը «ցանկացել է Իբերիայի և Պարսկահայաստանի փոխարեն պարսիկներից հետ ստանալ նաև Դարա ամրոցը»[26]: Իսկ այդ ամենը վկայում են՝ իրեն «քրիստոնեության պաշտպան» հռչակած Բյուզանդիայի համար Հայաստանի ու Վրաստանի ազատագրումն ամենևին էլ օրախնդիր չի եղել այն պարզ պատճառով, որ «այս երկիրներուն մչտատեւ դրաւումը կայսերական քաղաքականութեան սահմանէն դուրս էր»[27]:

Պարսկահայաստանը վերանվաճելու խոսրով թագավորի փորձերի հետևանքով, վրիժառությունից խուսափելու նպատակով Վարդան Մամիկոնյանը, Հայոց Հովհաննես Գաբեղենցի կաթողիկոսը, բազմաթիվ հայ նախարարներ ու հոգևորականներ փոխադրվել են Կ. Պոլիս: «Նրանք բոլորն էլ մեծ պատվով ընդունվեցին և ստացան թագավորական պատիվներ ու նվերներ: Բոլորին, որոնք նրա հետ այնտեղից ժամանել էին, տրվեց բարձր աստիճան, հարուստ տներ և ամուր թագավորական դղյակներ, իսկ նրանց, որոնք մնացել էին (իրենց) երկրում, շատ ոսկի ու տիտղոսներ

---

[21] *Սեբէոս. նշվ. աշխ., էջ 471, Յ. Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց.– Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, ժ դար: Պատմագրութիւն երկու գրքով, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 395, Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 260: Տե՛ս նաև Մ. վրդ. Զամչեանց. նշվ. աշխ., էջ 284, Մ. արք. Օրմանեան. նշվ. աշխ., էջ-սյուն 655–656:*

[22] *Սեբէոս. նշվ. աշխ., էջ 471:*

[23] Византійскіе историки, с. 494. *Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 258, Մ. արք. Օրմանյան. նշվ. աշխ., էջ-սյուն 655:*

[24] *Իր իշխանության 5-րդ տարում «Հուստինոս կայսրը ջախջախելով պարսիկներին, Հայաստանը և Իբերիան դարձրել է հռոմեական նահանգներ ...» (J. Biclarensis Abbas. Նշվ. աշխ., սյուն 864B):*

[25] *Մանրամասները տե՛ս* Византійскіе историки, с. 427–428.

[26] *Նույն տեղում, էջ 429: Միքայել Ասորի պատրիարքը հիշատակում է Մծբինը վերադարձնելու մասին. տե՛ս Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 260:*

[27] *Կ. Գյուտերբոք. նշվ. աշխ., էջ 152:*

ուղարկվեցին. նույնպես, նրանք հռոմների կայսրից երեք տարով ազատվեցին (հարկից): Հրամայվեց որ օգնություն ցույց տան նրանց, որոնք կռվում են պարսիկների դեմ, ինքնապաշտպանության ու ամբողջ հայկական հողերի ազատագրման համար»[28],– գրում է Հովհան Եփեսացին: Սակայն 6 տարի շարունակվող ռազմական այդ բախումները[29] բյուզանդական հրամանատարների անճարակության պատճառով ավարտվեց խայտառակ պարտությամբ, որից «Հետո առաջացավ ու ուժեղացավ պարսիկը և դրավեց ամբողջ Հայաստանը»[30]:

Բավականին հակասական է եղել Հուստինոս II կայսեր վարած կրոնական քաղաքականությունը: Թեև նա չուներ իր նախորդի քաղաքական լայն մտահորիզոնն ու հեռատեսությունը, այդուամենայնիվ, վերլուծաբաններից ոմանք գտնում են, որ կայսրը նախապես հավասարակշիռ և հանդուրժողական մոտեցում է դրսևորել վիճաբանող դավանական հոսանքների նկատմամբ[31]: Սակայն Հովհան Բիկլարացին պնդում է, որ կայսրը «իշխանության առաջին տարում ... ոչնչացրեց այն ամենը, ինչը հերյուրված էր Քաղկեդոնի ժողովի դեմ և կաթողիկե բոլոր եկեղեցիներում ներդրեց խրախուսանքի արժանի ձևով Քաղկեդոնի ժողովում ընդունված Կոստանդնուպոլսում հավաքված 150 սուրբ հայրերի Հանգանակը ... »[32]: Այդ պնդումը կարելի է հիմնավորել այն փաստով, որ կայսեր կողմից 571 թ. հրապարակված Հենոտիկոնում թեև Քաղկեդոնի ժողովը չի հիշատակվում և օգտագործվում է «մարմնավորված և բանական ու մտածող հոգի ունեցող Աստված Բանի մեկ բնություն» ձևակերպումը[33]: Այդուամենայնիվ, այն քաղկեդոնականության նոր ջատագովության լինելով՝ հալածանքների նոր փուլի սկիզբ դարձավ[34]: Դա է պատճառը նաև, որ, օգտագործելով հարմար առիթը, Հուստինոս II-ը Կ. Պոլսում ապաստանած հայերին առաջարկել է քաղկեդոնականություն ընդունել:

---

[28] *Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 391: Տե՛ս նաև Ժամանակագրություն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 264–265:*

[29] *Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 391:*

[30] *Նույն տեղում, էջ 393:*

[31] *Տե՛ս* А. Дьяконовъ. Іоаннъ Ефесскій и его церковно-историческіе труды. СПб., 1908, с. 90–91; J. N. D. Kelly. Early Christian Creeds (Third ed.). Oxford, 1972, pp. 349–350: *Տե՛ս նաև* E. Stein. *Նշվ. աշխ., էջ 42–45:*

[32] J. Biclarensis Abbas. *Նշվ. աշխ., այսուն 863B.*

[33] Е. Схоластик. *Նշվ. աշխ., գիրք V, գլ. 4, էջ 347: Հենոտիկոնի ամբողջական տեքստը նույն տեղում, էջ 344–347: Տե՛ս նաև* A. Pauline. Evagrius Scholasticus the Church Historian (Spicilegium Sacrum Lovaniense. Etudes et Documents. Fascicle 41). Louvain, 1981, pp. 213–214; J. Maspero. Hisoire des Patriarches D'Alexandrie. Depuis la mort de l'empereur Anastase jusqu'a la reconciliation des èglises jacobites (518–616). Paris, 1923, pp. 167–168:

[34] *Հալածանքների մանրամասները տե՛ս Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 394–395, Ժամանակագրություն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 261–262:*

Հովհան Եփեսացին նաև վկայում է, որ «որպես մոգերի անզգամ ու հեթանոս պետությունից փախած անճնավորություններ և որպես քրիստոնյաների պետության մեջ ապաստան գտածներ»[35], հայ նախարարները, և մինչ այդ քաղկեդոնականության դեմ անզիջում պայքար մղող Հայոց կաթողիկոսն[36] ու հոգևորականները հանուն կայսրության գինվորական օգնության հաղորդվել են բյուզանդական պատրիարքի հետ[37]: Օգտագործելով հարմար պահը՝ հայ-բյուզանդական եկեղեցական միաբանությանը պաշտոնական բնույթ տալու նպատակով, Հուստինոս II-ը Կ. Պոլսում եկեղեցական ժողով է գումարել[38], որի հայ մասնակիցները «դիտմամբ անուշադիր են թողել դաւանական տարբերութիւնները, որպէս զի սկզբից և եթ անկարելի չգտնայ Բիւզանդիոնից նոցա սպասած օգնութիւնը պարսիկների դէմ»[39] և քաղկեդոնականների հետ հաղորդության մեջ են մտել[40]:

---

[35] *Տե՛ս Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 391–392:*

[36] *Հովհաննես Բ կաթողիկոսն ակտիվ պայքար է ծավալել նեստորականության և քաղկեդոնականության դեմ: Այդ նպատակով նա թղթեր է հղել Սյունյաց Միհրարտաչիր իշխանին, Վրթանես եպիսկոպոսին և Աղվանից Աբաս կաթողիկոսին [Գիրք Թղթոց (Երկրորդ հրատարակություն), Երուսաղէմ, 1994, էջ 206–220]: Նա քաջալերական մի նամակ է գրել նաև Երուսաղեմի հայ միայնակյացներին, որոնց հալածել են հույն հոգևորականները՝ Քաղկեդոնի ժողովը չընդունելու և «երկու բնություն» չխոստովանելու համար (տե՛ս Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 615): Իսկ այս ամենն ակնհայտ վկայում են Հովհաննես Բ կաթողիկոսի «եռանդը Քաղկեդոնի վարդապետությունը դատապարտելու գործում» (Ե. վրդ. Տէր-Մինասեանց. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորվոց եկեղեցիների հետ. Հայկական և ասորական աղբիւրների համաձայն, էջմիածին, 1908, էջ 112):*

[37] *Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 391–392, Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 264–265: Տե՛ս նաև Մ. ար ք. Օրմանեան. նշվ. աշխ., էջ-սյուն 656, Ե. վրդ. Տէր-Մինասեանց. նշվ. աշխ., էջ 115 և այլն:*

[38] *Տե՛ս Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց մեծաց.– «Հանդէս Ամսօրեայ», 1968, թիւ 1–3, էջ 70, Հ. Բարթիկյան. "Narratio de rebus Armeniae". հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր. – «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 465: Ըստ Փոտ պատրիարքի՝ ժողովին մասնակցել են 300 եպիսկոպոս [Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց մեծաց, էջ 70, իսկ Վարդան Արևելցին հիշատակում է 150 թիվը (տե՛ս Հավաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, նշվ. աշխ., էջ 84)]:*

[39] *Ե. վրդ. Տէր-Մինասեանց. նշվ. աշխ., էջ 115: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 258:*

[40] *Մաղաքիա արք. Օրմանյանը պարզաբանում է, որ թեև Հայոց կաթողիկոսը «իւր թղթերի մէջ վաղուց նզովել էր Քաղկեդոնի ժողովը», զիջման է գնացել «կայսր օգնութեամբ դառնալու եւ Պարսիկները վանելու ակնկալութեամբ: Այդ նպատակով Յովհան ու Վարդան չուզեցին Յոյներու հետ կրօնական խնդիր յուզել, եւ առանց այս ու այն դաւանութեան խօսքն ընելու, իբրեւ թէ մէկերնին խնդիր եղած չըլլար, թագաւորին հետ հաղորդեցան» (Մ. Ար ք. Օրմանեան. նշվ. աշխ., էջ-սյուն 656):*

Լուր ստանալով հույների հետ կայացված դավանական միաբանության մասին՝ մարզպանական Հայաստանի եպիսկոպոսները դատապարտել են ազգային եկեղեցու ավանդույթներին հակասող նրանց գործարքը[41], որից հետո «(եկածները) բաժանվեցին ու ստեղծեցին իրենց համայնքը մեծ դղյակներից մեկում, որտեղ ապրում էր իրենց (հայ) մեծամեծներից մեկը: Այնտեղ էին հավաքվում իրենց կաթողիկոսի մահից հետո, համայնքի բազում (անդամներ)»[42]:

Հայոց հակապարսկական ապստամբությունը պարսկաբյուզանդական 20-ամյա պատերազմի առիթ դարձավ, որի ռազմական գործողությունները ծավալվեցին գերազանցապես Միջագետքում և Հայաստանում[43]: Բյուզանդական պատմիչ Մենանդրոսը հաղորդում է, որ այդ պայմաններում կայսրությունը նոր պարտավորություններ է ստանձնել ապստամբների հանդեպ: «Հուստինոս կայսրը, – գրում է Մենանդրիոս պատմիչը, – ... գաղթած պարսկահայերին և իբերներին երդումով խոստացավ, որ ... երբեք չի հանձնի ո՛չ ապստամբության հանցավորներին, ո՛չ էլ նրանց ազգականներին, մի խոսքով ոչ ոքի նրանցից, ովքեր կցանկանային մնալ Հռոմեական կայսրության իշխանության ներքո»[44]:

Հակապարսկական այս ապստամբության հետևանքների մասին Լեոն գրում է, որ այն «իր չափերով, բայց մանավանդ իր առաջացրած հետևանքներով ավելի կարևոր է թվում, քան նույնիսկ 5-րդ դարի երկու ապստամբական շարժումները»[45]: Ն. Ակինյանը ևս այդ ապստամբությունը որակում է «հաւասարատիպ պատկեր մը Աւարայրի 451ի ճակատին» և պնդում, որ այն «աւելի՛ ծանր, աւելի՛ նշանակալից եղաւ ... իւր

---

[41] *Ե. Տեր-Մինասյանը Միքայել Ասորի պատրիարքի ասորական բնագրից մեջբերում է հետևյալ ուշագրավ հատվածը (որը բացակայում է հայերեն թարգմանության մեջ). «Երբ այս բանը նրանց երկրում լսուեց, բոլոր եպիսկոպոսները սպառնալիքներ ուղարկեցին կաթուղիկոսին և նրա հետ եղածներին՝ թէ եթէ դուք կխառնուիք Սինոդիտների հետ և նրանց հետ կհաղորդուիք, ... մենք ձեզ այլ ևս չենք ընդունի (ճանաչի), այլ մինչև անգամ կնզովենք» (Ե. վ ր դ. Տ է ր-Մ ի ն ա ս ե ա ն ց. նշվ. աշխ. էջ 112):*

[42] *Ե փ ե ս ո ս ի Հ ո վ հ ա ն Ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 391–392: Նա հավելում է նաև. «Կաթողիկոսն երկու տարի հետո մահացավ մայրաքաղաքում և չվերադարձավ իր հայրենիքը» (նույն տեղում, էջ 391): Ընդ որում, առանձնանալով քաղկեդոնականներից, նա «ննջեաց ուղղափառ խոստովանութեամբ, և մեծ պատուով ամփոփեցաւ յուղղափառացն, որոյ եղեւ մեծ ամրութիւն և հաստատութիւն հաւատոյ և պարծանք ուղղափառացն, մնալ ի ճշմարտութեան յերկուց կողմանց՝ ի Պարսից և ի Քաղկեդոնացւոց, Աստուծով միայն զօրացեալ և օգնական ի մարդկանէ ոչ ոք» (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 265):*

[43] *Մ ե ք ե ո ս. նշվ. աշխ., էջ 471,* Византійскіе историки, с. 429–430. *Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 259–260:*

[44] Византійскіе историки, с. 428. *Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 259:*

[45] *Լ ե ո. նշվ. աշխ., էջ 199:*

հետեւութիւններով հայ կեանքի համար՝ քան դար մը յառաջ մղուած պատերազմներու շարքը»[46]:

Այդ ամենն աներկբա վկայում են, որ «քրիստոնեութեան պաշտպանութեան» դիմակ հագած Բյուզանդական կայսրությունը դրացի քրիստոնյա հայ ժողովրդի նկատմամբ իրականացրել է դավանական հարկադրանքի քաղաքականություն, ինչը ծանր հետեւանքներ է ունեցել հայ ժողովրդի հետագա պատմական ընթացքի վրա:

Հայ-բյուզանդական հարաբերությունները Տիբերիոս և Մավրիկիոս կայսրերի օրոք

Հայ-բյուզանդական հարաբերությունները նույնքան անհաջող ընթացք են ունեցել նաև հաջորդ՝ Տիբերիոս կայսեր (578–582 թթ.) շրջանում: Հայտնի է, որ նա հաշտություն է առաջարկել պարսիկներին և հանուն խաղաղութեան գինել Պարսկահայաստանն ու Իբերիան[47]*: Նա նաև Խոսրով I-ին վճարել է 45.000 ոսկի և կնքել սկզբում միամյա, ապա՝ եռամյա զինադադար (575–578 թթ.): Իսկ պարսկաբյուզանդական պատերազմների գլխավոր թատերաբեմ Հայաստանում պատերազմը շարունակվում էր*[48]*: Պարսկական բանակը հասել է մինչև Թեոդոսուպոլիս-Կարին և ապա առաջացել դեպի Փոքր Հայք, որտեղ բնակչությունն աջակցել է պարսիկներին*[49]*, ինչը վկայում է, որ բյուզանդական ճնշումների պատճառով հայերի մեջ դժգոհություն էր ձեւավորվել: Այդ կապակցութեամբ Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է. «Քաղաքական կացութիւնը չփոթի ու խառնակ եղած է յունապարսիկ պատերազմներուն պատճառով, որք առաւելապէս Հայաստանի զողհողին վրայ կատարուեցան, որ ոչ միայն երկրին աւերման պատճառ եղաւ, այլեւ Հայերը անորոշ եւ տարտամ կացութեան մատնեց: Չէին գիտեր թէ որին տիրապետութիւնը նախադասեն եւ որին կողմը բռնեն, քանի որ երկու կողմերն ալ լաւութեան խոստումներ կ'առաջացնէին հրապուրելու համար, եւ խստութեանց գործադրութիւններ կը շատցնէին զսպելու համար»*[50]*: Եվ այդ պայմաններում անգամ Տիբերիոս կայսրը հերթական անգամ դավանական հարկադրանք է կիրառել հայերի նկատմամբ: Այդ մասին է վկայում Փիլոն Տիրակացին, ով գրում է՝ Տիբերիոս կայսեր շրջանում « եղեւ ժողովն ի*

---

[46] *Հ. Ն. Ակինեան. Դուինոյ 572ի ապստամբութիւնը եւ յաջորդ տասնամեայ շրջանը (պատմական ուսումնասիրութիւն).– «Հանդէս Ամսօրեայ», 1913, թիւ 1–2, էջ 61:*

[47] *Տե՛ս* Византійскіе историки, с. 436, 440.

[48] *Եփեսոսի Հովհան եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 424,* Византійскіе историки, с. 410, 412, 440. *Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 260:*

[49] *«Փոքր Հայքի հարկատուները, – հավաստում է Մենանդրոս պրոտեկտորը, – ոչ միայն չլքեցին դաշտերը և չփախան, այլ ընդհակառակը, պարսկական զորքին պարեն մատակարարեցին»* (Византійскіе историки, с. 412. *Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 261):*

[50] *Մ. արք. Օրմանեան. նշվ. աշխ., էջ-այուն 661:*

Կոստանդնուպաւղիս Հայոց եւ Հոռովմոց՝ վասն սահմանին Քաղկեդովնի, յորում պարտեցան Հայք»[51]:

Իսկ այն բանից հետո, երբ հայ-բյուզանդական միացյալ բանակը պարսիկների դեմ հաղթանակներ տանելով չարժվեց մինչև Սյունիք, Աղվանք և Ատրպատական՝ ողջ Հայաստանը կրկին անցավ բյուզանդական տիրապետության տակ: Եվ, չնայած դաշնակից կարգավիճակին, կայսերական զորքերն անօրինակ բռնություններ են կիրառել հայ ազգաբնակչության նկատմամբ[52], որի պատճառով հայ հոգևորականները ստիպված դիմել են Տիբերիոսին[53]: 577 թ. Հայաստանում պարսիկների 30.000 զորքը հաղթում է 120.000 բյուզանդական բանակին: Բյուզանդացիները ծանր պարտություն են կրում նաև երկրի հարավում, և Մարզպանական Հայաստանը դարձյալ գրավում են պարսիկները[54]: Այդպես իր ավարտին է հասնում նաև հայ-բյուզանդական դաշինքը:

577–578 թթ. ձմռանը բյուզանդական արևելյան բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում և Հայաստան ուղարկվում Մավրիկիոսը (Մորիկ)[55], ով Տիբերիոսի մահից հետո դառնում է կայսր (582–602 թթ.): Մեծ ուժերով նա կռվում է պարսիկների դեմ, և կողմերը չարունակել են մեծ ավերածություններ գործել Հայաստանում: Շատ են տուժել հատկապես երկրի հարավային նահանգները: 578 թ. բյուզանդացիները ամա-

---

[51] *Փ. Տիրակացի. Ժամանակագրութիւն. – Մատենագիրք Հայոց, հ. ե, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 965: Վարդան Արևելցին, սակայն, մերժում է հայերի դավանափոխության մասին տեղեկությունը և գրում է, որ Տիբերիոսի օրոք «եղեւ ժողով ի Կոստանդնուպօլիս և Հայք ոչ ընկալան» (Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, էջ 84): Սամուել Անեցին «վասն Քաղկեդոնի» ժողովը թվագրում է փրկչական ՇԴՉ և հայոց ԼԱ թվականներով՝ 584 թ. (տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն, Երևան, 2014, էջ 144):*

[52] *Այդ մասին Հովհան Եփեսացին գրում է. « … հոռոմներն աստծո վախը մոռացած, նույնիսկ բռնում էին մեկ երկու տարեկան երեխաներին, … ու իրենց ուժը պատածի չափ վեր էին գցում, երեխան ընկնում էր նրանց բռնած սրի կամ նիզակի ծայրին, որը մտնում էր մարմնի մեջ և ապա (դիակները) նետում էին շներին: Նրանք նույնպես անպատվում, կողոպտում ու սպանում էին վանականներին … կախում, տանջում ու կտրում էին նրանց առնանդամները, ասելով. «Ոսկի, արծաթ տվեք»: Նրանք տանջում էին նաև կույսերին և նրանց դաժան մահվան եղրին հասցնում» (Եփեսոսի Հովհան Եպիսկոպոս. Նշվ. աշխ., էջ 430: Այդ մասին տե՛ս նաև Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 273–274, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 261):*

[53] *«Յայսմ ժամանակի ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և միայնակեացք Միջագետաց և Հայոց որ ընդ իշխանութեամբ Յունաց էին, և գնացին առ Տիբերիոս խնդրել զխաղաղութիւն, զի կալցեն համարճակութեամբ զուղղափառութիւն» (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի, էջ 274: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 261):*

[54] *Եփեսոսի Հովհան Եպիսկոպոս. Նշվ. աշխ., էջ 429–430:*

[55] *Տե՛ս* Византійскіе историки, с. 447; Ф. Симоката. *Նշվ. աշխ., գիրք III, գլ. XV. 10, էջ 90:*

յացրել են Աղճնիքը, իսկ «10,000 Հայ իրենց բնակավայրերէն հանուեցան եւ Կիպրոս կղզին փոխադրուեցան»[56]: Ամայացվել են նաև Հայաստանի այլ շրջանները, հատկապես՝ կենտրոնական գավառները:

591 թ. Մորիկ կայսեր և Խոսրով Բ-ի միջև կնքվել է հաշտության պայմանագիր, որով վերջ տրվեց պարսկաբյուզանդական 20-ամյա պատերազմին: Պայմանագրով կայսրությանն է անցել Ասորեստանի կողմերը, մինչև Մծբին քաղաքը և Տանուտիրական իշխանության ներքո գտնվող Հայոց երկիրը «մինչև Այրարատ և Դվին քաղաքը, և մինչև Բզնունյաց ծովի եզերը և Առեստաւանը. և Վրաց աշխարհի մեծ մասը, մինչև Տփղիս քաղաքը»[57]: Մարզպանական Հայաստանից Սասանյան Իրանին մնում էին միայն Դվինի ոստանը (Հայոց մարզպանի նստավայրը) և Վասպուրականի ու Մոկքի նահանգները (Կողմն վասպուրական գնդի)[58]:

Հայաստանի նոր նվաճած ընդարձակ հատվածում բյուզանդական կարգեր հաստատելու միտումով Մորիկ կայսրը իրականացրել է ևս մեկ վարչական բաժանում[59], իսկ մագիստրոսի նստավայր է հռչակվել Շիրակաշատ ավանը (Մավրիկապոլիս)[60]: Դրան հաջորդեց հայերի զինվորական ուժի բնաջնջման ծրագրի իրագործումը[61]: Իսկ կայսրության դրամական մի-

---

[56] Պ. Խ ա ր ա ն ի ս. Հայերը Բիւզանդական կայսրութեան մէջ. – Ազգային մատենադարան, ՃՂԹ, Վիեննա, 1966, էջ 17: Տե՛ս նաև Ե փ է ս ո ս ի Հ ո վ հ ա ն ե պ ի ս կ ո պ ո ս. Նշվ. աշխ., էջ 458: Սիմոկատտաս պատմիչը գրում է, որ տեղահանվածները եղել են պարսիկներ (տե՛ս Ф. Симокатта. Նշվ. աշխ., գիրք III, գլ. XV. 15, էջ 90): Եվագրիոս պատմիչը հավատում է, որ այդ տեղահանության չնորհիվ Կիպրոսի «անմշակ հողերը ամեն տեղ մշակվեցին. այդ [մարդկանցից] կազմվեցին բազմամարդ բանակներ, որոնք չափազանց վճռակամությամբ և քաջաբար կռվեցին այլ ցեղերի դեմ. և յուրաքանչյուր ընտանիքում [գերիները] սպասավորների դեր էին կատարում, քանի որ այդ ժամանակ ստրուկ դառնալը չափազանց հեշտ էր» (Е. Схоластик. Նշվ. աշխ., գիրք V, գլ. XIX, էջ 374):

[57] Ս ե բ է ո ս. Նշվ. աշխ., էջ 485–486: Տե՛ս նաև Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի եւ Ա ն ա ն ու ն. Պատմութիւն Տանն Արծրունեաց. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար: Պատմագրութիւն երկու դրքով, գիրք Ա, Անթիլիաս–Լիբանան, 2010, էջ 125, Յ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. Նշվ. աշխ., էջ 398, Ф. Симокатта. Նշվ. աշխ., գիրք V, գլ. XIII. 24, էջ 112:

[58] Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի եւ Ա ն ա ն ու ն. Նշվ. աշխ., էջ 125, Յ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. Նշվ. աշխ., էջ 398: Հմմտ.՝ Հավաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, էջ 59: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 264, Մ. արք. Օ ր մ ա ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ-այուն 670–671, С. Еремян. Армения в VI–VII вв. – Очерки истории СССР: кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР III–IV вв. М., 1958, с. 225.

[59] Տե՛ս Յ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. Նշվ. աշխ., էջ 398–399, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 265:

[60] Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 266–267, С. Еремян. Նշվ. աշխ., էջ 225:

[61] Տե՛ս Ս ե բ է ո ս. Նշվ. աշխ., էջ 487, 491–493, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 268–269, Մ. արք. Օ ր մ ա ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ-այուն 675–677:

ջոցները հոգալու համար Հայաստանում ուժեղացվեց նաև հարկային ճնշումը:

Ինչպես իր նախորդները, Մորիկը նույնպես ձգտել է քաղկեդոնականությունն արմատավորել Հայաստանում և հայ եկեղեցին ենթարկել Կ. Պոլսի պատրիարքությանը[62]: Այդ նպատակով առանց միջոցների մեջ խտրություն դնելու կայսրը ձեռնամուխ է եղել հայերի հարկադրական դավանափոխությանը, որի մասին Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է. «Յունաց կողմէն կը չարունկէին Քաղկեդոնի դաւանութիւնը ընդունիլ տալու բռնադատութիւնները, եւս առաւել ի թագաւորելն Մօրկայ, եւ թէ այդ պատճառով ժողովներ գումարուեցան մի անգամ ի Կոստանդնուպոլիս, եւ երիցս անգամ ի Թէոդուպոլիս, որ է Կարին, եւ թէ Հայերը հաւանեցնելու համար ուժգին մեծամեծ հարցուփորձութիւնք լինէին»[63]: Այդ նպատակին ծառայեց նաև կայսեր հրամանով 591 թ. Կ. Պոլսում հրավիրված եկեղեցական ժողովը, որին մասնակցել են 160 եպիսկոպոս, որոնցից 21-ը՝ հայ՝ բոլորն էլ բյուզանդական հատվածից[64]: Ժողովականները Քաղկեդոնի դավանական սկզբունքները ուղղադավան են ճանաչել[65], ինչը, Մաղաքիա արք. Օրմանյանի համոզմամբ, «զարմանալի չէ, քանի որ կայսրութեան հպատակ գաւառներէն էին, եւ համակերպութեան կը բռնադատուէին»[66]: Ինչ վերաբերում է Մովսես կաթողիկոսի պատվիրակներին՝ Գրիգոր և Վրթանես վարդապետներին, նրանք թեև եռանդուն պաշտպանել են հայոց դավանանքը, բայց, հաջողություն չունենալով, վերադարձել են՝ նզովելով ժողովը[67]:

Մովսես կաթողիկոսն ու նրա կողմնակից եպիսկոպոսները դատապարտել են Կ. Պոլսի ժողովի որոշումը[68] և հաղորդությունը խզել քաղկեդոնական դարձած հայ եպիսկոպոսների հետ: Բայց, քանի որ Հայոց կաթողիկոսական աթոռը դուրս էր կայսրության կամայականությունների սահմաններից, Մորիկը Հայաստանի բյուզանդական մասում քաղկեդոնական կաթողիկոս է հաստատել Հովհաննես Բագարանցի եպիսկոպոսին (390–610 թթ.)[69]: Դվինից ոչ շատ հեռու գտնվող Ավան աթոռա-

---

[62] *Տե՛ս Սեբէոս. նշվ. աշխ., էջ 491:*

[63] *Մ. արք. Օրմանյան. նշվ. աշխ., էջ-սյուն 672–673:*

[64] *Հավաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, էջ 84: Տե՛ս նաև Մ. Զամչեանց. նշվ. աշխ., էջ 531:*

[65] *Փ. Տիրակացի. նշվ. աշխ., էջ 965:*

[66] *Մ. արք. Օրմանյան. նշվ. աշխ., էջ-սյուն 673: Տե՛ս նաև Մ. Զամչեանց. նշվ. աշխ., էջ 531:*

[67] *Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. նշվ. աշխ., էջ 144, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 260, Մ. արք. Օրմանյան. նշվ. աշխ., էջ-սյուն 673–674:*

[68] *Ավելի ուշ քաղկեդոնականություն ընդունած Բասենի Մանասե, Ամատունյաց Հովհաննես եպիսկոպոսները և այլ հոգևորականներ հրաժարվել են իրենց մոլորությունից [տե՛ս Գիրք թղթոց, էջ 243: Հմմտ.՝ Մ. արք. Օրմանյան. նշվ. աշխ., էջ-սյուն 674]:*

[69] *Տե՛ս Յ. Դրասխանակերտցի. նշվ. աշխ., էջ 401: Տե՛ս նաև Ուխտանէս Եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար: Պատմագրութիւն երկու գրքով, գիրք Բ, էջ 552, Փ. Տիրակացի. նշվ. աշխ., էջ 965, Մ. արք. Օրմանյան. նշվ. աշխ., էջ-սյուն 671–673, 675:*

նիստով: Երկրի պարսկական մասում կաթողիկոսն էր Մովսես Եղիվարդեցին[70]: Չնայած աննախադեպ այդ բռնություններին՝ «Հայոց Եկեղեցին եւ հայրապետական աթոռը ամենեւին խախտած չեղաւ իր վարդապետութենէն»[71]: Եվ, քանի որ «Բյուզանդիայի մչտական սկզբունքը եղել է երբեք չընդունել միապետության կողմից կորցված տարածքների կորուստը»[72], ինչպես Հ. Բարթիկյանն է փաստում, Հայաստանի 591 թ. բաժանումից հետո Բյուզանդիան մինչև վերջ այդ տարածքը սեփական է համարել[73]: Այդ ամենով Բյուզանդական Հայաստանում կայսրության վարած քաղաքականությունը միանգամայն ակնհայտ ցույց տվեց, որ Սասանյանները հանդիսանում են «չարյաց փոքրագույնը»:

Եզրակացություն

Իբրև ամփոփում՝ կարող ենք վկայակոչել Ս. Երեմյանի ընդհանրացնող հետևյալ պնդումը. «Այն ժամանակ, երբ մարզպանական Հայաստանը պահպանել էր իր ազգային բոլոր հաստատությունները և Սասանյանների կողմից դրանք ոչնչացնելու ցանկացած փորձի ժամանակ ապստամբել է և նոր զիջումների հասել, կայսերական Հայաստանում նախարարական կարգը ոչնչացվեց»[74]:

Լիզա Քարիմյան – պ. գ. թ., ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-բյուզանդական հարաբերություններ: Հեղինակ է 1 մենագրության և չուրջ 15 հոդվածի: liz79k@gmail.com

REFERENCES

Akinyan H. N. Dvinoy 572i apstambutivne ev yajord tasnameay shrjane (Patmakan usumnasirutivn). – "Handes Amsorya", 1913, tiv 1–2 (In Armenian).

Bartikyan H. Byuzandian ev hay petakanutyune X–XI dd. – HH GAA "Lraber hasarakakan gitutyunneri", 1996, № 2 (In Armenian).

---

[70] Մեբէոս. նշվ. աշխ., էջ 491, Յ. Դրասխանակերտցի. նշվ. աշխ., էջ 401, նույնի՝ Շարից Հայրապետացն Հայոց յայտարարութիւնք. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, էջ 605–606: Տե՛ս նաև Ուխտանէս Եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 552, Ս. Տարաւնեցի Ասողիկ. նշվ. աշխ., էջ 692:

[71] Մ. արք. Օրմանեան. նշվ. աշխ., էջ-այուն 674:

[72] Ш. Дильь. Императоръ Юстиніанъ и византійская цивилизація въ VI вѣкѣ. СПб., 1908, с. 135.

[73] Տե՛ս Հ. Բարթիկյան. Բյուզանդիան և հայ պետականությունը X–XI դդ. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, № 2, էջ 15: Նա փաստում է նաև՝ կայսրությունը «հավատացած էր, որ IX դ. վերջից չի նվաճում արաբական խալիֆայության տիրապետության տակ գտնվող Հայաստանը, այլ չանում է վերստին տիրել ժամանակին կորցրած հողերի, վերահաստատում իր տիրապետությունը (ընդգծումը մերն է.– Լ. Ք.)» (նույն տեղում):

[74] С. Еремян. *Նշվ. աշխ., էջ 218:*

Bartikyan H. “Narratio de rebus Armeniae”, hunaren targmanutyamb mez hasats mi hay-qaxqedonakan skzbnaghbyur. – “Banber Matendarani”, 1962, № 6 (In Armenian).
Bartikyan H. Teopanes Khostovanoghe, nra “Jamanakagrutyune” ev hay-byuzandakan haraberutyunnery VII–VIII darerum. – Otar aghbyurnere Hayastani ev hayeri masin, 13. Byuzandakan aghbyurner, D, Erevan, 1983 (In Armenian).
Biclarensis Abbas J. Chronicon / Patrologiae cursus completus. Series Latina (accur. J.-P. Migne). T. LXXII, Parisiis, 1849, col. 863B.
Cameron A. Early Byzantine Kaiserkritik: Two Case Histories. – Byzantine and Modern Greek Studies. Oxford, 1977, vol. 3.
Cameron. A. The Early Religious Policies of Justin II. – Studies in Church History, The Orthodox Churches and the West. Oxford, 1976, vol. 13.
Chamcheants M. Patmutivn Hayots i skzbane ashkharhi minchev tsam tearn 1874, Venetik, 1785 (In Armenian).
Dil Sh. Imperator Yustinian i vizantiyskaya tsivilizatsiya v VI veke. SPb, 1908 (In Russian).
Draskhanakertsi Y. Patmutivn Hayots. – Matenagirq Hayots, h. JA, J dar: Patmagrutyun erku grkov, girk A, Antilias-Libanan, 2010 (In Armenian).
Dyakonov A. Ioan Efeskiy i ego terkovno-istorichekie trudy. SPb, 1908 (In Russian).
Epesosi Hovhan episkopos. Ekeghecakan patmutyun. – Otar aghbyurnere Hayastani ev hayeri masin, 8. Asorakan aghbyurner, A, Yerevan, 1976 (In Armenian).
Eremyan S. Armeniya v VI–VII vv. – Ocherki istorii SSSR: Krizis rabovladelcheskoy sistemy i zarojdenie feodalizma na territorii SSSR III–IV vv. M., 1958 (In Russian).
Girk Tghtots (Erkrord hratarakutyun), Erusaghem, 1994 (In Armenian).
Gyuterbok K. Byuzandion ev Parskastan ev anonc divanagitakan ev azgayin-iravakan haraberutyunnery Hustinianu jamanak. – Azgayin Matenadaran, KB, Vienna, 1911 (In Armenian).
Havaqumn Patmutyan Vardana vardapeti lusabaneal, I Venetik, I 1862 (In Armenian).
Hay joghovrdi patmutyun, h. II, Yerevan, 1984 (In Armenian).
Jamanakagrutivn Tearn Mikhayeli Asorvots Patriarki, Yerusaghem, 1871 (In Armenian).
Iskanyan V. Hay-Byuzandakan dashinke Parskastani dem (VI dar). – PBH, 1963, № 4 (In Armenian).
J. N. D. Kelly. Early Christian Creeds (Third ed.). Oxford, 1972.
Kharanis P. Hayere Byuzandakan kaysrutyan mej. – Azgayin matenadaran, JGHT, Vienna, 1966 (In Armenian).
Kristonya Hayastan hanragitaran, Yerevan, 2002 (In Armenian).
Kulakovskiy Yu. Istoriya Vizantii. T. II: 518–612 gody. SPb, 1996 (In Russian).
Leo. Hayots patmutyun, h. II, Erevan, 1967 (In Armenian).
Maspero. J. Hisoiare des Patriarches D’Alexandrie. Depuis la mort de l’empereur Anastase jusqu’à la réconciliation des églises jacobites (518–616). Paris, 1923.
Ormanyan ark. M. Azgapatum, h. A, Ejmiadzin, 2001 (In Armenian).
Ostrogorskiy G. Istoriya Vizantiyskogo gosudarstva. M., 2011 (In Russian).
Pauline. A. Evagrius Scholasticus the Church Historian (Spicilegium Sacrum Lovaniense. Études et Documents. Fascicle 41). Louvain, 1981.
Pigulevskaya N. Siriyskaya srednevekovaya istoriografiya. Issledovaniya i perevody. SPb, 2000 (In Russian).

Pigulevskaya N. Vizantiya i Iran na rubezhe VI–VII vekov. M.–L., 1946 (In Russian).
Samuel Anetsi ev sharunakoghner. Jamanakagrutivn, Yerevan, 2014 (In Armenian).
Sebeos. Patmutivn. – Matenagirk Hayots, h. D, E dar, Antilias-Libanan, 2005 (In Armenian).
Simokatta F. Istoriya. Kn. III, gl. IX. 3–4. M., 1957 (In Russian).
Skholastik E. Tserkovnaya istoriya, kn. V, gl. 7. SPb, 2010 (In Russian).
Stein. E. Studlen zur Geschichte des byzantinischen Reiches: vornehmlich unter den Kaisern Justinus II u. Tiberius Constantinus. Stuttgart, 1919.
Taronetsi Asoghik S. Patmutivn Tiezerakan. – Matenagirk Hayots, h. JA, J dar. Patmagrutivun erku grkov, girk A, Antilias-Libanan, 2010 (In Armenian).
Ter-Minasyan E. Hayots ekeghetsin, S. Echmiadzin, 2014 (In Armenian).
Ter-Minasyants vrd. E. Hayots ekeghetsu haraberutyunnery asorvots ekeghetsineri het. Haykakan ev asorakan aghbyurneri hamadzayn, Ejmiatsin, 1908 (In Armenian).
Tirakatsi P. Jamanakagrutivn. – Matenagirk Hayots, h. E, E dar, Antilias-Libanan, 2005 (In Armenian).
Tovma Artsruni ev Ananun. Patmutivn Tann Artsruneats. – Matenagirk Hayots, h. JA, J dar: Patmagrutivn erku grkov, girq A, Antilias-Libanan, 2010 (In Armenian).
Tught Potay Patriarki ar Zakaria Katoghikos Hayots metsats. – “Handes Amsorya”, 1968, tiv 1–3 (In Armenian).
Vizantiyskie Istoriki. Deksip, Evnapiy, Olimpiodor, Malkh, Petr Patritsiy, Menandr, Kandid, Nonnos i Theofan Vizantiets. SPb, 1860 (In Russian).
Ukhtanes Episkopos. Patmutyun Hayots. – Matenagirk Hayots, h. JA, J dar: Patmagrutivn erku grkov, girk B, Antilias – Libanan, 2010 (In Armenian).
Uspenskiy T. Istoriya Vizantiyskoy Imperii, t. 1. SPb, 1912 (In Russian).

РЕЛИГИОЗНЫЙ ФАКТОР В АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ОТНОШЕНИЯХ (570–591 гг.)

ЛИЗА КАРИМЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армяно-византийские отношения, Халкидонский собор 451 г., халкидонизм, император Юстин II, император Тиверий, император Маврикий, персидско-византийская война, Константинопольский собор 591 г., Ованес Багаранци, Мовсес Ехивардеци.

Армяно-византийские отношения 570–591-х годов сопровождались религиозным принуждением армян со стороны империи. Хотя Византия объявила себя «защитником христианства» в конце 60-х годов, однако освобождение соседних христианских народов вовсе не являлось целью империи. Более того, выступавшие за халкидонизм императоры Юстин II и Тиверий, воспользовавшись удобным моментом, на церковных собра-

ниях, созванных в Константинополе, попробовали осуществить армяно-византийское церковное единение.

Эта политика империи завершилась во времена правления императора Маврикия, когда на византийско-армянских территориях были разрушены не только национальные институты и министерства, но и повсеместно навязывался халкидонизм. А в самой Армении был создан халкидонский католикосат, который разделил духовное единство армянского народа.

Лиза Каримян – к. и. н., доцент кафедры теории и истории религии богословского факультета ЕГУ. Научные интересы: армяно-византийские отношения. Автор 1 монографии и около 15 статей. liz79k@gmail.com

THE RELIGIOUS FACTOR IN THE ARMENIAN-BYZANTINE RELATIONS (570–591AD)

LIZA KARIMYAN

S u m m a r y

Key words: Armenian-Byzantine relations, Council of Chalcedon in 451 AD, chalcedonism, Emperor Justin II, Emperor Tiberius, Emperor Maurice, Persian-Byzantine war, Council of Constantinople in 591 AD, Hovhannes Bagarantsi, Movses Eghivardetsi.

The Armenian-Byzantine relations in 570–591 AD were accompanied by the religious enforcement on Armenians carried out by the Empire. In the late 60s, although Byzantium declared itself a “defender of Christianity”, however, the liberation of neighboring Christian nations was not at all a substantial issue for it. Moreover, the emperors Justin II and Tiberius, who advocated Chalcedonism, took advantage of the opportunity for implementing Armenian-Byzantine Church Unification at the Church Councils in Constantinople.

This policy of the Empire came to its end during the reign of Emperor Maurice, when not only were the national institutions and the departments of ministries in the Byzantine-Armenian parts destroyed, but also Chalcedonism was imposed everywhere. Meanwhile, a Chalcedonian Catholicosate was established in Armenia proper, which divided the spiritual unity of the Armenian people.

Liza Karimyan – Associate Professor at the Department of Theory and History of Religion, of the YSU Faculty of Theology. Scientific interests: Armenian-Byzantine relations. Author of a monograph and about 15 articles.
liz79k@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2020 № 2 Историко-филологический журнал

ՊԱՏՄԱԿԱՆ ՍՈՒՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Սուք գավառ, Սևանա լիճ, Այունիք, Գեղարքունիք, միջնադար, պատմիչներ, գրավոր սկզբնաղբյուրներ:

Նախաբան

Պատմական Այունիքի Սուք գավառը[1], որը միջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակված է նաև Ծավդեից կամ Սոդք անուններով, հիմնականում ընդգրկել է Սևանա լճի հարավարևելյան ավազանը՝ սկսելով լճի ամենահյուսիսային կետից, հասնելով մինչև հարավից լիճ թափվող Արծվանիստ և Կարճաղբյուր գետերի ջրբաժանը[2]: Միջնադարի տարբեր ժամանակահատվածներում Սուքի սահմաններն ընդարձակվել կամ սեղմվել են, սակայն մեծամասամբ պահպանելով վարչական առանձին միավորի կարգավիճակը[3]:

Սուք գավառի պատմությանը և սահմանների հարցի քննությանն անդրադարձել են մի շարք հայագետներ, մասնավորապես՝ Ս. Երեմյանը, Ս. Բարխուդարյանը, Թ. Հակոբյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հակոբյանը և այլոք[4]:

** Ներկայացվել է 22. VI. 2020 թ.: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի միջնադարյան հնագիտության բաժնի հայցորդ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ. Հ. Մելքոնյանը (22. VI. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 03. VII. 2020 թ.:*

[1] Սկզբնաղբյուրների հայթհայթման և պատմական տվյալների վերլուծության ընթացքին աջակցելու համար խորին երախտագիտություն ենք հայտնում աղբյուրագետ Ալեքսան Հակոբյանին, հնագետներ Արսեն Բոբոխյանին և Հուսիկ Մելքոնյանին:

[2] Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 80, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի Այունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (պատմաաշխարհագրական դիտարկումներ).– ՊԲՀ, 2003, № 1, էջ 119–146:

[3] Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Դիվան հայ վիմագրության, պր. IV. Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, Երևան, 1973, էջ 6–8:

[4] Պատմական Սուք գավառի վերաբերյալ միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև XIX դ. տեղագիրներ Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, Մ. Սմբատյանցը, Հ. Շահխաթունյանցը և Ս. Ջալալյանցը: Համմտ. Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն. Ստորագրութիւն հին Հայաստանեայց (ըստ հին եւ ըստ միջին դարերու անուանեալ ժամանակաց), Ի Վէնէտիկ ի վանս Սրբոյն Ղազարու, 1822, էջ 278, Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց

Շնորհիվ իր ռազմավարական դիրքի, խոշոր մետաղահանքերի, ճա-նապարհային հանգուցակետում գտնվելու և տեղական հզոր իշխանա-կան տների՝ Սոթքը հաճախ է եղել միջնադարյան Հայաստանի պատմա-կան կարևոր իրադարձությունների կենտրոնում:

Վաղ միջնադարյան սկզբնաղբյուրներ

Հայ միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներում Սոթքի տարածա-շրջանի վերաբերյալ ուղղակի և անուղղակի առաջին հիշատակություն-ները հանդիպում են V–VII դդ. սկզբնաղբյուրներում, մասնավորապես պատմիչներ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Հովհան Մայրագո-մեցու և Սեբեոսի երկերում, «Աշխարհացոյց»-ում և «Ջուրանամակ»-ում: Ստորև ներկայացնում ենք այդ հիշատակությունները:

Անհայտ հեղինակ, «Ջորանամակ».

1. «Հիւսիսայինն դուռն է.

Ա. Բդեշխ Գուգարայ – ՏՇ [(4.500) մարտիկ արք], ...

Դ. Ուտէացի – Ռ [(1.000) մարտիկ արք],

Ե. Ծաւդէացի – Ռ [(1.000) մարտիկ արք] ...»[5]:

2. «Արեւելեան դուռն է.

Ա. Սիւնի – ԱՔՆ [(19.400) մարտիկ արք], ...

ԺԷ. Սոդացի – Ծ [(50) մարտիկ արք]»[6]:

Բնագրի հաղորդած տեղեկությունները, թեև շատ հակիրճ են, սակայն բավական հետաքրքիր տվյալներ են պարունակում: Ուշագրավ է, որ ար-քունիքին զորք տրամադրող նախարարական տների շարքում միաժամա-նակ նշված են և՛ Ծավդեացի, և՛ Սոդացի տոհմերը, ընդ որում, առաջինը՝ երկրի հյուսիսային, երկրորդը՝ արևելյան սահմանադռները պաշտպանող-ների շարքում: Ամենայն հավանականությամբ, Ծավդեացի տոհմը, որի տիրույթները տարածվում էին Գեղարքունիք – Արցախ հատվածում, ինչ որ պահի, հավանաբար, IV դարի կեսերին, վերացել կամ թուլացել է, և նրա մասնատված տիրույթների վրա Սևանա լճի հարավարևելյան ավազանում ձևավորվել է, ինչպես բնագրում փաստվում է, ավելի հա-մեստ մի իշխանատոհմ, և նրա վրա դրվել են ոչ թե հյուսիսային, այլ արևելյան սահմանադուռը պաշտպանելու պարտականությունները: «Ջո-րանամակում» այդ երկու տոհմերի միաժամանակյա հանդես գալը, կար-ծում ենք, պայմանավորված է սկզբնաղբյուրի վերախմբագրումներով և հին տվյալների պահպանմամբ: Թեպետ, հնարավոր է նաև, որ արդեն

աշխարհի, Վենետիկ, ի Մխիթարաց վանս, ի Ս. Ղազար, 1893, էջ 63–75, Մ. Սմբատեանց. Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 31–32, 592–596, Հ. Շահ-խաթունեանց. Ստորագրութիւն կաթուղիկ էջմիածնի եւ հինգ գաւա-ռացն Արարատայ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հ. երկրորդ, 2014, էջ 379–383, Ս. Ջալալյանց. Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Բ, Երևան, 2016, էջ 311–319:

[5] Ա. Յակոբեան. «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Ջուրանամակ».– «Բազմավէպ» (Վենետիկ), 2011, № 3–4, էջ 546–547:

[6] Նույն տեղում, էջ 548–549:

տեղի էր ունեցել անտիկ շրջանի միասնական Ծավդեացվոց-Սոդուկենե նահանգի բաժանումը Արցախ և Սյունիք նահանգների միջև, որի հետևանքով առաջացել էին Սոթք գավառը Սյունիքում և Արցախի կենտրոնական գավառները (հետագայում՝ Խաչեն)[7]: Ծավդեացի տոհմի անկումով նաև կարելի է բացատրել «Գահնամակ»-ում (V դ.) նրանց բացակայությունը[8]:

Ագաթանգեղոս, *«Հայոց պատմություն»:*

1. Գլուխ ձԺԲ. *«Յայնժամ թագաւորն վաղվաղակի փութով եւ երկիւղիւ եւ մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, … մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին …»[9]:*

Պատմիչը 16 նախարարական տները թվարկելուց հետո հավելում է՝ դրանք են Հայաստան աշխարհի, Թորգոմի տան ընտիր իշխանները, կուսակալները, կողմնակալները, հազարապետները, բյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թագավորը և ուղարկեց Կապուտկացոց կողմերը, Կեսարիա քաղաքը, որը «Հայերեն Մաժաք են կոչում», որպեսզի տանելով Գրիգորին, իրենց երկրի քահանայապետ դարձնեն, ու պատրաստվեցին ճանապարհ ընկնել: Թվարկված նահանգների հերթականությունից ելնելով, կարծում ենք, որ «Ծավդեից աշխարհ» ասելով հեղինակը նկատի ուներ Արցախ աշխարհը, հետևաբար, Սևանա լճի գոնե հարավարևելյան ավազանը, որ նույնն է՝ Սոթք գավառը, ներառված էր Արցախի կազմում, և, գուցե, Արցախ աշխարհի իշխանանիստ կենտրոնն էր[10]:

Մովսես Խորենացի, *«Հայոց պատմություն»:*

1. Գիրք Բ, գլուխ Ը. *«Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»[11]:*

---

[7] *Համմտ. Ա. Յ ա կ ո բ ե ա ն. Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա–Երեւան, 2009, էջ 410:*

[8] *Համմտ. Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. «Գահնամակի» թվագրման հարցի շուրջ.– ՊԲՀ, 1976, № 2, էջ 57–74, Ա. Յ ա կ ո բ ե ա ն. Անանուն (Է դար), Աշխարհացույց. գիտա-քննական բնագիրը.– «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 2013, թ. 1–12, էջ 537:*

[9] *Ագաթանգեղայ. Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 403–404:*

[10] *Ծավդեից իշխանության, Ծավդեք և Սոդք տեղանունների նույնության վերաբերյալ մանրամասն տե՛ս Ս. Ե ր ե մ յ ա ն. «Ծաւդէացւոց իշխանութիւն».– ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1960, № 7–8, էջ 41–52, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի հարցի շուրջ.– ՊԲՀ, 1995, № 1, էջ 191–208,* А. А к о п я н. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 96; *Ա. Յ ա կ ո բ ե ա ն. Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), էջ 281, 415:*

[11] *Մովսիսի Խորենացւոյ. Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 113:*

Պատմինչը նախ նշում է, որ Հայոց հյուսիսարևելյան կողմի մեծ կողմնակալ Առան իշխանից սերող անվանի տոհմը ծագում է Սիսակից: Իսկ բնագրի մեջբերված հատվածում հավելում, որ Առանից էին սերում Ծավդեացի իշխանությունը, որոնք, ի թիվս այլ իշխանների, Հայոց Վաղարշակ Ա թագավորի (թագավորել է մ. թ. ա. 149–127 թթ.[12]) կողմից կարգվում են կուսակալներ: Խորենացու այս հաղորդումից հետագայում օգտվել են նաև Մ. Կաղանկատվացին, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը և Վարդան Վարդապետը:

2. Գիրք Բ, գլուխ ԽԶ. *«Հայց Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ ելանէ առ ափն ծովուն Գեղամայ, զթիկամբքն Արագածն կոչեցեալ լերին. աճապարէին հասանել ի բանակն Երուանդայ ...»[13]:*

3. Գիրք Բ, գլուխ ԽԴ և ԽԵ.[14] *Խորենացին նշում է, որ Երվանդին Ուտիքում լուր է հասնում, թե Պարսից արքան մեծ զորք է հավաքել, տվել Սմբատին, որպեսզի արշավի Երվանդի դեմ և երիտասարդ Արտաշեսին հասցնի իր թագավորությունը: Այդ լսելով՝ Երվանդը նախարարներից չատերին թողնում է Ուտիքում, որպես կողմնապահներ, իսկ ինքը չտապ գնում մայրաքաղաք: Շուտով Սմբատը երիտասարդ Արտաշեսի հետ հասնում է Ուտիքի սահմաններին: Տեսնելով, որ հռոմեացիների զորքերը օգնության չեն հասնում Երվանդին, այդ կողմերի զորքերը և այն նախարարները, որոնց Երվանդն էր թողել, ընդառաջ են ելնում Արտաշեսին և ընդունում նրա հպատակությունը:*

Քննարկվող իրադարձությունները ծավալվում են Հայոց արքա Երվանդ Դ Վերջինի (Ք. ա. 220–201 թթ.) կառավարման վերջին շրջանում, որոնց արդյունքում գահ է բարձրանում Արտաշես Ա-ն[15]: Բնագրից մեջբերված հատվածում Արտաշեսը Ուտիքից Սևանա լճի ափ է բարձրանում, որը, հնարավոր էր իրականացնել Ուտիքից Գեղարքունիք մտնող երեք հիմնական անցումներով՝ Սոթքի, Փառիսոսի Դռան կամ Սևանի լեռնանցքներով, և, բացառությամբ երրորդ տարբերակի, Արտաշեսի զորքերը պետք է հայտնվեին Սոթք գավառում: Ուստի, թեև տեքստում չի հիշատակվում Սոթքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Սոթքը քննարկվող իրադարձությունների թատերաբեմ է եղել: Արտաշեսի կողմից Սոթքով անցնող ճանապարհի ընտրությունը կարող էր պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ, ինչպես Խորենացին է նշում, Երվանդը

---

[12] *Համմա. Մ. Զամչեանց. Պատմութիւն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ տ[եառ]ն. 1784, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 208, Հ. Բաբսեղյան, Վ. Սարգիսեան. Երեք թագաւոր մոգերու գրոյցն հայկական մատենագրութեան մէջ եւ անոր կարեւորութիւնն, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1910, էջ 12, Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 31–32:*

[13] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 170:*

[14] *Նույն տեղում, էջ 169–170:*

[15] *Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 514–516:*

չէր վայելում այս կողմերի ազնվականության աջակցությունը, և Արտաշեսը, ըստ երևույթին, օգտագործում է նրանց կենտրոնախույս ձգտումներն իր շահերի համար՝ ավելի ապահով դարձնելով դեպի մայրաքաղաք իր զորաշարժը[16]:

4. Գիրք Բ, գլուխ ԾԹ. *«Եւ ոչ ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց ղոյզն ուրեք ...: Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի»[17]:*

Մեջբերված հատվածում Խորենացին շարունակում է ներկայացնել Արտաշեսի կողմից երկրում իրականացված բարեփոխումները՝ նշելով լճերում սահմանվում է նավագնացություն, որը նախկինում չկար: Թեև չեն նշվում վայրերը, սակայն ակնհայտ է, որ այդ շարքում առաջիններից մեկը Սևանա լիճն էր, որը մայրաքաղաքին ամենամոտ մեծ լիճն էր[18]: Թագավորի հրամանով նավագնացության «սահմանումը» ենթադրում էր համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում, մասնավորապես՝ նավաշինարաններ, նավատորմ, կառամատույցներ, լճային ճանապարհները վերահսկող ամրոց-դիտակետեր և այլն:

Արտաշեսի օրոք լճի սոթքյան հատվածի նավագնացությունը սպասարկող դիտակետեր կարող էին լինել, օրինակ, Արեգունի գավառակի Արտանիշ թերակղզու և Շորժայի ամրոցները լինել, որոնք իշխող դիրք ունեն լճի ավազանի նկատմամբ, իսկ մոտակա հարմարավետ նավահանգիստները կարող էին արևմտյան ափը ջրային ճանապարհով միացնել արևելյան ափից լեռնանցքներ բարձրացող հին ճանապարհներին[19]:

---

[16] *Համմ.* Ф. Тер-Мартиросов. Маршрут похода Арташеса к Ервандашату.– *«Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես» (Երևան), 2014, Գ, էջ 52–67:*

[17] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 188:*

[18] *Հայտնի է, որ Արտաշես Առաջինի անցկացրած հողային բարեփոխումները ինտենսիվ են իրականացվել Սևանա լճի ավազանում՝ մասնավորապես Սոթք և Գեղարքունիք գավառներում, ինչի ապացույցն են, այսպես կոչված, Արտաշիսյան սահմանաքարերի բազմաթիվ գյուտերն այս շրջաններից: Համմ.* А. Борисов. Надписи Артаксия (Арташеса), царя Армении.– «Вестник древней истории» (*այսուհետ՝* ВДИ), 1946, № 2, с. 98; К. Тревер. Две надписи арамейским письмом, найденные в районе озера Севан в 1906–1932 гг.– Очерки по истории культуры Древней Армении. М.–Л., 1953, с. 162–174; И. Дьяконов, К. Старкова. Надписи Артаксия (Арташеса I), царя Армении.– ВДИ, 1955, № 2, с. 170; Г. Тирацян. Новонайденная надпись Арташеса I, царя Армении.– ВДИ, 1959, № 1, с. 89; *Հ. Հակոբյան, Ս. Համբարձումյան, Ի. Կարապետյան. Արտաշիսյան սահմանաքարերի նոր գյուտեր Սևանի ավազանից.– Մաշտոցյան ընթերցումներ, Գ, Օշական, հոկտեմբերի 20, 2001, էջ 18, Ս. Համբարձումյան. Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ.– Հայաստանի հնագույն մշակույթը, 2, Երևան, 2002, էջ 72–76, Ն. Հազեյան, Հ. Հակոբյան, Ս. Համբարձումյան. Երկու նոր Արտաշեսյան սահմանաքար Վարդենիկից.– նույն տեղում, էջ 76–77:*

[19] *Նշված ամրոցները հայ իտալական (2004–2005 թթ.) և հայ-գերմանական (2015 թ.) հնագիտական արշավախմբերի կողմից նախնական թվա-*

Հովհան Մայրագոմեցի, «Թուղթ Մեծ Կողմանց եպիսկոպոս Դավթին»[20]:

**1. «Դաւթա՝ Մեծ Կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց՝ հատուած ի Յոհաննայ Մայրագոմեցւոյ», «*Ապա Յեսու ա-նուն քահանայ եւ Թադէոս եւ Գրիգոր, որ ի Մովսեսի կողմանէն էին, գնացին ի Դունայ եւ ելին ի Սոթից գաւառն: Եւ բնակելով յանապատն, զի կրաւնաւորք էին, սկսան ուսուցանել, եթէ զպատկերս, որ եկեղեցիս են նկարեալ, ի բաց ջնջեցէք եւ ընդ աչխարհական քահանայս մի՛ հաղորդիք: Եղեւ խռովութիւն ի գաւառին, եւ համբաւն եհաս առ Մովսէս հայրապետն: Եւ խնդոյն գրեաց, թէ փութով այսրէն եկայք: Նոքա ոչ անսացին հրամանին, այլ անտի գնացեալ բնակեցան ի ձերում Արցախական գաւառս ...» *[21]:

*Քննարկվող իրադարձությունները տեղի են ունեցել Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք (574–604 թթ.): Տեքստից պարզ է դառնում, որ Սոթք գավառը եղել է (կրոնաքաղաքական չարժում) տարածման կենտրոններից մեկը, ապա, քարոզիչները Սոթքից անցել են Արցախ: Հաջորդ կաթողիկոսի օրոք, սակայն, պատկերամարտները, որոնք Արցախից անցել էին Աղվանք, ձերբակալվում են Գարդմանի իշխանի կողմից և բերվում Հայաստան, հրաժարվում պատկերամարտությունից:

Սեբեոս, «Պատմութիւն»:

1. Գլուխ ԺԶ (ԺԴ). «Իսկ Աւտան Խորխոռունի եւ Մանուէլն Վահեւունի զաւրաւքն իւրեանց փախստական գնացին ընդ քաղաքագետղն կոչեցեալ Սաւդայ, հասանէին յաչխարհն Աղուանից ...» [22]:

Իրադարձությունները ծավալվում են այն ժամանակաշրջանում, երբ Բյուզանդիայում իշխում էր Մորիկ կայսրը (582–602 թթ.), իսկ Պարսկաստանում՝ Խոսրով Բ Ապրվեզ արքան (591–628 թթ.): Մորիկն առաջարկում է Խոսրով Բ-ին՝ Հայաստանի բյուզանդական մասի հայ իշխաններին ուղարկել Թրակիա, իսկ պարսկական մասին՝ արևելք: Հայ իշխաններն անցնում են պարսից թագավորի կողմը և ստանում մեծ պարգևներ: Պարսից արքան Հայաստան է ուղարկում արքունական հաշվարարին և

գրվել են հելլենիստական ժամանակաշրջանով: Հմմտ. Ս. Հմայակյան, Հ. Հակոբյան, Ն. Տիրացյան, Հ. Մանամյան, Հ. Սիմոնյան, Ռ. Բիչոնե, Ն. Պարմեջիանի. Գեղարքունիքի հայ-իտալական չրջիկ արշավախմբի 2004–2005 թթ. աշխատանքների հիմնական արդյունքները.– Հին Հայաստանի մշակույթը, հ. XIV. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2008, էջ 155–160:

[20] Հովհան Մայրագոմեցու՝ VII դ. առաջին կեսին գրված «Թուղթ»-ը պահպանվել է միայն Մովսես Դասխուրանցու (ուշ ձեռագրերում անվանված նաև Կաղանկատվացի) «Պատմութիւն Աղվանից աչխարհի» երկրորդ գրքի ԽԶ գլխում: Հմմտ. Ա. Յակոբեան. Յովհան Մայրագոմեցին եւ իր երկերը.– Մատենագիրք Հայոց, հ. Դ, Է դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 346:

[21] Յովհան Մայրագոմեցի. Մեծ Կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց.– Մատենագիրք Հայոց, հ. Դ, Է դար, էջ 356:

[22] Պատմութիւն Սեբէոսի, աչխատասիրութեամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 88:

նրա հետ՝ բազմաթիվ ուղտերով գանձեր: Ատատ Խոռխոռունին, Սամվել Վահևունին, Մամակ Մամիկոնյանը, Ստեփանոս Սյունին, Ամատունյաց տեր Կոտիտը, Թեոդորոս Տրպատունին և չուրջ երկու հազար հեծյալ գնում են պարսիկներին ընդառաջ և Ատրպատական աշխարհի սահմանին խլում գանձերը. իշխանները ցանկանում էին այդ գանձերով հոներին գրավել իրենց կողմը և նրանցից օգնություն ստանալով՝ պատերազմել Բյուզանդիայի և Պարսկաստանի թագավորությունների դեմ ու երկիրն ազատագրել: Ապստամբները հասնում են և բանակում Ճահուկում (Ճահուկ ավանի և համանուն բերդի ավերակները գտնվում են Նախիջևան քաղաքից 15 կմ հյուսիս-արևմուտք[23]): Պարսկա-բյուզանդական միացյալ զորքերը, հասնելով «Նախճավան», բանախոսներ են ուղարկում ապստամբների մոտ՝ «համառությունից հրաժարվելու», քրիստոնյաների միջև արյունահեղությունից խուսափելու և ենթարկվելու կոչերով, երդմամբ հավաստիացնելով, որ թագավորից վտանգ չի լինի: Շուտով ապստամբները պառակտվում են և բաժանվում: Մամակ Մամիկոնյանը, Ամատունյաց տեր Կոտիտը, Ստեփանոսը և նրանց հետ ուրիշները ևս հեռանում են ապստամբներից, ու իրենց զորքերը ենթարկում են պարսից արքայի ծառայությանը: Իսկ Ատատ Խոռխոռունու և Սամվել Վահևունու հավատարիմ ուժերը նահանջում են Սոթք, ապա Աղվանք և բանակում Կուրի ձախ ափին: Հետապնդողները հասնելով նրանց՝ բանակ են դնում գետի աջ ափին: Հոների ռազմական օգնությունն այդպես էլ չստանալով՝ ապստամբների մի մասը գնում է հոնաց թագավորին ծառայելու, իսկ մյուս մասը հետագա պայքարից հրաժարվում և վերադառնում է երկիր:

Քննարկվող տեքստում հետաքրքիր է այն, որ Սոթք տեղանունն առաջին անգամ է հիշատակվում Սողայ (ուղղական՝ Սող) ձևով, որն առավել մոտ է ներկայիս անվանը, ի տարբերություն ավելի վաղ հիշատակություններում հանդիպող Ծավդեք ձևի: Նաև առաջին անգամ է, որ հիշատակվում է ոչ թե գավառանունը, այլ կոնկրետ բնակավայրը: Տեքստում անուղղակի նաև փաստվում է Արարատյան դաշտը՝ Աղվանքին կապող ճանապարհի սոթքյան հատվածի մասին[24]:

Անանուն Հեղինակ (VII դ.), *Աշխարհացույց*.

1. «Թ. Աշխարհ՝ Սիւնիք, ընդ մէջ կալով երասխայ եւ Արձախայ՝ յելից Այրարատոյ: Ունի գաւառս երկոտասան. զԵրնջակայ, զՃահուկ, զՎայոց Ձոր, զԳեղարքունի՝ զհմանուն ծովովն, զՍոթս ... »[25]:

Բնագրից պարզ է դառնում, որ Սոթքն առանձին գավառ էր և ներառված էր Սյունիքի կազմում (գավառացանկում՝ հինգերորդը)[26]:

---

[23] *Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 597:*

[24] *Հմմտ. Բ. Առաքելյան. Դվին-Պարտավ ճանապարհի* Sisajan-Gelakuni *գծամասը.– ՊԲՀ, 1968, № 1, էջ 212–220:*

[25] *Ա. Յակոբեան. Անանուն (Է դար). Աշխարհացոյց. գիտա-քննական բնագիրը, էջ 138–140:*

[26] *Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Սաւդք/Զաւդէք գավառն ունենր մոտ 2.045 կմ^2 տարածք: Հմմտ. Ա. Սոխակյան. Հանրագիտակ Հայոց պատմության*

Զարգացած և ուշ միջնադարյան սկզբնաղբյուրներ

Սոթքի տարածաշրջանի վերաբերյալ ուղղակի և անուղղակի հիշատակությունները չարունակվում են նաև ուշ շրջանի հայ պատմագրության մեջ՝ մասնավորապես Մովսես Դասխուրանցու, Ստեփանոս Կրոնավորի, Հովհաննես Դրասխանակերտցու, Ուխտանես Եպիսկոպոսի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Վարդան Վարդապետի, Կիրակոս Գանձակեցու, Ստեփաննոս Օրբելյանի և Առաքել Դավրիժեցու ստեղծագործություններում: Ստորև ներկայացնում ենք այդ հիշատակությունները:

Մովսես Դասխուրանցի (Կաղանկատվացի), *«Պատմություն Աղվանից աշխարհի»:*

1. Հ. առաջին, գլուխ Դ. *«Ի սորա՝ Առանայ ծննդոց, ասեն, արք անուանիք և քաջք կարգեցան կողմնակալք բիւրաւորք ի Պարթևէն Վաղարշակայ: Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտեացւոց, Գարդմանացւոց և Ծաւղիացւոց և Հարգարացւոց իշխանութեանց»*[27]*:*

Հեղինակը, փաստորեն, կրկնում է Խորենացու արտահայտած միտքը:

2. Հ. առաջին, գլուխ Ը. *«Իսկ ի չահատակելն Արտաշեսի ի վերայ Արուանդայ՝ էր նա ի սահմանս Աղուանից՝ յՈւտի գաւառի, թողու անդէն զզաւրսն եւ ինքն գնայ յիւր քաղաքն: Եւ եկեալ Արտաշէս միաբանէ զզաւրսն Աղուանից ընդ ինքեան եւ ելանէ առ ափն ծովակին Գեղամայ. եւ սոքաւք վանէ զԵրուանդ եւ ինքն տիրէ Հայաստանեայց»*[28]*:*

Պատմիչը նշում է, որ նկարագրում է ըստ Մովսես Խորենացու: Մենք, ունենալով նաև նկարագրության Խորենացու տարբերակը, այստեղ ստանում ենք լրացուցիչ տեղեկություն այն մասին, որ Արտաշեսը Սևանա լճի ափ է գալիս Աղվանքից, ինչն ավելի հավանական է դարձնում ամենակարճ ճանապարհով՝ Սոթքի լեռնանցքով (գուցե նաև Փառիսոսի դռնով) լճափ հասնելու վարկածը:

3. Հ. երկրորդ, գլուխ ԺԶ. *«Յերկրորդ ամի Արտաշրի՝ որդւոյ Կաւատայ Պարսից արքայի [յամի Տեառն 629] մինչ դեռ եւ սա առնէր նա զիշխանութիւնն ըստ կամս իւր, իշխանն հիւսիսոյ զաւրանայր բռնութեամբ յամենայն հրամանս իւր: Եւ եղ զահ եւ զերկիւղ ընդ երեսս երկրի, եւ առաքեաց գործակալս ի վերայ ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկեձնութեան եւ արծաթահալութեան եւ երկաթահանութեան եւ պղնձագործութեան ունէին: Նա եւ զանցս վաճառաց զկարթընկէցս ճկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ եւ Երասխայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր, և զդիղրաքմայան ըստ սովորութեան աշխարհագրին Պարսից թագաւորութեանն: Եւ իբրեւ ստուգեաց զամենայն բարութիւնս երկրիս՝ եւ հաստատեաց ի միտս իւր զոչ ծածկեալն ի նմանէն, եղ ի մտի իւրում ի ժամանակս ամառնային վարել յաշխարհն Հայոց եւ գնոսա եւս սահմանակցաւք իւրեանց ածել ի հնազանդութիւն …*

աղբյուրագիտության (հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 2019, էջ 495:

[27] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ 8:*

[28] *Նույն տեղում, էջ 13:*

Արդ՝ իբրեւ եհաս իշխանն առաջապահ նորա յաշխարհն Հայոց, լսէր այնուհետեւ զգալն ընդդէմ նորա զաւրավարին Պարսից, ընկճեալ կայր իբրեւ զաւճ ի ճանապարհին դարանակալ եւ պահէր առաջի նորա զճանապարհն ... Եւ իբրեւ եղեն իրազեկ Թշնամիքն, յառաջ քան զգալ նոցա դարան գործեալ ի ճանապարհին՝ կէսն ընդդէմ նոցա ճակատեալ կային: Եւ բախեալ ընդ միմեանս՝ իսկոյն ի փախուստ դառնային ... Եւ յարուցեալք աստի անտի գոչէին ի վերայ նոցա. եւ չուրջ պատեալ որպէս հուր յեղէգն զեզերք ծովուն Գեղամայ՝ ոչ թողին ՚ի նոցանէ եւ ոչ մի. եւ ոչ ոք էր, որ գուժկան լինէր այնչափ արանց ...»[29]:

Իրադարձութիւնները տեղի են ունեցել 629–630 թթ.: Խազարները նախ գործակալներ են ուղարկում Հայաստանի հանքերը ստուգելու, ապա ներխուժում և ճակատամարտում խորամանկութեամբ հաղթում են պարսիկներին: Կարծում ենք, որ մետաղագործների մոտ ուղարկված գործակալները պետք է ստուգած լինեին նաև Սոթքի ոսկու հանքերը, որոնք ամենակարևորներից էին տարածաշրջանում: Իսկ Սևանա լճի մոտ տեղի ունեցած ճակատամարտը պետք է եղած լինի կամ հյուսիսային ափին, կամ հարավարևելյան՝ Սոթքի լեռնաղաշտում, քանի որ միայն այդ երկու հատվածներն են հարմար զորքի բացազատման համար: Նաև այդ երկու հատվածներից էր (Սոթքի/Փառիսոսի դռան և Դիլիջանի լեռնանցքներով), որ խազարները կարող էին մտնել Սևանա լճի ավազան:

4. Հ. երկրորդ, գլուխ ԽԶ. «*Ապա Յեսու անուն քահանայ եւ Թադէոս եւ Գրիգոր, որ ի Մովսեսի կողմանէն էին, գնացին ի Դունայ եւ ելին ի Սոթից գաւառն: Եւ բնակելով յանապատսն, զի կրաւնաւորք էին, սկսան ուսուցանել, եթէ զպատկերս, որ եկեղեցիս են նկարեալ, ի բաց ջնջեցէք եւ ընդ աշխարհական քահանայս մի՛ հաղորդիք: Եղեւ խռովութիւն ի գաւառին, եւ համբաւն եհաս առ Մովսէս հայրապետն: Եւ իսկոյն գրեաց, թէ փութով այսրէն եկայք: Նոքա ոչ անսացին հրամանին, այլ անտի գնացեալ բնակեցան ի ձերում Արցախական գաւառս ...»*[30]:

Կաղանկատվացին, փաստորեն, հատվածը վերցրել է Հովհան Մայրագոմեցու թղթից, որի վերլուծությանն անդրադարձանք վերևում:

5. Հ. երրորդ, գլուխ Ի. «*Եւ անտի ի միւս տարին էանց Բաբան ի գաւառն Գեղարքունի եւ էարկ ի սուր զբնակիչսն ոգիս իբրեւ տասն եւ հինգ հազարս. եւ զմեծ մայրաքաղաքն Մաքենացւոց այրեաց, մնաց միայն ջրաղացն եւ այլ ոչ ինչ ...»*[31]:

Իրադարձությունները տեղի են ունենում 827 թ.: Թեև նշված է Գեղարքունիք գավառը, սակայն տեքստից երևում է, որ թշնամին ավերել է Սոթքի Մաքենյաց վանքը և սրի քաշված չուրջ 15.000 բնակչության գոնե մի զգալի մասը Սոթք գավառից էին: Հետևաբար, հեղինակը նշելով Գեղարքունիք ընդհանրական տեղանունը՝ նկատի է ունեցել Սևանա լճի չրջակայքն ընդհանրապես՝ բուն Սոթք գավառը ներառյալ: Հետագայում այս իրադարձությունը հպանցիկ ներկայացնում է նաև Վարդան Վարդապետը:

---

[29] *Նույն տեղում, էջ 166–169:*
[30] *Նույն տեղում, էջ 268:*
[31] *Նույն տեղում, էջ 326–327:*

6. Հ. երրորդ, գլուխ ԻԳ. «*Տիկինն Սպրամ յառաւել բարեգործութիւնս յաճախէր. եւ մեծածախ տենչմամբ չինէ զ Նորավանս ի գաւառին Սողկից ամենապայծառ զարդուք ...*»[32]:

Իրադարձությունները տեղի են ունենում 820–850-ական թվականներին: Իշխանուհի Սպրամի կողմից Սոթքում կառուցված Նորավանքի տեղն անհայտ է, և այդ մասին այլ տվյալներ մեզ հայտնի չեն:

Ստեփանոս Կրոնավոր, «*Ստեփաննոսի վերնագիր ինքնագրութեան վասն վարուց երանելոյն Մաշտոցի*»:

1. «Եւ ի գաւրանալ բռնակալութեան տաճկաց ի վերայ գաւառին, ելեալ հայրն նորա ի տիս մանկութեան գնացեալ բնակեցաւ պանդխտութեամբ ի գաւառին Սողից»[33]:

Ստեփանոս Կրոնավորը ապրել է IX դարում և աշակերտել Մաշտոց Եղվարդեցի (Սևանցի) կաթողիկոսին: Իր ուսուցչի կյանքի մասին պատմող փոքրածավալ այս աշխատանքից մեջբերված հատվածում հեղինակը պատմում է, որ ապագա կաթողիկոսի հայրը տաճիկների ծանրացած լուծը թողնելով՝ Եղվարդ գյուղից պանդխտության է գնում Սողք գավառ, որտեղ և ծնվում է Մաշտոցը: Հոր մահից հետո սովորում է Մաքենյաց վանքում ու ստանում քահանայության աստիճան[34]: *Այստեղ ուշագրավ է այն, որ Մաքենյաց վանքը, ինչպես կաղանկատվացու մոտ էր, նշվում է որպես Գեղարքունիք գավառի վանք, ինչը նշանակում է, որ Մաքենյաց գետահովիտն IX դարում գուցե Սոթք գավառի կազմում չէր: Իսկ Սոթք պանդխտության մեկնելու պատճառը կարող էր լինել գավառի՝ առավել բարեկեցիկ և ապահով լինելը:*

Հովհաննես Դրասխանակերտցի, «*Հայոց պատմութիւն*»:

1. «Բայց առաւել եւս քան զյոլով Հայկազանցն գրոհի իշխանն Գրիգոր եւ նորին եղբարք՝ Սահակ եւ Վասակ, որք հայրենական սեպհականութեամբ տիրէցին գաւառացն, որք չրջապատեալ կան չուրջ զեզերը ծովակին Գեղամայ ...»[35]:

Իրադարձությունները տեղի են ունեցել Հայոց արքա Սմբատ Ա Նահատակ Բագրատունու իշխանության տարիներին (891–914 թթ.), երբ երկրում ստեղծվել էր խաղաղ աշխատանքով՝ այգեգործությամբ, անասնապահությամբ, գինեգործությամբ զբաղվելու, եկեղեցիներ կառուցելու բարենպաստ պայմաններ: Դադարել էին Թշնամիների ասպատակությունները, սիրո և միաբանության դաշինք էր կնքվել (893 թ.) Սմբատ արքայի և Բյուզանդիայի Լևոն Դ Իմաստասեր թագավորի միջև: Թեև բնագրում Սոթքի մասին խոսք չկա, սակայն ակնհայտ է, որ Սևանա լճի առափնյա

---

[32] *Նույն տեղում, էջ 340:*

[33] *Ստեփաննոս Կրաւնաւորի.— Մատենագիրք Հայոց, հ. Թ, Թ դար (Յաւելուած), Անթիլիաս–Լիբանան, 2008, էջ 698–699:*

[34] *Մաշտոց Եղվարդեցու մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան. Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոս. պատմութիւն (ուսումնասիրութիւն եւ Թ դարի բնագրի վերականգնման փորձ). — «Հանդէս ամսօրեայ», 2014, № 1–12, էջ 1–54:*

[35] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ. Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 199:*

գավառների տիրակալ, չինարար եղբայրների տիրույթների թվում էր նաև Սոթք գավառը: Այդ մասին պատմիչը գրեթե նույնությամբ կրկնում է նաև իր «Պատմության» այլ էջում[36]*:*

Ուխտանես եպիսկոպոս, *«Հայոց պատմություն»:*

1. Հատված առաջին, գլուխ ԿԹ. *« Ապա այնուհետեւ թագաւորն գումարեալ գունդ ի գլխաւոր նախարարացն իւրաքանչիւր գաւրաւք ... եւ գիշխանն Սիւնեաց, եւ գիշխանն Ծավդեաց աշխարհին, եւ գիշխանն Ուտիացւոց ... և հանեալ զ Գրիգոր յոսկիապատ կառս արքունականս, եւ գային հասանէին ի քաղաքն Կեսարացւոց: ... »*[37]*:*

Հատվածը վերաբերում է Գրիգոր Լուսավորչի՝ քահանայապետ օծման իրադարձություններին և քաղված է Ագաթանգեղոսի պատմությունից:

2. Հատուած երրորդ. *«Մկրտութիւն ազգին այնմիկ Ծաղն կոչեցեալ»*[38]*:*

Պատմության այս հատվածից պահպանվել է միայն վերնագիրը: Ենթադրվում է, որ այն նվիրված է եղել X դարում ծայրաստիճան սրված հակաբյուզանդական դավանաբանական չարժմանը, որը հետևանք էր հայ պետականության վերականգնման և եկեղեցու դիրքերի ամրապնդման: Դավանաբանական չարժման արդյունք էր նույն դարի 60-ական թվականներին Անանիա Մոկացի կաթողիկոսի հրապարակած հայ եկեղեցու կյանքում խիստ բացառիկ կրկնամկրտության օրենքը՝ վերստին մկրտել բյուզանդական ծեսով մկրտվածներին և դարավերջին Խաչիկ Արշարունի կաթողիկոսի նախաձեռնությամբ Ծավդեացվոց գավառի հունադավան հայերի կրկնամկրտությունը, որին նվիրված է Նարեկավանքի առաջնորդ Անանիա Նարեկացու աշակերտ Ուխտանեսի պատմության երրորդ մասը: Դա եղել է քաղաքական խոշոր իրադարձություն, որին մասնակցել են արքունական և իշխանական զորքերը, ինչպես նաև հոգևորականների մեծ բազմություն, որոնք զենքի ուժով գավառի բնակչությանը կրկին ենթարկել են հայ եկեղեցուն և պետական իշխանությանը[39]*:*

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, *«Տիեզերական պատմություն»:*

1. Առաջին հանդոս, գլուխ Ե. *«Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ բիւրաւոր կողմնակալ ի Պարթևէն Վաղարշակայ: Ի սորա ծննդոց սերեցան ազգք Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծավդէացւոց և Գարգարացւոց »*[40]*:*

Հատվածը նույնությամբ քաղված է Մովսես Խորենացու պատմությունից, որի քննարկումը կատարել ենք վերևում:

---

[36] *Նույն տեղում, էջ 298:*

[37] *Ուխտանէս եպիսկոպոս.— Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար. Պատմագրութիւն, գիրք Բ, Երեւան, 2011, էջ 502:*

[38] *Նույն տեղում, էջ 441–443:*

[39] *Համմա. Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դաւանաբանական երկը.— Մատենագիրք Հայոց, հ. Ժ, Ժ դար, Երևան, 2011, էջ 456–457, Յ. Քէոսէեան. Խաչիկ Արշարունի.— Մատենագիրք Հայոց, հ. Ժ, Ժ դար, էջ 661–664:*

[40] *Ստեփանոս Տարսեցի Ասողիկ.— Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար. Պատմագրութիւն, գիրք Բ, էջ 659:*

Վարդան Վարդապետ, «Հավաքումն պատմութեան»:

1. «Առան ոմն կողմնապետ արևելից հիւսիսոյ կացուցանէ, յորմէ սերեցան ազգն Ուտիացւոց և Գարդմանացւոց և Գարգարացւոց և Ծոդացւոց … »[41]:

Պատմիչը կրկնում է Մովսես Խորենացու միտքը:

2. «Յաւուրսն յայնոսիկ այր մի յազգէն Պարսից Բաբ անուն ելեալ ի Բաղտատայ, … եւ եկն մինչև ցԳեղարքունի, և մաշէր սրով զմեծ և զփոքր …»[42]:

Հեղինակը հակիրճ կրկնում է Մովսես Դասխուրանցու միտքը:

Վարդան Վարդապետի մյուս աշխատությունը, որտեղ տեղեկություններ կան Սոթքի մասին, «Աշխարհացոյց»-ն է:

Գ գլխում կարդում ենք հետևյալը. «Սոթից գաւառն Ծառայ երկիրն է: Գեղամ Գեղարքունի է, ուր կայ ուխտն Մաքենիս, եւ Սեւան կղզին ի մէջ ծովուն … »[43]:

Բնագրից կարելի է ենթադրել, որ հեղինակի ապրած ժամանակաշրջանում՝ XII դ. առաջին կեսին, Սոթք գավառի տարածքները պատկանում էր Գեղարքունիք և Ծար (Վայկունիք) գավառներին:

Կիրակոս Գանձակեցի, «Հայոց պատմութիւն»:

1. Գլուխ Դ. «Եւ Զաքարէ էր զօրավար Վրաց և Հայոց զօրուն, որ ընդ ձեռամբ թագաւորին Վրաց, իսկ Իւանէ՝ աթաբակութեան պատուով: Սոքա բազում մարտս քաջութեան ցուցին. քանզի զբազում աշխարհս Հայոց, զոր ունէին Պարսիկք և Տաճկունք, առին ի նոցանէ յինքեանս՝ զգաւառս, որ չուրջ զծովովն Գեղարքունւոյ … »[44]:

Թեև ուղղակիորեն չի նշված, սակայն, անշուշտ, XIII դ. առաջին տասնամյակում Զաքարյան եղբայրների կողմից ազատագրված Սևանա լճի շրջակա գավառների մեջ էր նաև Սոթքը[45]:

Ստեփաննոս Օրբելյան, «Սյունիքի պատմութիւն»:

1. Գլուխ Գ. «Զորրորդ՝ Սոթից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոց և դառնաչունչ օդոցն կոչեցաւ Սոթք … »[46]:

Պատմիչը թվարկում է Մեծ Հայքի 3-րդ աշխարհի՝ Սյունիքի 12 գավառները և ստուգաբանում դրանց անունները: 4-րդ գավառը Սոթքն է, որի անունը ստուգաբանում է որպես «բուք և դառնաչունչ օդ»[47]:

---

[41] Վարդանայ Վարդապետի. Հավաքումն պատմութեան, ի Վենետիկ, 1862, էջ 30:

[42] Նույն տեղում, էջ 79:

[43] Հ. Պէրպէրեան. Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, քննական հրատարակութիւն, Բարիզ, 1960, էջ 12:

[44] Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 162–163:

[45] Հմմտ. Հ. Ժամկոչյան, Ա. Աբրահամյան, Ս. Մելիք-Բախշյան, Ս. Պողոսյան. Հայ ժողովրդի պատմություն: Սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան, 1975, էջ 497–498:

[46] Ստեփաննոս Օրբէլեան. Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 12:

[47] «Սոթ» բառը ստուգաբանվում է նաև որպես «պինդ, կարծր և հաստատուն»: Հմմտ. Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, Հ. Դ, Երևան, 1979, էջ 238:

2. Գլուխ ԼԷ. «*Յայսմ ժամանակի պայծառանայր երանելին Մաշտոց ի Սևան կղզին մեծահանդէս առաքինութեամբ. որ էր որդի աշխարհիկ երիցու մի Գրիգոր անուն Եղիվարդեցի. և եկեալ էր ի Սոթք գաւառ և պանդխտանայր այդ. որ և ետ զՄաշտոց յաշակերտութիւն սուրբ հօրն Մաքենոցաց Ստեփաննոսի …*»[48]:

Հեղինակը ներկայացնում է Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոսի կենսագրական մանրամասները՝ որոշ խմբագրումներով կրկնելով Ստեփանոս Կրոնավորի տեղեկութիւնները:

3. Գլուխ ԽԲ. «*… տայ և ի Գեղաքունի, ի Սոդից գաւառի գՅորասանկիբակ …*»: *Նշված է, որ 906 թ. Տաթևի եպիսկոպոսարանի մեծ կաթողիկե եկեղեցու կառուցման տոնի առթիվ Հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորը, ի թիվս այլ բնակավայրերի, սուրբ եկեղեցուն է ընծայում նաև Գեղարքունիքի Սոթք գավառի Խորասանաբակը*[49]:

Բնագրից կարելի է ենթադրել, որ X դարում Սոթք գավառը, որպես առանձին վարչատարածքային միավոր՝ ներառված էր Գեղարքունիքի կազմում կամ՝ Գեղարքունիք ասելով՝ հեղինակը նկատի է ունեցել ընդհանրապես Սևանի ավազանը:

4. Գլուխ ԾԱ. «*Դարձեալ էր գիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սոդից սահմանի, Վաղաւեր անուն, զոր տուեալ էր վաղ ժամանակօք, Տիգրան՝ մեծ նահապետ ի Սիսական տոհմէ …*»[50]:

Իրադարձությունը տեղի է ունեցել 925 թ.: Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբը Տաթևի վանքին պատկանող Գեղարքունիքի Վաղավեր գյուղը հետու լինելու պատճառով փոխանակումով հանձնում է Սյունյաց իշխան Ջագիկին՝ փոխարենը ստանալով Սյունիքի Բաղք գավառի Տաշտակերտ գյուղը: Ուշագրավ է, որ հեղինակը նշում է, որ Վաղավերը գտնվում էր Սոթքի սահմանին:

5. Գլուխ ՀԴ. *Ներկայացված է Սյունիքի 12 գավառների եկեղեցու հարկացուցակն ըստ հին սահմանվածի*[51]: *Գավառացանկում Սոթքն այս անգամ 5-րդն է, նշված են նաև բնակավայրերը և յուրաքանչյուրից գանձվող հարկաչափը: Սոթք գավառը, որ ներառում էր 75 գյուղ, երկրորդ ամենաշատ հարկ վճարողն էր եկեղեցուն (զիջում էր միայն Վայոց ձոր գավառին):*

Առաքել Դավրիժեցի, «*Պատմութիւն*»:

1. Գլուխ Է. «*Եւ ապա խորհեցան Ջալալիքն գնալ յերկիրն Գեղամայ, քանզի գիտէին թէ անդ են համբարք ցորենոյ և գարւոյ, և ջոկք ոչխարաց և անդէոց, որ է պախրէք՝ յոլովք գոն: Վասն որոյ յոլովք ի զօրացն Ջալալոց, եւեալ գնացին յերկիրն Գեղամա և զբազում գիւղս կողոպտեալ*

[48] *Ստեփաննոս Օրբէլեան. նշվ. աշխ., էջ 173:*

[49] *Նույն տեղում, էջ 228–229: Համմտ. Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 794:*

[50] *Ստեփաննոս Օրբէլեան. նշվ. աշխ., էջ 272:*

[51] *Նույն տեղում, էջ 514–515:*

աւար հարին: Եւ բացեալ զհամբարս նոցա զցորենոյ և զգարւոյ, և նոցին տեարց ձեռօքն բարձին նոցին անասնոցն, և զնոսին կալան պահակ՝ որ է կոռ, վարող և քշող բեռնակիր անասնոցն, որովք բերէին զցորենն ի բնակարանս իւրեանց: Այլ և զկանայս, և զտղայս գերեցուցին բերին ընդ ինքեանս. որպէս զի տեարք գերեացն արծաթ և ոսկի վասն նոցին գնոցն բերեալ դարձուացեն զգերիսն ...»[52]:

Ջալալիների արշավանքը դեպի Սևանա լճի ավազան տեղի է ունեցել 1606 կամ 1607 թվականին, և, կարծում ենք, որ Գեղարքունիք ասելով՝ հեղինակը նկատի է ունեցել նաև Սոթք գավառը, քանի որ Սևանի ավազանում ցորենի ու գարու մշակման համար հիմնական հարթավայրը Սոթքի լեռնաղաշտն է: Խոսելով արշավանքի հիմնական նպատակը եղած և գավառի հարստությունը համարված ցորենի ու գարու պաշարների մասին՝ հեղինակը որևէ խոսք չի ասում Սոթքի ոսկու հանքերի վերաբերյալ, ինչից կարող ենք ենթադրել, որ այդ ժամանակ ոսկու հանքերը չէին շահագործվում կամ շահագործվում էին շատ փոքր ծավալներով, այլապես հարստություն որոնող Ջալալիները կփորձեին թալանել դրանք: Միևնույն ժամանակ Առաքել Դավրիժեցին խոսում է ոսկով և արծաթով հայ բնակչության փրկագնման մասին, ինչը ցույց է տալիս ավազանի բնակչության հարուստ լինելու հանգամանքը:

2. Գլուխ Ը. «*Ելեալ շահն ի Թիֆլիսու՝ գնաց ի գաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահաբասն իջևանեցաւ ի տան մելիք Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ, բնական ի նոյն գեղջէն: Եւ էր մելիք Շահնազարս յազգէն Հայոց՝ և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն շահին որպէս վայել է թագաւորի...: Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք չքեղացուցեալ խիլայեաց. և պարգևեաց նմա զիշխանութիւն մելիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա եւ եղբարց նորա: Եւ հաստատուն նոմոս գրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան:*

Եւ անտի յարուցեալ կամկար գնացիւք եհաս ի Թարվէզ ամենայն զօրօքն իւրովք ...»[53]:

Իրադարձությունը տեղի է ունեցել 1606 թ., երբ Պարսկաստանի Շահ-Աբբաս Ա արքան հյուրընկալվել է Սոթքի Մեծ Մասրիկ գյուղում:

Եզրակացություն

Ներկայացված սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները ուշագրավ են և կարիք ունեն բազմակողմանի վերլուծության (տե՛ս աղյուսակը): Այդ

[52] *Առաքել Դաւրիժեցի. Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 106:*

[53] *Նույն տեղում, էջ 114:*

ԱՂՅՈՒՍԱԿ

ՍՈԹՔԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

№	Պատմիչը	Պատմիչի ապրած ժամանակը	Նկարագրվող իրադարձության ժամանակը	Սոթք/ Մավդեք անվան հիշատակության քանակը	Իրադարձության բնույթը	Սոթքին վերաբերող կարևոր արձանագրումները
1.	«Ջուղայեցի»	IV դ.	IV դ.	2	քաղաքական, ռազմական	Սոթքի իշխաններին նախ վերապահված էր Հայաստանի հյուսիսային, ապա արևելյան դռան պաշտպանությունը
2.	Ագաթանգեղոս	V դ.	IV դ.	1	կրոնական	Մավդեքը երկրի հզոր իշխանություններից մեկն է
3.	Խորենացի	V դ.	Մ. թ. ա. III–II դդ.	1	քաղաքական, ռազմական	Մավդեացի իշխանները ծագում են Սիսակից սերող Առանի տոհմից: Սևանի ավազանով է անցնում Ուտիք-Արարատյան դաշտ ճանապարհը: Սևանա լճում նավագնացություն կար
4.	Մայրագոմեցի	VII դ.	VII դ.	1	կրոնական	Սոթքը հանդիսացել է քրիստոնեական մի աղանդի տարածման կենտրոն
5.	Սեբեոս	VII դ.	VI դ.	1	ռազմական	Սոթքը քաղաքագյուղ է
6.	«Աշխարհացոյց»	VII դ.	VII դ.	1	վարչական	Սոթքը Սյունիքի 5-րդ գավառն է
7.	Ստեփանոս Կրոնավոր	IX դ.	IX դ.	1	կրոնական	Սոթքը և Գեղարքունիքը առանձին գավառներ են: Մաքենյաց վանքը Գեղարքունի գավառի կազմում է
8.	Դրասխանակերտցի	IX–X-րդ դդ.	X դ.	–	վարչական	Սոթք գավառը առանձին վարչատարածքային միավոր է
9.	Դասխուրանցի (Կաղանկատվացի)	X դ.	Մ. թ. ա. III–II, մ. թ. VII և մ. թ. IX դդ.	3	ռազմական, կրոնական, չինարարական	Մավդեացի իշխանները ծագում են Սիսակից սերող Առանի տոհմից: Սևանի ավազանով է անցնում Ուտիք-Արարատյան դաշտ ճանապարհը
10.	Ուխտանես	X դ.	IV, X դդ.	2	կրոնական, քաղաքական	Մավդեքը երկրի հզոր իշխանություններից մեկն է: «Մաւղէացւոց» գավառում իրականացվել է հայ եկեղեցու կյանքում խիստ բացառիկ կրկնամկրտություն իրադարձություն
11.	Ստեփանոս Տարոնեցի	X–XI դդ.	Մ. թ. ա. II դ.	1	վարչական	Մավդեացի իշխանները ծագում են Սիսակից սերող Առանի տոհմից
12.	Վարդան Վարդապետ	Մ. թ. ա. II դ., մ. թ. XIII դ.	IX դ.	1	քաղաքական, ռազմական, վարչական	Մավդեացի իշխանները ծագում են Առանի տոհմից: Սոթք գավառը Մարի երկիրն է
13.	Գանձակեցի	XIII դ.	XIII դ.	–	ռազմական	Սոթքը ներառված է Զաքարյանների տիրույթներում
14.	Օրբելյան	XIII–XIV դդ.	IX դ., X դ., XIII–XIV դդ.	7	վարչական	«Սոթք» նշանակում է բուք և դառնաշունչ օդ: Սոթքը Սյունիքի 4-րդ գավառն է
15.	Դավրիժեցի	XVI–XVII դդ.	XVII դ.	–	ռազմական, քաղաքական	Սոթք գավառում են երկրի հացահատիկի հիմնական շտեմարանները, անասնապահական կենտրոնները, բնակիչները հարուստ են (ոսկի ու արծաթ ունեն)

տվյալները վերաբերում են տարբեր ժամանակներում տեղի ունեցած իրադարձություններին. ընդ որում, երբեմն ուշ շրջանի սկզբնաղբյուրը կրկնում են ավելի վաղ սկզբնաղբյուրների հաղորդումները:

Սոթքի վերաբերյալ տեղեկություններն ունեն նաև ժամանակագրական մեծ ընդգրկում՝ մ. թ. ա. III դարից մինչ մ. թ. XVII դար: Պարզվում է, որ Սևանա լճի հարավարևելյան ավազանը ներառող վարչական միավորի անունը Ծավդեից ձևով հիշատակվում է մինչև V դարը տեղի ունեցած իրադարձությունների նկարագրություններում: Հետագա դարերին վերաբերող սկզբնաղբյուրներում հիշատակվում է Սող/թք ձևով: Ավելի ուշ շրջանում, մասնավորապես՝ XIII–XIV դդ., Սող/թք անվանը զուգահեռ երբեմն օգտագործվում էր նաև Գեղարքունիք անվանումը՝ ամբողջ Սևանի ավազանը, այդ թվում՝ Սոթք գավառը նշելու համար: Պարզվում են նաև Ծավդեքը՝ Սոթքի վերածվելու հանգամանքի որոշ մանրամասներ, որը, ենթադրվում է, պայմանավորված էր IV դարի կեսերին Ծավդեացի ընդարձակ իշխանության տրոհմամբ և Սևանա լճի հարավ-արևելյան ավազանում նրա իրավահաջորդի՝ Սողացի տոհմի հաստատմամբ:

Պատմիչների մոտ Սոթքը հաճախ է հիշատակվում Արարատյան դաշտից դեպի Արցախ կատարված նշանակալից ռազմական կամ այլ տեղաշարժերը նկարագրելիս, հետևաբար, անուղղակիորեն փաստվում է Սոթքի լեռնանցքով ռազմավարական ճանապարհի գոյությունը՝ սկսած մ. թ. ա. III դարից: Անուղղակիորեն հաղորդվում է, որ դեռևս մ. թ. ա. II դարում Սևանա լճում նավագնացություն կար, հետևաբար, Սոթքի լճափնյա բնակավայրերում զարգացած էր նաև ջրային հաղորդակցությունը:

Պատմիչներն ուշագրավ տվյալներ են հաղորդում Սոթքի տեղական իշխանատոհմերի, թշնամիների արյունալի ասպատակությունների և նվաճումների, գավառում տեղի ունեցած կարևոր այլ իրադարձությունների մասին: Հիշատակվում են հոգևոր կենտրոններ, խոսվում է գավառում ծավալված շինարարական աշխատանքների մասին: Տվյալներ կան Սոթքի տարածաշրջանի՝ երկրի հացահատիկի չեմարաններից մեկը լինելու[54] և զարգացած առևտրատնտեսություն ունենալու մասին:

Կարևոր են նաև Սոթքի ոսկու հանքերի վերաբերյալ Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացու) և Առաքել Դավրիժեցու հաղորդած անուղղակի տվյալները՝ առաջինը խազարների, իսկ երկրորդը ջալալիների՝ տարածաշրջանի կատարած արշավանքների մասին: Մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ VII դարում Սոթքի ոսկու հանքերը, ինտենսիվ գործել են և խազարների համար կարևոր է եղել մինչ արշավանքը մետաղական հանքերի պաշարների գնահատումը, որի նպատակով էլ հատուկ գործակալներ են ուղարկվել տարածաշրջանի մետաղագործների, այդ թվում՝ ոսկի արդյունահանողների մոտ: Դրան հակառակ՝ XVII դարում ոսկու հանքերը կամ չեն շահագործվել, կամ շահագործվել են շատ փոքր ծավալներով, այլապես պատմիչը, խոսելով տարածաշրջան ասպատակած ջալալիների մասին ու նկարագրելով արշավանքի նպատակ տարածաշրջանի հարստությունները՝ հացահատիկի ընդարձակ ցանքատարածութ-

[54] *Համմտ. Մ. Սմբատեանց. նշվ. աշխ., էջ 595, Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 63:*

յունները և զարգացած անասնապահությունը, որևէ խոսք կասեր ոսկու արդյունահանման մասին (թեև հաջորդ նկարագրությունից պարզ է դառնում, որ տեղի բնակչությունը հարուստ էր, և գերիների համար կարողանում էր ոսկով ու արծաթով փրկագին վճարել):

Ուշագրավ են նաև Սոթք գավառում տեղի ունեցած կրոնաքաղաքական 2 իրադարձությունների վերաբերյալ հաղորդումները, որոնք մեծ աղմուկ են բարձրացրել երկրում: Առաջինը վերաբերում է Հովհան Մայրագոմեցու և հետագայում նրան կրկնող Մովսես Դասխուրանցու հաղորդմանն այն մասին, որ VII դ. սկզբին երկրում բռնկվել է պատկերամարտության աղանդ, և որ Սոթք գավառը եղել է դրա տարածման կենտրոններից մեկը՝ գտնվելով իրադարձությունների կենտրոնում: Մյուսը Ուխտանես եպիսկոպոսի հաղորդումն է X դ. վերջին տեղի ունեցած աննախադեպ կրոնական և խոշոր քաղաքական իրադարձության՝ իշխանական ու արքունական զորքերի և հոգևորականների կողմից Սոթք գավառի հունադավան բնակչությանը կրկնամկրտելու և պետությանն ու հայ եկեղեցուն ենթարկելու մասին: Այս իրադարձությունները ցույց են տալիս գավառի՝ տնտեսապես ինքնաբավ լինելու, ղրանից բխող կենտրոնախույս ձգտումներ ունենալու և այլախոհական հայացքների համար պարարտ միջավայր լինելու փաստը:

Սոթքի և համանուն գավառի վերաբերյալ պատմիչների հաղորդած տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ ղրանք հիմնականում վերաբերում են պատերազմական գործողություններին/ճակատամարտերին, որոնց թատերաբեմն է եղել տարածաշրջանը (հարմարավետ լեռնաղաչտը հնարավորություն է տվել խոշոր զորախմբերի բացազատման համար) կամ բանակների, կամ այլ խմբերի ռազմավարական կարևոր շրջանով տեղաշարժերին: Խոսվում է նաև Սոթքի վարչական պատկանելության, տեղական իշխանատների, տեղի տնտեսական ռեսուրսների, նավագնացության, հոգևոր կենտրոնների և այլ, ավելի մանրամասն հիշատակության չարժանացած իրադարձությունների մասին:

Այսպիսով՝ Սոթք գավառի վերաբերյալ սկզբնաղբյուրների ուսումնասիրության այս նախնական փորձը ցույց է տալիս, որ ղրանց ավելի լայն շրջանակի հավաքագրումն (օտար պատմիչներ, տեղագիրներ, հիշատակարաններ, վիմագրեր և այլն) ու քննարկումը հնարավորություն կտա ավելի խորը հասկանալ այս կարևոր, սակայն քիչ ուշադրության արժանացած տարածաշրջանի պատմության առանձնահատկությունները:

Ավետիս Գրիգորյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի միջնադարյան հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան Հայաստանի հնագիտություն, XVIII–XX դդ. պատմություն: Հեղինակ է շուրջ 20 հոդվածի: grigoryan.avetis.9@gmail.com

REFERENCES

Ajaryan H. Hayots andznanunneri bararan, h. A, Yerevan, 1942 (In Armenian).
Ajaryan H. Hayeren armatakan bararan, h. D, Yerevan, 1979 (In Armenian).
Alishan Kh. Sisakan. teghagrutivn Siuneats ashkharhi, Venetik, i Mkhitarads vans, i S. Ghazar, 1893 (In Armenian).
Akobyan A. Albania-Aluank v greko-latinskikh i drevnearmyanskikh istochnikakh. Yerevan, 1987 (In Russian).
Agatangeghay Patmutivn Hayots, Tiflis, 1914 (In Armenian).
Anania Narekatsu "Havatarmat" davanabanakan erke. – Matenagirk Hayots, h. J, J dar, Yerevan, 2011 (In Armenian).
Arakel Davrizhetsi. Girk patmuteants, ashkhatasiruteamb L. Khanlaryani, Yerevan, 1990 (In Armenian).
Arakelyan B. Dvin-Partav janaparhi Sisajan-Gelakuni gtsamase. – PBH, 1968, № 1 (In Armenian).
Barkhudaryan S. Divan hay vimagrutyan, pr. IV. Gegharkunik. Kamoyi, Martunu ev Vardenisi shrjanner, Yerevan, 1973 (In Armenian).
Barseghyan H., Sargisean V. Ereq tagavor mogeru zroytsn haykakan matenagrutean mej ev anor karevorutivnn, Venetik-Surb Ghazar, 1910 (In Armenian).
Borisov A. Nadpisi Artaksia (Artashesa), tsarya Armenii.– VDI, 1946, № 2 (In Russian).
Chamcheants M. Patmutivn Hayots i skzbane ashkharhi minchev tsam t[ear]n. 1784, h. A, Venetik, 1784 (In Armenian).
Dyakonov I., Starkov K. Nadpisi Artaksia (Artashesa I), tsaria Armenii. – VDI, 1955, № 2 (In Russian).
Eremyan S. "Tsavdeatsvots ishkhanutiun".– HKhSH GA "Teghekagir hasarakakan gitutyunneri", 1960, № 7–8 (In Armenian).
Eremyan S. Hayastane est "Ashkharhatsoyts"-i (pordz VII dari haykakan kartezi verakazmutyan zhamanakakits kartezagrakan himki vra), Yerevan, 1963 (In Armenian).
Hakobyan A. Hovhan Mayragometsin ev ir erkere. – Matenagirk Hayots, h. D, E dar, Antilias-Libanan, 2003 (In Armenian).
Hakobyan A. Patma-ashkharhagrakan ev vimagragitakan hetazotutivnner (Artsakh ev Utik), Vienna–Yerevan, 2009 (In Armenian).
Hakobyan A. "Gahnamak azatats ev tanuterants Hayots" ev "Zoranamak".– "Bazmavep" (Venetik), 2011, № 3–4 (In Armenian).
Hakobyan A. Ananun (E dar). Ashkharhatsoyts. gita-knnakan bnagire.– "Handes amsoreay" (Vienna), 2013, № 1–12 (In Armenian).
Hakobyan A. Mashtots Eghivardetsi katoghikos. patmutiun (usumnasirutivn ev T dari bnagri verakangnman pordz). – "Handes amsoreay" (Vienna), 2014, № 1–12 (In Armenian).
Hakobyan H., Hmayakyan S., Karapetyan I. Artashisyan sahmanakareri nor gyuter Sevani avazanits. – Mashtotsyan entertsumner, G, Oshakan, hoktemberi 20, 2001 (In Armenian).
Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan H. Hayastani ev harakits shrjanneri teghanunneri bararan, h. 2, Yerevan, 1988 (In Armenian).
Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan H. Hayastani ev harakits shrjanneri teghanunneri bararan, h. 3, Yerevan, 1991 (In Armenian).

Harutyunyan B. “Gahnamaki” tvagrman hartsi shurj.– PBH, 1976, № 2 (In Armenian).
Harutyunyan B. Artsakhi, Hayots Arevelits koghmeri ev Gharabaghi hartsi shurj. – PBH, 1995, № 1 (In Armenian).
Harutyunyan B. Meds Hayki Syunik ashkharn est “Ashkharhatsoyts”-i (patmaashkharhagrakan ditarkumner).– PBH, 2003, № 1 (In Armenian).
Hay zhoghovrdi patmutyun, h. I, Yerevan, 1971 (In Armenian).
Hazeyan N., Hakobyan H., Hmayakyan S. Erku nor Artashesyan sahmanakar Vardenikits. – Hayastani hnaguyn mshakuyte, 2, Yerevan, 2002 (In Armenian).
Hmayakyan S. Artashesyan sahmanakareri shurj.– Hayastani hnagitakan mshakuyte, 2, Yerevan, 2002 (In Armenian).
Hmayakyan S., Hakobyan H., Tiratsyan N., Sanamyan H., Simonyan H., Bishone R., Parmejiani N. Gegharkuniki hay-italakan shrjik arshavakhmbi 2004–2005 tt. ashkhatankneri himnakan ardyunknere. – Hin Hayastani mshakuyte, h. XIV. Nyuter hanrapetakan gitakan nstashrjani, Yerevan, 2008 (In Armenian).
Injijean Kh. Storagrutivn hin Hayastaneayts (est hin ev est mijin dareru anuaneal zhamanakats), I Venetik i vasn Srboyn Ghazaru, 1822 (In Armenian).
Jalalyants S. Janaparhordutyun i Medsn Hayastan, mas A, B, Yerevan, 2016 (In Armenian).
Keoseean H. Khachik Arsharuni. – Matenagirk Hayots, h. J, J dar, Yerevan, 2011 (In Armenian).
Kirakos Gandzaketsi. Patmutivn Hayots, ashkhatasirutyamb K. Melik-Ohanjanyani, Yerevan, 1961 (In Armenian).
Movses Kaghankatuatsi. Patmutivn Aghuanits ashkharhi, knnakan bnagire ev neratsutyune V. Arakelyani, Yerevan, 1983 (In Armenian).
Movsisi Khorenatsvoy Patmutivn Hayots, ashkhatutyamb M. Abeghean ev S. Harutyunean, Tpghis, 1913 (In Armenian).
Patmutiun Sebeosi, ashkhatasirutyamb G. Abgaryani, Yerevan, 1979 (In Armenian).
Perperean H. Ashkharhatsoyts Vardanay Vardapeti, knnakan hratarakutiun, Bariz, 1960 (In Armenian).
Shahkhatunyants H. Storagrutivn katokhike Ejmiadsni ev hing gavaratsn Araratay, Mayr Ator Surb Ejmiadsin, h. erkrord, 2014 (In Armenian).
Smbateants M. Teghagir Gegharkuni Tsovazard gavari vor ayzhm Nor-Bayazit gavar, Vagharshapat, 1895 (In Armenian).
Sokhakyan A. Hanragitak Hayots patmutyan aghbyuragitutyan (hnaguyn jamanaknerits minchev XVIII dari verje), Yerevan, 2019 (In Armenian).
Stepanos Kravnavor. – Matenagirk Hayots, h. T, T dar (Yaveluads), Antilias–Libanan, 2008 (In Armenian).
Stepanos Taravnetsi Asoghik. – Matenagirk Hayots, h. JE, J dar. Patmagrutyun, girk B, Yerevan, 2011(In Armenian).
Stepannos Orbelean. Patmutivn nahangin Sisakan, Tiflis, 1910 (In Armenian).
Ter-Martirosov F. Marshrut pakhoda Artashesa k Yervandashatu. – “Patmutyun ev mshakuyt hayagitakan handes” (Yerevan), 2014, G (In Russian).
Tiratsyan G. Novonaidennaya nadpis’ Artashesa I, tsarya Armenii.– VDI, 1959, № 1 (In Russian).
Trever K. Dve nadpisi arameiskim pis’mom, naidennye v raione ozera Sevan v 1906–1932 gg. . – Ocherki po istorii kul’tury Drevnei Armenii. M.–L., 1953 (In Russian).

Ukhtanes episkopos. – Matenagirk Hayots, h. JE, J dar. Patmagrutivn, girk B, Yerevan, 2011 (In Armenian).
Vardanay Vardapeti. Havakumn patmutean, i Venetik, 1862 (In Armenian).
Yovhan Mayragometsi. Mets Koghmants episkoposi vasn patkerats ev nkaragruteants. – Matenagirk Hayots, h. D, E dar, Antilias-Libanan, 2003 (In Armenian).
Yovhannu katoghikosi Draskhanakertsvoy. Patmutivn Hayots, Tiflis, 1912 (In Armenian).
Zhamkochyan H., Abrahamyan A., Melik-Bakhshyan S., Poghosyan S. Hay zhoghovrdi patmutyun. Skzbits minchev XVIII dari verje, Yerevan, 1975 (In Armenian).

УПОМИНАНИЯ СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ ИСТОРИКОВ ОБ ИСТОРИЧЕСКОМ СОТКЕ

АВЕТИС ГРИГОРЯН

Р е з ю м е

Ключевые слова: провинция Сотк, озеро Севан, Сюник, Гехаркуник, средневековье, историки, письменные первоисточники.

Историческая Сюникская провинция Сотк (в средневековых источниках упоминается также как Цавдек или Содк) в основном охватывала юго-восточный бассейн озера Севан, начиная от его северной части до водораздела рек Арцванист и Карчахбюр, протекающих с юга до озера. В разные периоды средневековья границы Сотка расширялись или сокращались, но в основном сохранялось название отдельной административной единицы.

Сотк часто оказывался в центре важных исторических событий средневековой Армении из-за своего стратегического положения (крупные металлические рудники, торговые дорожные узлы) и мощных местных княжеств.

Исследования сведений от средневековых армянских историков о провинции Сотк показывают, что источники в основном относятся к военным операциям и/или сражениям, ареной которых был регион (удобный ландшафт позволял развертывание больших войск), дислокации армий или других групп в стратегически важном регионе. В источниках упоминаются также: административная принадлежность Сотка, местные княжества и экономические ресурсы, судоходство, духовные центры и более или менее запоминающиеся события.

Изучение источников о провинции Сотк позволяет глубже понять особенности истории этого важного, но оставшегося без должного внимания региона.

Аветис Григорян – младший научный сотрудник отдела средневековой археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археология средневековой Армении, история XVIII–XX вв. Автор около 20 статей. grigoryan. avetis.9@gmail.com

THE MENTIONING OF MEDIEVAL ARMENIAN HISTORIANS ABOUT HISTORICAL SOTK

AVETIS GRIGORYAN

S u m m a r y

Key words: Sotk canton, Lake Sevan, Syunik, Gegharkunik, Middle Ages, historians, written sources.

Historical Sotk canton of Syunik (also referred to as Tsavdek or Sodk in medieval sources) mainly covered the southeastern basin of Lake Sevan, from the northern part of the lake to the watershed of the Artsvanist and Karchakhbyur rivers flowing to the lake from the south. The boundaries of Sotk expanded or decreased in different periods of the Middle Ages basically preserving the role of a separate administrative unit.

Because of its strategic position (the large metal mines, trading road hubs) and local powerful ruling houses, Sotk has often been in the center of important historical events of the Medieval Armenia.

The study of the references of Armenian medieval historians indicate that Sotk canton is mentioned mainly in relation to military operations and/or battles (the convinient landscape allowed the deployment of large troops), the movements of the army or other groups in strategically important region. The sources also mention about administrative affiliation of Sotk, local authorities and economic resources, shipping, spiritual centers, and less memorable events.

The study of the sources on Sotk canton enables the profound understanding of this essential though neglected region.

Avetis Grigoryan – Junior Researcher at the Department of Medieval Archaeology of the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interest: archaeology of medieval Armenia, the 18th–20th centuries history. Author of about 20 articles. grigoryan.avetis.9@gmail.com

ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԻՄԵՐՆԵՐԻ ԵՎ ՍԿՅՈՒԹՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ կիմերներ, սկյութներ, սեպագիր արձանագրություններ, Մանա, զորք, ումման-մանդա, Թեուշպա, Իշպակա, Շագապուտարա, Պարտատուա:

Նախաբան

Հայկական լեռնաշխարհում ու հարակից տարածաշրջաններում կիմերների և սկյութների երբեմնի ներկայության վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում ինչպես սեպագիր արձանագրությունները, այնպես էլ՝ Աստվածաշունչը և հունարեն աղբյուրները: Հատկապես կարևոր են այն հաղորդումները, որոնք արվել են պատմական իրադարձությունների ականատեսների ու ժամանակակիցների կողմից: Այս իմաստով՝ համաժամանակյա սեպագիր արձանագրություններն անփոխարինելի սկզբնաղբյուրներ են: Սույն հոդվածի նպատակն է Հայկական լեռնաշխարհին վերաբերող ասորեստանյան և ուրարտական սեպագիր աղբյուրները քննարկելու միջոցով լրացնել ու ընդլայնել հիշյալ տարածաշրջանում սկյութների և կիմերների առկայության վերաբերյալ մեր պատկերացումները, որոնք ձևավորվել են հնագիտական պեղումների արդյունքների հիման վրա:

Քննարկում

Ասուրաբաբելական սեպագիր արձանագրություններում սկյութներն անվանվում են աշգուզա կամ իշկուզա[1], իսկ կիմերները՝ գիմիրա կամ գիմիրի[2]: Ասուրական պետական բարձրաստիճան անձնավորություններից

---

* *Ներկայացվել է 01. VI. 2020 թ., գրախոսվել է 03. VII. 2020 թ., ընդունվել է տպագրության 09. VII. 2020 թ.:*

[1] И. М. Дьяконов. История Мидии. М.–Л., 1956, с. 242; Б. Б. Пиотровский. Ванское царство (Урарту). М., 1959, с. 235; E. D. Phillips. The Scythian Domination in Western Asia: Its Record in History, Scripture and Archaeology.– "World Archaeology" (London), 1972, vol. 4, № 2, p. 130. *Հավանաբար, սկզբնապես սկյութ է կոչվել Առաջավոր Ասիա ներխուժած մի որոշակի ցեղախումբ, ըստ իր ինքնանվանման, իսկ հետագայում այդ անունն են տվել Հյուսիսային Կովկասից ու Մերձսևծովյան տարածաշրջանից Այսրկովկաս թափանցած տարբեր ցեղերի ընդհանրությանը:*

[2] Г. Капанцян. Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история. Ереван, 1947, с. 148; И. М. Дьяконов. История Мидии, с. 237–238, E. D. Phillips. *Նշվ. աշխ., էջ 130: Ակկադական որոշ տեքստերում կիմեր անվանումը գործածվել է լայն նշանակությամբ՝ ներառելով միջին-*

մեկին ուղղված նամակում խոսվում է Ուրարտու մուտք գործած կիմերների առաջնորդի մասին[3]: Սա ամենավաղ վկայությունն է Մանա երկրում կիմերների զորաջոկատների առկայության, ինչպես նաև վերջիններիս՝ Վանի թագավորությունն ներխուժելու վերաբերյալ[4]: Համարվում է, որ կուսակալություններին առնչվող Ռուսա I-ի բարեփոխումը կապված էր նաև կիմերական պատերազմի հետ[5]: Հայտնի են ասուրական արքայազն Սինաքերիբի կողմից Սարգոն II-ին հասցեագրված զեկույցները՝ կիմերների դեմ ուրարտական արքա Ռուսա I-ի անհաջող արշավանքի մասին[6]: Համանման բովանդակություն ունի Ասորեստանի արքա Սարգոն II-ին ուղարկված Աշուրիսուայի հետախուզական զեկուցագիրը[7]: Նույն հարցին է վերաբերում հետախուզական մեկ այլ նամակ[8]: Թեև կիմերների ներխուժումը կասեցնելուն ուղղված ռազմերթին մեծաքանակ զորք է մասնակցել[9], այնուամենայնիվ, ճակատամարտում զոհվել է ուրարտական 9 նահանգապետ[10]. այն խիստ ծանր հետևանքներ է ունեցել տե-

---

ասխական սակերին. տե՛ս А. И. Иванчик. Современное состояние киммерийской проблемы. Итоги дискуссии.– «Вестник древней истории» (М.), 1999, № 2, с. 85. *Այս եզրը կարող էր ունենալ նաև ընդհանրական նշանակություն, որի տակ նկատի էին առնվում հյուսիսային քոչվոր ցեղերն ընդհանրապես:*

[3] *Խոսքը Ասորեստանի պետական մունետիկին հասցեագրված Արադ/Ուրդա-Սինի նամակի մասին է [տե՛ս* И. М. Дьяконов. Ассиро–вавилонские источники по истории Урарту (далее – АВИИУ 1). – «Вестник древней истории», 1951, № 2, с. 339, № 50, (8); K. D e l l e r. Ausgewählte neuassyrische Briefe betreffend Urarṭu zur Zeit Sargons II.– Tra lo Zagros e l'Urmia. Roma, 1984, p. 102, № 2.1; А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э. М., 1996, с. 179–183, № 5].

[4] Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 232.

[5] АВИИУ 1, с. 337; Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 233.

[6] АВИИУ 1, с. 340, № 50, (10); K. D e l l e r. *Նշվ. աշխ., էջ 98–99, 1.2,* А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 167–176, № 1–3. *Ուրարտական բանակը, հավանաբար, կազմված էր 13 նահանգապետերից, գլխավոր հրամանատարի (տուրտան) զորամիավորումներից և արքայական գնդից* (А. И. Иванчик. Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II.– «Вестник древней истории», 1990, № 3, с. 5)*:*

[7] АВИИУ 1, с. 341, № 50, (11); K. D e l l e r. *Նշվ. աշխ., էջ 98, 1.1,* А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 176–179, № 4.

[8] K. D e l l e r. *Նշվ. աշխ., էջ 100, 1.4:*

[9] S. P a r p o l a. The Correspondence of Sargon II, Part I: Letters from Assyria and the West. State Archives of Assyria 1. Helsinki, 1987, № 31 Y. G r e k y a n. The Battle of Uauš Revisited.– "Aramazd: AJNES" (Yerevan), 2010, vol. V, iss. 1, p. 87.

[10] K. D e l l e r. *Նշվ. աշխ., էջ 99–100, 1.3,* G. B. L a n f r a n c h i, S. P a r p o l a. The Correspondence of Sargon II, Part II: Letters from the Northern and Northeastern Provinces. State Archives of Assyria 5. Helsinki, 1990, № 90; A.

րութ յան համար: Վանի թագավորութ յան հիչյալ տիրակալի՝ կիմերների դեմ ուղղված այս անհաջող ռազմարշավի հավանական ժամանակը համարվում է մ. թ. ա. 714 թվականը[11]: Ամեն դեպքում, այդ ժամանակ կիմերներն արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին[12]: Նրանք հիչատակվում են նաև հետագայում՝ Սինաքերիբի ժամանակվա նամակներից մեկում (մ. թ. ա. 705 թ.)[13], ինչպես և մի քանի այլ նամակներում, որոնց հասցեատերերն ու ուղարկողներն անհայտ են[14]: Հնարավոր է, որ Փռյուգիայի արքա Միդաս I-ը զոհվել է կիմերների դեմ մարտնչելիս[15] կամ ինքնասպանութ յուն է գործել կիմերական զորագնդերից պարտվելուց հետո (≈մ. թ. ա. 675 թ.)[16]: Ավելի հին բնօրինակից պատճենահանված կավե սալիկներից մեկում, հավանաբար, խոսվում է մ. թ. ա. 679/8 թ. դեպքերի մասին: Ասվում է, որ կիմերները հարձակվել են Ասորեստանի վրա և այնտեղ ջախջախվել են[17]: Այսպես կոչված, «Ասարհադոնի ժամանակագրութ յունից» պարզվում է նաև, որ Խուբուշնուում կիմերների կոտորած է տեղի ունեցել[18]: Ասարհադոնի մի արձանագրութ յունից տեղեկանում ենք, որ նա հաղթել է հեռավոր վայրից եկած Թեուշպա կիմերին՝ նրա ողջ զորքի հետ, Խուբուշնա երկրում[19]: Ասարհադոնի նույն արձա-

---

Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII– VII вв. до н. э., с. 169–173, № 2.

[11] А. И. Иванчик. Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, с. 8, 16. *Չի բացառվում, որ Ուրարտուի և կիմերների այս ընդհարումը կարող էր տեղի ունենալ փոքր-ինչ ավելի վաղ:*

[12] T. Sulimirski. Scythian Antiquities in Western Asia.– "Artibus Asiae" (Ascona), 1954, vol. 17, № 3/4, p. 283.

[13] АВИИУ 1, с. 352, № 50, (36).

[14] *Նույն տեղում, էջ 355, № 50, (41):*

[15] И. М. Дьяконов. Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей.– «Вестник древней истории», 1981, № 2, с. 57; *Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ (առասպել և իրականութ յուն), Երևան, 1998, էջ 39–40:*

[16] Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 341–342, № 278; *Ս. Տ. Երեմյան. Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ.– ՊԲՀ, 1968, № 2, էջ 109,* А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 72–76; *Ա. Վ. Քոսյան. Արամ Նահապետը Կապադովկիայում (մի վարկածի առթիվ). – ՊԲՀ, 1999, № 1, էջ 249,* Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 335–336, № 414.

[17] И. М. Дьяконов. Ассиро–вавилонские источники по истории Урарту (далее – АВИИУ 2).– «Вестник древней истории», 1951, № 3, с. 215, № 63.

[18] D. D. Luckenbill. Ancients Records of Assyria and Babylonia, II. Chicago, 1927, p. 217; А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 60–64.

[19] D. D. Luckenbill. Ancients Records of Assyria and Babylonia, II, pp. 206–207, 212, 217; Б. Б. Пиотровский. Археология Закавказья. Л., 1949, с. 122. АВИИУ 2, с. 216–217, № 65; И. М. Дьяконов. История Мидии, с. 258;

նագրությունից հայտնի է դառնում, որ ասուրական արքան զենքով կո-տորել է նաև սկյութ Իշպակայի զորքը[20]: Հայտնի է Նինվեում բան-ջարանոցի գնման մի պայմանագիր (մ. թ. ա. 679 թ.), որտեղ հիշա-տակվում է կիմերական գնդի հրամանատար Ուբրու-Խառանի անունը[21]: Պահպանվել են սեպագիր սալիկներ, որոնց վրա արձանագրված են Ասարհադոնի և Աշուրբանապալի ժամանակաշրջաններում արված հար-ցումները Շամաշ աստծո պատգամախոսին: Ասորեստանի արքան, մաս-նավորապես, ցանկանում է իմանալ՝ արդյո՞ք կիմերները պատրաստվում են արշավել դեպի Շուպրիա[22]: Մեկ այլ սալիկ հիշատակություն է կիմեր-ների դրած ճամբարի վերաբերյալ՝ Մանայի արքայի ճամբարի դեմ: Ասարհադոնն իր սուրհանդակին Խուբուշկիա ուղարկելով՝ ուզում է իմա-նալ, թե կիմերները կամ սկյութները կհարձակվե՞ն նրա վրա[23]: Աս-որեստանի արքան հետաքրքրվում է նաև, թե Մանայում գտնվող սկյութ-ների զորքը, որն այնտեղից մտել է Խուբուշկիա, կշարժվի՞ դեպի Աս-որեստան, երկրի սահմանային տարածքներում կզբաղվի՞ ավարառությամբ ու թալանով[24]: Սկյութները և սկյութների արքա Պարտատուան հիշատակ-վում են նաև մարերի բնակության տարածքներում կատարված իրա-դարձությունների ու Ասարհադոնի աղջկան Պարտատուային կնության տալու հարցի կապակցությամբ[25]: Պարտատուայի անունն արձանագրված է Զիվիեի «գանձի» արծաթյա թիթեղներից մեկի վրա[26]: Մարական դեպ-քերի (Կաշտարիտիի ապստամբության) առնչությամբ բազմիցս հիշա-տակվում են նաև կիմերներն ու նրանց զորքը: Կիմերների անունը չո-չափվում է նաև պատգամախոսին ուղղված ընդհանուր բնույթի հարցե-

---

Ա. Վ. Քոսյան. Արամ նահապետը Կապադովկիայում, էջ 240, A. I. Ivantchik. Kimmerier und Skythen. M., 2001, S. 56. *Խուբուշնա երկրի տեղա-դրության վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Առավել հաճախ հանդիպող տեսակետների համաձայն՝ Խուբուշնան գտնվել է Ուրմիա լճի հարավային ավազանում կամ Թաբալում: Ժամանակակից հետազոտողները հակված են ընդունելու երկրորդ տարբերակը:*

[20] *Ենթադրվել է, որ մանացիներն ու նրանց դաշնակից սկյութները պար-տություն են կրել Խուբուշկիայում, իսկ Իշպական զոհվել է* (D. D. Luckenbill. *Նշվ. աշխ., էջ 213,* K. Strobel. The Cimmerians in Asia Minor.– Some Observations on Anatolian Cultures. Ankara, 2014, p. 376).

[21] А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 66, 259–260, № 42.

[22] *Նույն տեղում, էջ 77–90, 208–211, № 20:*

[23] *Նույն տեղում, էջ 92, 218–221, № 23:*

[24] *Նույն տեղում, էջ 92, 216–218, № 22:*

[25] АВИИУ 2, с. 228, № 68, г; А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 97–98, 212–216, № 21; *Ե. Գրեկյան. Մարաստան.– Հայաստանի հարակից երկր-ների պատմություն, հ. I, Երևան, 2013, էջ 270,* K. Strobel. The Cimmerians in Asia Minor, p. 377.

[26] K. Strobel. “Kimmeriersturm” und “Skythenmacht”: eine historische Fiktion?.– Studies Presented to Frederick Mario Fales on the Occasion of His 65th Birthday. Wiesbaden, 2012, S. 831.

րում: Մ. թ. ա. VII դ. 70-ական թվականներին Ասարհադոնին ուղղված նամակներից մեկում խոսք է գնում Մանա երկիր կիմերների մուտքն արգելելու, իսկ մեկ այլ նամակում՝ ինչ-որ կիմերների հարցաքննելու վերաբերյալ[27]: Աչուրբանապալի արձանագրություններից մեկում («Ռասամի գլան») պատմվում է Լիդիայի արքա Գիգեսի՝ կիմերների դեմ տարած հաղթանակի, իսկ այնուհետև՝ նրանցից կրած պարտության մասին: Այս իրադարձություններից առաջինը չարադրված է նաև Խառանի Սինի տաճարի վերականգնմանը վերաբերող արձանագրությունում[28]: Կիմերների բնորոշումը որպես հզոր թշնամու, որը «մորեխի նման ծածկում է երկրի տարածքը»[29], հավանաբար, նրանց բազմաքանակության և արագաշարժության վկայությունն է: Շամաշի պատգամախոսին ուղղված Աչուրբանապալի հարցումներում նույնպես խոսք է գնում կիմերների զորքի մասին[30]: Ասորեստանի արքայի «գլանում» առկա ումման-մանդա եզրը, հավանաբար, վերաբերում է կիմերներին[31]: Մարդուկ աստծուն ճոնված Աչուրբանապալի հիմնում հիշվում են նաև աստծո կողմից պարտության դատապարտված կիմերների առաջնորդ Դուգդամին ու նրա որդի Սանդաքշատրուն կամ Սանդակուրուն[32]: Ումման-մանդայի մասին, որպես Ակկադի դաշնակիցների, երկու անգամ տեղեկություն է հաղորդում, այսպես կոչված, «Գեղի ժամանակագրությունը»[33]: Ակկադերեննում, ի դեպ, ումման-մանդան հյուսիսային քոչվոր ցեղերի ընդհանուր անվանումն էր[34]: Միջագետքի բնակիչները, այդ թվում՝ ասորեստանցի-

[27] АВИИУ 2, с. 223–224, № 68, а, с. 224, № 68, б, с. 225–228, № 68, г, с. 231–232, № 69, $_2$, с. 232–233, № 69, $_3$; А. И в а н ч и к. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 193–195, № 13, с. 196–201, № 14.

[28] D. D. L u c k e n b i l l. *Նշվ. աշխ., էջ 297–298, 351–352,* АВИИУ 2, с. 236–237, № 72, с. 239–240, № 74; А. Иванчик. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 103, 108, 265–266, № 45, с. 269–272, № 47.

[29] А. И в а н ч и к. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 101, 262–265, № 44, с. 276–279, № 49.

[30] АВИИУ 2, с. 240, № 75; А. И в а н ч и к. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 96, 248–250, № 36.

[31] А. И в а н ч и к. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 279, № 50.

[32] D. D. L u c k e n b i l l. *Նշվ. աշխ., էջ 385,* АВИИУ 2, с. 243, № 78; А. И в а н ч и к. Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э., с. 121–122, 272–276, № 48, с. 279–280, № 50–51. *Ի դեպ, կիմերների առաջնորդ Դուգդամին մահացել է հիվանդությունից [տե՛ս* А. И. Иванчик. Современное состояние киммерийской проблемы, с. 89. *Սանդաքշատրու անվան տարընթերցման* (^{m}Sa-an-dak-KUR-ru) *վերաբերյալ տե՛ս* A. I. I v a n t c h i k. *Նշվ. աշխ., էջ 15,* K. S t r o b e l. “Kimmeriersturm” und “Skythenmacht”, S. 797*]*:

[33] АВИИУ 2, с. 247, № 81.

[34] Б. Б. П и о т р о в с к и й. Археология Закавказья, с. 122; И. М. Д ь я к о н о в. История Мидии, с. 238.

ները, գործածում էին ումման-մանդա եզրը՝ նշելու համար տվյալ ցեղերի կամ ժողովուրդների՝ (կուտիներ, կիմերներ, մարեր և այլն) ոչ քաղաքակրթ, ռազմատենչ բնույթը[35]*:*

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ ուրարտական դրավոր աղբյուրներն ընձեռում են մեկ անուղղակի տվյալ: Քանի որ այդ եզակի փաստն էապես առնչվում է մեր ուսումնասիրության թեմային, ուստի դրան անդրադառնանք առավել մանրամասն: Ռուսախինկլիից գտնված պալատական տնտեսության անձնակազմի հաշվառման կավե մի սալիկի սեպագիր արձանագրությունից հայտնի է դառնում, որ իշկուգուլյան արքան ուղևորվել է Մանա երկիր այն տարում, երբ Ռուսախինկլի Կիլբանիկայի տաճարում խալդին հաստատել է Ռուսայի-ն[36]*: Հիշյալ արձանագրությունն ունեցել է մի շարք տարընթերցումներ, ուստի և բազմաթիվ մեկնաբանությունների առիթ է տվել: Մասնավորապես, Ց. Քյոնիգի ոչ ճշգրիտ վերծանությամբ իշկուգուլյան արքայանունը ներկայացվել է որպես* Šaga'tara*[37]: Իշկուգուլյան արքայի անունը սխալմամբ ընթերցվել է նաև Շագաշտար(ա)*[38]*: Ն. Ադոնցը մեջ է բերում հիշյալ անձնանվան* Sagaštar*[39], իսկ Գ. Մելիքիշվիլին՝* Sagaštara *(Սագաշտարա) ձևը, որոնք էականորեն չեն տարբերվում նախորդ դրելաձևից: Վերջինս չի կիսում Կ. Լեման-Հաուպտի այն կարծիքը, որ դա Իշկուգուլու երկրի արքայի նամակն է ուրարտական արքա Ռուսա Արգիշտորդուն*[40]*: Բ. Պիոտրովսկու հիմնարար աշխատության մեջ այս հատվածը թարգմանված է հետևյալ կերպ. « ... Սագաշտարան, Իշկիգուլու երկրի արքան, գնաց Մանա երկիր ...»*[41]*: Ի. Դյակոնովը խնդրո առարկա հատվածը կարդում է այսպես. « ... Շագան, ավագ որդին իշկուգուլյան արքայի, եկավ Մանա ...»: Նա կարծիք է հայտնում, որ Շագան ուրարտական տերության փոխարքան էր (ակներևաբար՝ Մանայում)*[42]*: Ըստ Ս. Երեմյանի, քննարկվող արձանագրությունը տնտեսական փաստաթուղթ է, որը Իշկիգուլու երկրի թագավոր Սագաշտարան ուղարկել է Ռուսա II-ին: Նա ենթադրում է, որ ուրարտական արձանագրության Իշկիգուլուն ասորեստանյան հետախույզի զեկույցում անվանված է Գա-*

---

[35] А. И. Иванчик. Современное состояние киммерийской проблемы, с. 82; *Ե. Գ ր ե կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 264, 278–279:*

[36] И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.–Л., 1963, с. 38–39; Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ., էջ 330–331, 412,* M. Salvini. Corpus dei testi urartei, vol. IV. Roma, 2012, p. 145. *Այս եզակի փաստից պարզ է դառնում նաև, որ Ուրարտուում տարիները, հավանաբար, ժամանակագրվում էին ըստ նշանակալի իրադարձությունների: Հայերի մոտ մինչ օրս շարունակում են պահպանվել հնամենի այդ սովորության թույլ արձագանքները:*

[37] F. W. K ö n I g. Handbuch der chaldischen Inschriften, II. Graz, 1957, S. 160–161, № 131.

[38] *Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 212: Սխալ ընթերցման ուղղումը տե՛ս* И. М. Дьяконов. Урартские письма и документы, с. 80.

[39] *Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 182:*

[40] Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ 348, № 286:*

[41] Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 113, 159.

[42] И. М. Дьяконов. Урартские письма и документы, с. 38–39, 80.

միրա՝ այսպիսով, Սագաշտարային համարելով կիմերների առաջնորդ[43]: Հ. Կարագյոզյանը քննադատաբար է մոտեցել նախորդ թարգմանություններին և առաջարկել է վերծանության իր տարբերակը. « ... Շագայորդին հզոր՝ արքան Իշկուգուուլխե (ցեղի), գնաց դեպի Մանա ...»: Այստեղից հետևություն է արվել, որ «Իշկուգուուլխե կոչվող ցեղը կամ ցեղային միությունը գտնվել է կամ տեղափոխվել և բնակություն է հաստատել Մանայի տարածքում», իսկ Շագայորդին Ռուսա II-ի դաշնակիցն է եղել ու նրա իշխանության կենտրոնը գտնվել է Մանայում[44]: Հ. Կարագյոզյանի կարծիքով, ուրարտական արձանագրություններում վկայված Շագայորդին համապատասխանում է հայ պատմագրության մեջ հիշատակվող Սկայորդուն[45]: Ն. Հարությունյանի «Դիվան ուրարտական սեպագիր արձանագրությունների» աշխատության մեջ քննվող տեքստը բերվում է Ի. Դյակոնովի ընթերցման և թարգմանության հիմամբ: Այն ստանում է հետևյալ տեսքը. « ... Շագան, ավագ որդին Իշկուգուլխի (երկրի), եկավ Մանա (երկիր)»[46]: Կարևոր եզրահանգման առիթ է տալիս Մ. Սալվինիի՝ վերջին տասնամյակներում կատարած մի ուղղում: Սույն արձանագրության՝ վերը հիշատակված Իշկուգույան անձնանունը նա առաջարկում է կարդալ Շագապուտարա[47]: Հետաքրքիր է, որ անկախ սեպագրերի տարակերպ վերծանություններից՝ ^{m}Šá-ga DUMU tar-a *(Ի. Դյակոնովի կամ I տարբերակ), թե* ^{m}šá-ga-pu$_{x}$-tar-a *(Մ. Սալվինիի կամ II տարբերակ), երկու դեպքում էլ մեզ հետաքրքրող անձնանվան հայերեն թարգմանությունը նույնն է ստացվում՝ Սակայորդի: Բանն այն է, որ* DUMU *չումերական գաղափարագիրն ունի որդի իմաստը[48], իսկ* tara *բառն ուրարտերենում ունի հզոր[49], զուգես նաև՝ ավագ[50] նշանակությունը: Այսինքն, արձանագրության վերծանության I տարբերակը կարելի է ընթերցել երկու ձևով. ա) «Շագան, ավագ որդին» (հետևելով Ի. Դյակոնովին), բ) «Շագայորդին հզոր» (հետևելով Հ. Կարագյոզյանին): Մյուս կողմից, վերծանության II տարբերակը նույնպես կարող է ենթադրել երկակի թարգմանություն՝ կախված այն հանգամանքից՝ արդ-*

---

[43] *Ս. Տ. Երեմյան. Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, էջ 93, 105:*

[44] *Հ. Կարագյոզյան. Ուրարտական գաղափարագիր անձնանուններ.– ՀՍԽՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 1, էջ 78:*

[45] *Նույն տեղում, էջ 80:*

[46] Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ., էջ 330–331, 412: Խոստովանենք, որ գործ ունենք խճճված թարգմանության հետ:*

[47] M. Salvini. The Inscriptions of Ayanis. Cuneiform and Hieroglyphic.- Ayanis I. Roma, 2001, p. 262; *Նույնի՝* Corpus dei testi urartei, vol. IV, p. 145; K. Işik, M. Salvini. New Urartian Cuneiform Bulla from Ayanis in the Van Museum.– "Aramazd: AJNES" (Yerevan), 2015, vol. IX, iss. 2, p. 53.

[48] Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ 376,* И. М. Дьяконов. Урартские письма и документы, с. 93; Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ., էջ 414:*

[49] Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ 408,* Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ., էջ 467, Հ. Կարագյոզյան. Նշվ. աշխ., էջ 78:*

[50] И. М. Дьяконов. Урартские письма и документы, с. 91; Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ., էջ 467:*

յո՞ք tara-*ն դիտարկվում է կապակցությունից անջատ՝ առանձին բառի կարգավիճակում, թե՞ որպես* ^{m}*šá-ga-pu$_x$-tar-a բարդ բառի երկրորդ բաղադրիչ: Այսպիսով, Մ. Սալվինիի (II տարբերակի) վերծանության I ենթատարբերակը կլինի* ^{m}šá-ga-pu$_x$ tar-a, *թարգմանաբար՝ «սակայորդին հզոր», եթե ճիշտ է մեր կռահումը* pu$_x$ *բառ-մասնիկի նշանակության վերաբերյալ*[51]*, իսկ II ենթատարբերակում կունենանք, որպես ամբողջության,* ^{m}šá-ga-pu$_x$-tar-a *բաղադրյալ բառը, որը պարզապես կարելի է թարգմանել «սակայորդի»*[52]*: Տեղին է մեջբերել Գ. Ղափանցյանի կողմից հայերեն սակայորդի (=սակ–տոհմից) բառի վերականգնումն ուրարտերեն համարժեքով՝* *šakaxi[53]*: *Ստացվում է, որ ուրարտերենում վկայված* šaga=*šaka *բառը նշանակում է սակ: Այսինքն, ուրարտական սեպագիր արձանագրությունների Շագայորդին, իրոք, կարող է համապատասխանել, Խորենացու հիշատակած Սկայորդուն կամ, տառացի, Սակի որդուն: Մյուս կողմից, հզոր ցեղապետ Իշպական*[54]*, որի անունը, հավանաբար, առաջացել է «ձիավոր»* (Aspaka) *բառից*[55]*, նախկինում նույնացվել է Խորենացու հաղորդած Սկայորդու հոր հետ*[56]*: Իհարկե, ճիշտ կլիներ Սկայորդի-Իշպակա համապատասխանեցումը՝ ելնելով թեկուզ Պարույր-Պարտատուա նույնացման հնարավորությունից: Ստացվում է, որ ասորեստանյան արձանագրություններում հիշատակված Իշպական համապատասխանում է ինչպես հայկական աղբյուրների Սկայորդուն, այնպես էլ՝ ուրարտական սեպագիր արձանագրության Շագայորդուն*[57]*: Տեղին է կրկին հիշել Ասարհադոնի հայտնի արձանագրությունը, որտեղ ասվում է՝ ասուրական արքան ջիրուցան է արել մանացիներին և կոտրել նրանց դաշնակից սկյութ Իշպակայի զորքը*[58]*:*

---

[51] *Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, 2005, էջ 30–31:*

[52] *Այս եզրահանգումը կատարել է իրանագետ Ռ. Շմիտտը՝ Մ. Սալվինիին հասցեագրված իր նամակում. տե՛ս* M. Salvini. Corpus dei testi urartei, vol. IV, p. 145, r. 2*: Տե՛ս նաև Տ. Դ ա լ ա յ ա ն. Սկյութներ.– Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, Երևան, 2013, էջ 435, ն ո ւ յ ն ի՝* Iš-qi-gu-lu-ú *երկիրը և սկյութները.– Խալդյան զորությամբ … Հոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու 100-ամյակին, Երևան, 2010, էջ 45:*

[53] *Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 217:*

[54] *Տանախսում հայտնի է այս անձնանվան հունարեն* “Ασπακος” *գրելաձևը. տե՛ս* В. И. А б а е в. Осетинский язык и фольклор, т. 1. М.–Л., 1949, с. 157; И. М. Д ь я к о н о в. История Мидии, с. 245, прим. 5.

[55] Э. А. Г р а н т о в с к и й. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с. 266.

[56] *Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայկական առաջին պետական կազմավորումները (VII–VI դդ. մ. թ. ա.).– ՊԲՀ, 1968, № 3, էջ 98:*

[57] *Ռուսախինիլիի պալատական տնտեսության անձնակազմի հաշվառման հիշյալ սեպագիր արձանագրությունը ևս մեկ ապացույց է, որ Շագայորդի/Սկայորդի/Իշպական Ռուսա Արգիշթորդու ժամանակակիցն է:*

[58] D. D. L u c k e n b i l l. *Նշվ. աշխ., էջ 213,* АВИИУ 2, с. 216–217, № 65; М. С. К а ш к а й. Из истории Маннейского царства. Баку, 1977, с. 72.

Հայկական լեռնաշխարհում սկյութների ներկայության վերաբերյալ կողմնակի վկայություն կարելի է համարել Հյուսիսային Կովկասում (Վերին Ռուտխայի դամբարանադաշտ) հայտնաբերված և այժմ Բեռլինի թանգարանում գտնվող ուրարտական բրոնզե սաղավարտը, որի վրա արձանագրված է Արգիշթիի անունը[59]: Ինչպես հիշյալ սաղավարտի, այնպես էլ ուրարտական բրոնզե գոտու հայտնվելը կենտրոնական Կովկասում (Թլիի № 40 դամբարան, Հարավային Օսեթիա)[60], թերևս, հնարավոր է կապել Հայկական լեռնաշխարհից սկյութական որոշ ավարառու գորաջոկատների հեռանալու հետ: Ուրարտական իրեր են հայտնաբերվել նաև Օսեթիայի այլ դամբանադաշտերում[61] ու Աբխազիայում[62]:

Եզրակացություն

Պատմական իրադարձությունների ժամանակակիցների կողմից կազմված սեպագիր արձանագրություններն անփոխարինելի սկզբնաղբյուրներ են: Դրանցում շատ կարևոր ու հավաստի տեղեկություններ են փաստագրված, հատկապես, Հայկական լեռնաշխարհում կիմերների ու սկյութների ներկայության վերաբերյալ: Գրավոր վկայությունները, հնագիտական տվյալների զուգադրությամբ, նպաստում են քննարկվող դարաշրջանի պատմամշակութային զարգացումների ընդհանրական պատկերի վերակազմությանը: Մասնավորապես, ժամանակագրորեն իրար հաջորդող ուրարտական և ասուրական սեպագիր արձանագրությունները, ըստ երևույթին, ճշմարտացիորեն արտացոլելով պատմական իրադարձությունների ընթացքը, փոխադարձաբար հաստատում ու լրացնում են իրար այն փաստի կապակցությամբ, որ սկյութական զորագնդերից մեկը մ. թ. ա. VII դ. 80-ական թվականների ավարտին գտնվում էր Մանա երկրի տարածքում՝ դաշնակցելով մանացիների հետ՝ ընդդեմ Ասորեստանի:

---

[59] С. А. Есаян. Оружие и военное дело древней Армении (III–I тыс. до н. э.). Ереван, 1966, с. 99; Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ., էջ 225, № 239:*

[60] Б. В. Техов. Об одном погребальном комплексе из с. Тли.– «Советская археология» (М.), 1961, № 4, с. 130–138, рис. 5; *Նույնի՝* Тлийский могильник и проблема хронологии культур поздней бронзы – раннего железа Центрального Кавказа.– «Советская археология», 1972, № 3, с. 31, 33, рис. 2, 267.

[61] П. Уварова. Могильники Северного Кавказа. Материалы по археологии Кавказа, вып. VIII. М., 1900, с. 271, 277–278; A. Ivantchik, A. Moshinskiī. Two Bronze North Caucasian Helmets from the State Historical Museum (M.).– “Ancient Civilizations from Scythia to Siberia”, M., 2001, vol. 7, iss. 3–4, pp. 288–290, fig. 1, 2.

[62] М. Трапш. Памятники колхидской и скифской культур в селе Куланурх-ва Абхазской АССР. Сухуми, 1962, с. 23, таб. XX, 1; А. Скаков. К вопросу о связях племен Армянского нагорья и Колхиды в эпоху раннего железа.– По ту сторону Арагаца. Археологические исследования, посвященные памяти Телемака Хачатряна. Ереван, 2018, с. 199–200. *Այստեղ չենք անդրադարձել Հայկական լեռնաշխարհի կիմերական ու սկյութական հնագիտական մեծաթիվ համալիրներին, քանի որ դա առանձին քննարկման առարկա է:*

Գարեգին Թումանյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեղարյան մշակույթներ, թաղման ծես, կիմերասկյութական մշակութային ընդհանրություն: Հեղինակ է 5 գրքի և 57 հոդվածի:
gstumanyan@gmail.com

REFERENCES

Abaev V. I. Osetinskiy yazyk i fol'klor, t. 1. M.–L., 1949 (In Russian).

Adonts N. Hayastani patmutyun, Yerevan, 1972 (In Armenian).

Arutyunyan N. V. Korpus urartskikh klinoobraznykh nadpisey. Yerevan, 2001 (In Russian).

Dalalyan T. Iš-qi-gu-lu-ú yerkire ev skyutnere.– Khaldyan zorutyamb … Hodvadsneri zhoghovadsu nvirvads Boris Piotrovsku 100-amyakin, Yerevan, 2010 (In Armenian).

Dalalyan T. Skyutner.– Hayastani harakits yerkrneri patmutyun, h. I, Yerevan, 2013 (In Armenian).

Deller K. Ausgewählte neuassyrische Briefe betreffend Urarṭu zur Zeit Sargons II.– Tra lo Zagros e l'Urmia. Roma, 1984.

D'yakonov I. M. Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu.– "Vestnik drevney istorii" (M.), 1951, № 2 (In Russian).

D'yakonov I. M. Assiro–vavilonskie istochniki po istorii Urartu. – "Vestnik drevney istorii" (M.), 1951, № 3 (In Russian).

D'yakonov I. M. Istoriya Midii. M.–L., 1956 (In Russian).

D'yakonov I. M. Urartskie pis'ma i dokumenty. M.–L., 1963 (In Russian).

D'yakonov I. M. Malaya Aziya i Armeniya okolo 600 g. do n. e. i severnye pokhody vavilonskikh tsarey.– "Vestnik drevney istorii" (M.), 1981, № 2 (In Russian).

Ghapantsyan G. A. Urartui patmutyune, Yerevan, 1940 (In Armenian).

Grantovsky E. A. Rannyaya istoriya iranskikh plemen Peredney Azii. M., 1970 (In Russian).

Grekyan Y. The Battle of Uauš Revisited.– "Aramazd: AJNES" Yerevan, 2010, vol. V.

Grekyan Y. Marastan.– Hayastani harakits yerkrneri patmutyun, h. I, Yerevan, 2013 (In Armenian).

Harutyunyan N. V. Urartun m. t. a. VIII dari verdjin ev VII darum.– Hay zhoghovrdi patmutyun, h. I, Yerevan, 1971 (In Armenian).

Işik K., Salvini M. New Urartian Cuneiform Bulla from Ayanis in the Van Museum.– "Aramazd: AJNES" (Yerevan), 2015, vol. IX.

Ivanchik A. I. Kimmeriytsy i Urartu nakanune vos'mogo pokhoda Sargona II.– "Vestnik drevney istorii" (M.), 1990, № 3 (In Russian).

Ivanchik A. Kimmeriytsy. Drevnevostochnye tsivilizatsii i stepnye kochevniki v VIII–VII vv. do n. e. M., 1996 (In Russian).

Ivanchik A. I. Sovremennoe sostoyanie kimmeriyskoy problemy. Itogi diskussii.– "Vestnik drevney istorii" (M.), 1999, № 2 (In Russian).
Ivantchik A. I. Kimmerier und Skythen. M., 2001.
Ivantchik A., Moshinskiĭ A. Two Bronze North Caucasian Helmets from the State Historical Museum (M.).– "Ancient Civilizations from Scythia to Siberia", (M.), 2001, vol. 7, iss 3–4.
Kapantsyan G. Khayasa – kolybel' armyan. Etnogenez armyan i ikh nachal'naya istoriya. Yerevan, 1947 (In Russian).
Karagyozyan H. Urartakan gaghaparagir andznanunner.– HSKh GA "Lraber hasarakakan gitutyunneri", 1984, № 1 (In Armenian).
Kashkay M. S. Iz istorii Manneyskogo tsarstva. Baku, 1977 (In Russian).
König F. W. Handbuch der chaldischen Inschriften, II. Graz, 1957.
Kosyan A. Tun Torgomay (araspel ev irakanutyun), Yerevan, 1998 (In Armenian).
Kosyan A. V. Aram Nahapete Kapadovkiayum (mi varkadsi artiv).– PBH, 1999, № 1 (In Armenian).
Lanfranchi G. B., Parpola S. The Correspondence of Sargon II, Part II: Letters from the Northern and Northeastern Provinces. State Archives of Assyria 5. Helsinki, 1990.
Luckenbill D. D. Ancients Records of Assyria and Babylonia, II. Chicago, 1927.
Melikishvili G. A. Urartskie klinoobraznye nadpisi. M., 1960 (In Russian).
Parpola S. The Correspondence of Sargon II, Part I: Letters from Assyria and the West. State Archives of Assyria 1. Helsinki, 1987.
Phillips E. D. The Scythian Domination in Western Asia: Its Record in History, Scripture and Archaeology.– "World Archaeology" (London), 1972, vol. 4, № 2.
Piotrovsky B. B. Arkheologiya Zakavkaz'ya. L., 1949 (In Russian).
Piotrovsky B. B. Vanskoe tsarstvo (Urartu). M., 1959 (In Russian).
Salvini M. The Inscriptions of Ayanis. Cuneiform and Hieroglyphic.– Ayanis I, Roma, 2001.
Salvini M. Corpus dei testi urartei, vol. IV. Roma, 2012.
Skakov A. K voprosu o svyazyakh plemen Armyanskogo nagor'ya i Kolkhidy v epokhu rannego zheleza.– Po tu storonu Aragatsa. Arkheologicheskie issledovaniya, posvyashchennye pamyati Telemaka Khachatryana. Yerevan, 2018 (In Russian).
Strobel K. "Kimmeriersturm" und "Skythenmacht": eine historische Fiktion?.– Studies Presented to Frederick Mario Fales on the Occasion of His 65th Birthday. Wiesbaden, 2012.
Strobel K. The Cimmerians in Asia Minor. – Some Observations on Anatolian Cultures. Ankara, 2014.
Sulimirski T. Scythian Antiquities in Western Asia. – "Artibus Asiae" (Ascona), 1954, vol. 17, № 3/4.
Tekhov B. V. Ob odnom pogrebal'nom komplekse iz Tli.– "Sovetskaya arkheologiya" (M.), 1961, № 4 (In Russian).
Tekhov B. V. Tliyskiy mogil'nik i problema khronologii kul'tur pozdney bronzy – rannego zheleza Tsentral'nogo Kavkaza.– "Sovetskaya arkheologiya" (M.), 1972, № 3 (In Russian).

Trapsh M. Pamyatniki kolkhidskoy i skifskoy kul'tur v sele Kulanurkhva Abkhazskoy ASSR. Sukhumi, 1962 (In Russian).
Tumanyan G. S. Ara Geghetsik ev Shamiram, Yerevan, 2005 (In Armenian).
Uvarova P. Mogil'niki Severnogo Kavkaza. Materialy po arkheologii Kavkaza, vyp. VIII. M., 1900 (In Russian).
Yeremyan S. T. Kimerakan u skyutakan tsegheri arshavanknere ev Urartui u Asorestani paykare kochvorneri dem.– PBH, 1968, № 2 (In Armenian).
Yeremyan S. T. Haykakan aradjin petakan kazmavorumnere (VII–VI dd. m. t. a.).– PBH, 1968, № 3 (In Armenian).
Yesayan S. A. Oruzhie i voennoe delo drevney Armenii (III–I tys. do n. e.). Yerevan, 1966 (In Russian).

КЛИНОПИСНЫЕ ИСТОЧНИКИ О ПРИСУТСТВИИ КИММЕРИЙЦЕВ И СКИФОВ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: киммерийцы, скифы, клинообразные надписи, Манна, войско, умман-манда, Теушпа, Ишпака, Шагапутара, Партатуа.

Исследование киммерийской и скифской проблем имеет смысл начинать с изучения письменных источников. Первоначальные сведения о присутствии киммерийцев и скифов на Армянском нагорье сообщают хронологически следующие друг за другом ассирийские и урартская клинообразные надписи. Очевидно, правдиво отображая ход исторических событий, они взаимно подтверждают и дополняют друг друга. Клинообразные надписи – наиболее достоверные источники. Их изучение является способом определения достоверности сведений античных текстов. Ассирийские клинописные тексты сообщают о разгроме урартских войск киммерийцами. В них упоминаются киммерийские вожди Теушпа, Дугдамми, Сандаккурру, а также предводитель скифов Ишпака (Шагапутара в урартском тексте) и скифский царь Партатуа. Клинописные свидетельства вместе с археологическими данными способствуют реконструкции обобщенной картины историко-культурных процессов в обсуждаемой эпохе.

Гарегин Туманян – к. и. н., старший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: культуры эпох бронзы и железа Армянского нагорья, погребальный обряд, киммерийско-скифская культурная общность. Автор 5 книг и 57 статей. gstumanyan@gmail.com

CUNEIFORM SOURCES ON THE PRESENCE OF CIMMERIANS AND SCYTHIANS IN THE ARMENIAN HIGHLAND

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

Key words: Cimmerians, Scythians, cuneiform inscriptions, Manna, troops, Umman-manda, Teushpa, Ishpaka, Shagaputara, Partatua.

Investigation of Cimmerian and Scythian problems should begin from the review of written sources. Assyrian and Urartian cuneiform inscriptions, chronologically following each other, provide initial information about the presence of Cimmerians and Scythians in the Armenian Highland. It is obvious, they truthfully reflect the course of historical events, corroborating and enriching each other. Cuneiform inscriptions are the most valid historical sources. They are used to check the accuracy of antique texts. Assyrian cuneiform inscriptions report about the defeat of Urartian troops by Cimmerians. They mention about Cimmerian chiefs Teushpa, Dugdammi, Sandakkurru, as well as the chief of Scythians Ishpaka (Shagaputara in Urartian text) and the Scythian king Partatua. Cuneiform sources along with archaeological data contribute to the recovery of the summarized picture of historical–cultural processes in the discussed epoch.

Garegin Tumanyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of Early Archaeology of the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: the Bronze and Iron Age cultures of the Armenian Highland, funerary rites, Cimmerian-Scythian cultural affinity. Author of 5 books and 57 articles. gstumanyan@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2020 № 2 Историко-филологический журнал

ՀԵՐՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄՈՆՈՄԻՖԻ ՄՈԴԵԼԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊՈՒՄ*

ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ

Բանալի բառեր՝ Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի», Ջ. Քեմբել, հերոսի ճանապարհի մոնոմիֆ, նշանային համակարգ, հեռացում տնից, թափառումների ճանապարհ, երևանի բերդ-ղև, անծանոթ աշխարհ, Անի, մահ, վերադարձ մեկնակետին:

Նախաբան

Հարազատ տուն – հեռավոր աշխարհ ցիկլային ճանապարհորդության մոտիվը ընկած է տարբեր ազգերի բանավոր և գրավոր մշակույթների հենքում: Հերոսը տարբեր չարժառիթներով դուրս է գալիս իր բնական միջավայրից, ճանապարհ ընկնում դեպի անծանոթ ու չուսումնասիրված տարածքներ և ձեռք բերելով որոշակի հմտություններ՝ վերադառնում: Իր քայլերով նա գծում է գործողությունների ու գործառույթների մի պտտվող շրջան, որը, դառնալով ստեղծագործության համակարգի գործող չարժիչը, իր շուրջն է հյուսում ամբողջ պատումը[1]:

Ժամանակատարածական ուղու այդ շղթան իրացվում է տարբեր մշակույթների համատեքստում՝ դառնալով բանահյուսական և գրական երկերի կառույցների կենտրոնական բաղադրիչը: Ամերիկացի գրականագետ Ջ. Քեմբելը հերոսի ճանապարհի այդ մոտիվը դիտում է որպես համաշխարհային առասպելաբանության համապատկերում կրկնվող մոնոմիֆ, որը ընդհանուր է բոլոր մշակույթների համար: Խնդրին նայելով կառուցվածքաբանության տեսանկյունից՝ նա արքետիպ-հերոսի ճանապարհորդության համար առանձնացնում է 12 կետ, որոնք ստեղծագործության գործողության պլանում ստանում են փուլերի արժեք[2]: Գիտնականի աշխատությունը խարսխված է ազգերի բանավոր մշակույթի

---

* *Ներկայացվել է 05. II. 2020 թ.: ԵՊՀ-ի ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ նոր գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. դ. Ալ. Մակարյանը (04. II. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 12. VI. 2020 թ.:*

[1] *Գեղարվեստական այս մոտիվի արմատները գալիս են նվիրագործման հնագույն ծեսից, երբ «մեծերի հասարակություն ներգրավվելու իրավունքը ստանալու համար հերոսը պետք է անցներ ծիսական փորձությունների մի ամբողջ շարք ու ստանար դրանցում ամփոփված որոշակի գիտելիքներ: Միայն դրանից հետո նա կհամարվեր հասարակության պատասխանատու անդամ» (տե՛ս* М. Элиаде. Тайные общества. Обряды инициации и посвящения. М., 1999, с. 13)*:*

[2] *Մանրամասն տե՛ս* Дж. Кэмпбелл. Тысячеликий герой. М., 1997.

վրա, բայց այն կիրարկելի է նաև գրականության ծիրում և համակողմանիորեն դրսևորվում է հատկապես բանահյուսական հենք ունեցող գրական երկերի դեպքում:

Լինելով նոր գրականության հիմնաքարը և ուղի բացելով դրա զարգացման համար՝ Աբովյանի վեպը նաև հայկական բանահյուսության օրգանական շարունակությունն է. այն մի կողմից դաշտ է բերում եվրոպական դասականի վեպի հատկանիշները, մյուս կողմից՝ կրում ժողովրդական հեքիաթի ու էպոսի օրինաչափություններ[3]: «Իր էությամբ (հիպերբոլայի բնույթով) Աբովյանի վեպը իրոք որ հիշեցնում է ժողովրդական հերոսական դյուցազնավեպերը ... Նկատվող ֆոլկլորային տարրերից մեկն էլ վեպի տարբեր էջերում ցրված հեքիաթատիպ յուրահատուկ ոճերն ու բանաձևերն են»[4],– իրավացիորեն նկատում է Ա. Ղանալանյանը:

Քաջածանոթ լինելով հայկական բանարվեստին՝ Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպը ոչ միայն հարստացնում է բանահյուսական ոճերով ու արտահայտություններով, այլև դրա հենքում ընում է ժողովրդական վեպին բնորոշ կաղապար ու հերոսների գործառույթները կառուցում հեքիաթի նշանային համակարգի վրա, որն էլ հիմք է տալիս մեզ քննելու գործը՝ ըստ հերոսի ճանապարհի մոնոմիֆի փուլերի, որոնց աբովյանական իրացումը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

1. Կանչ դեպի թափառումներ

Վիպական գործողությունների առաջին հանգրվանը Քանաքեռն է՝ Բարեկենդանի տոնի նկարագրությամբ: Գյուղը պատկերվում է որպես ներփակ տարածք, որտեղ կյանքն ընթանում է իր բնական օրինաչափությամբ և օրենքներով, ամեն օր կրկնվող գործառույթներով (ժամ, աղոթք, կանանց, տղամարդկանց ու երեխաների ընտանեկան պարտականություններ և այլն): Ամեն ինչ իր բնականոն հունի մեջ է, և կանոնները պահպանում են «խաղաղությունը» թշնամիների հետ: Այս առումով կարևոր դեր է խաղում տանուտեր Օհանեսը (հեքիաթի նշանային համակարգում՝ թագավոր), ով, «էփված, փորձված մարդ ըլելով, միրուք ու մազեր հազար բանում սպիտակացրած, հազար չաթուչվան կտրած՝ ծանր, ուռած կանգնել, գզրին թամբահ էր անում, որ թուրք

[3] *«Վերք Հայաստանի» վեպի ժանրային ձևի և վիպական ավանդույթի չուրջ տարակարծությունները սկիզբ են առել երկի լույս ընծայումից ընդամենն ամիսներ անց: Արտահայտած հակադիր տեսակետներով Ս. Ոսկանը և Մ. Նալբանդյանը հիմք են դրել վեպի ընթերցման ու գնահատման երկու տարբերակի՝ ըստ ասիական և եվրոպական չափորոշիչների, ինչն էլ մեծ ազդեցություն է թողել աբովյանագիտության հետագա զարգացման վրա ու դարձել կարծիքների բախման և երկի տարաբնույթ գնահատականների հիմք (այս մասին մանրամասն տե՛ս Ն. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Աբովյանի պոետիկան, Երևան, 1979, էջ 229–237):*

[4] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941, էջ 57:*

ԳԱՄՄԱՏԻԿ
ՔԱՆԱՔԵՎ
(քաղաքի գտնվելու)
1. Կախ չկոչ վեպի քեռասցկի
(գրականության)
2. Կախվել գրքի
(գրքի ֆամիլիայի գրական)
3. Կախի գրքի քանակությունը
(գրքի ընտանիքում)
4. Գիրքնամակ գրքի
(գրքի ընտանիքում)
5. Ալ կախվել կախ
(գրքի ֆամիլիա)
6. Փ քանակությունը վերադարձնել
7. Չկախել գրքի գրադարանի
(գրքի գրադարանում)
8. Վերջին փորձություն
(գրքի ընտանիքում գրքի ընտանիքի)
9. Չաշխատել կախ չեռ
10. Կախ գրքի
(գրադարանի)
11. Վախենալ գրքի վախենալը
(գրքի)
Կախվել քաղաք
Ալ կախվել

պատահելիս տանի, մեկ տեղ ղոնաղ տա, էն չանը լավ մտիկ անի, որ մարդի չկծի …»[5]: Գյուղի գլխավորը գիտի թշնամու հետ խաղաղ գոյակցման պայմաններն ու պահանջները և ապրելու այդ ձևը համարում է միակ հնարավոր տարբերակը, որ «չունը չկծի»:

Ստեղծված կեղծ «խաղաղությունն» էլ ավելի ակնբախ դարձնելու համար Աբովյանը միտումնավոր սրում է գույները՝ առաջին գլխի բեկումնային գործողություններից առաջ Քանաքեռը զուգահեռելով դրախտին. «Էս հաղաղին ով որ Քանաքեռ մտներ, հենց կիմանար, թե երկնքիցը մեկ ավետյաց ձեն ա էկել, աշխարհքս արքայություն ա դառել, մարդի աչքն էլ ցավ, կակիծ չի պետք է տեսնի … թե էս գեղըցիք աշխարքի տերն են. ո՛չ դարդ ունեն, ո՛չ դասավաթ …» (էջ 89):

Այս դրախտային կյանքի չղարչը, սակայն, հօդս է ցնդում, երբ թշնամին գալիս է «խաղաղության վարձը» պահանջելու. «Հանկարծ էն քեֆի մեջումը, հենց բռնես, մեկ ամպ տրաքեց, երկիրը շարժեց, յա թոփի, թոփխանի ձեն էկավ, յա երկինքը փուլ էկավ» (էջ 90): Ֆարաշները եկել են գյուղի աղջիկներից մեկի՝ Աթոյենց Թագուհու հետևից, և չնայած մեծ ցանկությանը՝ գյուղացիները չեն կարող օգնել. «Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը» (էջ 92): Սարդարին աղջիկ տալը մտնում էր խաղաղ գոյակցման պայմանի մեջ, և այդ զոհողությունը հայերի կյանքի գինն էր:

Կյանքի և մահվան, ազատության ու անազատության պրկման պահին մեջավայրից առանձնանում է ստեղծագործության հերոսը՝ Աղասին, ով, հակադրվելով տեղի և ժամանակի իրականությանն ու հասարակությանը, կոտրում է գործող դարավոր օրենքն ու սպանելով ֆարաշներին՝ փրկում Թագուհուն:

Տանուտերի տղան (թագավորի տղան) տարբերվում է միջավայրից վեպի արդեն իսկ առաջին էջերից: Նա հակադրվում է մյուսներին թե՛ արտաքին նկարագրով, թե՛ քաջությամբ. «Հենց իմանաս՝ մեկ թագավորի որդի ա գալիս» (էջ 89), «չատ մոր աչք մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա չինի» (էջ 62) և այլն: Ընդգծվում են նրա խիզախությունը և ուժը, որոնց հետ անգամ սարդարն է հաշվի նստում:

Փրկելով Թագուհուն՝ Աղասին դեմ է գնում կեցության ընդունված կարգին և խախտում Քանաքեռի կանոնը: «Կյանքի սովորական սահմանները նեղ են դառնում,– նկատում է Ջ. Քեմբելը,– հին հայեցակարգերը, իդեալները և զգացական կաղապարներն արդեն չեն գործում, ու հասել է սահմանագիծը հատելու ժամանակը»[6]: Դեմ գնալով ապրելու նախկին կերպին՝ Աղասին իրացնում է Քեմբելի դասակարգման առաջին քայլը՝ «կանչ դեպի թափառումներ»:

Հերոսի քայլը մեկընդմիշտ հեռացնում է նրան հարազատ տնից, ուր վերադարձը դառնում է անհնարին, քանի դեռ գործում են կեցության

[5] *Խ. Աբովյան. Վերք Հայաստանի, Երևան, 1981, էջ 65: Այսուհետև Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» գրքից բերվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում:*

[6] Дж. Кэмпбелл. *Նշվ. աշխ., էջ 38:*

նախկին օրենքները. «Ինչ արի՛ր՝ արի՛ր. գլուխդ ա՛ռ, կորի՛. գնա՛ Փամբակ, Թիֆլիզ, ոսի հողը: Էս երկրումը քո արևը մեր մտավ, քո օրը խավարեցավ, քո ճրագը հանգավ» (էջ 99):

Կորցնելով վերադարձի հնարավորությունը՝ հերոսը ընտրում է թափառումների ուղին՝ առաջին քայլն անելով մոնոմիֆի չղթայում:

Վեպի երկրորդ գլխի սկզբում գծագրվում է երկի գլխավոր հակահերոսն ու ճանապարհի վերջնական հանգրվանը՝ Երևանի բերդը, որտեղ հասնելուց հետո միայն Աղասու համար հնարավոր կլինի վերադարձը:

Բերդը վեպի նշանային համակարգում կերպավորվում է հեքիաթային դևի տեսքով: «Լե՛ռ քարափի վրա ցից գլուխը բարձրացընում, թամաչա ա անում հանդարտ, հազար գլխանի դևի պես, Երևանի հազար տարեկան քավթառ, պառաված ... մարդակեր բերդը», որ «իր կոտրած ոտները Զանգվի բերանը խցկելով»՝ փակում է գետի ճանապարհը երևանցիների համար. «կարոտ բնակիչքը նրա ճամփեն բռնում, նրան սիրով խոտում ... որ նրա սուրբ կաթնահամ ջրովը իրանց էրված սիրտը հովացնեն ...» (էջ 112–113):

Երևանի բերդը վեպի նշանային համակարգում հանդես է գալիս որպես ջրի (կյանքի) ճանապարհը փակող դև, ում բնակիչները չամուսնացած աղջիկներ են զոհում[7]: Այս համատեքստում վերաարժևորվում է նաև Թագուհու դերը. նա զուգահեռվում է դև-ջուր-աղջիկ տարածված կառույցի երրորդ օղակին. բնակիչները թույլ են տալիս սարդարի/դևի ծառաներին տանելու աղջկան իրենց կյանքի (ջրի) դիմաց:

Այս մոտիվը համապատասխանում է Վ. Պրոպպի առանձնացրած 8-րդ գործառույթին. «Վնասատուն ընտանիքի անդամներից մեկին վնաս է հասցնում ...», և «այս գործառույթը չափազանց կարևոր է, քանի որ նրանով է պայմանավորվում հեքիաթի չարժումը»[8]:

Վեպում Թագուհին Աղասու քույրը չէ, այլ՝ համագյուղացին: Սակայն, ինչպես վկայում է Աբովյանը գերմանացի գիտնական Ֆրիդրիխ Բոդենշտեդին ուղարկվելիք տեսրակում, նա իրականում ֆարաշներից փրկել է հարազատ քրոջը[9]:

Վերոհիշյալ գործառույթի իրացմամբ Աղասին ոչ միայն դեմ է դուրս գալիս հասարակությանը, այլև տեղի է ունենում հայր-որդի բախում: Զլսելով տանուտերի խոսքը՝ նա մերժում է դարերից եկած օրենքը, ինչի պատճառով Օհանեսին և մյուս քեթխուդաներին տանում են Երևանի բերդի գնդան. «Անկուշտ Երևանի բերդը ատամները սրեց, որ էն նոր էկած ղոնաղներին էլ փորումը լավ տեղ տա, մարսի» (էջ 216):

Հեռանալով տնից, ընդհարվելով հոր հետ և հակադրվելով իր նախկին կյանքի օրինաչափություններին՝ Աղասին ընկերների հետ «թափառումների ճանապարհ» է դուրս գալիս:

---

[7] *Մանրամասն տե՛ս* Мифы народов мира, т. 1. М., 1980, с. 394.

[8] В. П р о п п. Морфология волшебной сказки. Л., 1928, с. 40.

[9] *Տե՛ս Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, Երևան, 1956, էջ 390:*

2. Կանչի մերժում

Հաջորդ կետը, որը համապատասխանում է Աղասու ուղուն, «Կանչի մերժում»-ն է, երբ հերոսը, հեռանալով ծննդավայրից, չի գնում դեպի վերջնական հանգրվան, այլ մոլորվում է ճանապարհին ու մոռանում իր առաքելության մասին:

Քանաքեռից հետո ընկերները չեղվում են սահմանված ուղուց և գնում Պարնի գյուղ, Ղարաքիլիսա, փորձում ապրել խաղաղ, առանին կյանքով: Ծննդավայրի ու հարազատների նկատմամբ ունեցած պարտքը, սակայն, հանգիստ չի տալիս, ու «սև ամպը» չի հեռանում նրանց գլխավերևից:

Ղարաքիլիսայում Աղասին գտնվում է պայմանական հանդարտության ու անգործության մեջ. հիշելով անցյալը՝ ծնողների ու կնոջ տանջանքը, և գիտակցելով ապագան՝ Երևանի բերդը կործանելու առաքելությունը՝ հերոսը չի իրագործում ոչ մի գործառույթ. տարաժամանակային առումով մնում է անշարժության ու անգործության սահմաններում:

3. Կինը որպես գայթակղություն

Ստեղծված կայուն դաշարից հերոսին հանում են մոր ու կնոջ նամակները, որոնք վեպի ճանապարհի նշանային համակարգում բացասական գործառույթ են կատարում: Մայրը պատմում է իրենց դժվար կյանքի, որդու կարոտի ու տանջանքների մասին և խնդրում վերադառնալ տուն ու Նազլուին տանել. «Ջէ, Ա՛ղասի ջան, թե քո մերն եմ, ասածս արա՛… թե իմ կաթն ես կերել, Ա՛ղասի ջան, թե իմ ձեռին մեծացել, քանի չունչդ բերնումդ ա, ոտդ՝ վրեդ, արի՛, արի՛, էս սուրբ հողի վրա կանգնի՛ր, ինձ էլ նրա հետ թաղիր», «…գերեզմանի ղրաղին կանգնել եմ, քե՛զ եմ կանչում, Ա՛ղասի ջան, ձեուս ու դոշս բաց եմ արել, քե՛զ եմ կարոտ ջանի՛դ ղուրբան (ընդգծումները մերն են – Ա. Ս.)» (էջ 246–247):

Վերադարձի հորդոր, մայրական անեծք[10], սիրելիների կարոտ. ցիկլային ճանապարհի առումով այս քայլը խաթարում է գործառութային շղթան, չեղում նախապես գծած ուղին ու անհնարին դարձնում վերջնական նպատակի իրագործումը՝ բերդ-վեի գրավումը: Կինն այս տեսանկյունից ստանում է «գաղթակղողի» արժեք, որ, ազդելով զգացմունքների վրա, հորդորում է մի կողմ դնելով պարտքը՝ գնալ ցանկությունների, հույզերի հետևից:

Նամակը կարդալուց հետո Աղասին երկընտրանքի առջև է կանգնում ու քանիցս որոշում հետ դառնալ, փրկել ընտանիքը. «Աղասին միտը ծռել, ուզում ա գնա հորնումոր հավարին. լուսուն բռնում, ետ էին դարձնում (ընկերները – Ա. Ս.)» (էջ 249), ինչը պատմողն ինքը սխալ է որակում՝ նշելով, որ «Աղասու գլխին դեռ չար հրեշտակ էր պտտում» (էջ 249):

[10] *Մայրական անեծքների մասին մանրամասն տե՛ս Ս. Հարությունյան. Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 202:*

Թվում է՝ կխաթարվի ճանապարհի ընթացքն, ու Աղասին հետ կդառնա իր նպատակից, «չար հրեշտակին», սակայն Աբովյանը հակադրում է «բարի հրեշտակին» վեպում տեղ տալով «դերբնական օգնության» գործառույթին:

4. Դերբնական օգնություն

Ըստ Քեմբելի՝ «ճանապարհորդություններում երազի կամ միֆի տեսքով հայտնվում է որևէ կերպար, որը ուղեկցողի դեր է ստանձնում»[11]: Այդ վերերկրային անձն օգնում է ճչմարիտ ուղուց չեղված հերոսին հիշել կարևոր նպատակների մասին ու վերադառնալ նախնական դիրքին: Վեպում այդ գործառույթը ստանձնում է Հռիփսիմեն:

Տեսնելով Աղասու տանջանքները՝ ընկերները որոշում են գնալ նրա ընտանիքի հետևից: Վիպական ճանապարհի չղթայի փոփոխությունը դառնում է անկասելի: Աբովյանը, սակայն, դիպաշար է ներմուծում առաջին հայացքից գործին չկապվող ու թերի գործառույթ՝ Մոսիի սիրահարությունը: Հերոսը նախ արթմնի երազ է տեսնում. մի աներևույթ ձայն հորդորում է նրան քնել. «Մո՛ւսա ջան, քնի՛. ես աչքդ կկպցնեմ, երազումդ հետդ կխոսիմ ...» (էջ 249), իսկ երազում «հրեշտակի պատկեր»-ով աղջիկը խնդրում է փրկել իրեն թուրքերից: Մոսին սիրահարվում է անիրական գեղեցկուհուն և խոստանում հասնել Ղարս ու օգնել:

Վեպում, փաստորեն, մի ժամանակ գործում են երկու հակադիր գործառույթներ իրականացնող կանայք՝ Նազլուն/մայրը և Հռիփսիմեն, որոնք հորդորում են հերոսին[12] գնալ տարբեր ուղղություններով. Նազլուն մատնանշում է վերադարձի ուղին, իսկ Հռիփսիմեն ցույց է տալիս ճանապարհի չարունակությունը: Սերը հանդիպադրվում է հայրենիքին, անձնականը՝ անանձնականին, Քանաքեռը՝ ամբողջ Հայաստանին: Աղասու ներսում երկու կանանց միջոցով բախվում են այդ պահի համար իրարամերժ հասկացությունները, և վերջինս ընտրում է հայրենիքի փրկության ուղին:

---

[11] Дж. Кэмпбелл. *Նշվ. աշխ., էջ 40:*

[12] *Հերոսներն այս պարագայում տարբեր են. Աղասին ու Մոսին (Մուսե, Մուսա), որոնք, սակայն, վեպի կոմպոզիցիայում նույնանում են: Աղասին իր հինգ ընկերների հետ կատարում է նույն գործառույթները, անցնում է նույն ճանապարհով ու հանգում միևնույն արդյունքին՝ Քանաքեռ – արկածների ճանապարհ – մահ: Նրանք գլխավոր հերոսի կրկնակ տարբերակներն են, որոնք ո՛չ նշանային համակարգի կառույցում, ո՛չ կերպարային նկարագրով չեն զանազանվում: Աղասու կերպարի տրոհումը, մեր կարծիքով, ունի զուտ գործառական արժեք. Աբովյանն այդ քայլին գնում է իր իդեալ հերոսին միևնույն ժամանակ մի քանի գործողությունների և գործառույթների կենտրոնում դնելու նպատակով: Տվյալ դեպքում, օրինակ, Աղասին, որպես ամուսնացած հերոս, չի կարող կանգնել Նազլու–Հռիփսիմե երկընտրանքի առջև, և չար ու բարի հրեշտակների միջև ընտրության խնդիրն իրացնելու համար հեղինակը մի բովանդակային էությունը երկատում է երկու ձևական կաղապարում՝ ընտրությունն առերես վերապահելով տարբեր կերպարների, բայց նույն էությանը: Ասվածը փաստում է նաև վեպի ավարտը, երբ Աղասու մահից հետո վիպական կառույցում նրա կրկնակ կերպարի գոյությունը դառնում է անհնար, և Մոսին ինքնասպան է լինում:*

Գերբնական օգնության միջոցով վեպի հերոսը սթափվում է տարիներ տևած անորոշությունից, դուրս է գալիս դադարի ստատիկ դրությունից և նորից ճանապարհ ընկնում:

5. Այլ աշխարհի չեմի հաղթահարում

Ճանապարհի հաջորդ փուլն արդեն առնչվում է անծանոթ աշխարհին: Մինչ այս կետը գործողությունները կատարվում են հերոսին ծանոթ չափումում: Նա տեղյակ է դրա օրենքներին ու օրինաչափություններին: Այլ աշխարհի չեմի հաղթահարումից հետո, սակայն, փոխվում է իրականությունը. սովորականը կերպափոխվում է արտասովորի, և սկսվում են իրական փորձությունները: Դա ստեղծագործության կառույցում այն պայմանական վայրն է, որտեղ հերոսը հասունանում է, անցնում խոչընդոտների միջով և ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները՝ վերադառնում: Ն. Վարդանյանը գրում է. «Հեքիաթային այս երկու տարածքների միջև կա ևս մեկը, որը բաժանում է այդ երկու աշխարհները, մի սահման, որտեղից սկսվում է հրաշքների ու գերբնական էակների տարածքը … Տնից հեռացող հերոսը իր ճանապարհորդության հենց սկզբում սովորաբար անցնում է այս սահմանային գոտիները, որից հետո հայտնվում է այլ աշխարհում»[13]*:*

«Վերք Հայաստանի» վեպում փորձությունների և արկածների այդ անծանոթ աշխարհն «անիծված» Անին է: Ավերված քաղաքը սկզբում կերպավորվում է որպես անհավատալի հրաշք, որի «ահագին բերդի պարիսպը», «զարմանալի եկեղեցքանց գմբեթքն ու մեծուվթյունը, բարձր մինարեթքը» տեսնողին թագավորական հարուստ քաղաք են հիշեցնում: Քայլ առ քայլ, սակայն, տեսարանը կերպափոխվում է, և բացվում է «Հայոց Տան» ավերված պատկերը՝ իր «անչունչ քարերով ու եկեղեցիներով»: Վեպում Անին հայոց պետականության ու փառքի անկման խորհրդանիշն է, հզորության վերջին պատառիկը, որտեղ հասնելով միայն՝ Աղասին կստանա անհրաժեշտ ունակություններն ու գիտելիքները դևի հետ վերջնական ճակատամարտի համար: Անիում հերոսն առերեսվում է հայոց փառավոր անցյալին և ուժ ստանում ներկան փոխելու ու գալիքը կառուցելու համար:

Քաղաքը պարուրված է խորհրդավորության ու վախի չղարչով. Հովհաննես Երզնկացու հազարամյա անեծքի մասին պատմությունները սարսափով են պատում վեպի անծանոթ աշխարհը, ինչն էլ մուտքն այդ տարածական չափում դարձնում է անհնար. «Հենց էսօր էլ թուրք, քուրդ, հայ՝ ո՛չ ոք սերտ չի անում Անու միջովն անց կենա, որովհետև կարծում են, թե մեջը քաջքերով լիքն ա, որովհետև աստված մեկ անգամ անիծեց» (էջ 190):

Հերոսի ճանապարհն Աղասուն ծանոթ տարածքներից տանում է անծանոթ ու խորհրդավոր Անի, և այս տեսանկյունից ուշարժան է այդ երկու աշխարհների բախումը՝ այլ աշխարհի չեմի հաղթահարումը:

---

[13] *Ն. Վարդանյան. Սահմանային գոտու սիմվոլիկան հրաշապատում հեքիաթում.– «Ոսկե դիվան» (հեքիաթագիտական հանդես), Երևան, 2012–13, պր. 4, էջ 46:*

Ջնայած վախին՝ Աղասին ու ընկերները քաջությամբ են մտնում քաղաք: Հասան խանին և նրանց հետևող մյուս պարսիկներին, սակայն, Անին այլ կերպարանքով է դիմավորում: «Ջորերը, խուլ-խուլ էրերը, խոր-խոր եկեղեցիքը, մատուռները» արձագանքում են հայերի ձայները, և տպավորություն ստեղծում, թե «հազար մեռել, հազար հրեշտակ, հազար սատանա ոտն են առել, գալիս են», արածող այծերն ու սեիզները հեռվից «Սաղայելի զորքին» են նմանվում և սարսափեցնում պարսիկներին: Անիծված քաղաքը բացում է իր դռները Աղասու համար և չի ընդունում թշնամիներին (էջ 190–191):

6. Փորձությունների ճանապարհ

Անծանոթ աշխարհ մուտք գործելուց հետո հերոսին սպասում են տարբեր փորձություններ, որոնցից առաջինն Ապարանի եկեղեցու փրկությունն է սրբապղծությունից: Դիպաշարային այս կետում կարևորվում է Աղասու շան դերը, որը կատարում է հեքիաթի օգնող կենդանու գործառույթները. «իմաստուն հայվանը» քանիցս փրկում է տիրոջ կյանքը և օգնում դուրս գալ անելանելի իրավիճակներից:

Խլղարաքիլիսայի իրադարձությունները տեղի են ունենում Անի մուտք գործելուց հետո. ավերված քաղաքում ապաստանած երիտասարդները գալիս են հայերին օգնության: Կռվի ընթացքում Աղասին գերի է վերցնում վեպի գլխավոր մարդ հակահերոսին՝ «արինակեր» Հասան խանին, բայց չի սպանում նրան, և դեպքերի զարգացման արդյունքում պարսիկին հաջողվում է փախչել: Առաջին հայացքից կատարված «ջահելությունը» (էջ 282) որակվում է որպես անմտություն, երբ թշնամու գլխավորին գերեվարելուց հետո հերոսը չի սպանում նրան, այլ փորձում է պատժել այլ ճանապարհով՝ դավանափոխ անել ու քրիստոնյա դարձնել. «Երեսիդ խաչ հանի՛ր, երեսդ մեր աղոթարանը դարձրո՛ւ. դու մեր անտեր հայերին չատ ես քո քյաբի կողմը դարձրել ու շլինքը կտրել ...» (էջ 185):

Վեպը հերոսի ճանապարհի մոնոմիֆի դիտանկյունից քննելու դեպքում, սակայն, դիպաշարային այս դիծն ստանում է գործառական կարևոր նշանակություն: Եթե տնից հեռացած Աղասին Հասան խանին՝ վեպի գլխավոր մարդ թշնամուն, սպաներ, ապա ժողովրդի աչքին կհերոսանար և ինչ-որ առումով տուն/Քանաքեռ/ վերադառնալու իրավունք կստանար: Այս գործառույթի իրացումը հնարավորություն կտար կերպարին ճանապարհի ամբողջական պտույտը չավարտած՝ վերադառնալ մեկնակետին: Այդ պարագայում, սակայն, չէր լրանա ցիկլային շրջանը, չէր կատարվի գլխավոր գործառույթը՝ գետի ճանապարհը փակող ղևի սպանությունը, չէր հանգուցալուծվի սկզբնական հեռացման թենջուկը, և հայ ժողովրդի վերջնական փրկության նպատակը կմնար անիրագործելի. մեծ թշնամին կատորաղասվեր փոքր թշնամուն: Ասվածը փաստում են նաև Աղասու՝ խանին ասված խոսքերը. «Հլա քանի երևան չե՛ն առել, քեզ հետս չան պես քաշ կտամ, սարեսար կքցեմ» (էջ 184): Գլխավոր հերոսի հիմնական նպատակը, փաստորեն, ոչ թե մեկ թշնամու սպանությունն է, այլ պարսկական տիրապետության խորհրդանշի՝ Երևանի /ղև/ բերդի գրավումը:

Ճանապարհի երրորդ փորձությունը պարսկական մեծաքանակ զորքի դեմ կռիվն ու Անիի եկեղեցում քրդերի սպանությունն է: Աղասին տեսնում է՝ ինչպես են մի խումբ քրդեր եկեղեցու ավերակներում, կրակի շուրջ նստած, խորոված անում: Մոտենում է նրանց և լուռ մի չամփուր վերցնում կրակից. «Նրա դեղնած, մեռելի պատկերը, նրա անահ շարժմունքն ու էնպես անժամանակ վախտը ներս գալը որ չտեսան քրդերը, հենց իմացան, թե նա էն աչխարքից ա վեր էկել. լեզվները չորացան, ձեռքները թուլացավ» (էջ 263):

Դիպաշարային այս գիծը հայկական հեքիաթներում տարածված մոտիվ է, երբ հերոսը մոտենում է կրակի շուրջ հավաքված դևերին ու նրանց կրակից փայտ վերցնում, դևերն էլ անսպասելիությունից սարսափում են, նրան չարքի կամ հրեշտակի տեղ դնում: Օրինակ. «Էլեղ էկավ էտ դևերի կուշտը, հասավ օջաղիցը մի կրակ վե կալավ ու ձեռին հաղացնըմ էր:

Էտ, դևերը զարմացան, ասին. — Ա՛յտա, էս խան չի, էս հրըշտա՞կ ա, էս ի՞նչ ա»[14]:

Քրդերին (դևերին) սպանելուց հետո Աղասին ազատում է գերի ղարսեցիներին (իրացվում է Հռիփսիմեի՝ բարի հրեշտակի երազը, երբ հետևելով նրա գծած ուղուն՝ փրկում են Ղարսի՝ թշնամուն գերի ընկած հայերին) և գտնում թշնամու առևանգած դանձերը՝ «ամեն մեկի վրա հարիր թումանի գենք, արծաթ ու ոսկի, թո՛ղ նաղդ փող» (էջ 264), որոնք բաժանում է ժողովրդին[15]:

7. Հրաժարում վերադարձից

Ըստ Քեմբելի առաջ քաշած տեսության՝ փորձությունների ճանապարհի վերջում փնտրած հարցերի պատասխանները գտնելուց կամ անհրաժեշտ համոզմունքները ձեռք բերելուց հետո հերոսը որոշ դեպքերում հրաժարվում է հեռանալ անծանոթ աշխարհից՝ ցանկանալով մնալ գերիրական երևույթներով հարուստ երազային չափումում: Տեսնելով կյանքի նոր ոլորտներ ու վայրեր՝ նախնական նպատակը մթագնում է, և առաջ են գալիս նոր երազանքներ՝ կապված այլ աշխարհի հետ:

Վերադարձի նման հրաժարում կա նաև «Վերք Հայաստանի» վեպում: Տեսնելով Անին և ծանոթանալով դրա պատմությանը՝ Աղասին այլևս չի ուզում վերադառնալ. ավելին՝ իր առջև դնում է նոր նպատակներ՝ «… մնան Անի՝ իրանց հին աթոռանիստ քաղաքը, ուրտեղ որ նրանց կյանքը ազատվել էր, կրկին չեն քցեն, գրեն Գյումրի, ասի ռահաթ դառնան ու էստով աշխարքումը հավիտենական անուն ճարեն» (էջ 276):

Հարաբերվելով իր ազգի անցյալի փառավոր պատմությանը՝ Աղասին չի ուզում դուրս գալ երազային քաղաքի սահմաններից՝ ճգտելով

---

[14] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1, Երևան, 1959, էջ 233:*

[15] *Գողացված դանձերը դևերի մոտ գտնելու և դրանք ժողովրդին բաժանելու մոտիվը ևս տարածված է հայկական բանահյուսության: Էպոսում այս մոտիվի դրսևորման մասին տե՛ս Հ. Համբարձումյան. Սասնա ծռեր. պատում, մոտիվ, դրքային ավանդույթ, Երևան, 2018, էջ 216:*

չենացնել այն ու վերականգնել նախկին օրերի հռչակը, և միայն Ղարսի փաշային է հաջողվում համոզել նրան գնալ իրենց հետ՝ պայմանով, որ երբ «ոտը խաղաղվի, էն ժամանակը նրա բոլոր մուրազը կկատարի» (էջ 278):

8. Վերջին փորձություն

Փորձությունները հաղթահարելուց և անցյալի պատմության դասերը քաղելուց հետո Աղասին դուրս է գալիս անծանոթ աշխարհի երևակայական չափումից ու հասնում իր ուղու հանգուցալուծմանը՝ դևի հետ մենամարտին: Միանալով ռուսական զորքին՝ նա մտնում է Երևանի բերդ. «Երևանու բերդը ծխումը կորավ ... վերջին սհաթն էր մնացել, որ բերդը հոգին տա ...» (էջ 286–289):

Հակադրվելով հասարակությանը, կոտրելով ընդունված դարավոր կանոնը և դեմ դուրս գալով օրենքներին՝ հերոսը հեռանում է տանից, անցնում տարբեր փորձությունների միջով ու հասնում իր ուղու հանգուցալուծմանը՝ սպանելով Զանգվիի ջուրը երևանցիներից կտրող դևին: Բերդի անկումով ավարտվում է Աղասու ճանապարհը, Քանաքեռի «մայր մտած» արևը նորից դուրս է գալիս, և նա իրավունք է ստանում վերջին անգամ պտտել չղթան՝ վերադառնալով մեկնակետին:

9. Հաշտեցում հոր հետ

Քանաքեռ տանող հետզարձի ճանապարհին մնում է միայն դևին դերի ընկած հոր ազատումն ու հայր-որդի հակադրության չտկումը. որդին, վեպի սկզբում կոտրելով իր ծննդավայրի խաղաղ գոյակցման կանոնը, դեմ էր դուրս եկել հոր խոսքին, ընդհարվել նրա հետ, և այժմ հասել էր հաշտության ժամանակը: «Վերք Հայաստանի» վեպում հաշտության գործառույթը, սակայն, զուգակցվում է հերոսի մահվանը. դարանակալած պարսիկները հոր գրկում սպանում են որդուն: Ճանապարհի բոլոր փորձություններն անցնելուց, դև թշնամուն հաղթելուց և հոր հետ հակասությունը լուծելուց հետո Աղասին մահանում է:

10. Կետի որովայնում

Խոսելով երկու աշխարհների միջև անցումի մասին՝ հերոսի ճանապարհի մոնոմիֆի տեսության հեղինակը նշում է, որ ծանոթ ու անծանոթ չափումների հատումն անցնելիս հերոսը կարող է կերպափոխվել կամ մահանալ. «Այդ անցումը ինքնաոչնչացումն է», երբ վերջնական նպատակին հասնելու համար տեղի է ունենում մահ-կերպարանափոխություն. մարմինը վերանում է, բայց կերպափոխված հոգին ավարտին է հասցնում ճանապարհը[16]:

Խնդրո առարկա վեպում հերոսի վախճանով իրագործվում է Աղասու նպատակը՝ Հայաստանն ազատվում է պարսիկի դարավոր լծից, բայց տեղի չի ունենում մահ-կերպարանափոխության նշված գործառույթը. Աղասին հարություն չի առնում:

---

[16] *Տե՛ս* Дж. Кэмпбелл. *Նշվ. աշխ., էջ 56:*

Ճիշտ է, մոնոմիֆի այս մոտիվը տեղ չի գտնում վիպական կառուցում, բայց Աբովյանն այն իրացնում է «Վերք»-ի չափածո նախատիպում՝ «Աղասու խաղը» պոեմում, որտեղ կերպարի մարմինն ու հոգին անջատվում են, և հոգին, գնալով երկինք, զրուցում է Աստծո հետ, ու Տերը գովում է նրա երկրային կյանքը՝ անցած ճանապարհը համարելով ճիշտ: Աղասու նպատակը, փաստորեն, իրագործվում է, և դրա ճշմարտացիությունը փաստում է Աստված[17]:

11. Վերադարձ մեկնակետին

Եթե Աղասու հոգին գնում է Աստծո մոտ, ապա մարմինը ճանապարհորդությունից վերադառնում է տուն և թաղվում Քանաքեռում: Որդու և հոր վերջնական հաշտեցումն ամրապնդվում է վերջինիս ինքնասպանությամբ, որը խորհրդանշում է նաև հին կարգերի, հին կյանքի ու գոյակցման հին կանոնի ավարտը: Գործառույթային այս կետի ամբողջական իրացման համար ինքնասպան են լինում նաև Աղասու և տանուտեր Օհանեսի կրկնակ կերպարները՝ Մոսին ու վերջինիս հայրը: Ճանապարհը սկսելով Աղասու հետ՝ որպես նրա ես-ի մեկ այլ իրացում՝ Մոսիի գոյությունն առանց ընկերոջ դառնում է աննպատակ, ու նրա կերպարը ևս նույն վախճանն է ունենում. երկու հոր և երկու որդու թաղում են Քանաքեռի եկեղեցու բակում: Տանից հեռացումով, նպատակին հասնելու ճանապարհին փորձություններով, թշնամի դևի սպանությամբ և տուն վերադարձով պտտվում է հերոսի ճանապարհի շղթան՝ տարածական առումով ավարտվելով այնտեղ, որտեղից սկսվել էր:

Եզրակացություն

Այսպիսով՝ «Վերք Հայաստանի» վեպի ընթերցումը, ըստ հերոսի ճանապարհի մոնոմիֆի տեսության, հնարավորություն է տալիս մի կողմից երկին նայելու բանահյուսական հենքով, մյուս կողմից՝ դիտել այն որպես գործառույթների ու քայլերի նշանային համակարգ, որի չնորհիվ ստեղծագործությունն աշխատում է հստակ օրինաչափությամբ: Այս ընթերցմամբ վերաարժևորվում են նաև դիպաշարային այնպիսի բաց կետեր, որոնք առաջին հայացքից որևէ գործառույթ չեն կատարում ու հեղինակի կողմից վեպը չմշակելու արդյունք են թվում (Նազլուի և մոր նամակները, Մոսիի երազը, Հասան խանին չսպանելը):

Աղասին հեքիաթի հերոսների նման ժողովրդի կյանքին սպառնացող դև-ըերդը սպանելու նպատակով հեռանում է տնից և որոշակի գործառույթներ կատարելուց հետո վերադառնում: Մերժելով կյանքի նախկին կարգերն ու օրենքները՝ նա իր մահով սահմանում է նորերը: Հերոսի քայլերով Աբովյանը գծում է Հայաստանի փրկության ճանապարհը՝ որպես գալիքի նպատակ և ծրագիր վեպի կենտրոնում դնելով ավերված հայրենիքի՝ Անիի փրկության ու վերակառուցման խնդիրը:

[17] *Մանրամասն տե՛ս Ա. Սողոյան. Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» պոեմի պատումի աշխարհը.– «Հայագիտության հարցեր» (Երևան), 2019, №2, էջ 117–133:*

Աստղիկ Սողոյան – «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի հայոց լեզվի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ XIX դ. հայ գրականություն և մանկագրություն: Հեղինակ է 8 հոդվածի: Astghik.soghoyan@mail.ru

REFERENCES

Abovyan Kh. Erkeri liakatar zhoghovadsu ut hatorov, h. 7, Yerevan, 1956 (In Armenian).
Abovyan Kh. Verk Hayastani, Yerevan, 1981 (In Armenian).
Campbell Dzh. Tysyachelikiy geroy. M., 1997 (In Russian).
Eliade M. Tainiye obshchestva. Obryady initsiatsii i posvyashcheniya. M., 1999 (In Russian).
Ghanalanyan A. Abovyane ev zhoghovrdakan banahyusutyune, Yerevan, 1941 (In Armenian).
Hambardzumyan H. Sasna dzrer. patum, motiv, grkayin avanduyt, Yerevan, 2018 (In Armenian).
Harutyunyan S. Anedski ev orhnanki zhanre hay banahyusutyan mej, Yerevan, 1975 (In Armenian).
Hay zhoghovrdakan hekiatner, h. 1, Yerevan, 1959 (In Armenian).
Mify narodov mira, t. 1. M., 1980 (In Russian).
Muradyan N. Abovyani poetikan, Yerevan, 1979 (In Armenian).
Propp V. Morfologiya volshebnoy skazki. L., 1928 (In Russian).
Soghoyan A. Khachatur Abovyani “Aghasu khaghe” poemi patumi ashkharhe. – “Hayagitutyan harcer” (Yerevan), 2019, № 2 (In Armenian).
Vardanyan N. Sahmanayin gotu simvolikan hrashapatum hekiatum. – “Voske divan” (hekiatagitakan handes), Yerevan, 2012–13, pr. 4 (In Armenian).

МОДЕЛЬ МОНОМИФА ПУТИ ГЕРОЯ В РОМАНЕ ХАЧАТУРА АБОВЯНА «РАНЫ АРМЕНИИ»

АСТГИК СОГОЯН

Р е з ю м е

Ключевые слова: Хачатур Абовян, «Раны Армении», Дж. Кэмпбелл, мономиф пути героя, символическая система, уход из дома, путь странствий, крепость Еревана-демон, неизвестный мир, Ани, смерть, возвращение к исходной точке.

Структурное исследование романа Хачатура Абовяна «Раны Армении» позволяет проанализировать путешествие Агаси на основе мономифа пути героя, выдвинутого Дж. Кэмпбеллом. С этой точки зрения пространственные планы романа и действия персонажа приобретают важное функциональное значение. Вращающаяся цепь «Канакер – дорога приключений – Канакер» определяет путь Агаси из дома и возвращение домой после

смерти. Подобно героям фольклора, Агаси тоже проходит некоторые важные этапы. Не слушая своего отца, он покидает родную среду, проходит путь испытаний (Апаран, Хлгаракилиса), в незнакомом мире (Ани) приобретает знания и навыки, необходимые для финального сражения с врагом, убивает демона (крепость Еревана), который закрывает путь воды (река Зангу), тем самым освобождая родную страну от господства врага (Персия).

Астгик Согоян – преподаватель армянского языка в университете международных отношений «Ананиа Ширакаци». Научные интересы: армянская литераура XIX века, детская литература. Автор 8 статей.
Astghik.soghoyan@mail.ru

THE MODEL OF THE MONOMYTH OF HERO'S JOURNEY IN THE NOVEL "WOUNDS OF ARMENIA" BY KHACHATUR ABOVYAN

ASTGHIK SOGHOYAN

S u m m a r y

Key words: Khachatur Abovyan, "Wounds of Armenia", J. Campbell, monomyth of Hero's Journey, symbolic system, leaving home, journey of wanderings, Yerevan Fortress - a demon, an unknown world, Ani, death, return to the starting point.

The structural study of Khachatur Abovyan's novel "Wounds of Armenia" enables to analyze Aghasi's voyage on the basis of the monomyth of hero's journey, nominated by J. Campbell. From this point of view, the spatial plans of the novel and the hero's steps gains important functional meaning. The rotating chain "Kanaker – Adventure Road – Kanaker" defines Aghasi's path from leaving home and returning home after the death. Like the heroes of folklore, Aghasi also goes through some important stages. While neglecting his father's warnings, he leaves his native environment, crosses the path of ordeals (Aparan, Khlgharakilisa), in an unknown world (Ani) acquires the knowledge and skills necessary for the final battle with the enemy, kills the demon (Yerevan Fortress), that has closed the water path (the Zangu River), thereby freeing the homeland from the rule of the enemy (Persia).

Astghik Soghoyan – Lecturer of Armenian Language in "Anania Shirakatsi" University of International Relations. Scientific interests: Armenian Literature of the 19th century, children's literature. Author of 8 articles.
Astghik.soghoyan@mail.ru

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ
200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԼԵՈՅԻ ՀՈԴՎԱԾԸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

Լրացավ XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական, դրա-կան-իմաստասիրական, հոգևոր ականավոր գործիչ, Ամենայն Հայոց կա-թողիկոս Մկրտիչ Խրիմյանի [Մկրտիչ Ա Վանեցի (1820, Վան–1907, Վաղար-չապատ)] կամ Ամենայն Հայոց Հայրիկի ծննդյան 200-ամյակը: Նրա կյանքի ու ծավալած գործունեության մասին գրվել են գրքեր, հոդվածներ, հրապարակվել նամակներ: Սակայն արխիվներում և մամուլի էջերում դեռևս սփռված կան բազում նյութեր, որոնք գիտական շրջա-նառության մեջ չեն դրվել և հասու չեն ընթերցող հանրությանը:



Գրող, գրականագետ, հրապարա-կախոս, հայոց պատմության մեծ երախ-տավոր Առաքել Բաբախանյանը՝ Լեոն (1860, Շուշի–1932, Երևան), բացի իր մեծարժեք պատմագիտական ուսում-նասիրություններից («Հայկական տպագրություն», «Ստեփանոս Նազար-յանց», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Գրիգոր Արծրունի», «Ս. Մես-րոպ», «Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի», «Հայոց հարցի վավերագրերը», «Գլաձատոն», «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմա-կան հոգևոր դպրոցի», «Հայոց պատմություն» եռահատորը և այլն), ժա-մանակի մամուլի էջերում հրապարակել է հարյուրավոր հոդվածներ, հայ երախտավորների մասին հիշատակի խոսքեր, հուշեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական ու ճանաչողական արժեքը: Թվարկենք այդ նյու-թերից մի քանիսի խոսուն վերնագրերը. «Անկախ Հայաստան», «Հայ-քրղական համաձայնություն», «Մակար Ջմշկյան», «Հայոց պատմությունը մերժված», «Վահան Խորենի», «Կարապետ Կոստանյան», «Խաչատուր Քու-չուկ Հովհաննիսյան», «Տեսակցություն Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հետ», «Հների հետ», «Քաոսի դեմ», «Ղարաբաղի դերը Հայոց պատմութ-յան մեջ», «Հայրենի հիշատակներ» և այլն: Դրանց չարքում իր ուրույն տեղն ունի Խրիմյան Հայրիկի ծննդյան 100-ամյակին նվիրված և ստորև հրապարակվող ուշագրավ ու բովանդակալից հոդվածը, որը տպագրվել է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթում (№ 10, մայիս 31, 1920, էջ 359–362):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Ապրիլի 17-ին լրացավ Խրիմյանի ծննդյան հարյուրամյակը: Կարճ է հայ ժողովրդի հիշողությունը, և այդ պատճառով նրա մեծ մարդկանցից մեկի այս հոբելյանն անցավ առանց հիշատակության և մեծարանքի: Եթե լիներ տոնելու տրամադրություն, մենք կունենայինք մեր առջև վաղուց անցած-գնացած մի ղեմք, որ օժտված էր բազմակողմանի խոշոր ընդունակություններով:

Հայրիկը հոգևորական, գրող, քաղաքական գործիչ, քարոզիչ – այս բոլորը գործեր են, որոնցից չատերը գուցե և աղոտ կերպով, ավանդության նման մնացած լինեն հին սերնդի հիշողության մեջ: Մենք այստեղ մի գիծ միայն կչոշափենք – Հայրիկն իբրև գավառական գործիչ:

Նախկին Թուրքիայի գավառ: Կարելի՞ է երևակայել ավելի անհույս թշվառություն: Տգիտություն, խավարի աղջամուղջ, մերկություն, կես քաղցած կացություն, ստրկություն բառիս ամենահարազատ նշանակությամբ, զինված բարբարոս քուրդ, օսմանցի տզրուկ պաշտոնյա, հայ վաչխառու չորպաճի:

Այսպիսի մի աշխարհ էր և գեղեցիկ Վանը, ուր Հայրիկը ծնվեց և երկար աշխատեց:

Եվ նրա գործերից մի քանիսը հրաշքի նմանություն ունեն Ասիայի այս դժբախտ անկյունում:

Առաջին հրաշքն այն է, որ Խրիմյանը 1850-ական թվականների երկրորդ կեսին տպարան է բաց անում Վարագի վանքում, հիմնում է գավառական պարբերական հրատարակություն – «Արծիվ Վասպուրականի» ամսագիրը, որ իր նիհար տետրակներում եռանդագին առաջադիմական քարոզներ է կարդում ժողովրդին և գավառական կյանքի վերանորոգման էր պահանջում: Ամբողջ Հայության մեջ դա առաջին ծիծեռնակն էր, որ գալիս էր երգելու հայ ժողովրդի մեջ սկսվող վերանորոգչական գարունը հայ խուլ ու մոռացված գավառի կտուրի տակ: Այլևս հեռու ու օտար գաղթավայրերը չէին խոսում, թե ինչ է հարկավոր հայաստանցուն: Վարագի գեղեցիկ սարի բարձունքին ճռնչացող հին նահապետական մամուլն էր, որ պատմություն և հայրենիք ստեղծած ժողովրդի ծոցից պահանջներ էր սփռում: Գավառը, հայության մայրը, հիվանդ է, ծանր վիրավորված: Օգնության կարոտ է նա: Նրան հարկավոր է լույս, գիտություն, որպեսզի բարվոքվի նրա տնտեսական տխուր վիճակը: Ո՞վ պիտի լինի այս հիվանդ մոր բժիշկը: Լուսավորումն, հարուստ հայությունը, որ դեգերում է օտար աստղերի տակ, գաղութներում: «Արծիվը» հրավեր է կարդում, որ հայության չինարար ուժերը վերադառնան հայրենիք, այստեղ աշխատեն: Հայրենիքը հեծեծում է ցավերից ու վերքերից: Եվ Վարագի ամսագիրը գրում էր. «Ուրեմն բուն յուր հարազատ զավակները պետք է լսեն. սակայն լոկ լսելով կամ գրելով հեռուանց այս հիվանդը բժշկություն չի գտներ. հապա պետք է ոտքով ու մերճավոր

կարեկցությամբ երթանք և այս վիրավորյալ մոր մահճին մոտ նստենք, լեզվով սկսենք ու ձեռքով դարման մատուցանենք»:

Հայոց գրականության պատմության է վերաբերում այն բացառիկ մեծ դերը, որ կատարեց Խրիմյանի գրականությունը թյուրքահայ գավառի կյանքի մեջ: Մի ամբողջ մեծ հեղաշրջում, որ ունեցավ ահագին հետևանքներ, պատրաստվեց Վանի լճի ափին, հիմնելով գավառական գրականության դպրոցը: Մենք թողնենք այդ և տեսնենք Խրիմյանին հայրենի գավառի գործերի մեջ:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, նրան հարակից քրդական շարժումների հետևանքով սով սկսվեց Հայաստանում, որ աստկացավ մանավանդ 1880-ին: Խրիմյանն այդ ժամանակ Վանում էր և սկսեց մի եռանդուն գործունեություն տովատանջ ժողովրդին օգնելու համար: Նրա անունն արդեն բավական էր, որ հայ ժողովրդի նվերները հեռավոր և մերձավոր տեղերից թափվեն Վան և նրա տրամադրության տակ դրվեն: Ամենից շուտ վնասվել ու անճար էին Վանի արևելյան ու հարավային գավառները, ուր սովամահության բազմաթիվ դեպքեր եղան: Սովալլուկները մեծամեծ խմբերով Վան էին գնում: Հայերի հետ աղետից հավասարապես տանջվում էին և քրդերն ու ասորիները: Եվ ամենքը հավասար խնամք ու ուշադրություն էին գտնում հայոց առաջնորդարանում: Պատմում են այսպիսի մի դեպք: Մի քուրդ, կամենալով օգնություն ստանալ հայերից, գնում է Հայրիկի մոտ և ցանկություն է հայտնում քրիստոնյա մկրտվելու: Հայրիկը, հասկանալով թե ինչն է ստիպում թշվառին այդ քայլն անելու, պատասխանում է նրան. «Լավ, սովից հետո կգաս, խնդրին կնայենք ու մի բան կանենք»: Եվ արձակում է քրդին, տալով նրան հաց և դրամ:

Ժողովրդական մեծ աղետը ցնցում է ամբողջ հայությունը: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մեղրալուսին էր, որ ազգասիրության խանդավառ զգացմունքն էր ծավալել ամեն տեղ: Մեծաքանակ նվերներ հավաքվեցին ամեն տեղ: Կ. Պոլսում, Ներսես պատրիարքի նախագահությամբ, կազմվեց Սովելոց Հանճնաժողով: Այս ինքնագործունեությունը բավականաչափ թեթևացրեց սովի ծանրությունը:

Բայց նրա հասցրած հարվածը մի նոր միտք ներշնչեց Խրիմյանին: Հողագործությամբ ապրող հայ ժողովուրդը պիտի բարեկարգեր ու ժամանակակից պահանջների բարձրության հասցներ իր այդ պարապմունքը, որպեսզի կարողանար ավելի հարուստ ու մեծ տնտեսություն ունենալ ու պաշտպանվել սովից և այլ դժբախտություններից: Խրիմյանը վաղուց փայփայում էր մի գյուղատնտեսական դպրոց բանալու միտքը: Իր եղբորորդի Խորեն Խրիմյանին նա հատկապես պատրաստել էր տվել այդպիսի մի ձեռնարկություն իրագործելու համար:

Եվ ահա 1880 թ. նոյեմբերի 7-ին Վասպուրական աշխարհի, քրդական ավազակությունների և բռնությունների այդ դասական հայրենիքում, կատարվում է մի երկրորդ հրաշք: Խրիմյանը բաց է անում Վարդի երկրագործական դպրոցը Սովելոց Հանճնաժողովի և ռուսահայերից հայթայթած գումարներով: Տեսուչն էր Խորեն Խրիմյանը, իսկ հողագործության ուսուցիչն էր Նշան Էֆենդի Մադաթյանը: Աշակերտ-

ների թիվն էր 20: Բացի երկրագործական դիտելիքներից աշակերտները պիտի ուսանեին և ընդհանուր զարգացողական առարկաներ:

Հիմնարկությունը, որ առաջինն էր և տարաբախտաբար, նաև վերջինը պիտի լիներ Հայաստանի հողի վրա, միանգամայն ապահովված չէր: Նրա համար կազմված նախահաշիվը խեղդվում էր իրական ծախսերի ծանրության տակ, պարտքերն ավելանում էին, և դպրոցը հազիվ կարողացավ երեք տարի գոյություն պահպանել:

Բայց և այդ կարճ ժամանակն էլ բավական էր, որ Հայաստանի գյուղատնտեսության ամենագլխավոր և ամենակարևոր ճյուղը կապվի եվրոպական գիտության հետ: Սովելոց Հանճնաժողովը երկրագործական գործիքների նմուշներ էր ուղարկում Կ. Պոլսից, որպեսզի դպրոցում այդ ձևով գործիքներ պատրաստվեն: Բայց Հայրիկը պահանջում էր ուղարկել իրան հերկելու, հնձելու, հարդ և խոտ մաքրելու եվրոպական կատարելագործված մեքենաներ: Եվ երբ Սովելոց Հանճնաժողովը չկարողացավ իր միջոցներով ձեռք բերել այդպիսի միջոցներ, Հայրիկը դիմեց Մանչեստրի, Մարսելի և Վիեննայի հայ վաճառականներին:

Մանչեստրի հայերը հնձելու մի գեղեցիկ մեքենա նվիրեցին Վարագի երկրագործական դպրոցին: Այդ մեքենան գործ էր ածվում թե վանքի հողերում և թե վարձով տրվում էր մյուս կալվածատերերին և այդպիսով տարեկան մոտ 40 ոսկի օգուտ էր բերում:

Կարիք չկա բացատրելու, թե որքան կարևոր ծառայություններ կարող էր անել երկրագործական դպրոցը Հայաստանի բազմատանջ գավառներին, եթե նա ապահովված հարատևություն ունենար: Բայց պարտքերի մեջ ընկած դպրոցը փակվեց 1883-ին: Բացի այս հանգամանքից, կար և այն, որ այդ ժամանակներից այլևս անհնարին էր դառնում Հայաստանի գավառներում աշխատելը: Աբդուլ Համիդյան դաժան ռեժիմը ծայր էր տալիս ամենից առաջ հենց Վասպուրականում, և Խրիմյան Հայրիկը չուտով ստիպված եղավ, կառավարության պահանջով հեռանալ Վանից:

Այնուհետև նա գրչով է ծառայում Հայաստանի չինարարությանը: Նրա «Սիրաք և Սամվել» գիրքն ամբողջովին մի ճոն, մի փառաբանություն է նվիրված աշխատանքին: Երկրագործություն և արհեստներ— ահա նրա սրբության սրբոցը Հայաստանի ամուր և ուժեղ չենքի անկյունաքարը դնելու համար: Գիրքը հրատարակվեց 1887-ին և նրա կազմի վրա երևում է խաղաղ գյուղատնտեսական մի պատկեր.— երկու չաղ եզներ ճգում են արորը և երկրագործը՝ մաճը բռնած, գնում է ակոսներով, որոնց կողքերին երևում են երկրագործական զանազան գործիքներ, ոչխար և այլն: Պատկերի տակ գրված են հետևյալ տողերը.

Վարե որդյակդ իմ Սամվել,
Ուղիղ վարե զմաճն և ակոս,
Արճակ դաշտերն են մեր արտեր
Պարարտ բերուն և բարեբեր.
Եվ ես ցանեմ ցորնի հատիկ,
Քաղենք հուսով բազմապատիկ.

Օրհնյալ է հողն և սերմեր,
Օրհնյալ՝ մշակի եզնամոլներ,
Օրհնյալ է անդ և անդաստան
Օրհնյալ՝ Աստված,
Որ տա անձրև և արև.
Օրհնյալ վաստակ երկրագործին,
Արդար ազատ ի դժրանաց:

Րաֆֆին, Հայրիկին պաշտող Հասոյի երգով է օրհնաբանել հողագործի աշխատանքը: Եվ Հայրիկի այս տողերը այդ ներշնչումն են կրում իրանց մեջ – Հայ գյուղացու չինարար ուժի պաշտամունքը:

ԼԵՈ

Ա-ԴՈ. Հայության երկունքը / *հրատ. պատր.՝ Վ. Ղազախեցյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Հ. Սուքիասյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019, 765 էջ*:*

Բանալի բառեր՝ Ա-Դո, հրատարակություն, վերլուծություն, աշխատություն, Առաջին աշխարհամարտ, Կովկասյան ճակատ, Սեյմ, Մայիսյան հերոսամարտեր, զինվոր, Վան, անկախություն, վիճակագիր, վրիպակ, խորհրդայնացում, երկունք:

Ներկայացվող ստվարածավալ այս աշխատությունը, որն ընդգրկում է գործնականում Հայոց պատմության, թերևս, ամենահագեցած ժամանակահատվածը՝ 1914–1920 թթ., մեքենագիր տարբերակով ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին է տրամադրել Ա-Դոյի (Հովհաննես Գրիգորի Տեր-Մարտիրոսյան, 1867–1954) դուստրը՝ Ադոլյա Տեր-Մարտիրոսյանը, տպագրության առաջարկով, որն էլ հրատարակվել է ինստիտուտի Մեսրոպ արք. Աչճեան մատենաշարով (թիվ 193), Զ. և Լ. Փայասլեանների օժանդակությամբ:



Դեռ ժամանակին՝ 1920 թ. գարնանը, Ա-Դոն աշխատության ավարտից անմիջապես հետո դիմել էր ՀՀ Հայկոոպի վարչությանն այն հրատարակելու խնդրանքով, սակայն թղթի բացակայության պատճառով (անհրաժեշտ է եղել 30 փութ թուղթ) աշխատությունը չի տպագրվել: Արդյունք չի տվել նաև ՀՀ զինվորական նախարարության դիմելը: Հայաստանի խորհրդայնացումից հետո, դիրքը հրատարակելու ակնկալիքով, հեղինակը փորձել է այն գլուխ բերել Խորհրդային Հայաստանում, սակայն նրա ջանքերն ապարդյուն են անցել: Հասկանալի է, որ խորհրդային-կոմունիստական վարչակարգի 70 տարիներին գաղափարական, քաղաքական նկատառումներով չէր կարող խոսք լինել Ա-Դոյի գրքի տպագրության մասին: Թեև հեղինակն աշխատության մեջ ու, հատկապես, գրքի վերջում 11-րդ կարմիր բանակի, հայ ժողովրդի փրկությանը վերաբերող խորհրդամետ հավելումներ ու ճևակերպումներ է արել, բայց դա, ըստ ամենայնի, որևէ արդյունք չի տվել: Եվ, ի վերջո, գրքի հրատարակությունը հնարավոր դարձավ արդեն Երրորդ Հանրապետության օրոք:

Արձանագրենք, որ «Հայությեան երկունքը» առաջին անգամ տպագրվել է 2014 թ. Հայաստանի պատմության պետական թանգարանի կողմից՝ հայերեն դասական ուղղագրությամբ (էջ 652): Ներկայիս բարելավված

---

* *Ներկայացվել է 10. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2020 թ.:*

հրատարակության առավելությունը նախորդից այն է, որ հավելվել է երկու նոր ենթագլուխ, բացի այդ, գիրքը հրատարակության պատրաստող հեղինակային խումբը, ըստ անհրաժեշտության, տողատակերում տվել է հարուստ ծանոթագրություններ, որոնք ավելի են բարձրացնում հրատարակության գիտական արժեքը, ինչպես նաև՝ շտկվել նախկինում թույլ տրված անճշտությունները, գրքի վերջում ներկայացվել է անվանացանկ և այլն:

Ա-Դոյի աշխատությունը սկսվում է Առաջին աշխարհամարտից՝ ընդգրկելով մինչև Հայաստանի Հանրապետության ավարտական փուլը՝ 1920 թ. գարուն: Հավելենք, որ հեղինակը ժամանակին ուսումնասիրության նյութ է դարձրել 1915 թ. Վանի ինքնապաշտպանության պատմությունը և այն հրատարակել է առանձին գրքով[1]: Պետք է ասել, որ Վան-Վասպուրականի իրադարձությունների կապակցությամբ որոշակի հաջորդականության ու փոխլրացման կապ կա այդ երկու գրքերի միջև:

Սույն աշխատությունը, կառուցվածքի տեսակետից, տրոհված է չուրջ 60-ի հասնող ենթագլուխների, որոնցում ներառված են պատմաքաղաքական չրջադարձային նշանակություն ունեցող այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են՝ Աշխարհամարտը, ռուսական հեղափոխությունները, Մայիսյան հերոսամարտերը, Հայաստանի անկախությունը, պետականության կայացման գործընթացը և այլն: Դրա հետ նյութի շարադրանքը բովանդակային հագեցվածության, փաստարկվածության ու հիմնավորվածության տեսակետից չատ հարուստ է և տեղ-տեղ, անշուշտ, ունի գիտական բնույթ ու արժեք: Հեղինակը, բացի իր ձեռքի տակ եղած հուշատետրերից, իր անձնական դիտարկումներից, ուրիշներից վերցրած թարմ տեղեկություններից, առատորեն օգտվել է նաև Հայոց ազգային խորհուրդների, ՀՀ-ի և անդրկովկասյան կառավարությունների ու դրանց պառլամենտների արխիվային նյութերից, դիվանագիտական բնույթի փաստաթղթերից, հեռագրերից, հրամաններից, հրապարակված փաստաթղթերի ժողովածուներից, հուշագրություններից, ժամանակաշրջանի հարուստ պարբերական մամուլից և այլն: Նման պարագայում Ա-Դոն ներկայանում է որպես պատմագիր, պատմաբան-հետազոտող, բայց առանձին հատվածներում աշխատությունը թողնում է հուշագրության տպավորություն: Օրինակ՝ չատ իրադարձություններ՝ պատերազմ, ինքնապաշտպանական մարտեր, Մայիսյան հերոսամարտեր և այլն, նա ներկայացնում է յուրահատուկ կերպով, ականատեսի աչքերով, դրվագներ, որոնք այլ հուշագիր հեղինակի մոտ չես հանդիպի, ինչը, կարծում ենք, մեծապես բարձրացնում է աշխատության հավաստիությունն ու արժեքը:

Ա-Դոն Աշխարհամարտն իր թողած հետևանքներով՝ բնորոշել է «ահավոր ու աղետավոր» (էջ 33): Հեղինակը հանգամանորեն կանգ է առել ռուս-թուրքական (Կովկասյան) ճակատի ռազմական գործողություններին, համավորական չարժման, ռուսական բանակի տարերային նահանջներին, արևմտահայության կոտորածներին, արտագաղթին, սովին ու տառապանքներին: Նա Վան-Վասպուրականի ինքնապաշտպանական

[1] *Տե՛ս Ա-Դո. Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երևան, 1917:*

մարտերին հատուկ չի անդրադարձել, քանի որ այդ մասին նկարագրված են իր նախորդ՝ «Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին» գրքում (էջ 43–59):

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների նկարագրություններից, հայ ժողովրդին պատուհասած աղետներից զատ՝ հեղինակը զուգահեռաբար անդրադառնում է Ռուսաստանում, Անդրկովկասյան երկրամասում ու Արևելյան Հայաստանում ծավալվող հասարակական-քաղաքական զարգացումներին, կայսրության քայքայման ու անկախության հարցերին: Ա-Դոն իրավացիորեն բացասաբար է գնահատում բոլշևիկների հեղաշրջումը (էջ 60–92), դրա հետևանքով բանակի կազմալուծումը, ռազմաճակատի մերկացումը (էջ 93–104): Նա հանգամանորեն անդրադարձել է 1918 թ. թուրք-անդրկովկասյան կամ ավելի ստույգ՝ հայ-թուրքական պատերազմին (էջ 105–122): Ընդօրինակելի է, որ Ա-Դոն ընթերցողի գործը հեշտացնելու, օսմանցի և կովկասյան թուրքերին (թաթարներին) իրարից զանազանելու համար առաջիններին անվանում է այն ժամանակներում գործածվող՝ «տաճիկներ», իսկ երկրորդ դեպքում՝ պարզապես, «թուրքեր»:

Մեր կարծիքով, Ա-Դոյի աշխատության հաջողված բաժիններից է անդրկովկասյան կառավարության մեջ և Սեյմում ընթացող հայ-թուրքվրաց չրջանակների գաղտնի ու բացահայտ դիմակայության վերհանումն ու համակողմանի լուսաբանումը: Հեղինակը մերկացնում է վրաց-թուրքական այն զրպարտանքը, թե, իբր, հայերը ցանկացել են պատերազմել տաճիկների դեմ ինչ-որ տարածքային նվաճումներ կատարելու համար, և սա այն դեպքում, երբ հայ ժողովուրդն ու նրա քաղաքական չրջաններն ամեն կերպ չանում էին պաշտպանել արևելահայության թուրքական մահաբեր ներխուժումից ու նոր կոտորածներից (էջ 118–119): Ի պատասխան վրաց որոշ քաղաքական չրջանակների զրպարտանքին՝ Ա-Դոն վրացական «Կլդե» թերթից բերում է 1914 թ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին օսմանյան կառավարության և, այսպես կոչված, Վրաստանի ազգային կոմիտեի միջև Կ. Պոլսում կնքված մի գաղտնի պայմանագիր, որտեղ նշվում էր, որ ռուս-թուրքական պատերազմի պարագայում Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Վրաստանի անկախությունը՝ ընդհուպ մինչև Ճորոխ գետի սահմանը, իհարկե, վերջինիս կողմից Տաճկաստանին ռազմական օժանդակություն ցույց տալու պարտավորությամբ (էջ 119–122):

Ա-Դոն հայ ժողովրդի համար այդ ճգնաժամային փուլում բարձր է գնահատում Հայոց (կենտրոնական) Ազգային խորհրդի, Երևանի Ազգային խորհրդի (ի դեպ, վերջինիս անդամն էր) և հայկական բանակի (զինուժի) դերը (էջ 123–127):

Հեղինակը մի շարք ենթագլուխներում, կարծես ականատեսի աչքերով, ներկայացնում է տաճկական զորքերի ավերիչ արշավանքը Կովկասյան ամբողջ ռազմաճակատի երկարությամբ և դրան զուգահեռ՝ թուրք-անդրկովկասյան ճախողված բանակցությունները Տրապիզոնում ու Բաթումում:

Խոսելով Հայկական բանակային կորպուսի և ինքնապաշտպանական զորախմբերի մասին՝ Ա-Դոն ըստ արժանվույն գնահատել է Սեպուհին,

Սեբաստացի Մուրադին, Սմբատին (Մախլուտո) և մյուսներին (էջ 190–191, 219–222): Դրան հակառակ՝ նա, մեղմ ասած, դրական կողմերով չի խոսում Անդրանիկի գործունեության մասին՝ սկսած Էրզրումի 1918 թ. փետրվարյան ձախողված պաշտպանությունից՝ ընդհուպ մինչև Մայիսյան հերոսամարտերը: Գրքից տեղեկանում ենք, որ Անդրանիկը մայիսի 22-ին Ջալալ-Օղլիից (Ստեփանավան) նահանջել է Դսեղ (էջ 399, 422) ու մնացել այնտեղ 6 օր, իսկ հետո 700 հեծյալ և 10.000 գաղթականներով չարժվել դեպի Նոր Բայազետ–Դարագյազ–Նախիջևան–Ջուլֆա՝ նպատակ ունենալով Միջագետքում միանալու անգլիական զորքին (էջ 489–491):

Հեղինակն անդրադառնում է հայկական զինուժում գլուխ բարձրացրած մի ցավոտ խնդրի՝ դասալքությանը, որը սկսվել էր ռուսական հեղափոխության ժամանակներից: Նա բերում է տվյալներ. օրինակ, 1917 թ. վերջերին Քանաքեռից Էրզրում մեկնած Հայկական 4-րդ, շուրջ 1.000 հոգանոց հրացանաձիգ գնդից տեղ էր հասել ընդամենը 521-ը (էջ 201): Բերված մեկ այլ փաստաթղթով՝ Սարիղամիշի ճակատի հրամանատար, գեներալ Մ. Արեշովը (Արեշյան) մարտ ամսվա կռիվներում իր ենթակայության տակ ունեցել է մոտ 5.000 կռվող, որոնց մեծ մասը, սակայն, մարտի 21-ի գիշերը լքել է դիրքերն ու ցրվել: Նրա հրամանատարության տակ մնացել էր ընդամենը 2.000 հոգի, փախել էին նաև խմբեր (էջ 245):

Քիչ անց Ա-Դոն արդեն այլ ոգով է նկարագրում Մայիսյան հերոսամարտերը: Նա դրվատանքով է խոսում Վանի հերոս, ժողովրդական նվիրյալ գործիչ, մարտի վերջից դիկտատոր ճանաչված «բարձրահասակ ու թիկնեղ» Արամի մասին, ում ջանքերով էլ սկսվեց ժողովրդին պայքարի ոգեկոչման, կամավորների ցուցակագրման և ճակատ մեկնելու չարժումը: Այդ օրերի կարգախոսն է եղել՝ «Ո՛չ մի քայլ նահանջ», «Ջենքն է, որ պիտի փրկի մեզ», «Ի զե՛ն, հայե՛ր» (էջ 286–288, 361–364): Սրանք բարոյահոգեբանական այն լիցքերից էին, որոնք ժողովրդին մղեցին հաղթական հերոսամարտերի:

Գրքում բերված են ականատեսների նկարագրած տեսարանները Ալեքսանդրապոլի գավառում, Ղարաքիլիսայում և շրջակա գյուղերում թուրքերի գազանությունների մասին (էջ 393–420): Հեղինակի պատմածները թարմացնում են մեր հիշողություններն ու կրկին վերահաստատում թուրքերի կատարած բարբարոսությունների հավաստիությունը: Մասնագիտությամբ վիճակագիր Ա-Դոն տեղեկացնում է, որ Ալեքսանդրապոլի գավառի միայն 3 գավառամասում (առանց Փամբակի), թուրքերի կողմից կողոպտված ու ավերված 127 գյուղերի հայ զոհերի ընդհանուր թիվը կազմել է 9.166 հոգի (էջ 420):

Անդրադառնալով Հանրապետության շրջանի պատմության հարցերին՝ պետք է ասել, որ, նախ, նա Հայաստանի կառավարության՝ Թիֆլիսից Երևան գալու ճգճգումը բացատրում էր նաև ճանապարհների փակ լինելու հանգամանքով (էջ 511), ինչին կարելի է մասամբ համաձայնել: Գլխավորը, իհարկե, միջկուսակցական տարաձայնություններն էին կառավարության ձևավորման խնդրի շուրջ: Ըստ Ա-Դոյի՝ ՀՀՇ-ն ուներ երկու

կառավարություն՝ մեկը Թիֆլիսում էր, մյուսը՝ Երևանում (նույն տեղում):

Համաձայն ՀՀ կառավարության՝ 1918 թ. հոկտեմբերի 1-ին անցկացված մեկօրյա վիճակագրության, որի տվյալների մշակմանը, ըստ ամենայնի, մասնակցել է նաև Ա-Դոն՝ Բաթումի պայմանագրով հանրապետության սահմաններն ընդգրկող տարածքում (ըստ Ա-Դոյի՝ 11.000 քառ. վերստ) առկա բազմազգ բնակչության թիվը կազմել է ընդամենը 545.000, որից բնիկ՝ 301.000 չունչ, իսկ գաղթական-փախստականներ՝ 244.000 չունչ: Արձանագրված 545.000 հայերը կազմել են բացարձակ մեծամասնություն՝ 520.000 (բնիկ և տաճկահայ գաղթական), իսկ մնացած 25.000՝ այլազգիներ (եզդի, թուրք[2] ու ռուս-մոլոկան): Մեկօրյա վիճակագրությամբ մայրաքաղաք Երևանի բնակչությունը գաղթականներով կազմել է 70.000 մարդ (էջ 527–528): Հետաքրքիր է նաև գրքում տեղ գտած այն տվյալը, որ Երևանի նախկին նահանգի 1.314 գյուղերից այդ ժամանակ ՀՀ-ի ենթակայության տակ գտնվում էին 435-ը, այսինքն՝ նահանգի ամբողջ գյուղերի մեկ երրորդը, մնացած 879 գյուղերը գրավել էին տաճիկները (էջ 529):

Ա-Դոն չատ բարձր է գնահատում 1918 թ. Բաքվի ինքնապաշտպանության դերը ՀՀ-ի գոյության պահպանության խնդրում: «Եթե Բաքուն չլիներ,– գրում էր նա,– Երևանը իր գոյությունը պահել չէր կարող» (էջ 552): Գրքում չատ հանգամանորեն ներկայացված են դեպի Բաքու մարտական գործողությունների հետագա ընթացքն ու ինտերնացիոնալ քաղաքի հերոսական ինքնապաշտպանությունը, որի զորքերի 80 %-ը, Ա-Դոյի կարծիքով, կազմել են հայերը (էջ 565): Իրավացի է գրքի հեղինակը, երբ գրում է, որ հայ-տաճկական պատերազմը չարունակվել է մինչև սեպտեմբերի 15-ը, այսինքն՝ մինչև Բաքվի անկումը (էջ 583):

Գրքում չատ հարուստ փաստառատ նյութերով նկարագրվում է վրաց իշխանությունների անմարդկային, հալածական վերաբերմունքը՝ իրենց երկրում հայտնված հայ գաղթականության հանդեպ (էջ 614–619): Նոր նյութերով ներկայացվում են հայ-վրացական սահմանային վեճն ու պատերազմը, հայերի բռնագաղթեցումը, կողոպուտը և այլն (էջ 620–632): Շատ տեսարաններ ու դրվագներ հեղինակը ներկայացնում է ականատեսի աչքերով: Միաժամանակ լայնորեն օգտվել ու քաղվածքներ է բերել Թիֆլիսի «Борьба», «Մշակ», Երևանի «Հառաջ» և այլ թերթերից:

Այնուհետև Ա-Դոն խոսում և տվյալներ է բերում 1918–1919 թթ. աշնանն ու ձմռանը Հանրապետությանը պատուհասած ահավոր սովի, ցրտի ու վարակիչ հիվանդությունների, նրա խոսքերով՝ «մահվան մանգաղի» մասին: Բայց, որպես վիճակագիր, նա չի բերում ամփոփ ու համահավաք տվյալներ զոհերի ընդհանուր քանակի մասին: Հայտնի են Ալ. Խատիսյանի և Ս. Վրացյանի հայտնած մոտավոր տվյալները՝ համապատասխանաբար 150.000 և 180.000 մարդկային կորուստների մասին: Այս

[2] *Հաշվառված թուրքերը կազմել են ընդամենը 5.000 մարդ, քանզի նրանց մի զգալի մասն արտագաղթել էր Հանրապետության սահմաններից:*

կապակցությամբ տեղին է Ա.-Դոյի դիտարկումը, ըստ որի անհնար է ճիշտ թվեր ստանալ, ինչպես գաղթական-փախստականների, այնպես և սովի ու վարակիչ հիվանդություններից մահացածների վերաբերյալ. «Երբ փախստական ժողովրդի մեծ մասը, հանգիստ անկյուն չունենալով, անց է կացնում դաշտերի ու ձորերի մեջ, թափառում էր ճանապարհների վրա և տալիս էր վարակիչ հիվանդությունների ու զոհերի ամենամեծ տոկոսը, որոնց մասին պաշտոնական մարմինները ոչ մի տեղեկություն չեն ունենում» (էջ 636): Այդ է պատճառը, որ վարչապետներ Ս. Վրացյանի և Ալ. Խատիսյանի հաղորդածները մոտավոր տվյալներ են:

Սյունիքի 1919–1920 թթ. ինքնապաշտպանության կազմակերպման ու իրականացման խնդրում Ա.-Դոն մի տեսակ վերապահ է եղել Գ. Նժդեհի խաղացած դերը ընդգծելու հարցում: Քանի որ խորհրդային չէր կարելի թույլատրելի «ավազակ Նժդեհի» մասին դրական խոսք գրելու, ուստի, կարծում ենք, նա հետագայում, հավանաբար, վերախմբագրել ու չէր ջնջել է նախկինում Նժդեհի մասին գրած հնարավոր դրվատելի մտքերը: Սակայն պետք է ասել, որ եթե Ա.-Դոն Նժդեհի, մյուս գործիչների ու, առհասարակ, պատմական առանձին իրադարձությունների և դրվագների մասին հարկ եղած չափով ու ձևով չի խոսել, չի մեկնաբանել, ապա այդ բացը բարեխիղճ ու հանդամանալի տողատակում ծանոթագրության ձևով լրացրել են հրատարակության պատրաստած հեղինակային խումբը, ինչն ավելի է բարձրացնում գրքի գիտական ու տեղեկատվական արժեքը (այդ մասին տե՛ս էջ 36, 38, 46, 81,99, 124–129, 175, 207, 212, 425, 435–440, 667–676, 695, 705–709 և այլն):

Ա.-Դոն չի մոռանում նաև խոսել Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի (Տաճկաստանի) բարեկամության մասին, որը պետք է հնարավորություն տար Ադրբեջանին՝ Ղարաբաղ–Զանգեզուր–Նախիջևանի վրայով միանալու Տաճկաստանին (էջ 687–688): Տեղին ու դիպուկ է նրա այն մեկնաբանությունը, որ խորհրդայնացած Ադրբեջանն ու Կարմիր բանակն իրենց վերջնագրերով՝ Հուսեյնով, Օրջոնիկիձե, Կիրով և մյուսներ, փորձում էին Կարմիր զինուժի միջոցով ավարտին հասցնել Ղարաբաղ–Սյունիք–Նախիջևանի նվաճման Մուսավաթի կուսակցության ու կառավարության կիսատ թողած գործը (էջ 689), որ «Սա (Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեն – Ա. Հ.) նույն մուսավաթական կառավարությունն է՝ կոմունիստական դիմակի տակ» (էջ 689–690):

Ա.-Դոյի աշխատությունն ավարտվում է «Երկունքի լուծումը» ենթագլխով՝ հետևյալ պարբերությամբ. «Եվ ահա հայ ժողովրդի համար ստեղծված այս մղձավանջային պահին՝ (նկատի ունի 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը – Ա. Հ.) 1920 թվի դեկտեմբերին, Երևան ոտք դրեց բոլշևիկյան Կարմիր բանակը» (էջ 713): Մեր կարծիքով, «Հայության երկունք» կամ «Երկունքի լուծումը» ասելով՝ հեղինակը նկատի է ունեցել ոչ թե Մայիսյան հերոսամարտերը և Առաջին Հանրապետությունը, ինչպես նշում է գիրքը հրատարակության պատրաստած հեղինակային խումբը (էջ 6), այլ՝ 11-րդ Կարմիր բանակի մուտքն ու Հայաստանի խորհրդայնացումը, որը խորհրդահայ պատմագրությունը «նոյեմբերյան հեղա-

փոխությունը» բնորոշել է որպես հայ ժողովրդի վերածնունդ և Հայկական հարցի լուծում: Արդեն ասվեց՝ հեղինակն իր աշխատության վերջում նման հավելում է արել, որպեսզի խորհրդային Գլավլիտը՝ տվյալ դեպքում «Հայպետհրատը», այն տպագրի:

Հարկ ենք համարում կրկին ընդգծել գրքի ծանոթագրությունը կազմող հեղինակային խմբի կատարած մեծածավալ աշխատանքը՝ նկատված բազմաթիվ անճշտությունների ու մեկնաբանություններ չտկման ուղղությամբ: Այս ամենով հանդերձ, մեր կարծիքով, գրքում տեղ են գտել նաև առանձին անճշտություններ, վրիպակներ, մտքերի ոչ ճիշտ ձևակերպումներ և այլն, որպիսիք, բնականաբար, անխուսափելի են նմանատիպ ցանկացած աշխատության մեջ: Այսպես. մասնավորապես, էջ 5-ում նշված է, որ Ա-Դոն 1885–1903 թթ. եղել է ՀՅԴ անդամ: Հասկանալի է, որ նա 1885 թ. չէր կարող լինել ՀՅԴ անդամ, երբ այդ կուսակցությունը հիմնվել է 1890 թ.: Էջ 30-ում նշված է, որ 1918 թ. հոկտեմբերի 30-ին ավարտվում է Առաջին համաշխարհային պատերազմը, իրականում այն ավարտվել է նոյեմբերի 11-ին՝ Գերմանիայի անձնատվությամբ (կապիտուլյացիայով), էջ 76-ում և 81-ում հիշատակված գեներալ Կոռնիլովները նույն մարդիկ չեն. մեկը Աֆանասի Կոռնիլովն է (1868–1936 թթ.), մյուսն առավել հայտնի՝ Լավր Կոռնիլովը (1870–1918 թթ.), ռուսաց պատմության մեջ տեղեկացնում է 1917 թ. Կոռնիլովյան խռովության ղեկավարը, էջ 60–61-ում երկու պարբերություն բառացի կրկնված են, էջ 211-ում՝ ծանոթագրություններում, Հովհ. Քաջազնունու մահվան թվական նշված է 1937, այնինչ, վերջնական ճշգրտմամբ, ստույգը 1938-ն է և այլն:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրյալը՝ կարելի է եզրակացնել. Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ, Մեսրոպ արք. Աչճեան մատենաշարով, պատմաբանների հեղինակային խմբի ջանքերով ընթերցողի սեղանին է դրվել մի օգտակար աշխատություն՝ հարուստ ծանոթագրություններով ու գիտական ապարատով: Ամբողջության մեջ գիրքն ունի և՛ գիտական, և՛ հուշագրական բնույթ ու բովանդակություն: Դրանում ներկայացված են Հայոց ու տարածաշրջանի շատ հագեցած ու կարևոր ժամանակահատվածի՝ 1914–1920 թթ. ռազմական, ազատագրական, պետականակերտման, հասարակական-քաղաքական կյանքի բազում հարցեր՝ աղբյուրագիտական հիմքերով ու նաև գրված ականատեսի աչքերով, որոնք ավելի են բարձրացնում աշխատության հավաստիության աստիճանն ու արժեքը: Ուստի, մեր կարծիքով, նրանք, ովքեր պատմագիտական հետազոտության նյութ կդարձնեն հայ ժողովրդի, հիրավի, ամենահագեցած, հերոսական ու ողբերգական էջերով հարուստ ու միաժամանակ իր թողած հետևանքներով շրջադարձային 1914–1920 թթ. պատմության հարցերը, անպայման կարիք կունենան անդրադառնալու Ա-Դոյի սույն աշխատությանը, որում հեղինակի ներկայացրած մտքերը, տվյալները, անձնական դիտարկումներն ու դատողությունները հիմնականում ճշմարիտ և ընդունելի են, իսկ առանձին դեպքերում էլ՝ վիճարկելի ու քննադա-

տելի: Մի խոսքով, այնպիսին, ինչպիսին որ է առհասարակ պատմագիտությունը, հասարակական-քաղաքական բազմերանգ ու բազմաբովանդակ միտքը և ցանկացած պատմագիտական գործ: Շուրջ 100 տարի մոռացության մատնված և մեր ժամանակներում հրատարակված սույն մենագրությունը գալիս է հարստացնելու մեր պատմագիտական, հուշագրական, քաղաքական գրականության անդաստանը:


ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի առաջին Հանրապետություն, հայ քաղաքական կուսակցություններ, պարբերական մամուլ, պատմագրություն, քաղաքական բռնաճնշումների պատմություն: Հեղինակ է 20 մենագրության և ավելի քան 100 հոդվածի ու գիտամեթոդական աշխատանքների: ararathakobyan47@gmail.com

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ. Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (XIX դ. 60-ական – XXI դ. 10-ական թթ.), գիրք Ա, *Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2020, 264 էջ*:*

Բանալի բառեր՝ գեղարվեստական վավերագրություն, հուշագրություն, կառուցվածք, լեզվաոճական առանձնահատկություններ, թեմատիկ խմբեր, կաղապարներ:

Միջգիտակարգային ուսումնասիրությունները, թե ինչպես են ընդլայնում և համակողմանի դարձնում հետազոտվող նյութը, մեկ անգամ ևս հավաստվում է Աշոտ Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (XIX դ. 60-ական – XXI դ. 10-ական թթ.)» մենագրության օրինակով:



Գրքում հուշագրությունը ներկայացվում է իր պատմական զարգացման մեջ: Ցույց է տրվում, թե միջնադարից նոր շրջանին անցմամբ ձևավորված նոր աշխարհայացքը և գեղարվեստական մտածողությունը լեզվական ինչպիսի նոր արտահայտչամիջոցներով ու կաղապարներով են արտահայտվում հուշագրության և, ընդհանրապես, գեղարվեստական վավերագրության մեջ:

Հեղինակը նախ գրականագիտական մոտեցմամբ ճշտում է քննվող հարցի ընդգրկման շրջանակը, որում և իրականացնում է լեզվաբանական վերլուծությունը: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ գրական և պատմական իրողությունների հաշվառմամբ է կատարվում գեղարվեստական վավերագրության երկերի լեզվական վերլուծությունն: Առանց նման մոտեցման հետազոտական ընթացքը կվերածվեր փաստագրական արձանագրման, այնինչ այս դեպքում վեր են հանվում ժանրային յուրահատկությունները և վերջիններիս դրսևորման լեզվական ձևերը:

Աշխատանքի I գլխում ներկայացվում են արևելահայ գեղարվեստական վավերագրության պատմությունն ու վերջինիս մասին եղած տեսական գրականությունը: Սեղմ բնորոշումներով թվարկվում են գեղարվեստական վավերագրության տարբեր տեսակները՝ հիշատակարաններ, ուղեգրություններ, օրագրություններ և հուշագրություններ: Անդրադարձ է կատարվում նաև օրագրություն-հուշագրություն փոխհարաբերությանը: Նշվում է, որ օրագրությունն իր չարադրմամբ համաժամանակյա գրական դրսևորում է, երբ հեղինակը թղթին է հանձնում ամենօրյա անմի-

---

* *Ներկայացվել է 22. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 30. VI. 2019 թ.:*

ջական տպավորությունները, իսկ հուշագրությունը ետադարձ հայացք է նախկինում տեղի ունեցած դեպքերին:

Յուրաքանչյուր ժանր, քանի որ ունի իր գրական յուրահատկություններ, և, ըստ այդմ, լեզվական դրսևորման ձևերը, ուստի հեղինակը, ժանրային հստակ գլխաբաժանումներ կատարելու նպատակով, հուշագրությունն իր հերթին ներկայացնում է ինքնակենսագրական հուշեր և հուշագրական բնույթի գրական դիմանկարներ բաժանմամբ: Ժանրային հատկանիշներով և դրանց դրսևորման լեզվաարտահայտչական միջոցներով իրարից տարբերակվում են հուշագրությունը և ինքնակենսագրական վեպը:

Կատարվել է նաև գեղարվեստական վավերագրությունների ժամանակային պարբերացումը XVIII դարավերջից մինչև արդի գրական դրսևորումները:

Այսպիսով, գրքի I գլխում ներկայացվել է հայ գեղարվեստական վավերագրության գործերի և վերջիններիս մասին եղած տեսական գրականության ընդգրկուն մատենագիտությունը: Գրականագիտական բնույթի նման ծավալուն մուտքը պատահական չէ: Գեղարվեստական վավերագրությունը՝ որպես կենդանի կյանքի առավել անմիջական արտահայտության միջոց, կրում է կենդանի լեզվի ավելի անմիջական արձագանքը:

Բարբառային ձևերի, ժողովրդախոսակցական լեզվի արտահայտությունները առաջին հերթին հանդես են եկել հիշատակարաններում, ուղեգրություններում, օրագրություններում և հուշագրության մեջ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրի ժանրային առաձնահատկությունների և տարբերակիչ հատկանիշների վերհանումն իր հերթին օգնում է հասկանալ, թե լեզվական ինչ ձևերով են դրանք արտահայտվում:

Ուսումնասիրության I գլխում գրականագիտությունը և լեզվաբանությունը հաղորդակից անոթների նման իրար հետ են հարաբերվում: Գեղարվեստական վավերագրության լեզվական արտահայտչամիջոցների վերհանումը վերջնական արդյունքում դառնում է այդ ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծություն: Հետևաբար, գրականագիտական տարբեր նրբություններ են ի հայտ բերվում վերլուծության նման եղանակով:

Հաջորդ երկու գլուխներից՝ II և III, յուրաքանչյուրի ենթաբաժիններում լեզվական հատկանիշները քննվում են ըստ գեղարվեստական վավերագրության տեսակների ու ժամանակային շերտերի՝ հիմնականում սկսվելով Պ. Պռոշյանի և Ղ. Աղայանի հուշերով՝ հասնելով մինչև գրական արդի ընթացքը:

Այսպես, աշխատանքի II «Գեղարվեստական վավերագրության լեզվի կառուցվածքային կաղապարները» գլխում, նախ վեր են հանվում գեղարվեստական վավերագրության հոգեբանական հիմքերը՝ որպես բնագրի լեզվի կառուցվածքը պայմանավորող գործոններ: Այն միտքն է ընդգծվում, որ եթե գեղարվեստական գրականության հեղինակը գործողությունների ընթացքը և կերպարների կերտումը պայմանավորում է ստեղծագործական երևակայությամբ, ապա հուշագիրը իր խոսքը կառուցում է ըստ եղած փաստերի ու իրադարձությունների: Իրար հետ են

հարաբերվում հեղինակի հիշողության դրսևորումները, օբյեկտիվ իրականությունը և պատմական դեպքերի ու անձնավորությունների նկատմամբ հուշագրի սուբյեկտիվ վերաբերմունքը: Հիշյալ գլխում համոզիչ ձևով ցույց է տրվում, թե հուշագրի հոգեբանական այս յուրահատկությունները լեզվական ինչպիսի դրսևորումներ են ստանում: Հեղինակի բնորոշմամբ, «Արևելահայ գեղարվեստական վավերագրության ժանրատեսակներն աչքի են ընկնում լեզվակառուցվածքային առանձնահատկություններով, որոնք առաջադրում են ժանրի ձևակառուցվածքային բաղադրիչներ և տիպաբանական հիմնական նշաններ» (էջ 90):

Հուշագրությունների լեզվական քննությունն ի հայտ է բերում ժանրային բնորոշ մի շարք նրբություններ՝ ցույց տալով, թե ինչպես է ձևավորվում հուշագրական պատումի շարադրանքի գեղարվեստականությունը:

Ա. Գալստյանն գրքի II գլխում նաև անդրադառնում է երկու հարցի, որոնք մի փոքր այլ դիտանկյունից, սակայն քննվում են նաև գրականագիտական վերլուծություններում ու արվեստաբանության մեջ: Ասվածը վերաբերում է գեղարվեստական վավերագրության մեջ դիմանկարների և բնանկարների կերտման սկզբունքներին՝ սկսած հուշագրի առաջին տպավորությունից մինչև ընդհանրացնող բնորոշումները:

Լեզվական վերլուծությունն իրականացվում է ո՛չ միայն ըստ ժանրերի, այլև ըստ թեմաների, թե վերջիններս ինչպես են թելադրում համապատասխան լեզվական կաղապարներ և բառապաշարային շերտեր: Գեղարվեստական գրականության ու արվեստի մեջ ձևի և բովանդակության հարաբերակցության այնքան տարածված հարցն այս աշխատության մեջ քննվում է լեզվաբանական տեսանկյունից, անգամ այն հարցը, թե հուշագրության թեման ինչպես կարող է պայմանավորել լեզվական նորաբանությունների ստեղծումը: Այսպես, «Վերնատան» հետ կապված Ն. Թումանյանը կազմել է վերնական (խմբավորման անդամներ), վերնանուշ «կին հյուրեր», վերնահատիկ «խաղողի քիչմիշ տեսակը» դիպվածային միավորները (էջ 171):

Առանձին վերլուծություն է նվիրված եկեղեցական բառաշերտին, որը, բնականաբար, ավելի կենսունակ ու հաճախադեպ է XIX դ. և XX դ. առաջին տասնամյակների հայ դասական գրականության ներկայացուցիչների բառապաշարում:

Քանի որ հուշագրությունները ժամանակի կյանքի կենդանի լեզվամտածողության արտահայտություններն են և ունեն ճանաչողական մեծ արժեք, ուստի վերլուծության նման եղանակը ոչ միայն ցույց է տալիս, թե այս կամ այն հուշագրի շարադրանքին ինչ բառաշերտ է բնորոշ, այլև որոշակի ընդհանրացմամբ ներկայացվում է՝ հուշագրական նկարագրությունների յուրաքանչյուր ժամանակահատվածում բառային որ խմբերն են գերիշխող եղել: Նման հարցերը քննվում են ուսումնասիրության III «Գեղարվեստական վավերագրության բառային միավորների քննությունն» գլխում:

Ամփոփելով՝ ասենք, որ Ա. Գալստյանի սույն աշխատանքը ոչ միայն սպառիչ ներկայացնում է արևելահայ գեղարվեստական վավերագրութ-

յան հետ կապված լեզվական տարբեր իրողությունների քննությունը, այլև ստեղծում է մեթոդական այն ելակետը ու վերլուծության համար անհրաժեշտ հարցերի կաղապարը, որի կիրառմամբ կարելի է կատարել հայ գրականության արձակի և չափածոյի տարբեր ժանրերի լեզվական քննությունը: Այն վերաբերելով լեզվի և ոճի հարցերին, միաժամանակ կօգնի վեր հանել գրական ստեղծագործությունների մի շարք գեղարվեստական առանձնահատկություններ:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ


Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Գիտական հետաքրքրությունը՝ հայ միջնադարյան գրականություն: Հեղինակ է 35 մենագրության և շուրջ 35 հոդվածի: devrikyan@yahoo.com

ԱՐԱՄԱԶԴ: Հայկական հնագիտություն: Անցյալի փորձառություններ և նոր ձեռքբերումներ, *խմբ.՝ Արամ Քոսյան, Պավել Ավետիսյան, Արսեն Բոբոխյան և Երվանդ Գրեկյան: Մերձավոր Արևելքի ուսումնասիրություն-յունների հայկական հանդեսի հատուկ հատոր, հատոր X (2016), Մերձա-վոր Արևելքի և Կովկասի ուսումնասիրությունների ասոցիացիա: Երևան–Օքսֆորդ, «Արքեոփրես արքեոլոջի», 2020, 478 էջ *:*

ARAMAZD: Armenian Archaeology: Past experiences and new achievements, edited by Aram Kosyan, Pavel Avetisyan, Arsen Bobokhyan and Yervand Grekyan. Special volume of Armenian Journal of Near Eastern Studies, Volume X (2016), Association of Near Eastern and Caucasian Studies. Yerevan–Oxford, Archaeopress Archaeology, 2020, 478 p.

Բանալի բառեր՝ «Արամազդ», հնագիտություն, հոդված, պեղումներ, արշավախումբ, բնակավայր, հուշարձան:

Շուրջ 20 տարի հրատարակվող «Արամազդ» պարբերականում հրատարակված հոդվածներն ու հաղորդումները զգալի ավանդ ունեն հայ հնագիտության մեջ: Միևնույն ժամանակ վաղուց արդեն օրվա պահանջ էր դարձել հայ հնագիտության հիմնական ձեռքբերումների և նորագույն միտումների ամփոփ ներկայացնելու անհրաժեշտությունը: Այս խնդիրներին է նվիրված «Արամազդ» հանդեսի 2016 թ. X հատորի 1–2 համարների միասնական հատուկ թողարկումը, որը լույս է տեսել 2020 թ. Օքսֆորդի “Archaeopress Archaeology” *հրատարակչությունում:*



Հատորում ամփոփված է 27 հոդված, որտեղ ներկայացվում են Հայաստանի տարածքում հնագիտության զարգացման հիմնական ուղենիշները, վերջին տասնամյակների հնագիտական պեղումները, ինչպես նաև՝ մի շարք ականավոր հնագետների կյանքն ու գործունեությունը:

Հատորը բացվում է գլխավոր խմբագիր պ. գ. դ. Արամ Քոսյանի խմբագրական հոդվածով, որտեղ արժևորելով «Արամազդ» ամսագրի դերը հայ հնագիտության զարգացման գործում՝ համառոտ ներկայացնում է, թե ինչպես էր տեղի ունենում հնագիտության զարգացումը ԽՍՀՄ փլուզման և նոր իրողությունների ձևավորման պայմաններում:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանի՝ «Հայաստանի հնագի-

* *Ներկայացվել է 17. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 29. VI. 2020 թ.:*

տության ներկան և հեռանկարները» ներածական հոդվածում ներկայացված են վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանում հնագիտական հետազոտությունների բնորոշ գծերը՝ դաշտային հետազոտությունների նոր մեթոդների կիրառումը, միջազգային համագործակցությունն ու համատեղ նախագծերը, հետազոտություններում բնական գիտությունների մեթոդների կիրառումը: Առանձնահատուկ նշվում է այն հանգամանքը, որ նոր տվյալների հիման վրա անցած տարիներին հնարավոր եղավ մշակել նեոլիթի, էնեոլիթի և բրոնզի դարի նոր ժամանակագրական սանդղակ: Հանրագումարելով վերջին քառորդ դարի պեղումները՝ հոդվածագիրը նշում է, որ հետազոտված ավելի քան 70 հուշարձանները լուրջ աղբյուրագիտական հենք են Հայաստանի հնագույն, հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության համար:

Կոնկրետ հետազոտություններին նվիրված բաժինը բացվում է Բ. Գասպարյանի, Դ. Ադլերի, Ք. Վիլքինսոնի, Ս. Նահապետյանի, Զ. Էգելանդի, Փ. Գլաուբեռմանի, Ա. Մալինովսկի-Բուլերի, Դ. Առաքելյանի, Մ. Արիմուրայի, Ռ. Դանի, Է. Ֆրահմի, Հ. Հայդոսյանի, Հ. Ազիզբեկյանի, Ա. Պետրոսյանի, Է. Քենդլի «Քարի դարի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում (մաս 1 – ստորին պալեոլիթ)» հոդվածով: Առաջին հատվածում հեղինակները ներկայացնում են Հայաստանի պալեոլիթյան հուշարձանների ուսումնասիրության պատմությունը՝ սկսած XIX դարի վերջի հնագետ Ժ. դե Մորգանի հետազոտություններից: Հոդվածի երկրորդ մասը նվիրված է վերջին տասնամյակների հետազոտություններին: Առանձնապես ընդգծվում է հայ-ամերիկյան, հայ-ֆրանսիական, հայ-ավստրիական, հայ-իտալական, հայ-ճապոնական, հայ-ամերիկյան-անգլիական-իռլանդական համատեղ արշավախմբերի դերը Հայաստանի քարե դարի ուսումնասիրության գործում: Հոդվածի երրորդ մասում նկարագրվում են Հայաստանի նորահայտ պալեոլիթյան հուշարձանները: Առանձին դիտարկվում են պալեոլիթյան հուշարձանների կուտակմամբ բնորոշվող տարածքները. նախաաշելյան և աշելյան կայանները Դեբեդի հովտում, Հրազդանի կիրճում, Արարատյան հարթավայրում, Արփայի հովտում, Կոտայքում, Շիրակում և Ապարանի սարահարթում:

Հայ-ամերիկյան ArAGATS *նախագծի կատարված աշխատանքներին է նվիրված Ռ. Բադալյանի, Ա. Գրինի, Ա. Հարությունյանի, Լ. Խաչատուրյանի, Ի. Լինդսիի, Մ. Մարշալի և Ա. Սմիթի* “ArAGATS” *նախագիծ 1998–2018. Հայաստանի բրոնզի և երկաթի դարերի հնագիտական հետազոտությունների 20 տարին (հայերենում ամփոփումում՝ «Արագած 1998–2018 Հայաստանի Հանրապետության Ծաղկահովտի դաշտավայրի բրոնզի և երկաթի դարերի հնավայրերի հետազոտության 20 տարին») հոդվածը: Հեղինակները, նշելով ծրագրի հիմնական նպատակները, ուսումնասիրելով Ք. ա. IV–I հազարամյակների ընթացքում Հայաստանի տարածքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական գործընթացները, ներկայացնում են Ծաղկահովիտ բնակավայրի պեղումների հիմնական արդյունքները: Հատուկ ընդգծվում է, որ, չնորհիվ Հարավային Կովկասում ռադիոածխածնային տվյալների ամենամեծ չարքի, սահմանվել են Ծաղկահովիտի հարթա-*

վայրի բնակեցման հիմնական փուլերը բրոնզի և երկաթի դարաշրջաններում:

Ա. Բոբոխյանի «Հայ-գերմանական հնագիտական առնչությունների պատմությունից» հոդվածում ներկայացվում են հայ-գերմանական հնագիտական կապերը՝ սկսած XIX դարից: Հեղինակը հայ-գերմանական հնագիտական առնչությունների պատմությունը բաժանում է 3 փուլի. 1) XIX դ.– XX դարի սկիզբ, երբ Հայաստանում աշխատում են ժամանակի նշանավոր հետազոտողներ Ֆ. Բայերն, Վ. Բելքը, Կ. Լեհման-Հաուպտը, 2) 1920–1990 թթ., երբ հայտնի քաղաքական պատճառներով փոխառնչությունները սահմանափակվեցին, և 3) հետխորհրդային շրջան, երբ գործունեություն են ծավալում հայ-գերմանական մի շարք արշավախմբեր: Հայ-գերմանական հնագիտական համագործակցության մեկ այլ օրինակ են Լոռվի տարածաշրջանում հնագիտական հետազոտությունները, որոնց արդյունքներն ամփոփված են հնագետներ Մ. Հելլեսի և Ռ. Դավթյանի «Նոր հետազոտություններ Լոռու մարզում» հոդվածում: Հայ-գերմանական ևս մեկ համատեղ ծրագիր է Օշականի ուսումնասիրությունը, որի արդյունքներն ամփոփված են Մ. Հելլեսի և Հ. Ավետիսյանի «Հայ-գերմանական պեղումները Օշականում» հոդվածում: Այստեղ 2012 թ. ի վեր ուսումնասիրվել են բազմաթիվ դամբարաններ, ինչպես նաև՝ Փոքր Բլուրի տարածքը:

Շուրջ 20 տարի չարունակ հայ-իտալական համատեղ արշավախումբը հետազոտություններ էր ծավալում Սևանա լճի ավազանում, որոնց արդյունքները արտացոլված են հնագետներ Ռ. Բիչոնեի և Ս. Համայակյանի «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Իտալիայի Ազգային Հետազոտական Խորհրդի հնագիտական առաքելությունը, 1994–2014 թթ.» հոդվածում: Հոդվածագիրները նշում են՝ թեպետ սկզբնական շրջանում ծրագրված էր ուսումնասիրել ավազանի միայն ուրարտական հնավայրերը, սակայն հենց առաջին աշխատանքային տարվա սկզբին արդեն պարզ դարձավ, որ ձեռնարկված դաշտային հետազոտությունների ծավալը հնարավորություն է տալիս ուսումնասիրության թեմա դարձնել եղած բոլոր մինչքրիստոնեական ամրոցները, դամբարանադաշտերը, քարայրները, ճանապարհները, դիտակետերը և այլ կառույցներ: Արդյունքում՝ նկարագրվեց, լուսանկարվեց, քարտեզագրվեց և թվագրվեց. 149 հնավայր, այդ թվում՝ 68 ամրոց, որոնց մեծ մասը նաև չափագրվեց:

Հայաստանի առանձին մարզերի ուսումնասիրությանն է նվիրված Բ. Գասպարյանի, Ռ. Դանի, Ա. Պետրոսյանի, Պ. Վիտոլոյի, Հ. Հայդոսյանի, Ա. Ադիգյոզալյանի, Հ. Ազիզբեկյանի, Կ. Ազատյանի, Կ. Զեկիի, Ղ. Մոբադի, Թ. Սակոնեի, Ա. Բոնֆանթիի, Ֆ. Դաֆդարի «Վայոց Ձոր ծրագիրը (ՎԶԾ): Առաջին տարիներին իրականացված աշխատանքների համառոտ ամփոփումը (2016–2018 թթ.)» վերնագրով հոդվածը: Գործնականում, այդ ծրագրի շրջանակներում կատարվող հետազոտություններն ուղղված են Արփա գետի ավազանը ներառող տարածքի ուսումնասիրությանը, քանի որ Վայոց Ձորն ունի ռազմավարական կարևոր դիրք: ՎԶԾ-ի հիմնական նպատակներից մեկը տարածքի բնակեցման փուլերի ուսումնասիրությունն է՝ սկսած նախապատմական շրջանից մինչև միջնադար՝ կենտրո-

նանալով հատկապես Վանի թագավորության ժամանակաշրջանի հուշարձանների փաստագրման վրա:

Կոտայքում իրականացված նմանատիպ մի ծրագրի կատարման արդյունքների մասին է հաղորդում Ա. Պետրոսյանի, Ռ. Դանի, Պ. Վիտոլոյի, համագործակցությամբ՝ Վ. Մելիքյանի, Ղ. Մուրադի, Կ. Զեկիի, Տ. Սակունեի, «Կոտայքի հետախուզական ծրագիրը (ԿՀԾ): Առաջին վեց տարիների աշխատանքների արդյունքները (2013–2018 թթ.)» հոդվածը: Այստեղ հայ-իտալական արշավախմբի կողմից իրականացված հնագիտական ուսումնասիրությունների նպատակն էր հետազոտել Հրազդան գետի վերին ավազանը և Մարմարիկ գետի կիրճը (մոտ 100.000 հա), կազմել նշված հատվածի հնագիտական քարտեզը: Հետախուզական աշխատանքների ժամանակ ուսումնասիրություններ են կատարվել 114 հնավայրում, որոնց ժամանակագրական տիրույթն ընդգրկում է պալեոլիթից մինչև ուշ միջնադար:

Մի շարք հոդվածներ նվիրված են Հայաստանի հնագույն և հին բնակավայրերի, պատմական Հայաստանի քաղաքների պեղումներին: Բրոնզ-երկաթեդարյան, թերևս, ամենանշանավոր հուշարձանի՝ Մեծամորի պեղումներին է նվիրված Ա. Փիլիպոսյանի, Ք. Յակուբյակի, Ռ. Մկրտչյանի, Հ. Սիմոնյանի, Մ. Իսկրայի, Ա. Զաքյանի «Պեղումներ Մեծամորում 2013–2018 թթ. (նախնական հաղորդում)»: Հայ-լեհական համատեղ խմբի աշխատանքները Մեծամորի միջնաբերդի արևելյան հատվածում 2013 թ. թույլ տվեցին հիմնավորել, որ բնակավայրն ակտիվ գործունեություն է ծավալել վաղ բրոնզի շրջափուլից (Ք. ա. XXXV–XXIV դդ.) մինչև վաղ անտիկ ու հելլենիստական (Ք. ա. VI–IV դդ.) դարաշրջանները ներառյալ: 2013–2018 թթ. ընթացքում հայ-լեհական հնագիտական արշավախմբի կողմից Մեծամորի քաղաքային թաղամասի VIII և IX սեկտորներում կատարված պեղումները հաստատեցին, որ դրանք վերջնականապես ձևավորվել են վաղ երկաթի շրջափուլում (Ք. ա. XI–IX դդ.):

Ա. Պարսամյանի և Ա. Գաբրիելյանի «Երվանդաշատ. 2005–2014 թթ. հնագիտական աշխատանքների ամփոփում» հոդվածում ներկայացված են Հին Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկի՝ Երվանդաշատի հետազոտությունները: Ուսումնասիրվող հնավայրը գտնվում է Արաքս և Ախուրյան գետերի միախառնման վայրից մի փոքր հարավ՝ Արաքսի ձախ ափին, Երվանդաշատ և Բագարան գյուղերի միջակայքում, միակտոր ապառաժ ժայռի դիմաց, բլրի վրա: Այստեղ հնագիտական աշխատանքները սկսվել են 2005 թ. և ընդհատումներով շարունակվել մինչև 2014 թ.՝ վաստակաշատ հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովի ղեկավարությամբ: Այդ բլրի փեշերին բացվել են ոչ պաշտպանական նշանակության պարիսպներ՝ կառուցված մեծ զլաքարերից: Հաշվի առնելով հնագիտական ուսումնասիրությունները և Մովսես Խորենացու վկայությանն առ այն, որ Երվանդ թագավորը գետի հյուսիսային ափին տնկել է պուրակ և ստեղծել որոստեղի, կարելի է ենթադրել՝ ամենայն հավանականությամբ, հենց այդ մասում է գտնվել Խորենացու հիշատակած «Անտառ ծննդոց»-ը:

Կարևոր նշանակություն ունի Արցախի Հանրապետությունում իրականացված պեղումներին նվիրված Հ. Պետրոսյանի «Արցախի Տիգրանա-

կերտ» հոդվածը: Արցախի Տիգրանակերտը գտնվում է Ասկերանի շրջանում, լեռնաշխարհի երկրորդ խոշոր գետի՝ Խաչենագետի ներքնահովտում: Այն տարածվում է Վանքասար լեռան հարավարևելյան ներքնալանջի վրա և այդ լանջին կից գոգավորություններում՝ Արքայական աղբյուրների (Շահբուլաղ) հարևանությամբ՝ զբաղեցնելով ավելի քան 70 հա տարածություն: Պեղումների արդյունքում ուրվագծվում է քաղաքի հիմնական կառուցվածքը. Ամրացված թաղամասը, Միջնաբերդով հանդերձ, Կենտրոնական թաղամասը, Անտիկ թաղամասերը, անտիկ և վաղքրիստոնեական դամբարանադաշտերը: Հոդվածում ներկայացվում են նաև քաղաքի մերձակայքում գտնվող պաշտամունքային-քարայրային համալիրը, նրա ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքը, Խաչենագետի ձախ ափին գտնվող վաղմիջնադարյան ամրոցը և այլն:

Արդի հայ հնագիտության ամենավիճահարույց հարցերից մեկին՝ ուրարտական և վաղ աքեմենյան դարաշրջանի մշակույթների փոխհարաբերությանն է նվիրված Ֆ. Դեչանի և Ֆ. դե Կլերֆոնտանի «Հասկանալով Հայաստանի զարգացումն ուրարտական դարաշրջանի ավարտի և աքեմենյան դարաշրջանի սկզբի միջև. համագործակցություն Ֆրանսիայի և Հայաստանի արշավախմբերի միջև. Բենիամին և Էրեբունի (1999–2019)» հոդվածը: Բենիամինում (1999–2007 թթ.) իրականացված պեղումների արդյունքում բացահայտվել են աքեմենյան պալատական համալիրի հատակագիծը և գոյության փուլերը, ուսումնասիրվել են համալիրի ստորոտում բացված բնակարանները ու արհեստանոցները: Հոդվածում նաև ներկայացված են Էրեբունու պեղումների արդյունքները: Այստեղ հիմնարար փոփոխություններ են արձանագրվում ավելի ուշ, քան ուրարտական դարաշրջանի ավարտը: Շերտագրությունն ու խեցեղենը վկայում են, որ այդ վերափոխումները տեղի են ունեցել Ք. ա. VII դ. վերջին և VI դ. առաջին կեսին, այն է՝ «մարական» դարաշրջանում:

Պարբերականում զետեղված երկու հոդված՝ Մ. Զարդարյանի «Անտիկ հուշարձանների հետազոտությունները Հայաստանում երրորդ հանրապետության տարիներին (1991–2018 թթ.)» և Հ. Մելքոնյանի «Միջնադարյան հնագիտության նվաճումները վերջին հիսուն տարում», նվիրված են տարբեր ժամանակաշրջանների հուշարձանների պեղումների պատմությանը: Առաջին հոդվածում հեղինակը մանրամասն անդրադառնում է անտիկ ժամանակաշրջանի մի շարք հանգուցային հուշարձանների՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ պեղումների հիմնական արդյունքներին: Մասնավորապես՝ Արմավիրում՝ բլրի հարավային ստորոտում՝ Խորենացու հիշատակած «Սոսյաց պուրակ»-ի տարածքում, բացահայտվեցին դեռևս XX դարասկզբին նկարագրված, սակայն, հետագայում կորսված «խոյաձև քարեր»-ը, որոնք վերաբերում են հուշարձանի գոյատևման վաղերկաթեդարյան փուլին: Երվանդաշատում՝ Արաքսի ձախ ափին տեղակայված բլրի պեղումներով ի հայտ բերվեց քառակուսի մոնումենտալ, բազմաբաժին պալատական կառույց, որին արևելքից, արևմուտքից և հարավից կցված են մի շարք այլ շինություններ (կարասների սրահ-մառան,

տնտեսական սենյակներ ու այլն): Ըստ հնագիտական տվյալների՝ կառույցը, հիմնադրվելով ուրարտական ժամանակաշրջանում, հարատևել է մինչև Ք. հ. II–III դդ.: Արտաշատում պեղումները 2003 թ. կենտրոնացվեցին Արաքսի ձախ ափին տեղակայված «Գետամերձ համալիրում»: Այստեղ առկա բլրակի գագաթին ու արևելյան լանջին բացվեցին երկու բարձրահարթակներ (տաճարական ու միջանցիկ) և դրանց զանգվածեղ հենապատերն ու դեպի հարթակները տանող աստիճանաշարը: Բլրի արևելյան և հարավային ստորոտներում պեղվեցին սյունազարդ ճեմասրահ (ռեգիա), խճանկարներով զարդարված հռոմեական բաղնիք, ճոխ որմնանկարներով սրահ և մի շարք այլ ուշագրավ կառույցներ: Հայտնաբերված հնագիտական նյութերի թվում առանձնանում են հռոմեական մարմարե արձանների բեկորները, հռոմեական պղնձե դրամների գանձը և, հատկապես, կավե կնքադրոշմների հարուստ հավաքածուն:

Վերոնշյալ երկրորդ հոդվածում Հ. Մելքոնյանը քննում է Հայաստանում միջնադարյան հուշարձանների ուսումնասիրության հիմնական արդյունքները: Ներկայացնելով միջնադարյան հիմնական հուշարձաններ ի հետազոտությունները՝ հեղինակն իրավացիորեն նշում է միջնադարյան հուշարձանների հետազոտության առանձնահատկությունները. մատենադրական և վիմագրական հարուստ սկզբնաղբյուրների առկայությունը, ճարտարապետական կառույցների որմերին ու հուշակոթողների վրա փորագրված վիմական արձանագրությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այնուհետև նշում է միջնադարյան հնագիտության հիմնական ուղղությունները. ամրոցների և ղպյակների, քարանձավային բնակավայրերի, վաղ միջնադարյան հուշարձանների, քաղաքային բնակավայրերի, վանական համալիրների պեղումները: Հեղինակը նշում է, որ Հայաստանի միջնադարյան հուշարձանների գիտական ուսումնասիրության ավելի քան հարյուրամյա ուղին ի հայտ է բերել հնավայրեր (Անի, Զվարթնոց, Դվին, Գառնի և այլն), որոնց համակողմանի քննությունը հիմք է քննարկելու Հայաստանի միջնադարյան նյութական ու հոգևոր մշակույթն Առաջավոր Արևելքի համաժամանակյա հուշարձանների և մշակույթի համատեքստում:

Պարբերականի երկրորդ բաժնում ներկայացված է մի շարք հայ ականավոր հնագետների կյանքն ու գործունեությունը: Մասնավորապես, ներկայացված են Բաբկեն Առաքելյանին (հեղինակ՝ Մ. Զարդարյան), Վահան Հովհաննիսյանին (հեղինակներ՝ Ա. Փիլիպոսյան, Գ. Արեշյան), Արամ Քալանթարյանին (հեղինակ՝ Հ. Մելքոնյան), Տելեմակ Խաչատրյանին (հեղինակ՝ Ֆ. Բաբայան), Ժոռես Խաչատրյանին (հեղինակներ՝ Ի. Կարապետյան, Հ. Մարգարյան), Էմմա Խանզադյանին և Հարություն Մարտիրոսյանին (հեղինակ՝ Ա. Բոբոխյան), Ֆելիքս Տեր-Մարտիրոսովին (հեղինակ՝ Լ. Միքայելյան), Գևորգ Տիրացյանին (հեղինակ՝ Գ. Թումանյան), Ռաֆիկ Թորոսյանին (հեղինակ՝ Ա. Թաղևոսյան), Ստեփան Եսայանին (հեղինակ՝ Հ. Ավետիսյան) նվիրված հաղորդումները:

Հանրագումարելով «Արամազդ» պարբերականի 2016 թ. X հատորի 1–2 համարների լուսաբանումը՝ կարելի է եզրակացնել, որ այն զգալի ավանդ ունի հայ հնագիտության պատմության ուսումնասիրության գործում, ինչպես նաև ներկայացնում է մի շարք նորահայտ հուշարձաններ:

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

Պ. գ. թ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի բրոնզի և երկաթի դարաշրջանների պատմություն ու մշակույթ, քաղաքագոյացման պատմություն, հնագույն հավատալիքներ և ծես: Համահեղինակ է 1 մենագրության, հեղինակ և համահեղինակ չուրջ 50 հոդվածի: uruatry@ rambler.ru

В. Г. ТУНЯН. Ованес Туманян и Армянский вопрос. Ереван, изд-во «Чартарагет», 2020, 164 с.*

Ключевые слова: Ов. Туманян, Армянский вопрос, публицистика, секуляризация, политическая борьба, Геноцид армян, беженство, армянская государственность.

Вышла в свет книга ведущего научного сотрудника Института истории НАН РА, доктора исторических наук, профессора Валерия Туняна «Ованес Туманян и Армянский вопрос». В монографии исследуется политическая деятельность Ованеса Туманяна, которая, по сравнению с его поэтическим творчеством, менее изучена. Автор показывает, что в своей общественно-политической деятельности поэт уделял значительное место Армянскому вопросу, представляя его двумя компонентами: первый – непосредственно Армянский вопрос и второй – концепция возрождения национальной культуры в жизни этноса. В Армянском вопросе он выделил ряд составляющих частей: персидско-армянскую, турецко-армянскую и восточно-армянскую.



Ов. Туманян оказал значительное содействие становлению Первой Республики Армении и Советской Армении. В книге уделено внимание отношениям поэта с руководством Армянской Апостольской церкви. В. Тунян показал роль Туманяна в формировании национального сознания и мышления. Такой подход основан на привлечении материалов Центрального государственного исторического архива Армении, связанных с деятельностью поэта. Отметим документы судебного процесса над партией «Дашнакцутюн» в царской России, добровольческого движения, общественных организаций. Использованы также материалы из хранилищ Российского государственного исторического архива С.-Петербурга, Российского Государственного военно-исторического и Национального архива Грузии.

Автор книги исследовал опубликованные источники о деятельности Ов. Туманяна, содержащие данные о его взаимоотношениях с представителями разных сословий и групп населения. Важное значение имеют и документы, свидетельствующие о личном знакомстве и взаимодейст-

* Представлена 30. III. 2020 г., принята к печати 08. VI. 2020 г.

вии поэта с видным представителем армянского национально-освободительного движения Андраником Озаняном.

В книге использованы материалы русскоязычной и армянской прессы г. Тифлиса досоветского периода, содержащие публикации по темам, к которым обращался Ов. Туманян: Армянский вопрос, взаимоотношения закавказских этносов и положение в Турецкой Армении. Историографические материалы в монографии носят избирательный характер, что обусловлено политисторическим профилем исследования.

Представленные в рецензируемой работе оценки современников, данные Ов. Туманяну, довольно интересны, хотя на их содержании сказываются дружеские отношения с поэтом. Использованный богатый фактологический материал позволяет системно и критически проанализировать освещаемую тему в хронологических рамках научного исследования. При этом использованные стихотворения Туманяна органически вписываются в тематику рассматриваемых проблем.

Структурно монография включает введение, две главы, заключение, приложение и библиографию.

В первой главе «Политисторический аспект деятельности», охватывающей время с конца XIX в. до начала Первой мировой войны, В. Тунян представляет национального поэта в разделах «Общественная позиция Ованеса Туманяна», «Проблемы национального развития» и «Пути развития Армянского вопроса». В них отражено формирование Гражданина. Дух времени – когда во время «зулума» 1894–1896 гг. в Османской Турции погибло 300 тысяч армян – получил воплощение в стихотворении «Две черные тучи». Происходит сближение Туманяна с партией «Дашнакцутюн», появляются новые вызовы – секуляризация достояния Армянской Апостольской церкви в 1903 г., Сасунские события 1904 г., армяно-татарские столкновения 1905–1907 гг. У поэта кристаллизируется общественное призвание, он выступает с критикой существующих порядков. Следуют аресты 1908 и 1911 гг., вызванные, в частности, публицистическими статьями Туманяна и редактированием газеты «Оризон» («Горизонт»), являющейся беспартийным фасадом партии «Дашнакцутюн». Политический процесс над партией завершается в 1912 г. оправданием Ов. Туманяна.

В. Тунян показывает, как поэтическая натура Туманяна постепенно переходит в инструментарий общественного творчества для поддержания многочисленной семьи и всего армянского народа, ставшего для поэта большой семьей. Он создает сказки и былины, в которых находит отражение свободная душа труженика-армянина.

Вторая глава носит название «Мировой сполох» и охватывает период от начала Первой мировой войны до кончины национального поэта в 1923 г. Уже одни названия разделов главы – «Армянское горе – время бедствий», «Тактический характер Армянского вопроса» и «Национальное размежевание» – показывают преломление общественных процессов в деятельности Туманяна, вынужденного уделять значи-

Филологический журнал 2020 № 2 Историко-филологический журнал

тельное время политобщественной деятельности, быть может, в ущерб поэтическому творчеству.

В книге показано осмысление Туманяном таких процессов, как Геноцид армян, беженство и армянские сироты, положение интеллигенции и масс, падение самодержавия России, воссоздание армянской государственности в форме Первой Республики Армении и Советской Армении. В. Туняном представлена деятельность Ов. Туманяна в «Армянском национальном бюро», «Союзе армянских писателей», «Союзе армянских землячеств», «Комитете помощи Армении».

Итогом является характеристика Ованеса Туманяна как Великой личности нации, являющейся выразителем души и умонастроений армянского народа.

Представляемая работа – удачная, познавательная монография, имеющая компактный формат. В тоже время, следует указать на необходимость более расширенного представления таких затрагиваемых проблем, как деятельность «Бюро по установлению потерь армян от всемирной войны»[1]. Имеется опечатка, которая может ввести в заблуждение читателя: на с. 125 вместо 23 декабря 1917 г. следует читать 23 декабря 1918 г.

Книга В. Туняна создает новый уровень представлений об общественной деятельности Ованеса Туманяна в сфере защиты национальных интересов. Она, бесспорно, будет интересна исследователям и широкому кругу читателей.

САТЕНИК АВОЯН

К. и. н., начальник управления культуры и спорта в марзпетаране Арагацотн. Научные интересы: политика царизма в Закавказье в начале XX в. Автор 9 статей. avoyan_s@inbox.ru

[1] *Հայ ժողովրդի կորուստները առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի փաստաթղթերի և նյութերի ժողովածու)/կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ա. Զաքարյան, Երևան, 2005:*

ՆՎԻՐՅԱԼ ԼԵԶՎԱԲԱՆԸ. ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Գևորգ Ջահուկյան, լեզվաբանություն, հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հնդեվրոպական լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն:

Կան գիտնականներ, որոնք իրենց գիտակցական ողջ կյանքը նվիրում են գիտությանը, գիտության զարգացմանը, հետազոտական աշխատանքին: Նրանք գիտության յուրատիպ նվիրյալներ են, հետազոտական և գիտական աշխատանքի առաքյալները, որոնց կյանքն անեզր է, անվերջ, իսկ գիտական ժառանգությունը դեռ երկար ժամանակ ծառայում է հազարավոր սերունդների: ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Գևորգ Բեգլարի Ջահուկյանն այդ գիտնականներից մեկն է՝ լեզվաբանության անխոնջ նվիրյալը: Ծնունդով լոռեցի է, լոռեցի հայտնիներից մեկը: Ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Կալինինոյի շրջանի Շահնազար (ներկայիս Լոռու մարզի Մեծավան) գյուղում: 1937 թ. ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1941 թ.՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) բանասիրական ֆակուլտետը: Բանակում ծառայելուց հետո՝ 1944 թ., ուսումը շարունակել է ասպիրանտուրայում՝ մեծ հայագետ Հ. Աճառյանի ղեկավարությամբ: 27 տարեկանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» թեմայով, դրանից 8 տարի անց՝ 1955 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «XVIII–XIX դդ. լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը» թեմայով:



Անվանի գիտնականն ապրել է ընդամենը 85 տարի. մահացել է 2005 թվականին:

Ավելի քան վեց տասնամյակ զբաղվել է գիտահետազոտական և գիտամանկավարժական աշխատանքով: Մանկավարժական գործունեությունը սկսվել է Երևանի պետական համալսարանից: Սա կարևոր շրջան էր մեծ գիտնականի կյանքում. նրա գիտական հետաքրքրության ուղիները նախանշվեցին հենց այս ընթացքում: Լեզվաբանը դասավանդել է

* *Ներկայացվել է 16. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 26. VI. 2020 թ.:*

ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լատիներեն, հին հունարեն, գերմաներեն, լեզվաբանություն, համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն և այլ առարկաներ: Գրեթե բոլորը գիտեին, որ նա չափազանց խստապահանջ էր գիտության մեջ, բայց հետաքրքիր է՝ դասախոսությունները բավական մատչելի էին: Որքան որ բարդ էր նրա խոսքը գիտական աշխատանքներում, նույնքան մատչելի էին դասախոսությունները:

Դասախոսական և հետազոտական աշխատանքը համատեղել է նաև վարչական աշխատանքի հետ. երկար տարիներ ղեկավարել է ԵՊՀ-ի օտար լեզուների, ապա՝ ռոմանագերմանական բանասիրության ամբիոնը: Ժամանակակիցները հաճախ պատմում են Գ. Ջահուկյանի աշխատասիրության, մեծ եռանդի, աշխատանքային խիստ ռեժիմի մասին, որը գրեթե անխախտ էր և անփոփոխ: Նրա անձնական կյանքը գիտական, գիտամանկավարժական աշխատանքն էր: Ամբողջությամբ նվիրված է եղել գիտությանը, կրթությանը, իր ողջ ժամանակը հատկացրել է դրանց:

Հայագիտության, հայ լեզվաբանական միտքը զարգացնելու առումով չրջադարձային եղավ, երբ Գ. Ջահուկյանը նշանակվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Նա կարողացավ իր՝ արդեն ունեցած ահռելի գիտական փորձը ծառայեցնել ի նպաստ ինստիտուտի գիտական աշխատանքների կազմակերպման: Լեզվաբանի ղեկավարելու տարիներին ստեղծվեցին նոր բաժիններ, ուղենշվեցին գիտության նոր բնագավառների ուսումնասիրություններ, բացի այդ՝ հրաշալի գիտական կադրեր պատրաստվեցին: Այսպիսով՝ նա նաև հետաքրքիր դպրոց ստեղծեց: Լեզվաբանի հետևորդները, աշակերտները այսօր էլ զգում են Ջահուկյանական չունչը ԳԱԱ լեզվի ինստիտուտում և յուրաքանչյուր տող, նախադասություն, հոդված գրելիս անպայման մտածում են, թե ինչ կասեր Գ. Ջահուկյանը:

Մեծանուն գիտնականը կատարել է գիտական ահռելի աշխատանք: Շատ բազմազան է Գ. Ջահուկյանի գործունեությունը: Նրա ներդրումը բավական մեծ է լեզվաբանության բոլոր ոլորտներում. անդրադարձել է գրեթե բոլոր բնագավառների ուսումնասիրությանը՝ հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզվի նկարագրություն, հնդեվրոպական և նոստրատիկ լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն ... Դժվար չէ նկատել՝ գիտական հետաքրքրությունների չրջանակը բավական մեծ է, իսկ առավել հետաքրքրականն այն է, որ այս բոլոր բնագավառներում նա բերել է իր նորույթը:

Գ. Ջահուկյանը բավական ինքնատիպ և պրպտուն միտք ուներ, ցանկացած նյութ քննելիս անպայման որևէ նորամուծություն էր անում, գրեթե չկա մի բնագավառ, որին անդրադարձել է և այդտեղ չի թողել իր հետքը: Այսպես, օրինակ, հայ քերականական մտքի և հայոց լեզվի պատմությանը նվիրված ուսումնասիրություններով [«XVIII–XIX դդ. լեզվաբանական միտքը և աչխարհաբարի հարցերը» (անտիպ), «Գրաբարի քերականության պատմություն» (1974 թ.)] նա ներկայացնում է գրաբարի

քերականական համակարգի ազդեցությունից զերծ աշխարհաբարի նկարագրություն ստեղծելու խնդիրը, լեզվի նորմավորման սկզբունքների մշակման ու լեզվի զարգացման հարցերը:

Նա ներկայացնում է հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքը [«Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը» (1969 թ.), «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան» (1987 թ.)], ստեղծում է հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրություն, ներկայացնում հայերենի նախագրային շրջանի լիակատար պատմությունը, հայերենի պատմական զարգացման հետագա փուլերի ամբողջական բնութագիրը, առաջին անգամ հայերենի նկատմամբ կիրառում է լեզվաժամանակագրության մեթոդը, մանրամասն քննում ու գնահատում աշխարհաբարի զարգացմանը վերաբերող տեսությունները, կատարում հայոց լեզվի պատմության շրջանաբաժանում: Նրա «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան» աշխատությունն այնքան մեծ ազդեցություն ուներ հայ լեզվաբանական մտքի զարգացման վրա, որ դրա համար արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի, իսկ այս շրջանաբաժանումը մինչ օրս հայ լեզվաբանները, հայագետները լայնորեն կիրառում են:

Հայերենի համեմատական քերականության բնագավառում *[«Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959 թ.),* «Сравнительная грамматика армянского языка» *(1982 թ.)]* ներկայացնում է հայերենի առնչությունները հնդեվրոպական ու այլ ընտանիքների պատկանող բազմաթիվ հին և հնագույն լեզուներին, ճշգրտում հայերենի տարածքային դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում, հայերենի հնդեվրոպական ու խուռռաուրարտական ենթաշերտերը, անդրադառնում հայերենից ուրարտերենին, խեթերենին և այլ լեզուներին անցած փոխառություններին, ուսումնասիրում հայերենի անհայտ ծագման բառաշերտը, ներկայացնում նոր ստուգաբանություններ *[«Ստուգաբանական բառարանի» (2010 թ.)]:*

Մեծ է Գ. Ջահուկյանի ավանդը նաև հնդեվրոպական լեզուների պատմահամեմատական *ուսումնասիրության մեջ* [«Новые урартско-индоевропейские параллели» *(1965 թ.),* «Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков» *(1967 թ.),* «О так называемой “глотальной” теории в индоевропейстике» *(1986 թ.)]:* Նա առաջիններն է, որ քննել է հնդեվրոպական, խուռռաուրարտական ու կովկասյան լեզուների փոխհարաբերությունը՝ բացահայտելով հնդեվրոպական և խուռռաուրարտական զուգաբանություններ, որոնք վկայում են այդ լեզվաընտանիքների միջև գոյություն ունեցած հեռավոր ցեղակցությունը: Առաջիններն է, որ զբաղվել է նոստրատիկ լեզվաբանության հարցերով:

Հայ բարբառագիտության բնագավառում ևս մեծ գիտնականը հանդես է եկել նորամուծություններով. նա ստեղծել է նոր գիտակարգ՝ վիճակագրական բարբառագիտություն *[«Հայ բարբառագիտության ներածություն» (1972 թ.)],* առաջադրել հայ բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունքը և վիճակագրական բարբառագիտության մեթոդը:

Ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանության տեսության բնագավառում հատկապես հիշատակելի են լեզվաբանության պատմության

շրջանաբաժանման, լեզվական մակարդակների, կաղապարման մեթոդի, լեզվի տեսության հարցերը, որոնք տարբեր աշխատություններում ու հոդվածներում ներկայանում են աստիճանական զարգացմամբ [«Լեզվաբանության պատմություն» (1960–1962 թթ.), «Общее и армянское языкознание» *(1978 թ.),* «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» *(1974 թ.),* «Универсальная теория языка» *(1999 թ.)]:*

Անվանի լեզվաբանի մտքում անընդհատ համընդհանուր լեզվաբանական տեսություն ստեղծելու գաղափարն է եղել. տարիներ շարունակ անդրադարձել է այս հարցին: Նրա նպատակն էր մշակել լեզվաբանական նկարագրության միասնական և ընդհանրական սկզբունքներ, միևնույն սկզբունքներից ելնելով՝ մի քանի պարզ գործողությամբ ընդգրկել լեզվի ամբողջ համակարգը՝ և՛ արտահայտության պլանը, և՛ բովանդակության պլանը, և՛ դրանց փոխհարաբերությունը: Նշենք, որ նման միտք ունեցել են հայտնի լեզվաբաններից շատերը, ինչպես, օրինակ, Ն. Խոմսկին, Լ. Ելմսլևը: Նրանք էլ են ստեղծել համընդհանուր լեզվաբանական տեսություն, բայց դրանք մնացել են որպես տեսական ուսումնասիրություններ: Ջահուկյանի առավելությունն այն է, որ նա ոչ միայն ստեղծեց նոր տեսություն, այլև գործնականում կիրառեց այն հնչույթաբանության նկատմամբ, հետագայում նաև՝ ժամանակակից հայերենի բառակազմության և իմաստաբանության նկատմամբ [«Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» (1989 թ.)]: Իհարկե, պետք է նշել՝ տեսությունը լիարժեք չի կիրառվել գործնականում, և հուսով ենք, որ հետագայում լեզվաբանները կզբաղվեն այս խնդրով, և տեսանելի կլինի տեսության լիարժեք կիրառելիությունը գործնականում:

[10] *Վ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 11:*

кажется бесконечным, а готовность и умение их реализовывать – просто неиссякаемыми.

Нам остается только от всей души поздравить дорогого юбиляра и выразить наше горячее желание, чтобы его жизнь и творческая деятельность во благо культуры родной страны были очень долгими и плодотворными.

АНУШ ТЕР-МИНАСЯН

К. арх., старший научный сотрудник отдела архитектуры Института искусств НАН РА, советник директора Национального музея архитектуры им. А. Таманяна. Научные интересы: средневековая и современная архитектура. Автор 6 монографий, около 200 статей.
anoush_arch@hotmail.com

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄ*

«Պատմաբանասիրական հանդեսի» այս տարվա առաջին համարում (էջ 237–241) լույս է տեսել ճանաչված թումանյանագետ, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանի գրախոսականը «Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր» ժողովածուի մասին: Այն կազմել է պ. գ. թ., դոցենտ Հ. Սուքիասյանը և 2019 թ. հրատարակել է ԳԱԱ պատմության ինստիտուտը: Ի թիվս այլ վավերագրերի, գրախոսականում հատկապես ընդգծվել է Հովհ. Թումանյանի երկու ելույթը Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ-ի) 1918 թ. մարտի 30-ի նիստում: Ընթերցողը տեղեկացվել է, որ այդ ուշագրավ ելույթները «վրիպել են նույնիսկ նրա տարեգրությունը կազմողների հայացքից» (էջ 238): Այնուհետև, այլ նյութերի շարքում առանձնացվել են «Ալեքսանդրապոլում 1918 թ. ապրիլի 8-ի հայ ղեկավար գործիչների արտակարգ խորհրդակցության, ՀԱԽ-ի ... հուլիսի 6-ի նիստերի ... արձանագրությունները» (էջ 238):

Այդ ամենով հանդերձ, Ս. Հովհաննիսյանի գրական գնահատականն ու Հովհ. Թումանյանի ելույթների վրա կատարած շեշտադրումը չի ներառում իմ՝ խնդրո առարկա վավերագրերը հայտնաբերած, ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Գայանե Մախմուրյանի անունը, ով այդ փաստաթղթերը հրատարակել է 2014 թ. «Պատմաբանասիրական հանդեսի» երրորդ համարում: Ընթերցողը թյուր տպավորություն է ստանում, թե տվյալ գիտական նվաճումը պատկանում է ժողովածուն կազմողին: Վերջինս ժողովածուում՝ համապատասխան վավերագրերի տակ, պետք է նշեր դրանք առաջին անգամ հրապարակած պատմաբանի անուն-ազգանունը, սակայն դրա փոխարեն նշել է՝ «Պատմաբանասիրական հանդես», 2014, № 3, ուստի և նպաստել է անցանկալի չփոթության: Ժողովածուի կազմողն ու գրախոսության հեղինակը չեն գիտակցել այդ կերպ իրենց մոտեցման սխալ լինելը և այն հանգամանքը, որ մոլորության մեջ են գցել ընթերցող հանրությանը:

Հավելեմ, որ գրախոսվող ժողովածուում ներկայացվել է ՀԱԽ-ի հունիսի 24-ի նիստը՝ ըստ դրա ձեռագիր տպագրության: Հայաստանի ազգային արխիվի ֆոնդ 222, ց. 1, գ. 120-ում պահվող ձեռագիրը պարունակում է նիստի մասնակիցների անուն-ազգանունների սկզբնատառերը միայն: Դրանում «Հ. Թ.» նշումներն Ամենայն հայոց բանաստեղծի հետ նույնականացման որևէ հնարավորություն չեն տալիս: Միայն «Պատմաբանասիրականում» մեքենագիր օրինակից մեր հրատարակած արձանագրություններն են պարունակում բանաստեղծի անուն-ազգանունն ամբողջությամբ՝ անկասկած, վկայելով նրա գործունեության մասին:

Նաև՝ Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության 1918 թ. ապրիլի 8-ի երկու նիստերը ժողովածուում միացվել են որպես մեկ միջոցառում, ապա աղագրությունը ներկայացվել է լրացուցիչ համարակալմամբ, թեև պարզապես կրկնում է վերևում ներկայացվածը:

Գոնում ենք, որ գիտական տարրական բարեխղճությունը պահանջում

---

* *Ներկայացվել է 06. VII. 2020 թ., ընդունվել է տպագրության 07. VII. 2020 թ.:*

է հետազոտողից լինել ուշադիր և մոռացության չտալ արդեն կատարված աշխատանքն ու նրա հեղինակին:

ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

Պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն, Մեծ տերությունների քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1918–1920 թթ., 1988–1994 թթ. Ղարաբաղյան չարժում, բարեփոխումների խնդիրները արդի Հայաստանում: Հեղինակ է 6 գրքի, փաստաթղթերի ժողովածուի և ավելի քան 60 հոդվածի: ggmakhm@hotmail.com
http://gmakhmourian.research.sci.am

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ի պատասխան պ. գ. դ. Գայանե Մախմուրյանի նկատառումների՝ հավաստում ենք, որ որևէ հետազոտողի կատարած աշխատանք մոռացության տալու նպատակ չենք ունեցել:

«Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր» ժողովածուն հրատարակության պատրաստելիս մեզ համար ուղենշային են եղել 1992 թ. պրոֆ. Վարդգես Միքայելյանի և 2000 թ. ակադեմիկոս Գալուստ Գալոյանի ու պրոֆ. Վլադիմիր Ղազախեցյանի խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուները: Դրանցում վերատպված փաստաթղթերի դեպքում նշված է ամսագրի անվանումը, տարեթիվը, համարը, էջը [«Нагорный Карабах в 1918–1923 гг.», составители: В. Акопян, О. Баликян, А. Вирабян, В. Микаелян, В. Эвоян, с. 23, 60, 340, 543, 575, 610 *և այլն, «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)», կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, էջ 234, 249, 278, 307 և այլն]: Այս սկզբունքը կիրառել ենք նաև մենք՝ ժողովածուի առաջաբանում (էջ 5) հավելյալ անվանական նշելով նախորդ հրապարակումների հեղինակների (այդ թվում՝ Գ. Մախմուրյանի) անունները: Մեզ համար հավասարապես ընդունելի է նաև նախկինում գիտական պարբերականներում տպագրված փաստաթղթերի վերատպման դեպքում յուրաքանչյուր փաստաթղթի վերջում նախորդ հրատարակողի անվան հիշատակումը: Ուստի Գ. Մախմուրյանին չնորհակալություն ենք հայտնում այս հարցի վերաբերյալ ուշադրություն հրավիրելու համար:*

Ի դեպ, Հայոց ազգային խորհրդի նիստերի արձանագրություններն ուսումնասիրել ենք 2008–2009 թթ., դրանցից չուրջ երկու տասնյակը ամբողջությամբ կամ մասամբ 2009 թ. հրատարակել «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու»-ում:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Քննարկելով ՀՀ ԳԱԱ 2019 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները, ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ Նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվել է ինչպես հիմնարար և կիրառական բնույթի գիտական նոր կարևորագույն արդյունքների ստացմանը, այնպես էլ ենթակառուցվածքների պահպանմանը նպատակաուղղված գործունեություն:

2019 թ. ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպությունները կատարել են գիտական աշխատանքներ 6 նպատակային, 45 բազային և 139 թեմատիկ ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 169 մենագրություն և ժողովածու (14-ն արտասահմանում), 26 ուսումնական ձեռնարկ և դասագիրք (1-ն արտասահմանում), 2240 հոդված (953-ն արտասահմանում), 637 թեզիս (243-ն արտասահմանում):

ԳԱԱ աջակցել է համակարգի գիտական կազմակերպություններին նոր սարքեր և սարքավորումներ ձեռքբերելու հարցում:

Ավանդական կերպով առանձնակի ուշադրություն է դարձվել ակադեմիայի և բուհական համակարգի համագործակցության արդյունավետության բարձրացման հարցերին, քննարկվել են համատեղ գործող ամբիոնների աշխատանքի արդյունավետության բարձրացման, ակադեմիայի գիտական կազմակերպությունների և բուհերի համապատասխան ֆակուլտետների միջև համագործակցության ծրագրերի հեռանկարները: Ներկայումս ակադեմիայի մոտավորապես 400 գիտնականներ համատեղության կարգով դասախոսում են բուհերում:

Հաշվետու տարում Նախագահությունը բազմիցս անդրադարձել է միջազգային գիտական կապերի ամրապնդման հարցին, հատկապես՝ Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրի աշխատանքներին ակտիվ մասնակցությանը և միջազգային համահայկական գիտական ցանցերի ստեղծման և զարգացման խնդրին՝ օգտագործելով արտասահմանում աշխատող առավել հայտնի հայ գիտնականների ներուժը:

Ընդհանուր ժողովը նշում է, որ զգալի կերպով աճել է համակարգի գիտնականների մասնակցությունը հանրապետության ռազմասարդյունաբերությանը վերաբերող գիտական ծրագրերին:

Նախագահության որոշմամբ ուսումնասիրվել է ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման գործընթացի զարգացման խնդիրը:

Քննարկվել են ինստիտուտների 2019 թ. բազային, թեմատիկ, նպատակային ծրագրերով, միջազգային դրամաշնորհներով և պայմանագրերով ֆինանսավորման հարցերը: Մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվել երիտասարդ գիտնականների գիտական զեկուցումների,

նրանց գործուղումների կազմակերպումը և նրանց մասնակցության ապահովումը միջազգային գիտաժողովների աշխատանքներին:

Քննարկվել է ինստիտուտների ներքին կառուցվածքի օպտիմալացման, գործող որոշ գիտական լաբորատորիաների և խմբերի լուծարման, միավորման, խոշորացման և նորերի ստեղծման հարցը:

Ընդգծված ուշադրություն է դարձվել ինստիտուտների միջև հնարավոր միջգիտակարգային հետազոտություններ իրականացնելու հարցին:

Գիտական կազմակերպություններում անց են կացվել տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել և հաստատվել են 2019 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները:

Նախագահությունը անդրադարձել է ՀՀ կառավարությունից և վերադաս մարմիններից ստացված բոլոր փաստաթղթերին, ներկայացրել է իր առաջարկություններն ու դիտողությունները:

Հատուկ ուշադրությամբ և մանրամասն քննարկվել են բարձրագույն կրթությանը, գիտությանը, երկրի պաշտպանությանը, առաջավոր տեխնոլոգիաներին, գիտության ֆինանսավորմանը առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախագծերն ու ներկայացվել են արմատական դիտողություններ և առաջարկություններ:

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում համակարգում տեղ գտած դրական տեղաշարժերը և ձեռքբերումները՝ ընդհանուր ժողովը միաժամանակ նշում է մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ընդհանուր ժողովը կարևորում է կառավարման մարմինների հետ Ակադեմիայի ղեկավարության պարբերական հանդիպումների անհրաժեշտությունը՝ երկարաժամկետ լուծումներ պահանջող գիտական խնդիրների վերաբերյալ:

Ընդհանուր ժողովը առաջարկում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը մշտական ուշադրության կենտրոնում պահել հետևյալ հարցերը.

1. Գիտության ոլորտում ներկայումս կատարվող և նախատեսվող բոլոր բարեփոխումների ընթացքում պահպանել ՀՀ ԳԱԱ բարձր կարգավիճակը՝ որպես հանրապետության խոշորագույն գիտական կենտրոնի, որի հիմնական առաքելությունն է զարգացնել հիմնարար գիտությունները և դրանց հիման վրա՝ կիրառական գիտությունները:

2. Հիմք ընդունելով համակարգում գործող գիտական կազմակերպությունների կարծիքը, որը նրանք փակ գաղտնի քվեարկությամբ ընդունել են իրենց գիտական կոլեկտիվների ընդհանուր ժողովներում և հաշվի առնելով պատմականորեն իրեն արդարացրած, ակադեմիաների համար հատուկ կառուցվածքային առավելությունները, պահպանել և զարգացնել այն՝ օգտագործելով նաև աշխարհի նմանատիպ կազմակերպությունների ժամանակակից դրական փորձը:

3. Շարունակել զարգացնել գիտական կազմակերպությունների հետագա օպտիմալացման գործընթացը՝ հիմք ընդունելով կազմակերպությունների գործունեության արդյունավետության չափորոշիչները:

4. Պահպանել գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը:

5. Հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդ կադրերի պատրաստմանը և նրանցով ինստիտուտների համալրմանը.

6. Խորացնել ՀՀ բուհերի հետ ակադեմիական գիտական կազմակերպությունների համագործակցությունը:

7. Խրախուսել գիտական կազմակերպությունների կողմից ՀՀ տնտեսության զարգացմանը, պետության պաշտպանական համակարգի և անվտանգության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումը՝ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով: ՀՀ Պաշտպանության և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների հետ քննարկել համատեղ հետազոտական և տեխնոլոգիական կենտրոն ստեղծելու հարցը:

8. Պահպանել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում հայցորդի, ասպիրանտի և դոկտորանտի պատրաստման իրավունքը:

9. Ցուցաբերել հնարավոր աջակցություն ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ում Հանրապետության համար կարևոր սուպերհամակարգչային կենտրոնի ստեղծմանը:

10. Կազմակերպել հայկական համապարփակ ազգային նոր հանրագիտարանի հրատարակումը:

11. Արշավախմբերի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այդ աշխատանքների համար նախատեսել որոշակի հավելյալ ֆինանսավորում:

12. Գիտական կապերի ընդլայնման և զարգացման խնդիրներում ակտիվ օգտագործել սփյուռքի գիտնականների, հատկապես ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների ներուժը:

13. Կարևորելով մշակութային և մարդկային կապիտալի ճևավորման գործում հասարակական գիտությունների դերը, ընդգծված ուշադրություն դարձնել բնագավառի հետազոտությունների թեմատիկայի ու մեթոդաբանության արդիականացմանը՝ համազգային գիտամշակութային զարգացման, օտար հարձակումներից Հայոց պատմության ու մշակույթի պաշտպանությանը նպաստելու նպատակով:

14. Շարունակել և ավելի ակտիվացնել աջակցությունը Լ.Ղ.Հ ԿԳՄՆ «Արցախի գիտական կենտրոնին»:

Ընդհանուր ժողովը որոշում է

1. Հավանություն տալ ՀՀ ԳԱԱ 2019 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը:

2. Հանձնարարում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը դիմել ՀՀ կառավարությանը հետևյալ հարցերով՝

– Հաշվի առնելով, որ ՀՀ ԳԱԱ անդամների վերջին ընտրությունները տեղի են ունեցել 2014 թ. և հիմք ընդունելով «ՀՀ Գիտությունների ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, դիմել ՀՀ կառավարությանը 2020 թ. ՀՀ ԳԱԱ անդամների ընտրությունների անցկացման համար.

– գիտության զարգացումը և նորամուծական գործունեությունը խթանելու նպատակով ձեռնարկել միջոցառումներ գիտաշխատողի աշ-

խատավարձը հասցնելու առնվազն հանրապետությունում միջին աշխատավարձի կրկնապատիկին.

– գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները հարկերից ազատել և ավելացնել կենսաթոշակներին.

– ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման, վերանորոգման և անվտանգ շահագործման համար հատկացնել հավելյալ բյուջետային ֆինանսավորում.

– առաջարկել ՀՀ ԳԱԱ կազմում գործող գիտական կազմակերպությունների արտաբյուջետային ֆինանսական միջոցներով ապրանքների ձեռքբերումների գործընթացը ազատել գնումների մասին օրենքի պահանջներից.

– վերացնել 70 տարեկանից բարձր տարիք ունեցող գիտնականին թեմայի ղեկավար լինելու արգելքը.

– առաջարկել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը մշակել միջոցառումների ծրագիր՝ ուղղված Սևանա լճի մակարդակը բարձրացնելուն, ջրառ չկատարելուն, ջրամբարից և ջրատարներից կորուստները կրճատելուն, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կրճատելու կենսածին տարրերի հոսքը լիճ, խստացնելու կենսառեսուրսների պաշտպանությունը և անցնելու կառավարելի ձկնորսության համակարգին:

«Գիտություն», հունիս, № 6, 2020 թ.

ՀԱՄԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հուլիսի 5-ին կյանքից անժամանակ հեռացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը:

Ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին Հայկական ԽՍՀ Սևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի) Լճաշեն գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1954–1966 թթ. սովորել և ավարտել է Լճաշենի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1982 թ. պաշտպանել է թեկնածուական, 1991 թ.՝ դոկտորական ատենախոսություն, իսկ 2005 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը 1969–1978 թթ. Սևանի շրջանի Գեղամավան և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին ավագ գիտաշխատող է եղել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, ապա 1978 թ. դեկտեմբերից՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ Հին դարերի պատմության բաժնում, իսկ 1979 թ. կեսերին տեղափոխվել Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժին:

Հ. Հարությունյանը հանրապետության ճանաչված պատմաբան-մանկավարժներից էր, սկզբունքային պատմաբան և բարեխիղճ գիտական ղեկավար: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել չուրջ մեկ տասնյակ երիտասարդներ, եղել է թեկնածուական և դոկտորական մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս: Անվանի պատմաբանը 1994 թ. հանդիսանում էր Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչը: 2003–2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության բաժնի վարիչի պարտականությունները, իսկ 2010 թ. հուլիսից Նորագույն պատմության բաժնի վարիչն էր: Նա Պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ էր:

Զափազանց լայն էր պրոֆ. Հ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին

ու միջին դարերի, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի՝ XIX և XX դարերի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ժողովրդագրական գործընթացներ, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածք, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն: Հեղինակ է 8 մենագրության և շուրջ 100 գիտական հոդվածների, դպրոցական դասագրքերի: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության IV հատորի երկու գրքերում (որից վերջինի պատասխանատու խմբագիրն էր) տեղ են գտել նաև անվանի պատմաբանի հեղինակած տեքստերը:

Վերջին տարիներին պրոֆ. Հարությունյանն աշխատում էր «Երևանի նահանգը 1849–1917 թվականներին» մենագրության վրա, ուր անդրադարձ էր լինելու նահանգի ստեղծման, վարչատարածքային կառուցվածքին, ժողովրդագրական պատկերին, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հիմնահարցերին:

Պրոֆ. Հ. Հարությունյանն իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ պարզությամբ, բարությամբ, ճեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով մեծ հեղինակություն էր վայելում ընկերական ու գիտական-մտավորական միջավայրում:

Գիտության անխոնջ մշակ Համլետ Մալխասի Հարությունյանի հիշատակը հավերժ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում, իսկ գիտական ուսումնասիրությունները երկար տասնամյակներ սեղանի գրքեր կլինեն Հայաստանի XIX–XX դարերի պատմությունն ուսումնասիրող պատմաբանների համար:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Պատմաբանասիրական հանդես»-ի էջերում լուսաբանվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի ու մշակույթի, փիլիսոփայության հարցերը, պատմագրության, ընդհանուր բանասիրության և հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ:

Հանդեսն ունի հոդվածների, հաղորդումների, քննարկման ու բանավեճի, հրապարակումների, գրախոսության, մեր երախտավորները, մեր հոբելյարները, գիտական կյանք, լրատու բաժիններ: Հոդվածները տպագրվում են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան ամփոփումներով, անվճար:

Պարբերականը լույս է տեսնում 4 ամիսը մեկ անգամ, տարեկան 3 համար, յուրաքանչյուր համարի ծավալը 20 տպ. մամուլ (320 էջ):

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy *պատմաբանասիրական-հանդես*.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

ՀՈԴՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Հոդվածի ծավալը պետք է լինի մինչև 15 էջ (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ), տեքստի լայնությունը՝ 12.5 սմ, երկարությունը՝ 21 սմ, միջտողային տարածությունը At least՝ *13:*

2. Հայերեն տեքստը «Grqee Nor» *տառատեսակով՝ չեղ (italic), ընդգծված տեքստը (բառը)՝ ուղիղ, 12 տառաչափով, ռուսերենը՝* «Times New Roman»՝ *11.5:*

3. Հոդվածի վերնագիրը պետք է լինի «Arial Armenia» *տառատեսակով,* ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *(հայերենի չափը 12, ռուսերենինը՝ 11), դրվում է կենտրոնում, իսկ դրա ներքևում՝ հեղինակի անուն-ազգանունը՝* ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *(հայերենը՝* «Grqee Nor» *տառատեսակով, չափը՝ 11, ռուսերենը՝* «Times New Roman»*-ով, չափը՝ 10):*

4. Հաջորդ տողում գրվում են «Բանալի բառեր»-ը՝ առնվազն 10 բառ կամ բառակապակցություններ (ուղիղ):

5. Հոդվածի վերջում տրվող ամփոփումները պետք է ունենան տեքստի սեղմ բովանդակությունը (կես էջի չափով կամ 6–7 նախադասությամբ): Եթե հոդվածը հայերեն է, ապա ամփոփումները պետք է լինեն ռուսերեն ու անգլերեն, իսկ եթե ռուսերեն է՝ հայերեն

և անգլերեն: Հայերենի ու անգլերենի տառաչափը 11.5, ռուսերենինը՝ 11:

6. Ամփոփումների տեքստից առաջ պետք է ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *գրել հոդվածի վերնագիրը (տառաչափը՝ 11), ներքևում հեղինակի անուն-ազգանունը (կենտրոնում) և* ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *(տառաչափը՝ 10): Հաջորդ տողում՝ կենտրոնում, գրվում են համապատասխանաբար՝ «Ամփոփում», «Резюме», «Summary» բառերը ցրիվ, տառաչափը՝ 10: Յուրաքանչյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով «Բանալի բառեր»-ը, իսկ տառաչափը՝ ամփոփման տեքստի տառաչափով: Բոլոր լեզուներով տրվող «Բանալի բառեր»-ը պետք է լինեն նույնական:*

7. Հոդվածի տեքստի վերջում գրվում են հեղինակի (հեղինակների) մասին հակիրճ տեղեկություններ՝ գիտական աստիճանը, աշխատավայրը, գիտական հետաքրքրությունների ոլորտը, հրատարակված աշխատանքների քանակը: Որից հետո գրվում է հոդվածի օգտագործված գրականության ցանկը՝ լատինատառ տառադարձմամբ (այբբենական կարգով):

8. Ռուսերեն ամփոփումից հետո ռուսերենով գրվում է հեղինակի մասին տեղեկությունը, իսկ անգլերենից հետո՝ անգլերենով:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ա) Հղումների տառաչափը. հայերենը՝ 11, ռուսերենը՝ 10.5, այլ լեզուներով՝ 11:

բ) Գրքի վրա հղման դեպքում գրվում է հեղինակի անվան սկզբնատառը, ազգանունը՝ ամբողջությամբ և ցրիվ, որից հետո գրվում է միջակետ, այնուհետև՝ մեծատառով գրքի վերնագիրն առանց չակերտների, ստորակետով՝ հրատարակության վայրը, թիվը, էջը:

գ) Ժողովածուների դեպքում նախ նշվում է օգտագործված հոդվածի վերնագիրը, դրվում է միջակետ ու անջատման գիծ, ապա գրվում է ժողովածուի վերնագիրը, խմբագրի կամ կազմողի տվյալները, հրատարակության վայրը, թիվը, էջը:

դ) Հղված ամսագրերի դեպքում տրվում է հոդվածի հեղինակի անուն-ազգանունը, վերնագիրը, այնուհետև գրվում է միջակետ ու անջատման գիծ, չակերտների մեջ նշվում է ամսագրի անվանումը, հրատարակության վայրը, թիվը, համարը, էջը: Թերթերի դեպքում չակերտների մեջ նշվում է թերթի անունը, այնուհետև՝ փակագծում հրատարակության վայրը, որից հետո՝ ամսաթիվը (օրինակ՝ 01. II. 1998): Վերը նշվածը վերաբերում է նաև ռուսերեն ու այլ լեզուներով հղումներին:

դ) Կայքերին տրվող հղումների դեպքում գրվում է հոդվածի կամ հոդվածի հեղինակի տվյալները և վերնագիրը, ապա գրվում է միջակետ ու անջատման գիծ, նշվում՝ կայքի հասցեն:

Հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում:

РУКОВОДСТВО ДЛЯ АВТОРОВ

На страницах «Историко-филологического журнала» освещаются вопросы истории, литературы, языка, искусства и культуры, философии армянского народа, общетеоретические вопросы историографии, общей филологии и арменистики, политические, экономические и культурные связи армянского народа с другими народами.

Журнал имеет разделы статей, сообщений, обсуждений и дискуссий, публикаций, рецензий, наши заслуженные деятели, наши юбиляры, научная жизнь, хроника. Статьи печатаются на армянском и русском языках с соответствующими резюме, бесплатно.

Журнал выходит раз в 4 месяца, 3 номера в год, объем каждого номера – 20 печ. листов (320 с.).

Официальный сайт журнала: http://academhistory.am/hy ***պատմաբանասիրական-հանդես***.html

Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

СТРУКТУРА И ТЕХНИЧЕСКОЕ ОФОРМЛЕНИЕ СТАТЬИ

1. Объем статьи должен быть до 15 страниц (бóльший объем – по решению редакции), ширина текста – 12,5 см, длина – 21 см, интервал At least – 13.

2. Армянский текст – шрифт «Grqee Nor», курсив (italic), выделенный текст (слово) – прямо, размер шрифта 12; русский текст – «Times New Roman» – 11,5.

3. Заглавие статьи – шрифт «Arial Armenia», ПРОПИСНЫМИ буквами (на армянском языке размер 12, на русском – 11), помещается в центре, под ним пишется имя и фамилия автора ПРОПИСНЫМИ буквами (на армянском языке шрифтом «Grqee Nor», размер 11, на русском – «Times New Roman», размер 10).

4. На следующей строке пишутся «Ключевые слова» – минимум 10 слов или словосочетаний (курсивом).

5. Резюме, прилагаемые к статье, должны заключать в себе ее краткое содержание (полстраницы или 6–7 предложений). Если текст статьи на армянском языке, то резюме должны быть на русском и английском языках, если текст статьи на русском, резюме – на армянском и английском. На армянском и английском языках размер шрифта 11,5, на русском – 11.

6. Перед текстом резюме пишется ПРОПИСНЫМИ буквами заглавие статьи (размер 11), ниже, в центре – имя и фамилия автора ПРОПИСНЫМИ

буквами (размер 10). На следующей строке, в центре пишется соответственно «Ամփոփում», «Резюме», «Summary» вразбивку, размер 10. Перед текстом каждого резюме даются «Ключевые слова» на соответствующем языке, размер шрифта такой же, как в тексте резюме. «Ключевые слова» на всех языках должны быть одинаковыми.

7. После текста статьи пишутся краткие сведения об авторе (авторах): ученая степень, место работы, сфера научных интересов, количество опубликованных работ. Затем помещается библиография статьи в латинской транслитерации (в алфавитном порядке).

8. После резюме на русском языке помещаются краткие сведения об авторе на русском языке, а после резюме на английском языке – на английском.

ОФОРМЛЕНИЕ СНОСОК

а) Размер шрифта: на армянском языке – 11, на русском – 10,5, на других языках – 11.

б) При ссылке на книгу, пишутся инициал имени автора, фамилия полностью, вразбивку, после чего ставится точка, затем без кавычек, с прописной буквы пишется заглавие книги, после запятой – место, год издания, страница.

в) При ссылке на сборник пишутся имя и фамилия автора, заглавие использованной статьи, ставятся точка и тире, затем пишется заглавие сборника, данные редактора или составителя, место, год издания, страница.

г) При ссылке на журналы пишутся имя и фамилия автора, заглавие статьи, затем ставятся точка и тире, пишется название журнала в кавычках, место, год издания, номер, страница. При ссылке на газеты пишется в кавычках название газеты, затем в скобках место издания, после чего указывается дата (например, 01. II. 1998). Вышеуказанное относится также к сноскам на русском и других языках.

д) При ссылке на сайт пишутся данные статьи или автора статьи, затем ставятся точка, тире, указывается адрес сайта.

Статьи рецензируются, в случае отказа не возвращаются.

A GUIDELINE FOR THE AUTHORS

In the pages of "Historical-Philological Journal" issues of the history, literature, language, art and culture, philosophy of Armenian people, theoretical questions of historiography, general philology and armenology, the political, economic and cultural ties of Armenian people with other nations are elucidated.

The journal has segments for articles, reports, discussions and debates, publications, reviews, our honoured workers, our jubilees, scientfic life and news. Articles are published in Armenian and Russian in the journal with appropriate summaries and free of charge.

The periodical is published once for 4 months, 3 issues a year, the volume for each issue is 20 printing press (320 pages).

The official webpage of the Journal: http://academhistory.am/hy

Historical-Philological Journal:*պատմաբանասիրական-հանդես*.html

The email of the Journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

THE STRUCTURE OF THE ARTICLE AND TECHNICAL DESIGN

1. The volume of the article should be up to 15 pages (in case of larger volume with the decision of the Editorial), the width of the text – 12.5 cm, length – 21 cm, line spacing - at least 1.3 cm.
2. The Armenian text should be in "Grqee Nor" font type, italic, the highlighted text (word) should be straight, with 12 font size, the Russian text should be in "Times New Roman" with 11.5 font size.
3. The title of the article should be in "Arial Armenian" font type, with CAPITAL LETTERS (the font size of Armenian text – 12, Russian text – 11), is put in the centre, and below it – the name and surname of the author in CAPITAL LETTERS (Armenian with "Grqee Nor" font type, the sizes – 11, Russian – "Times New Roman", font size – 10).
4. In the next line the "Key words" – at least 10 words or word combinations (straight).
5. The summaries placed at the end of the article should have a brief content of the text (half of a page or 6-7 sentences). If the article is in Armenian then the summaries should be both in Russian and English. The font size for Armenian and English – 11.5, for Russian – 11.
6. Before the text of the summaries the title of the article should be written with CAPITAL LETTERS (font size: 11), below – the name and surname of the author (in the centre) with CAPITAL LETTERS. In the

centre of the next line, accordingly the words of «Ամփոփում», «Резюме», “Summary” are written in separate letters, with the font size of 10. Before each text of summary, the “Key words” are accordingly written in the given language, and the font size should be the same as the text of summary. The “Key words” should be identical in all languages.

7. At the end of the text of the article, brief information about the author (authors) are written – the scientific degree, workplace, the scope of scientific interests, the quantity of the published works, after which the list of the used literature is placed in Latin transliteration (in alphabetical order).
8. After the summary in Russian, the information about the author is placed in Russian, and accordingly, after the summary in English – the English one.

THE DESIGN OF REFERENCES

a) The font size for footnotes; Armenian – 11, Russian – 10.5, other languages – 11.
b) In case of a reference to a book, the initial letter of the author’s name and his/her surname in separate letters are written, after which a semicolon is put, then there come the title of the book without quotation marks, and with separated commas, the place, date and page of the publication.
c) In case of collections of articles, firstly the title of the used article is mentioned, a semicolon and a dash are put, then the title of the collection of articles, the data of the editor or the compiler, the place, date and page of the publication are written.
d) In case of referred journals, the name and surname of the article’s author, title are given, then a semicolon and a dash are put, the name of the journal, the place, date, issue and page of the publication are mentioned in quotation marks.
e) In case of newspapers, the name of the paper, then the place and date are mentioned in brackets (for example 01. 02. 1998). The aforementioned points concern the references also in Russian and other languages.
f) In case of references made to websites, the data of the article or the author of the article as well as the title are mentioned, then a semicolon and a dash are put, subsequently the website address is mentioned.

The articles are reviewed and in case of refusal they are not returned.

ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐՁԱՅԻՆ ԼԱՏԻՆԱՏԱՌ ԱՂՅՈՒՍԱԿ

Հայե- րեն	*Eastern Armenian Transliteration*	*Western Armenian Transliteration*	Русский	*Russian Transliteration*
ա	a	a	**а**	a
բ	b	p	**б**	b
գ	g	k	**в**	v
դ	d	t	**г**	g
ե	e	e	**д**	d
զ	z	z	**е**	e ye
է	e	e	**ё**	ë yë
ը	e	e	**ж**	zh
թ	t	t	**з**	z
ժ	zh	zh	**и**	i
ի	i	i	**й**	i y
լ	l	l	**к**	k
խ	kh	kh	**л**	l
ծ	ds	dz	**м**	m
կ	k	g	**н**	n
հ	h	h	**о**	o
ձ	dz	tz	**п**	p
ղ	gh	gh	**р**	r
ճ	j	j	**с**	s
մ	m	m	**т**	t
յ	h y –	–	**у**	u
ն	n	n	**ф**	f
շ	sh	sh	**х**	kh
ո	vo o	–	**ц**	ts
չ	ch	ch	**ч**	ch
պ	p	b	**ш**	sh
ջ	dj j	ch	**щ**	shch
ռ	r	r	**ъ**	”1
ս	s	s	**ы**	y
վ	v	v	**ь**	’1
տ	t	d	**э**	e
ր	r	r	**ю**	iu yu
ց	ts	ts	**я**	ia ya
ւ	v u	u		
փ	p	p		
ք	k	k		
և				
օ	o	o		
ֆ	f	f		

երկհնչյուններ	Diphthongs
ու	u v
ոյ	ui oy o
այ	ai ay a
իւ	iu
յու	iu
եա	ia ya
յա	ia ya

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՍՏՈՐԱԳՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Արմեն Մարուքյան – Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի խախտված իրավունքների և նրան հասցված նյութական վնասի վերականգնմանն ուղղակի և անուղղակի վերաբերող Սևրի պայմանագրի դրույթները (ռուս.) ……3

———————

Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան – Փոքր Հայքի թագավորության գահաացանկը ……..…21
Արսեն Բոբոխյան, Սաակ Տարոնցի – Մեծ Մասիսի նորահայտ «Վիշապ» կոթողը, և լեռան նշանակությունը տարածաշրջանային համատեքստում ……..47
Գոհար Կարագյոզյան – Հակոբ Մծբնեցու կողմից Նոյան տապանի մասնիկի ձեռքբերման մասին առասպելի փոխակերպումը եվրոպական ճանապարհորդական գրականության մեջ (ռուս.) ……...68
Լիլիթ Սարվազյան – Ընտանեկան հարաբերությունների կարգավորման իրավական հիմքերը Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» ……82

II

Նինետա Ադամյան – Կովկասի հայոց բարեգործական ընկերության պատմությունից (1881 թ.– 1914 թ. սեպտեմբեր) ……..…97
Լուսինե Սահակյան – Համշեն գավառի նշանավոր Ճմիլ/Ջիմիլ գյուղը ըստ հայ և օտար աղբյուրների (XVI դ. – XIX դ. առաջին քառորդ) ……....113
Լալիկ Խաչատրյան – Հարաբերյալների և հարաբերական բառերի շրջուն շարադասությունը հին հայերենում ……..136
Տիգրան Սիրունյան, Տաթևիկ Մանուկյան – Ուշ շրջանի մի քանի ծեռագիր քերականական զրուցարաններ. դրանց բնույթը և աղբյուրները ……..147
Լուսինե Ղամոյան – «Հագուստ» հասկացություն նշող փոխառությունները միջին հայերենում ……...158
Լիզա Քարիմյան – Կրոնական գործոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (570–591 թթ.) ……169
Ավետիս Գրիգորյան – Պատմական Սոթքի վերաբերյալ միջնադարյան հայ պատմիչների հիշատակությունները ……...186

Գարեգին Թումանյան – Սեպագիր աղբյուրները Հայկական
լեռնաշխարհում կիմերների և սկյութների ներկայության մասին 207

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Աստղիկ Սողոյան – Հերոսի ճանապարհի մոնոմիֆի մոդելը Խաչատուր
Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում 220

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ
200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Անուշավան Զաքարյան – Լեոյի հոդվածը Խրիմյան Հայրիկի մասին 234

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատ Հակոբյան – Ա-Դո. Հայության երկունքը 239
Վարդան Դևրիկյան – Աշոտ Գալստյան. Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (XIX դ. 60-ական – XXI դ. 10-ական թթ.), գիրք Ա 247
Արտակ Գնունի – Արամազդ: Հայկական հնագիտություն: Անցյալի
փորձառություններ և նոր ձեռքբերումներ 251
Սաթենիկ Ավոյան – Վ. Գ. Թունյան. Հովհաննես Թումանյանը և Հայկական
հարցը (ռուս.) 258

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Մերի Սարգսյան – Նվիրյալ լեզվաբանը. Գևորգ Ջահուկյան
(ծննդյան 100-ամյակի առթիվ) 261

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Վահան Բայբուրդյան – Հայ արևելագիտությանը նվիրյալ, բեղմնավոր գրչի տեր
տաղանդավոր գիտնականը (Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան
90-ամյակի առթիվ) 266
Գրիգոր Ասատրյան – Վաստակավոր գիտնականը և գիտության հմուտ
կազմակերպիչը (Աշոտ Էկմալյանի ծննդյան 90-ամյակի առթիվ) (ռուս.) 272
Անուշ Տեր-Մինասյան – Ճարտարապետական գիտության նվիրյալը
(Մուրադ Հասրաթյանի ծննդյան 85-ամյակի առթիվ) (ռուս.) 277

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Գայանե Մախմուրյան – Մի քանի նկատառում 285
Համո Սուքիասյան – Պարզաբանում 286

ԼՐԱՏՈՒ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի որոշումը 287

Համլետ Մալխասի Հարությունյան 291

Ուղեցույց հեղինակների համար 293
Ուղեցույց հեղինակների համար (ռուս.) 295
Ուղեցույց հեղինակների համար (անգլ.) 297

Հայերեն և ռուսերեն այբուբենների գրադարձային լատինատառ աղյուսակ 299

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ, СООБЩЕНИЯ

I

К 100-ЛЕТИЮ ПОДПИСАНИЯ
СЕВРСКОГО ДОГОВОРА

Армен Марукян – Положения Севрского договора, непосредственно и косвенно касающиеся восстановления нарушенных прав армянского народа и нанесенного ему материального ущерба вследствие Геноцида (на русск. яз.) 3

Артак Мовсисян, Лианна Карапетян – Царский список королевства Малой Армении.....21
Арсен Бобохян, Саак Таронци – Новонайденная стела «Вишап» на склонах Большого Масиса и значение горы в региональном контексте.....47
Гоар Карагезян – Модификация легенды об обретении частицы Ноева ковчега Акопом Мцбнеци в европейской литературе путешествий (на русск. яз.) 68
Лилит Сарвазян – Правовые основы регулирования семейных отношений в «Судебнике» Смбата Спарапета.....82

II

Нинета Адамян – Из истории Кавказского армянского благотворительного общества (1881 г. – сентябрь 1914 г.) 97
Лусине Саакян – Знаменитое село Чмил/Джимил области Амшен согласно армянским и иноязычным источникам (XVI в. – первая четверть XIX в.) 113
Лалик Хачатрян – Инверсированный порядок относительных и соотносительных слов в древнеармянском языке 136

Тигран Сирунян, Татевик Манукян – Несколько рукописных грамматических разговорников позднего периода: их природа и источники ……147
Лусине Гамоян – Заимствования, обозначающие понятие «одежда» в среднеармянском языке ……158
Лиза Каримян – Религиозный фактор в армяно-византийских отношениях (570–591 гг.) ……169
Аветис Григорян – Упоминания средневековых армянских историков об историческом Сотке ……186
Гарегин Туманян – Клинописные источники о присутствии киммерийцев и скифов на Армянском нагорье……...207

ОБСУЖДЕНИЯ

Астгик Согоян – Модель мономифа пути героя в романе Хачатура Абовяна «Раны Армении» ……220

ПУБЛИКАЦИИ

К 200-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ХРИМЯНА АЙРИКА

Анушаван Закарян – Статья Лео о Хримяне Айрике…..……..234

РЕЦЕНЗИИ

Арарат Акопян – А-До. Рождение армянства ……....239
Вардан Деврикян – Ашот Галстян. Язык восточноармянского художественного документализма (60-е гг. XIX в. – 10-е гг. XXI в.), книга А ….……..247
Артак Гнуни – Арамазд. Армянская археология. Опыт прошлого и новые достижения ……251
Сатеник Авоян – В. Г. Тунян. Ованес Туманян и Армянский вопрос (на русск. яз.) ……258

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Мери Саргсян – Преданный языковед: Геворк Джаукян (к 100-летию со дня рождения) ……261

НАШИ ЮБИЛЯРЫ

Ваан Байбуртян – Преданный армянскому востоковедению, плодовитый, талантливый ученый (к 90-летию со дня рождения Николая Оганесяна) ……266
Григор Асатрян – Заслуженный ученый и умелый организатор науки (к 90-летию со дня рождения Ашота Экмаляна) (на русск. яз.) ……...272
Ануш Тер-Минасян – Подвижник архитектурной науки (к 85-летию со дня рождения Мурада Асратяна) (на русск. яз.) ……...277

ПИСЬМО В РЕДАКЦИЮ

Гаянэ Махмурян – Несколько наблюдений ……285
Амо Сукиасян – Разъяснение ……286

ХРОНИКА

Решение общего годичного собрания НАН РА……...287

Гамлет Малхасович Арутюнян …….....291

Руководство для авторов ……...293
Руководство для авторов (на русск. яз.) ……...295
Руководство для авторов (на англ. яз.) ……297

Таблица латинской транслитерации армянского и русского алфавитов ……..299

CONTENTS

ARTICLES, REPORTS

I

TO THE 100TH ANNIVERSARY
OF SIGNING OF THE TREATY OF SÉVRES

Armen Marukyan – The provisions of the Treaty of Sévres directly and indirectly concerning the restoration of the violated rights and the material damage of the Armenian people consequenced by the Genocide (in Russian) ……...3

Artak Movsisyan, Lianna Karapetyan – The king list of the Kingdom of Armenia Minor ……..21
Arsen Bobokhyan, Saak Tarontsi – “Vishap” stela recently discovered on the slopes of Greater Masis and the significance of the mountain in regional context …….47
Gohar Karagyozyan – The modification of the myth on the acquisition of a wood particle from the Noah’s Ark by Hakob Mtsbnetsi in European travel literature (in Russian) ……..68
Lilit Sarvazyan – The legal basis for the regulation of family relations in Smbat Sparapet’s “Code of Law’’……..82

II

Nineta Adamyan – From the history of the Armenian Benevolent Society of the Caucasus (1881– September, 1914) ……97

Lusineh Sahakyan –The famous village of Tchmil/Jimil of Hamshen region according to the Armenian and foreign sources (the 16th – the first quarter of the 19th cc.) ……113
Lalik Khachatryan – The inversely syntax of relative and correlative words in the Old Armenian language …..……..136
Tigran Sirunyan, Tatevik Manukyan – Some handwritten grammar phrasebooks of the late period: their nature and sources …..……...147
Lusine Ghamoyan – The borrowings denoting the concept of "clothing" in the Middle Armenian language ……..158
Liza Karimyan –The religious factor in the Armenian-Byzantine relations (570–591 AD) ……..169
Avetis Grigoryan –The mentioning of medieval Armenian historians about historical Sotk ….……186
Garegin Tumanyan – Cuneiform sources on the presence of Cimmerians and Scythians in the Armenian Highland ……...207

DISCUSSIONS

Astghik Soghoyan – The model of the monomyth of Hero's journey in the novel "Wounds of Armenia" by Khachatur Abovyan ...……...220

PUBLICATIONS

TO THE 200TH BIRTH ANNIVERSARY
OF KHRIMYAN HAYRIK

Anushavan Zakaryan – Leo's article about Khrimyan Hayrik ……234

REVIEWS

Ararat Hakobyan – A-Do. The Naissance of Armenians ….....239
Vardan Devrikyan – Ashot Galstyan: The Eastern Armenian fiction documentary language (the 60s of the 19th c. – the10s of the 21th c.), Book I……..247
Artak Gnuni – Aramazd: Armenian Archaeology: Past experiences and new Achievements ……...251
Satenik Avoyan – V. G. Tunyan: Hovhannes Tumanyan and the Armenian Question (in Russian) 258

OUR HONOURED SCHOLARS

Meri Sargsyan – The devoted linguist: Gevorg Jahukyan (to 100th birthday anniversary) ……261

OUR JUBILEES

Vahan Bayburdyan – The devotee of Armenian Orientalism, talented scientist with a fruitful pen (on the occasion of Nikolay Hovhannisyan's 90th birth anniversary)……...266
Grigor Asatryan – Honored scientist and skilled organizer of science (on the occasion of Ashot Ekmalyan's 90th birth anniversary) (in Russian) 272
Anush Ter-Minasyan – The devotee of the architectural science (on the occasion of Murad Hasratyan's 85th birth anniversary) (in Russian).....277

LETTER TO THE EDITOR

Gayane Makhmourian – Some considerations.....285
Hamo Sukiasyan – Explication …….286

NEWS

The decision of the annual general meeting of the NAS RA……287

Hamlet Malkhas Harutyunyan …….....291

A guidance for the authors ……...293
A guidance for the authors (Russ.) ……...295
A guidance for the authors (Eng.) ……297

Latin transliteration table of the Armenian and Russian alphabets……...299

Հայերեն բաժնի խմբագիրներ	Թամար Զաքարյան Լիանա Օհանյան
Ռուսերեն բաժնի խմբագիր	Կարինե Ալեքսանյան
Հայերենի սրբագրիչ	Աղավնի Շահինյան
Անգլերենի խմբագիր	Հարություն Խուդանյան
Համակարգչային ձևավորում և էջադրում	Գոհար Հովհաննիսյան

Редакторы армянского отдела	Тамар Закарян Лиана Оганян
Редактор русского отдела	Карине Алексанян
Корректор армянского отдела	Агавни Шагинян
Редактор английского отдела	Арутюн Худанян
Компьютерный дизайн и пагинация	Гоар Оганнисян

Editors of Armenian segment	Tamar Zakaryan Liana Ohanyan
Editor of Russian segment	Karine Aleksanyan
Proofreader of Armenian segment	Aghavni Shahinyan
Proofreader of English segment	Harutyun Khudanyan
Computer design and pagination	Gohar Hovhannisyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Официальный сайт журнала: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Official site of the journal: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

Հրատ. պատվեր № 1025
Ստորագրված է տպագրության 17.07.2020 թ.:
Տպագրական 19,25 մամուլ: Թուղթ № 1, 70x100:

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1025
Подписано к печати 17.07.2020 г.
Печ. 19,25 л. Бумага № 1, 70x100.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.